

ՆՈՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐՈՆ

ԲԱՀԱՅԻ ՀԱՎԱՏԸ

Վիլիամ Ս. Հեթեր
Զ. Դուզլաս Մարտին

Երևան 2011

Նվիրվում է տղամարդկանց և կանանց, ովքեր Իրանում իրենց կյանքը տվել են Բահայի հավատին ծառայելուն՝ 1844-1984թթ-ին:

«Այս մարդիկ հետևում են թողել անունների նեղ նեղուցները և իրենց վրաններն են կառուցել ինքնահրաժարեցման ծովի ափին»:

Բահաուլլա

Բովանդակությունը

Առաջաբան

Գրադարձություն

Ներածություն

1. Պատմական նախադրյալները
2. Բաբի հավատը
3. Բահաուլլան
4. Ղեկավարության ժառանգումը
5. Հիմնական ուսմունքները
6. Աստված, Նրա Հայտնիչները և մարդը
7. Բահաուլլայի Համաշխարհային Կարգը
8. Վարչակարգը և օրենքները
9. Բահայի համայնքը
10. Նոր սահմանների հաղթահարում

Հավելված. Էդվարդ Գրենվիլ Բրաուն

Մատենագիտություն

Հղումներ

Առաջաբան

1974թ-ին Կանադայի բահայիների Ազգային Հոգևոր Ժողովի քաջալերմամբ դարոցականների և ուսանողների մի խումբ ստեղծեցին մի ասոցացիա, որպեսզի Բահայի հավատի պարբերական ուսուցումը բերեն համընդհանուր մակարդակի: Խումբը ծաղկեց, կազմակերպեց դասախոսություններ, վեհաժողովներ և մի շարք հրատարակումներ: Այսօր Բահայիների Ուսուցման Ասոցացիան, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Օտտավայում (Կանադա), հպարտանում է աշխարհի մի քանի երկրներում ազգային մասնաճյուղերի առկայությամբ:

Որպես զարգացող կազմակերպություն այն ընդունում է, որ գոյություն ունեցող աղբյուրներից ոչ մեկը չպետք է դասագրքի կարիք ունենա, որի վրա պետք է հենվեն ավարտական կուրսի ուսանողները: Արդյունքը ներկա աշխատանքի կարգաբերումն էր: Հետևաբար, հեղինակները երախտագիտության հատուկ զգացում են տածում Ասոցացիայի նկատմամբ ոչ միայն նախաձեռնության համար, որը ծնեց նախագիծը, այլև դրա իրականացման մշտական օգնության համար:

Մենք նաև ցանկանում ենք մեր երախտագիտությունն արտահայտել Թողդ Լաուսոնին Մաք-Ջիլի համալսարանի Իսլամական Ուսուցման Ինստիտուտին, ով վերանայեց «Պատմական նախադրյալներ» գլուխը, Բրոունլի Թոմասին, ով առատաձեռնորեն տրամադրեց իր մասնագիտական ծառայությունները՝ որպես տեխնիկական օգնություն և Մարիոն Ֆինլեյին Լավալի համալսարանից, ով այնքան բարի էր, որ կատարեց պարսկական և արաբական տերմինների գրադարձությունը: Շնորհակալություն ենք հայտնում նաև Լերրի Բակնելին և Բետտի Ֆիշերին Միացյալ Նահանգների Բահայի Հրատարակչության Հիմնադրամից իր կատարած բազմակողմանի պրակտիկ օգնության համար: Մենք երկուսս զգում ենք խորը պարտավորվածություն Սյուզան Լյոնսի նկատմամբ, ով օգնեց ուղղել տվյալ աշխատանքը մի քանի անգամ:

Վերջապես մենք շնորհակալություն ենք հայտնում բազմաթիվ բահայի ընկերներին, ովքեր քաջալերեցին մեզ ձեռնարկել այս նախագիծը և մասնավորապես մեր կանանց, ում ընթերցումը և աջակցությունը հնարավոր դարձրեց դրա ավարտումը:

Վ. Ս. Հ., Ջ. Դ. Ս

Տորոնտո 1984թ հուլիսի 8

Պարսկերեն և արաբերեն անվանումների գրադարձությունը

Պարսկերեն և արաբերեն անվանումների գրադարձության համակարգը, որը օգտագործվել է այս գրքում այժմ օգտագործվող նման համակարգերից մեկն է: Այն տարբերվում է Քեմբրիջյան համակարգից իր օգտագործած ակցենտով (“a” և “i”) ընդգծման փոխարեն (“ā” և “ī”), չնայած կան նաև մի քանի այլ տարբերություններ:

Մենք խուսափել ենք աշխարհագրական անվանումների գրադարձությունից, որոնք անգլերենում արդեն ունեն հաստատված ձև: Մենք այս նույն սկզբունքն ենք օգտագործել նաև արևելյան ծագման անձանց անունների դեպքում, որոնք արդեն արևմուտքում և մասնավորապես անգլերեն լեզվում հաստատել էին իրենց համարժեքները (օր. Մոհամմեդ): Պատվանունները (“շահ” կամ “իմամ”), որոնք ունեն անգլերենում իրենց համարժեքները չեն գրադարձվել եթե հանդիսացել են գրադարձված անվան մի մաս (Նասիրի-Դին-Շահ):

Եվ վերջապես մենք փորձել ենք հասնել որքան հնարավոր է պարզության՝ ճշգրտության և հստակության հետ միասին:

Ներածություն

Բահայի հավատը համաշխարհային անկախ կրոններից ամենաերիտասարդն է: Ծագելով Իրանում XIX դարի կեսերին՝ այն տարածվեց գրեթե ամբողջ երկրագնդով մեկ. նրա վարչական կենտրոնները գտնվում են աշխարհի ավելի քան երկու հարյուր պետություններում: Այն համախմբեց բազմաթիվ մարդկանց՝ անկախ նրանց ռասայական, սոցիալական, մշակութային և կրոնական պատկանելիությունից:

Նոր հավատը ձևավորվեց որպես միանգամայն ինքնուրույն կրոն, որն ամբողջովին հիմնված էր դրա հիմնադրի՝ Բահաուլլայի ուսմունքի վրա: Այն պաշտամունք չէ, ռեֆորմիստական հոսանք կամ աղանդ չէ որևէ այլ կրոնի շրջանակներում, այն չի կարելի անվանել նաև ուղղակի փոփոխության համակարգ: Բահայի հավատը տարբեր դավանանքներից նոր սինկրետիկ կրոն ստեղծելու փորձ չէ: Առնուղ Թոյնբիի խոսքերով.

«Բահայի հավատն Իսլամի, Քրիստոնեության և այլ ճանաչված համաշխարհային կրոններին հավասար կրոն է: Ղա աղանդ չէ. դա առանձին գոյություն ունեցող հավատ է, որն ունի նույն կարգավիճակը, ինչպես մյուս ճանաչված կրոնները»:

Այս գիրքը նպատակ ունի լայնորեն ուսումնասիրել Բահայի ուսմունքը: Չափազանց էական է հենց սկզբից նշել Բահայի հավատի գլխավոր կոնցեպցիան՝ մարդկության համախմբումը: Բահայի ուսմունքի հիմնական միտքն այն է, որ եկել է մարդկության՝ որպես մեկ համաշխարհային ընտանիքի համախմբման ժամանակը: Ըստ Բահաուլլայի Աստված գործի է դրել պատմության ուժերը, որոնք օգնում են աշխարհի ժողովուրդներին գիտակցել, որ մարդկային ցեղն իրենից մի ամբողջություն է ներկայացնում: Պատմական գործընթացի արդյունքում, որտեղ, ինչպես ենթադրում են բահայիները, իրենց կրոնը պետք է կենտրոնական դեր խաղա, կծագի համաշխարհային քաղաքակրթությունը:

Անգամ առանց հաշվի առնելու այդպիսի գրավիչ հեռանկարը՝ Բահայի հավատը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում նրանց համար, ովքեր հետաքրքրվում են կրոնի պատմությամբ, գլխավորապես, այն պատճառով, որ ուսումնասիրման համար պահպանվել են դարաշրջանի մատչելի փաստաթղթերը: Դժվար է, կամ գրեթե անհնարին է լրիվ արժանահավատությամբ բացահայտել այն դրդատառները, որոնք խթանել են մինչև Բահայի հավատն առաջացած համաշխարհային կրոններից յուրաքանչյուրի հետագա զարգացմանը: Բացատրել Բուդդայի ուսմունքի էությունը, պարզել Հիսուսի կյանքի իսկական իրադարձությունները, նկարագրել Ջրադաշտի դարաշրջանը և բացահայտել դրա ազդեցության աստիճանը, անգամ հիմնավորել Կրիշնայի պատմական գոյությունը՝ դրանք բոլորը գործնականորեն անլուծելի խնդիրներ են: Մոհամեդի կյանքի և անձի մասին տեղեկություններն ավելի մատչելի են, սակայն և այս դեպքում չպարզված են մնում բազմաթիվ կարևոր հարցեր:

Բահայի հավատն ուսումնասիրած առաջին արևմտյան պատմաբաններից էր քեմբրիջյան ականավոր արևելագետ Էդվարդ Գրենվիլ Բրաունը: Հատկապես նա է նշել, որ ժամանակ քիչ տարածված դավանաբանությունը եզակի հնարավորություն է տալիս մանրամասն վերլուծելու այն, թե ինչպես է նոր ծագած կրոնը ձեռք բերում անկախ, անջատ գոյություն: Բրաունը գրում է.

«...քանզի այստեղ նա (կրոնի հետազոտողը) լրջորեն բախվում է անձնավորությունների հետ, որոնք ժամանակի ընթացքում կտեղափոխվեն հերոսների ու կիսասաստվածների շարք, իսկ

նրանց կերպարը դեռ չի մշուշապատվել առասպելների ու ավանդությունների քողով. այստեղ, ժամանակակից օբյեկտիվ վկայությունների լույսի ներքո նա կարող է դիտել խանդավառության, հավատի, բուռն հավատարմության և անկոտրու մերտության (իսկ եթե ցանկալի է, նաև մոլեռանդության) այն զարմանալի ճողվածությունները, ինչպիսիք մենք սովոր ենք կապել մարդկային ցեղի վաղ պատմության հետ: Մի խոսքով, նա կարող է ներկա լինել հավատի ծագմանը, որը (ինչը բնավ բացառված չէ) միանգամայն ընդունակ է տեղ զբաղեցնել մեծագույն համաշխարհային կրոնների մեջ»:

Հատկապես այդ տեսակետն են նշում նաև ժամանակակից հետազոտողները, որոնք ուղիղ կապված չեն Բահայի համայնքի հետ.

«Բաբի-Բահայի շարժումը (ինչպես աշխարհի ոչ մի այլ կրոն) կրոնի պատմաբանին տրամադրում է անգնահատելի տեղեկություններ նոր հավատի առաջացման և զարգացման գործընթացի ուսումնասիրման համար: Ի օգուտ դրան կան, առնվազն, երկու փաստարկներ: Առաջինը՝ Բահայի հավատն առաջացել է բոլորովին վերջերս, այն դեպքում, երբ այլ կրոնները գոյություն ունեն հարյուրավոր և հազարավոր տարիներ: Տասնմեկ, այսպես կոչված հիմնական, «կենդանի» համաշխարհային կրոններից միայն Իսլամի (մ.թ.VIIդ.) և Միքիիզմի (մ.թ.XVIդ.) պատմություններն են չափվում հարյուրամյակներով: Մյուսները՝ Հինդուիզմը, Բուդդայականությունը, Ջայնիզմը, Դաոսիզմը, Կոնֆուցիանությունը, Սինթոիզմը, Ջրադաշտությունը, Հրեականությունը ու Քրիստոնեությունը գոյություն ունեն արդեն հազարամյակներ: Բահայի հավատն առաջացել է միայն անցյալ դարում (1844թ.), իսկ 1963թ. սկսվեց, ըստ երևույթին, դրա կայացման ավարտական փուլը: Այդ պատճառով ժամանակակից դարաշրջանն առավել բարենպաստ հնարավորություններ է բացում այդ կրոնի հետազոտման համար: Բահայի հավատն, այդպիսով, ժամանակակից կրոն է և արդյունքում շատ ավելի լայն հնարավորություններ է տրամադրում դրա ուսումնասիրման և ըմբռնման համար, քան հնագույն կրոնները»:

Վերջերս Իրանում Բահայի հավատի համախոհների ուժեղացող հետապնդումներն իսլամական իշխանությունների կողմից գրավել են համաշխարհային հասարակության ուշադրությունը: Քանի որ կշտամբանքներն առաջացան կրոնական համայնքին պատկանելու պատճառով, Բահայի հավատի նկատմամբ հետաքրքրությունն աճեց: Դրա էությունը, դրույթները, որոնցով այն տարբերվում է Մահմեդականությունից և պատմական իրադարձությունների հերթականությունը, որոնք հանգեցրին բռնության ներկայիս բռնկումներին, լայնորեն քննարկվել են արևմտյան զանգվածային լրատվության միջոցներում:

Այդ բոլոր վերը նշված պատճառների հետևանքով Բահայի հավատն ավելի հաճախ է մտցվում համալսարանների և քոլեջների կրոնի պատմության ուսումնական դասընթացների մեջ: Ուսմունքի հիմնադրի Սուրբ Գրքերը մեկնաբանիչների խոր բացատրությունների հետ մեկտեղ մատչելի են ընթերցող հասարակության համար՝ անգլերեն լեզվով թարգմանությունների շնորհիվ: Բացի այդ գլխավոր աղբյուրներից, գոյություն ունի գրականություն Բահայի հավատի մասին, որը բաժանվում է երկու տարատեսակների՝ լուսավորչական և կրթական նշանակություն ունեցող տարբեր մեկնաբանությունները և ուսումնական ձեռնարկները, ինչպես նաև քրիստոնյա հոգևորականության՝ Բահայի հավատի հակառակորդների, քննադատական ելույթները: Այդ բոլոր հրապարակումներն ունեն երկրորդական, օժանդակ բնույթ և ոչ մի կերպ չեն համապատասխանում Բահայի հավատի պատմության օբյեկտիվ ուսումնասիրմանը և էությանը:

Առաջարկվող աշխատությունը շոշափում է չորս թեմա՝ 1. Բաբի և Բահայի հավատի պատմությունը, 2. Բահաուլլայի հիմնարար ուսմունքները 3. Բահայի հավատի վարչական կառուցվածքը և 4. Բահայի համայնքի զարգացումը: Եզրափակիչ գլուխը վերաբերվում է որոշ արդիական խնդիրներին, որոնք ներկաումս կանգնած են երիտասարդ կրոնի առջև՝ խնդիրների, որոնք առաջացել են 140 տարվա դրամատիկ պատմություն ունեցող Հավատի ընթացքում:

Ցանկացած կրոնի ուսումնասիրումը կապված է հատուկ դժվարությունների հետ: Ի տարբերություն երևույթների մեծ մասի, որոնցով զբաղվում է գիտությունը, կրոնում հետազոտման առարկա է ծառայում ինքը՝ մարդը: Կրոնական ըմբռնումը պահանջում է ոչ միայն ուշադրություն, այլև, վերջին հաշվով, ներքին ինքնահրաժարեցում և խորը կենտրոնացում: Հատկապես այդ պատճառով էին շատ կրոնական մտածողներ պնդում, որ գիտության և կրոնի միջև գոյություն ունի անլուծելի բախում իր հիմքում, և որ կրոնի ոլորտն ի սկզբանե գիտական ըմբռնման ոլորտից դուրս է:

Այստեղ Բահայի հավատը օգնության է գալիս նրանց, ովքեր սկսում են կրոնի ուսումնասիրումը: Հավատի հիմնադրի՝ Բահաուլլայի խոսքերով Տիրոջ մեծագույն ընծան մարդկությանը բանականությունն է: Բահայի հավատի համախոհներն ընդունում են, որ բոլոր գոյություն ունեցող երևույթները, այդ թվում հոգևոր երևույթները, պետք է ըմբռնել բանականությամբ և այդ ըմբռնման գործիք է ծառայում գիտական հետազոտման մեթոդը: Բահաուլլայի որդի Աբդուլ-Բահան, որը նշանակվել է որպես նրա Սուրբ Գրքերի մեկնաբանիչ, պնդում է. «Յուրաքանչյուր կրոն, որը հակասում է գիտությանը կամ հակառակ է դրան, տգիտություն է, քանզի տգիտությունը հակառակ է գիտելիքին»:

Այդպիսով, յուրաքանչյուր մարդ, ով ուսումնասիրում է Բահայի հավատը, հայտնաբերում է, որ այն բաց է հետազոտման համար: Փաղտնիքները, որոնց մասին խոսվում է այնտեղ, նման են տիեզերքի հանելուկներին և արտացոլում են ընդամենը մարդկային գիտելիքի համընդհանուր ընդունված սահմանափակությունը: Այլ խոսքերով, Բահայի հավատը բնության վերաբերյալ չի պնդում ոչ մի բան, ինչը կհակասեր գիտությանն ու բանականությանը: Ծիսականության նվազագույն չափը և քրմական գործառույթներով օժտված հոգևորականության բացակայությունը նույնպես նպաստում են Բահայի հավատի հիմնական դրույթների բավականին դյուրին յուրացմանը:

Սակայն կրոնի պատմության ուսումնասիրումն ընդհանուր ոչինչ չունի հնէաբանության հետ: Դա կյանքի երևույթների դիտում է, որոնք պետք է ըմբռնել ոչ միայն բանականությամբ, այլև սրտով, եթե ցանկանում ենք ստանալ դրանց մասին պարզ պատկերացումներ: Այդ Հավատում մարմնավորված են միլիոնավոր մարդկանց իղծերը՝ իղծեր, որոնք սահմանում են կենսականորեն կարևոր որոշումները: Դա աշխարհայացք է, որի համար հազարավոր բահայիներ ընդունել են և մինչ այժմ ընդունում են տանջանքներ և մահ:

Տվյալ աշխատանքի հեղինակներն իրենց պատմական վերլուծության մեջ փորձել են ներդաշնակորեն հավասարակշռել հոգևոր գործունեության երկու կողմերը՝ մտքի և սրտի պահանջները, ինչը կրոնի ուսումնասիրումը սկսող յուրաքանչյուր մարդուն ներկայացվող անհրաժեշտ պայման է:

1. Պատմական նախադրյալները

Այն պնդումը, իբր որևէ կրոն անկախ է այլ դավանանքներից, բոլորովին չի նշանակում, որ այն ծագել է դատարկ տեղում: Բուդդայականությունը ծագեց ավանդական Հինդուիզմի հողի վրա և միայն այն ժամանակ, երբ այդ դավանանքը տարածվեց Հիմալայներից այն կողմ, այն վերջնականապես վերածվեց ինքնուրույն կրոնի, որը պետք է դառնար որոշիչ մշակութային գործոն Չինաստանում, Ճապոնիայում և Հարավ-Արևելյան Ասիայի երկրներում: Հիսուս Քրիստոսն ու նրա անմիջական հետևորդներն իրենց առաքելությունը սկսեցին Հրեականության շրջանակներում և մոտավորապես երկու դար շարունակ Մերձավոր Արևելքի ժողովուրդները Քրիստոնեությունը համարում էին այն ծնած կրոնի վերափոխված ճյուղ: Քրիստոնեությունը՝ սեփական գրվածքներով, օրենքներով, վարչական սկզբունքներով և ծիսականությամբ հանդես եկավ ավելի ուշ, երբ միջերկրածովյան պետություններից սկսեց գրավել մեծ քանակությամբ ոչ սեմիտական ծագման համայնոհներին:

Բահայի հավատի կրոն-նախամայր էր Իսլամը: Ինչպես Հրեականության մեսիական ապավինումները ծնեցին Քրիստոնեությունը, այնպես էլ Իսլամի կատարածաբանության տեսակետները կյանք տվեցին այն կրոնին, որն ապագայում պետք է դառնար Բահայի հավատ: Սակայն, Քրիստոնեության նման, Բահայի հավատը լիովին անկախ է նախորդ կրոնից: Այս կարծիքի իսկությունը վերջերս մեկ անգամ ևս հաստատեց ժամանակակից Իսլամը հետազոտող ամենահայտնի հեղինակներից մեկը՝ Ալլամահ Սեիդ Տաբաթաբային (Ալլամահ հարգալից մականուն է, որը նշանակում է «բազմագիտակ»): Նա անվերապահորեն պնդում է, որ «...Բաբի և Բահայի համայնքները ոչ մի կերպ չպետք է դիտվեն որպես Շիականության ճյուղեր»:

Բահայի հավատը ծնվեց Պարսկաստանում, որտեղ գլխավոր կրոնն Իսլամն է: Այնուհետև այն տարածում ստացավ հարևան՝ մահմեդականներով բնակեցված Օսմանյան և Ռուսական կայսրությունների տարածաշրջաններում և Հնդկաստանի հյուսիսում: Չնայած զարգացման վաղ փուլում նոր կրոնն իր համայնոհների շարքերը գրավեց փոքրաքանակ թվով հրեաների, քրիստոնյաների և գրադաշտականների, այնուամենայնիվ, ճնշող մեծամասնությունը եկավ Իսլամից: Նրանք կրոնական գաղափարները փոխ առան Ղուրանից և նրանց գրավում էին, գլխավորապես, նոր դավանանքի այն տեսակետները, որոնք վերաբերում էին իսլամական մարգարեությունների կատարմանը և մահմեդական ուսմունքի մեկնաբանմանը: Նմանապես իսլամական հոգևորականությունը սկզբից դիտում էր նոր հավատի կողմնակիցներին որպես մահմեդական-հերետիկոսների:

Հաշվի առնելով, որ Բահայի հավատը ծագեց Իսլամի հողի վրա, մենք անհրաժեշտ ենք համարում հենց սկզբից հաշվի առնել այդ դավանանքի մահմեդական նախահիմքը: Դա կարևոր է ևս մեկ պատճառով՝ Իսլամը ներգրավվում է կրոնների պատմության և կրոնների միջև փոխհարաբերությունների կոնցեպցիայի մեջ, որը կենտրոնական տեղ է գրավում Բահայի ուսմունքում: Բահայի հավատը, հնարավոր է, միակ կրոնն է, որը լիովին ընդունում է մյուս բոլոր հիմնական դավանանքները: Բահայիները հավատում են, որ Աբրահամը, Մովսեսը, Ջրադաշտը, Բուդդան, Հիսուսը, և Մոհամեդը հավասարապես

միակ Աստծո իսկական ավետաբերներն են: Աստծո այդ Ավետաբերների ուսմունքները Բահայի հավատը դիտում է որպես փրկության ճանապարհներ, որոնց շնորհիվ կիրականացվի «մշտապես կատարելագործվող քաղաքակրթության առաջխաղացումը»: Սակայն, բահայիները հավատում են, որ մարդկային պատմության մեջ Աստծո բոլոր վերը թվարկված միջամտությունները ենթարկվում են էվոլյուցիոն զարգացման օրենքներին, Տիրոջ ամեն նոր հայտնություն նախորդից ավելի ամբողջական է և հաջորդի համար ճանապարհ է բացում: Դրա հետ կապված Իսլամը՝ որպես նախորդ կրոններից ամենաերիտասարդը, դարձավ այն հողը, որի վրա ծագեց Բահայի հավատը: Ուրեմն, զարմանալի չէ, որ բահայի գրվածքներում հանդիպում են բազմաթիվ գաղափարներ և տերմիններ Ղուրանից:

Իսլամի որոշ դոգմաներ հատկապես կարևոր են Բահայի հավատի պարզ ըմբռնման համար: Ինչպես և մահմեդականները, բահայիները հավատում են, որ Աստված միակն է և Նրա էությունն անըմբռնելի է: Աստծո կամքն արտահայտվում է Իր Ավետաբերների միջոցով, որոնց բահայիներն անվանում են Աստվածահայտնություններ կամ Աստծո Հայտնիչներ: Յուրաքանչյուր Հայտնիչի առաքելությունն է հոգևոր զարգացման համար հավատացյալներին ոչ միայն տալ կատարյալ ուղեցույց, այլև ազդել հասարակության բնույթի վրա ամբողջությամբ: Այդ առումով երկու դավանաբանությունների միջև կարևոր տարբերությունն այն է, որ բոլոր գոյություն ունեցող կրոններից Ղուրանն ընդունում է Աստծուց ոգեշնչված միայն հուդայականությունը, քրիստոնեությունը և հենց իսլամը, իսկ բահայիները ենթադրում են, որ բոլոր կրոնները Միակ Աստվածային նախասահմանման անբաժանելի բաղադրիչներն են.

«Կասկած չկա, որ աշխարհի ժողովուրդները՝ անկախ իրենց ազգային կամ կրոնական պատկանելիությունից, իրենց ոգեշնչումն են քաղում միևնույն Աստծուց և պաշտում են միևնույն Աստծուն: Տարբերությունը ծեսերում է, որոնց նրանք ենթարկվում են, ինչը բացատրվում է այն ժամանակի պահանջների ու կարիքների տարբերությամբ, երբ դրանք հայտնվել են: Բոլոր կրոնները՝ բացառությամբ այն քչերի, որտեղ ելք է գտնում մարդկային անբարոյականությունը, ուղարկված են Աստծուց և արտացոլում են Նրա Կամքը և Նպատակը»:

Գոյություն ունի Իսլամի ևս մեկ տեսակետ, որն ազդեցություն ունեցավ նոր կրոնի զարգացման վրա և սահմանեց դրա նկատմամբ մահմեդականների վերաբերմունքը: Կրկնելով Քրիստոնեության փորձը՝ Իսլամն աստիճանաբար սկսեց մասնատվել մի շարք աղանդների: Առավել մեծերից մեկը շիական աղանդն է: Շիաները հավատում են, որ համաձայն Մոհամեդի կամքի՝ Իր հետնորդներին է անցնում ուղղահավատների հոգևոր և աշխարհիկ ղեկավարությունը: Այդ ընտրյալներին, ում անվանում են իմամներ կամ «ղեկավարներ», իբր ընծայված է բացարձակ անսխալականություն այն ամենում, ինչը կապված է իրենց առաքելության հետ: Մահմեդականների մեծ մասը, սակայն, մերժում էր նման նկրտումները և հավատում էր, որ բավական է վարվել համաձայն սուննայի: Սուննա նշանակում է «ուղի», այսինքն, այնպիսի կենսակերպ և վարք, որոնք ավանդույթը վերագրել է Մոհամեդին: Այդ հայեցակետի կողմնակիցները հայտնի են որպես սուննիներ: Չնայած այսօր սուննիներն ավելի շատ են, քան շիաները և խոսելով սուննիների մասին՝ գիտնականները սովորաբար օգտագործում են «ուղղափառ մահմեդականներ» տերմինը, հակառակ «ոչ ուղղափառ» շիաների, շիական Իսլամն ունի վաղեմի և հարգալից ավանդույթներ, որոնք վերջերս սկսեցին ավելի ու ավելի շատ գրավել ոչ մահմեդական գիտնականների ուշադրությունը:

Մեր թվարկության 661թ., երբ Մոհամեդի մահվանից անցել էր ընդամենը 29 տարի, մահմեդական աշխարհում իշխանությունը վերցրեցին այն տիրակալները, ովքեր մի շարք դինաստիաների սկիզբ դրեցին: Համարվում էր, որ այդպիսին էր ուղղահավատների ընտրությունը, բայց, փաստորեն, դա մի քանի հզորագույն ընտանիքների իշխող ազդեցության արդյունք էր: Այդ սուննիական դինաստիաներից առաջին երկուսը՝ Օմեյյադներն ու Աբասիդները համարում էին, որ իմամների իշխանությունը կասկածի տակ է դնում իրենց սեփական տիրակալության օրինականությունը: Արդյունքում իմամները մահապատժի ենթարկվեցին. առաջինը մահապատժի ենթարկվեցին Մոհամեդի թոռներ՝ Հասանն ու Հուսեյնը: Հետագայում շիաները ճանաչեցին այդ իմամներին՝ Մարգարեի հետնորդներին, որպես սրբեր և նահատակներ:

Չնայած Շիականությունը ծագել է արաբների մոտ, առավել մեծ ազդեցության այն հասավ Պարսկաստանում: Հենց սկզբից Պարսկաստանի նորահավատ մահմեդականներին գրավում էր այն գաղափարը, որ իմամը Բարձրալի ուղարկված հոգևոր ղեկավարն է: Ի տարբերություն արաբների, պարսիկները վաղուց իրենց տիրակալներին համարել են Աստծո օձյալներ և ավանդական հավատարմությունը տիրակալի նկատմամբ տեղափոխել Մարգարեի հետնորդների և Նրա նշանակված ժառանգների վրա: Պարսկաստանում սուննիական խալիֆների, ամիրապետերի հարյուրամյակներ տևող ճնշումից հետո, ի վերջո հաղթանակեց իմամատի ավանդույթը: Դա տեղի ունեցավ XVI դարում, երբ իշխանության եկավ առաջին դինաստիան, որի բոլոր անդամները հետագայում Շիականություն էին դավանում՝ Սեֆեվիդների դինաստիան:

Սակայն, արդեն այդ ժամանակ իմամների գիծն ընդհատվեց: Իրանական շիաները հավատում են, որ 873թ. Աստծո տասներկուերորդ և վերջին ընտրված իմամը՝ այն ժամանակ դեռ երեխա, նախորդների ճակատագրից խուսափելու համար հեռացավ գաղտնի ապաստարան: Ըստ ավանդույթի, նա կհայտնվի «ժամանակների վերջում», որպեսզի երկրի վրա արդարության արքայություն հաստատի: Այդ ավանդական կատարածաբանական ուսմունքը (այսինքն ուսմունք աշխարհի վերջի մասին) քրիստոնյաների կողմից Քրիստոսի երկրորդ գալստյան և Մահայանայի Բուդդայականության մեջ Բուդդա Մայտրեայի, այսինքն, տիեզերական արդարության Բուդդայի խոստացված գալստյան հետ ընդհանուր շատ բան ունի: Մահմեդականների կողմից Ավետյաց Փրկչին՝ «Թաքնված իմամին» տրված տիտղոսներից են նաև *Մահդի* (Ուղարկվող) և *Կաիմ* (Նա, Ով Կվերածնվի՝ ի նկատի ունենք՝ Մարգարեի ընտանիքից) տիտղոսները:

Ավանդույթի համաձայն, իր անհայտանալու օրվանից 69 տարվա ընթացքում տասներկուերորդ կամ Թաքնված իմամն իր համախոհների հետ շփվում էր իր ներկայացուցիչների միջոցով: Այդ միջնորդներին շնորհվեց «բաբ» (դարպասներ) տիտղոսը, քանզի միայն դրանց միջոցով մուտք կար Թաքնված իմամի մոտ: Այդ տիտղոսի կրողներն չորս հոգի էին և 941թ. նրանցից չորրորդը մահացավ՝ ոչ ոքի չանվանելով իրեն փոխարինող:

Քանի որ և՛ իմամը, և՛ նրա վերջին *բաբը* հրաժարվեցին անվանել փոխարինողին, ուղղահավատներին մնում էր միայն այդ գործն Աստծո ձեռքը տալ: Ճիշտ ժամանակին կհայտնվի Աստծո ավետաբերը կամ ավետաբերները: Իմամ Մահդին կամ Կաիմը նրանցից մեկը կլինի: Նրանց միջոցով Աստծո Կամքը նորից կուղղվի անմիջապես մարդկանց: Հենց այդ ավանդույթից XIX դարի կեսերին ծագեց Բահայի կրոնը, իսկ մինչ այդ՝ Բաբի հավատը:

2. Բաբի հավատը

XIX դարի սկզբին, ինչպես իսլամական, այնպես էլ քրիստոնեական աշխարհում սպասում էին մեսիայի գալուստին: Պարսկաստանում երկու հեղինակավոր աստվածաբան՝ շեյխ Ահմեդ Ահսային և նրա աշակերտ ու փոխարինող՝ Սեյիդ Կազիմ Ռեշտին քարոզում էին մի ուսմունք, որն արմատապես տարբերվում էր ուղղափառ շիական ուսմունքից: Բացի նրանից, որ «շեյխները» (այդպիսի անվանման տակ են հայտնի հիշատակված աստվածաբանների հետևորդները) մեկնաբանում էին Ղուրանն ավելի շուտ այլաբանորեն, քան բառացիորեն, նրանք ազդարարում էին իմամ Մահդիի՝ ավետյաց փրկչի, Մոհամեդի գործի շարունակողի մոտակա երկրորդ գալուստը: Նրանց ուսմունքը մեծ հետաքրքրություն առաջացրեց և հասարակության մեջ ստեղծեց սպասման մթնոլորտ: Այդ առումով այն նման էր այդ ժամանակ Եվրոպայում և Ամերիկայում գոյություն ունեցող քրիստոնեական միավորման՝ միլլերիտների հայացքներին, որոնք անհամբեր սպասում էին Հիսուս Քրիստոսի վերադարձին:

Սեյիդ Կազիմն իր մահից առաջ (1843թ.) կանչեց աշակերտներին և ասաց, որ նրանք մեկնեն Ավետյացին փնտրելու, որը շուտով պետք է գար: Սեյիդ Կազիմը նշում էր, որ այդ տարի՝ իսկ մահմեդական օրացույցով դա 1260թ. էր, կլրանա ուղիղ հազար լուսնային տարի Թաքնված իմամի անհայտանալուց հետո:

Առաջատար շեյխներից մեկի՝ ոմն Մոլլա Հուսեյնի համար այդ փնտրումն անսպասելի ավարտվեց Շիրազ քաղաքում 1844թ. մայիսի 23-ի երեկոյան, երբ նա հանդիպեց Սեյիդ Ալի-Մոհամեդ անվամբ մի երիտասարդի (սեյիդ էին անվանում Մոհամեդ մարգարեի հետևորդներին), ով պնդում էր, որ հենց ինքն է այն Ավետյացը, ում փնտրում են շեյխները: Նույնը Սեյիդ Ալի-Մոհամեդը կրկնեց իր՝ Կայում ուլ-Ասմա աշխատության մեջ, որը նա սկսեց գրել հենց նույն երեկո: Այդ տեքստը դարձավ նոր կրոնի՝ Բաբի հավատի հիմքը: Այնտեղ ասվում է, որ դրա հեղինակը՝ Աստծո Ավետաբերն է՝ Հիսուսի, Մոհամեդի և նրանց նախորդների առաքելության շարունակողը: Այնուհետև Սեյիդ Ալի-Մոհամեդն իրեն անվանում է նաև մահմեդականների մոտ ընդունված «Բաբ» (Ղարպասներ) տիտղոսով՝ չնայած համատեքստից պարզ է, որ այդ բառի մեջ նա ներդնում է մահմեդական ավանդույթից էապես տարբերվող հոգևոր իմաստ:

Բաբի հմայքը, ինչպես նաև նրա՝ Ղուրանի առավել դժվար մասերի նշանակությունը մեկնաբանելու հազվագյուտ ունակությունը, Մոլլա Հուսեյնի վրա թողեցին այնպիսի տպավորություն, որ նա իրեն հայտարարեց նոր հավատի համախոհ: Հենց Մոլլա Հուսեյնը դարձավ Բաբի հավատի առաջին հետևորդը: Մի քանի շաբաթվա ընթացքում ևս տասնյոթ շեյխի՝ նրանցից, ովքեր փնտրում էին Ավետյացին, ընդունեցին, որ Բաբն այդ նույն Ղեսպանորդն է: Նոր հավատի այդ առաջին տասնութ հետևորդները, ում նա անվանեց «Ապրողի Տառեր», Բաբի կամքով մեկնեցին, որպեսզի անբողջ Պարսկաստանով մեկ լուր տարածեն, որ ծագեց Ղուրանում և բոլոր ավելի վաղ Սուրբ Գրքերում կանխատեսված Աստծո Օրվա արշալույսը:

Սեյիդ Ալի-Մոհամեդը, ով պատմության մեջ մտավ Բաբ անվան տակ, ծնվել է Շիրազում 1819թ. հոկտեմբերի 20-ին վաճառականի ընտանիքում: Եվ նրա հայրը, և՛ մայրը սերվել են Մոհամեդ մարգարեի ցեղից: Բաբը վաղ զրկվեց հորից և տղային մեծացրեց մորեղբայրը՝ Հաջի Միրզա Սեյիդ Ալին, ով հետո դարձավ Նրա առավել

հավատարիմ հետևորդներից մեկը և նոր հավատի առաջին նահատակներից: Մեզ հասած բոլոր վկայություններն ասում են, որ Բաբն անսովոր երեխա էր: Չնայած այն ամենը, ինչ նրան սովորեցրել էին, ընթերցանության և գրի տարրական հմտություններ էին, ինչպես դա այն ժամանակ ընդունված էր (Պարսկաստանի երեխաների մեծ մասն անգամ այդպիսի ուսում չէր ստանում), նա դրսևորում էր իր ուսուցչին և իրեն ճանաչող այլ հասուն մարդկանց շքմեցնող՝ ի ծնե խորհրդավոր իմաստունություն: Նրա մտքի բացառիկ հատկություններն իր մեջ զուգակցվում էին իր անձի խոր ոգեշնչվածությամբ: Դեռ մանուկ հասակում Բաբը երկար ժամեր էր անցկացնում մտորումների և աղոթքների մեջ: Պատահել է դեպք, երբ ուսուցիչը դժգոհել է, որ երեխան անչափ կրոնասեր է: Բաբը պատասխանել է, որ չփվում է իր «Նախապապի» հետ, որին՝ հույս ունի ընդօրինակել: Նա ի նկատի ուներ Մոհամեդ մարգարեին, ում երբեմն այդպես են անվանում նրանք, ովքեր իրենց համարում են նրա ուղիղ հետևորդները:

Բաբը դպրոցը թողեց, երբ դեռ տասներեք տարեկան էլ չկար, իսկ տասնհինգ տարեկանից սկսեց ավանդական ընտանեկան զբաղմունքը՝ առևտուրը: Սկզբից Բաբն աշխատում էր մորեղբոր հետ Շիրագում, բայց շուտով նրան ուղարկեցին Բուշիր, որտեղ նա սկսեց կառավարել ընտանեկան առևտրի տունը: Ջբաղվելով վաճառականի գործով՝ նա ձեռք բերեց ազնիվ և խելացի մարդու համբավ: Միաժամանակ Բաբը մշտապես տրվում էր բարեպաշտ մտորումների, ընդ որում իր որոշ մտքերը գրի էր առնում: 1841թ. գարնանը նա մի քանի ուղևորություններ ձեռնարկեց մահմեդականների սրբազան քաղաքներ, որպեսզի խոնարհվի նահատակ իմամների գերեզմաններին: Զերբեյա քաղաքում նա հանդիպեց Սեյիդ Կազիմին, ով իրեն ողջունեց արտասովոր հարգանքով ու խանդավառությամբ, որոնք ապշեցրին աստվածաբանի աշակերտներին: Սեյիդը, սակայն, գերադասեց բացատրություններ չտալ: Բաբը որոշ ժամանակ անցկացրեց Սեյիդ Կազիմի համախոհների մեջ, այնուհետև վերադարձավ Պարսկաստան և ամուսնացավ Խաջիջայի հետ՝ վաճառականի ընտանիքից, որ Բաբի ընտանիքի հետ հեռավոր ազգակցական կապի մեջ էր: Եվս երկու տարի անց Բաբը Շիրագում հանդիպեց Մուլլա Հուսեյնին և նրա առջև բացեց իր գաղտնիքը:

Անհրաժեշտ էր հաջորդ քայլն անել՝ ամբողջ ժողովրդի մեջ հռչակել նոր հավատը: Սկզբից Բաբն ուխտագնացություն կատարեց մահմեդական աշխարհի գլխավոր սրբավայրեր՝ Արաբիայի Մեքքա և Մեդինա քաղաքներ: 1844թ. դեկտեմբերի 20-ին, ուրբաթ օրը՝ բռնվելով Քաաբայի դռան օղակից՝ Իսլամի բոլոր համախոհների կողմից առավել պաշտվող սրբությունից, մեծ քանակով մարդկանց ներկայությամբ Բաբն ազդարարեց. «Ես այն Կաիմն եմ, Ում գալուստը դուք սպասում եք»: Բացի այդ, նա Մեքքայի շարիֆին՝ գերեզմանների պահապանին, ուղղեց հատուկ *հուշատախտակ*, այլ խոսքով, նամակ, որում կրկնեց այդ պնդումը: Բաբին վերաբերվեցին մեծ հարգանքով, բայց սուննիական իշխանությունները նրա հայտարարությունները լուրջ չընդունեցին: Ոչ մի խոչընդոտի չհանդիպելով՝ Բաբը ծովով մեկնեց Պարսկաստան, որտեղ քարոզչական գործունեության արդյունքում, որը ծավալել էին Ապրողի Տառերը, աճում էր անհանգստության ալիք ինչպես հոգևորականության, այնպես էլ հասարակ հավատացյալների մեջ:

Բաբի հայտարարությունները շիական մահմեդական հոգևորականությանը ներկայանում էին ոչ թե ուղղակի որպես հերետիկոսություն, այլ ոտնձգություն Իսլամի հիմքերի նկատմամբ: Ուղղափառ Իսլամի տեսակետից Մոհամեդը «Մարգարեների Կնիք» էր, այսինքն նա, ով մարդկության համար բերեց վերջին Աստվածային Հայտնությունը,

որից հետո պետք է գա Վերջին Դատաստանի Օրը: Ըստ նրանց, բոլոր կրոններից միայն Իսլամն է պահպանվել մաքրությամբ և ամբողջությամբ, քանի որ դրա գանձարանում՝ Դուրանում կան հենց Մարգարեի իսկական խոսքերը: Ելնելով այդ նախադրյալից՝ մահմեդական աստվածաբանները շարունակում էին պնդել, որ Իսլամը կպատասխանի մարդկության բոլոր կարիքներին մինչև Դատաստանի Օրվա գալը և հետագայում ոչ մի նոր Աստվածային Հայտնություն չի լինելու:

Այսպիսով, հայտարարելով իր առաքելության մասին՝ Բաբը կասկածի տակ էր դնում գլխավորը, ինչի վրա հիմնվում էր այդ աստվածաբանական համակարգը: Շիական համախոհները՝ Իսլամի այն ճյուղի, որը Պարսկաստանում գերակշռող էր, հատկապես հիվանդագին ընկալեցին նրա մարտահրավերը: Շիականության բազմադարյան ավանդույթի համաձայն, բոլոր մարդկային գործերում անվիճելի հեղինակությունը Թաքնված իմամինն էր, ում գալուստը պետք է ազդարարեր Դատաստանի Օրվա մասին: Ենթադրվում էր, որ անգամ շահերի իշխանությունն իրենց տրվում է Իմամի կամքով: Հատկապես այդ պատճառով Բաբն ամբողջ Պարսկաստանով մեկ իսկույն բախվեց մոլլաների հակազդեցության հետ՝ հենց նրանք լսեցին նրա հայտարարությունը: Այն ավելի արագացավ այն պատճառով, որ Բաբը բացահայտորեն մերկացնում էր տգիտության ու դրամաշորթության տարածումը հոգևորականության մեջ: Բարոյականության անկումը նրանց մեջ, ում պաշտել են որպես հոգևոր հովիվներ, Բաբը դիտում էր որպես Պարսկաստանի ժողովրդի բարգավաճմանը խանգարող գլխավոր խոչընդոտ:

Հոգևորականների թշնամությունը նոր հավատն ընդունողների հասցեին սովորական մեղադրանքներից շատ ավելի հեռու էր գնում: XIX դարում Պարսկաստանում շահերի տիրապետության հետ մեկտեղ գոյություն ուներ նաև կառավարման այլ համակարգ՝ հոգևորականության իշխանություն: Մարդկանց առօրյա կյանքը որոշվում էր, մեծ մասամբ, իսլամական կրոնական օրենքներով, և դրա խախտողները կանգնում էին մուջտահիդների՝ այսինքն, աստվածաբանության դոկտորների դատարանի առջև: Տեսականորեն այդ հոգևոր դատավորների դատավճիռների կատարումը կախված էր աշխարհիկ իշխանությունների աջակցությունից: Բայց գործնականում շիական հոգևորականությունը հնարավորություն ուներ դատավճիռների կատարումն իրականացնել և առանց իշխանությունների համաձայնության: Մեր ժամանակակիցը՝ այդ շրջանի առաջատար հետազոտողը, այսպես է նկարագրում Պարսկաստանում ստեղծված այն ժամանակաշրջանի պատմական հանգամանքները, երբ Բաբը հայտարարեց իր առաքելության մասին.

«Քաջարական դինաստիայի իշխանության գրեթե ամբողջ ընթացքում մենք դիտում ենք դեպքեր, երբ մուջտահիդները, հատկապես Սպահանում ու Թավրիզում, իրենց տնօրինության տակ են ունեցել զինված խմբեր, որոնք այլ կերպ, քան անձնական բանակ, չես անվանի: Սկզբից այդ ջոկատները բաղկացած էին մեծ մասամբ ոչ թե մոլլաներից, այլ իսկական ավազակներից (լութիներից): Լութիները, ինչպես նաև իրենց նման ֆաթիները, ովքեր սկզբից ասպետական եղբայրությունների էին համախմբվում Անատոլիայում և արաբական հողերում, պաշտպանում էին եկեղեցականներին՝ հաճախ մրցահրավեր նետելով իշխանություններին և կյանքի էին կոչում նրանց ֆեթվերը: Փոխարենը լութիներին թույլ էր տրվում զբաղվել կողոպուտներով և ավազակությամբ, իսկ երբ նրանց պատիժ էր սպասվում, օգտվել բեստ անվան տակ հայտնի անձեռնմխելի ապաստաններով մեչետներում և ուլեմների տներում»:

Այդ անձնական բանակները հրատապ ջոկատների դեր էին խաղում: Բացի դրանցից, մոլլաներն ունեին ավելի հզոր մարտական ռեսուրսներ: Բավական էր, որ հոգևորականությունն իր թշնամիներից մեկին հայտարարեր անհավատ, որ մոլեռանդ քաղաքացիների ու գյուղացիների տգետ ամբոխները լցնեին փողոցները՝ պաշտպանելով այն, ինչ իրենք համարում էին միակ ճշմարիտ հավատ: Կրոնական ուժերի հզորությունը հաճախ ուղղված էր ոչ միայն պառակտողական աղանդների, այլև իշխանությունների դեմ:

Չնայած մարտնչող հոգևորականության ավելի ու ավելի աճող սպառնալիքին՝ 1845-1847թթ. իրենց բաբի՝ այսինքն, Բաբի հետևորդ հայտարարող մարդկանց քանակն արագ աճում էր: Ավելին, նրանց շարքերն ավելանում էին հոգևորականության միջավայրից դուրս եկածներով: Նոր հավատի համախոհներից մեկը փայլուն և չափազանց հեղինակավոր աստվածաբան Սեյիդ Յահյա Ղարաբին էր՝ հետագայում՝ Վահիդը (Անգուզական): Տեղական հոգևորականության պահանջով Շիրազի տիրակալը Բաբին տնային կալանքի ենթարկեց: Վահիդին ուղարկեցին Բաբի մոտ Պարսկաստանի տիրակալ՝ Մոհամեդ շահի հրամանով, ով չցանկանալով բավարարվել ասեկոսներով, ցանկանում էր նոր շարժման մասին առաջին ձեռքից ստանալ ճիշտ տեղեկություններ: Ջարմանալի չէ, որ տեղեկանալով Վահիդի՝ նոր հավատին դառնալու մասին, շահն անմիջապես հրամայեց Բաբին մայրաքաղաք բերել պահակախմբով, բայց հարգալից կերպով: Բաբը մինչ այդ էլ էր հայտարարել, որ կուզեր հանդիպել տիրակալի հետ և մանրամասն պատմել իր առաքելության մասին:

Ցավոք, այդ պլանը չիրականացավ: Մոհամեդ շահը թույլ և անվստահ մարդ էր: Բացի այդ նա տառապում էր հիվանդությամբ, որը մեկ տարի անց նրան գերեզման տարավ: Նա գտնվում էր իր առաջին նախարար՝ Հաջի Միրզա Աղասիի ազդեցության տակ, ով Պարսկաստանի պատմության ամենաարտասովոր դեմքերից մեկն էր: Առաջին նախարարը շահի ուսուցիչն էր, երբ նա դեռ մանուկ էր և օգտվում էր շահի լիակատար վստահությունից: Վախենալով, որ շահի հանդիպումը Բաբի հետ կբերի իր սեփական ազդեցության թուլացմանը՝ առաջին նախարարը հրամայեց, որ Բաբին գաղտնի ուղարկեն Մահ-Քու ամրոց, որը գտնվում էր երկրի հյուսիսում՝ Ռուսաստանի սահմանին գտնվող Ադրբեջանի նահանգում: Շահին նա բացատրեց, որ Բաբի գալուստը մայրաքաղաք կարող էր նրա համախոհների և ուղղափառ հոգևորականության միջև բախումների բերել: Դրանից հետո կարող էին հասարակական անկարգություններ սկսվել, որոնք այն ժամանակ հաճախակի էին տեղի ունենում:

Ինչևիցե, դժվար է կասկածի տակ դնել այն, որ առաջին նախարարը՝ ծնունդով Ադրբեջանից, պատահաբար ընտրեց այդ վայրը. նա ակնհայտորեն սպասում էր, որ այնտեղ ապրող քրդերը՝ վայրի լեռնային ժողովուրդը, թշնամաբար կվերաբերվեն Բաբին ու Նրա քարոզներին: Ի դժգոհություն առաջին նախարարի, կատարվեց հակառակը: Նոր հավատը սկսեց տարածվել նաև Ադրբեջանում, իսկ նահանգապետը և Մահ-Քու ամրոցից այլ ծառայողներ անդրդվելի չմնացին իրենց բանտարկյալի խաղաղեցնող անկեղծության առջև: Մոտեցող վտանգից խուսափելու համար Հաջի Միրզա Աղասին կատարեց վերջին փորձը՝ հրամայեց, որ Բաբին Մահ-Քուից տեղափոխեն մեկ այլ հեռավոր ամրոց՝ Չեհրիկ: Բայց այնտեղ էլ նույնը կրկնվեց: Ամրոցի պարետ՝ քուրդ Յահյա-խանը դարձավ Բաբի ամենախանդավառ համախոհներից մեկը:

Հասկանալով, որ շահը վերջին օրերն է ապրում և վախենալով վրեժխնդրությունից՝ իր իշխանությունից դժգոհ Պարսկաստանի ազդեցիկ շրջանակների ներկայացուցիչների կողմից՝ Հաջի Միրզա Աղասին փորձեց աջակցություն գտնել հզորագույն մահմեդական

հոգևորականության մոտ, որը կատաղի կերպով հետապնդում էր Բաբին և նպատակ ուներ պաշտոնապես դատապարտել նոր կրոնական գաղափարները: Մոլլաների պահանջով առաջին նախարարը հրամայեց Բաբին տեղափոխել Թավրիզ, որպեսզի նա այնտեղ կանգնի բարձրագույն հոգևորականության առջև:

Դատավարությունը կայացավ 1848թ. ամռանը: Համաձայն ականատեսների միաձայն վկայությունների՝ այն դարձավ իսկական անամոթություն, որի նպատակն ակնհայտ էր՝ նվաստացնել դատապարտյալին: Մեղադրյալին դատապարտեցին մարմնական պատժի՝ փայտով հարվածների: Դատական որոշումն անսպասելի հետևանքներ ունեցավ՝ Բաբը սերտ շփման մեջ հայտնվեց արևմտյան աշխարհի ներկայացուցչի հետ, ով միակ եվրոպացին էր, որ շփվել է նրա հետ և այդ հանդիպման մասին թողել գրավոր վկայություն: Իսկ տեղի ունեցավ դա այսպես: Պատժի ժամանակ մի մոլլա հարվածեց Բաբի դեմքին: Անհրաժեշտ եղավ բժշկական օգնություն, որի համար դիմեցին անգլիացի բժիշկ՝ դոկտոր Վիլյամ Կորմիկին: Ահա նրա պատմությունը.

«Նա (Բաբը) շատ հեզ մարդ է, տեսքով թուլակազմ, բավականին ցածրահասակ, պարսիկի համար շատ սպիտակադեմ, ծայնը զարմանալիորեն նուրբ և մեղեդային... Եվ Բաբի արտաքինը, և՛ շարժուձևը նրա հանդեպ համակրանք են առաջացնում: Բաբի ուսմունքի մասին ես հենց իրենից չլսեցի, բայց ասում են, որ նրա կրոնում որոշ նմանություն կա Քրիստոնեության հետ... Պարզ է, որ Բաբի ուսմունքը զերծ է Քրիստոնեության նկատմամբ մահմեդական մոլեռանդությունից. դրանում չկա նաև կանանց իրավունքները սահմանափակելու մեր ժամանակներում [Իսլամում] տիրող ձգտում»:

Քանի դեռ Բաբը գտնվում էր կալանքի տակ, նրա համախոհները ենթարկվում էին մոլլաների կողմից հրահրվող մոլեռանդ ամբոխների էլ ավելի դաժանագին հարձակումների: Նոր հավատի հետևորդների առջև կանգնեց ինքնապաշտպանության հարցը: Իսլամում, ի տարբերություն Քրիստոնեության, գոյություն ունի սրբազան պատերազմի կամ *ջիհադի* ուսմունք (հաճախ սխալ մեկնաբանվող): Այդ ուսմունքը թույլ է տալիս հեթանոսներին զենքի ուժով իսկական հավատի դարձնել: Այն նաև թույլ է տալիս մահմեդականներին իրենց պաշտպանել հարձակումից, բայց արգելում է բռնի ուժով հավատի դարձնել կամ որևէ զինված գործողություններ ծավալել, որոնք ուղղված են Գրքի այլ մարդկանց դեմ (այսինքն, Հայտնության այլ կրոնների համախոհների՝ հրեաների ու քրիստոնյաների): Արժեքների մահմեդական համակարգի շրջանակներում դաստիարակված բաբիները համարում էին, որ իրենք իրավունք ունեն պաշտպանել իրենց ու իրենց ընտանիքները մոլլաների կշտամբանքներից: Հնարավոր է, որ նրանցից որևէ մեկը սպասում էր, որ Բաբը կազդարարի ջիհադի իր սեփական ուսմունքը:

Բայց նրանց հիասթափություն էր սպասում: Կայում ուլ-Ասմայում Բաբը մանրամասն դիտարկեց ջիհադին վերաբերող հիմնական դրույթները և իր համախոհներին կոչ արեց հարգել այն հասարակության հիմնական օրենքները, որտեղ իրենք ապրում են: Այսպիսով, ոտնձգություն անել մահմեդականների՝ Գրքի մարդկանց նկատմամբ, բաբիները չէին կարող: Ցանկացած տեսակի զինված գործողությունները հնարավոր էին միայն Բաբի թույլտվությամբ, որը, սակայն, այդպես էլ չտրվեց՝ չնայած շիական հոգևորականության հետ էլ ավելի դաժանագին դարձող բախմանը:

Տվյալ սահմանափակումից էլ սկսվեց ջիհադի՝ Իսլամի ֆունդամենտալ ուսմունքներից մեկի կոնցեպցիայի աստիճանական քանդումը: Բաբի հավատի օրենքները շարադրող Բայան (Պարզաբանում)՝ ավելի ուշ գրված գրքում ջիհադի

ուսմունքը բացակայում է: Այսպիսով, իրենց վրա հարձակվելու դեպքում, բաբիները պաշտպանվելու իրավունք էին ստանում: Բայց արգելված էր հրով ու թրով Բաբի հավատին դարձնել, ինչպես դա թույլ էր տալիս անել իր հետևորդներին Սոհամեդ, Մարգարեն, ինչն արդարացված էր վայրի ցեղերով բնակեցված մինչիսլամական Արաբիայի պայմաններով: Բաբը պնդում էր, որ հավատի պաշտպանությունն ու վերջնական հաղթանակը Աստծո ծեռքերում է:

Մինչդեռ Բաբը գտնվում էր կալանքի տակ Իրանի հյուսիսում, որտեղ իրեն դատում էին, նրա համախոհների թիվը երկրի ներսում շարունակում էր աճել: Մոտավորապես նույն ժամանակ, երբ Բաբը հայտնվեց Թավրիզում, Բեդաշտ գյուղում հավաքվեց նրա համախոհների մի խումբ: Այդ հանդիպումը մեծ ազդեցություն ունեցավ բաբիների շարժման հետագա զարգացման վրա: Հավաքին ներկա էր առավել երևելի անձնավորություններից մեկը՝ Կուրբատ-ուլ-Այն անվամբ մի չտեսնված կին, ով բահայի պատմության մեջ հայտնի է Թահիրա (Մաքուր) անվամբ:

Թահիրան մի ընտանիքից էր, որը տվել էր շատ հայտնի գիտնականներ ու աստվածաբաններ: Նրան դատում էին Պարսկաստանի ամենատաղանդավոր բանաստեղծների շարքին: Նման խոստովանությունը, համակրանքը, ճանաչումն արժանավայել կերպով գնահատելու համար չպետք է մոռանալ այն մասին, թե ինչպիսի մեկուսացած կյանք էին ստիպված վարել այն ժամանակ մահմեդական կանայք, որքան սահմանափակ էին նրանց իրավունքները: Իր հորեղբոր և զարմիկի՝ շեյխ Ահմեդի աշակերտների միջոցով, Թահիրան ծանոթացավ Բաբի հավատի առաջին համախոհների հետ: Բաբի հետ նա ոչ մի անգամ չէր տեսնվել, բայց նամակագրություն էր ունեցել և իրեն հայտարարել էր նրա հավատի համախոհ: Բաբը նրան դասեց Կենդանության Տառերի շարքին:

Սկզբից հանդիպումը Բեդաշտում նշանակեցին, որպեսզի քննարկեն, թե ինչպես ազատեն Չեիրիկ ամրոցում կալանավորված Բաբին: Սակայն Թահիրայի խանդավառ խոսքը, որում նա խիզախորեն պարզաբանեց Բաբի առաքելության թաքնված իմաստը, հավաքվածների մեջ հուզմունք ծնեց: Ըստ երևույթին, նոր Հավատին եկածների որոշ մասն իրենց Հավատի հիմնադրին դիտում էր որպես կրոնական բարեփոխող, մյուսներին թյուրիմաստության մեջ զգեց Իսլամում ընդունված «բաբ» տերմինի ըմբռնումը: Թահիրան մանրամասն բացատրեց Բաբի սեփական խոսքերը, որ նա արտասանեց այն երեկո, երբ բացվեց Մոլլա Հուսեյնի առջև. նա երկար սպասված իմամ Մահդին է, Սոհամեդի տան հետևորդը: Դա նշանակում է, որ Բաբն Ամենաբարձրյալի դեսպանորդն է, նոր անկախ դավանաբանության հիմնադիրը: Վաղ քրիստոնյաների նման, ովքեր հրաժարվեցին Տորայի օրենքներից և կարգադրագրերից, բաբիները պետք է իրենց հայտարարեն շարիաթի (դավանական օրենքի) պահանջներից ազատ: Բաբը հայտնեց նոր հասարակական ուսմունք և հենց այդ ուսմունքի օրենքներով պետք է ղեկավարվեն նրա հետևորդները:

Ցուցադրաբար հրաժարվելով հետևել շարիաթին՝ Թահիրան նիստերից մեկին եկավ բաց դեմքով՝ առանց չադրայի, որի կրումը կարգադրված էր մահմեդական ավանդույթով: Նրա այդ և նման արարքները խիստ փորձության ենթարկեցին շատ ավելի պահպանողականորեն տրամադրված բաբիների հավատը և ուղղափառ մահմեդականների կողմից ավելի մեծ թշնամություն առաջացրեցին: Մոլլաները պատրաստակամորեն սկսեցին անհեթեթ հորինվածքներ տարածել՝ իբր բաբիները աթեիստներ են, որ քարոզում են բարքերի այլասերվածություն և գույքի ընդհանրություն,

այսինքն անում էին ամեն բան, որպեսզի նոր շարժման համախոհներին ներկայացնեն որպես բարեպաշտության և հասարակական կարգի թշնամիներին:

Դրությունն էլ ավելի սաստկացավ 1848թ. սեպտեմբերին, երբ բազմաթիվ հիվանդություններից մահացավ Մոհամեդ շահը: Նրա մահից հետո սկսվեց քաղաքական տարածայնությունների շրջան, որը կապված էր տիրակալի հետնորդի հարցի հետ: Հաջի միրզա Աղասին տապալվեց իր քաղաքական հակառակորդների կողմից, և մոլլաներն օգտվեցին առաջացած իրավիճակից՝ ձեռնարկելով հերետիկոսային դավանանքն արմատախիլ անելու ևս մի փորձ:

Մագենդարան նահանգում երեք հարյուր հավատացյալներից բաղկացած ջոկատը, որը գլխավորում էր Մոլլա Հուսեյնը և Կուդդուս անվամբ մի երիտասարդ՝ Բաբի մտերիմ աշակերտներից մեկը (հենց նա էր ուղեկցում Բաբին Մեքքա ուխտագնացության ժամանակ), պաշարված մնացին մի փոքր ամրոցում, որը շուտափույթ կառուցել էին բաբիները տափաստանում՝ մահմեդական սուրբ շեյխ Թաբարսիի գերեզմանի մոտ: Մինչ այդ նրանք պտտվեցին ամբողջ նահանգով՝ խանդավառորեն վստահեցնելով ժողովրդին ավետյաց Կաիմի հայտնվելը և հրավիրելով բոլորին հետևել իրենց: Տեղական շիա հոգևորականությունը դատապարտեց նրանց որպես հերետիկոսների և տեղական բնակչությանը հրահրեց ոտքի կանգնել բաբիների դեմ: Նոր հավատի քարոզիչները ստիպված էին Թաբարսի շեյխի գերեզմանի շուրջ ամրություն կառուցել, որն իրենց համար կժառայեր որպես թաքստոց: Օգտվելով դրանից՝ մոլլաները նրանց իսկույն հայտարարեցին հասարակական անկարգությունների մեղավորներ, և հենց իրենք էլ բորբոքեցին կրքերը՝ սադրելով ժողովրդին «հերետիկոսների և ուղտադրուժների» դեմ: Այդ նոր կեղծ մեղադրանքը, որն առաջ էր քաշված բաբիների դեմ Մոհամեդ շահի ժառանգների միջև իշխանության համար պայքարի լարված մթնոլորտում, ազդեց վառողի նկուղի մեջ գցած լուցկու պես: Արտակարգ ընդունակությունների տեր Միրզա Թաբի-խանը, որը հայտնի էր իր դաժանությամբ և ծայրահեղ կասկածամտությամբ, նորից Հաջի Միրզա Աղասին շնորհեց մեծ վեզիրի պաշտոնը: Որոշելով, որ եկել է բաբիների շարժմանը վերջ տալու ժամանակը, նոր վեզիրը մոլլաներին և նրանց կամակատար-ներին օգնելու նպատակով զորքեր ուղարկեց:

Սակայն շեյխ Թաբարսիի գերեզմանի առջև ամրության պաշարումը Բաբի հավատի հակառակորդների համար դարձավ խայտառակություն և նսեմացում: Հաջորդ տարվա ընթացքում օգնության համար այնտեղ էին ուղարկում նորանոր ջոկատներ. պաշարողների թիվը հասնում էր մի քանի հազարի ամրոցի պաշտպանների մի քանի հարյուրի դիմաց, բայց զորքերը կրում էին պարտություն պարտության հետևից: Վերջ ի վերջո, շատ նոսրացած փոքրիկ ջոկատը, որը շատ շատերի հետ կորցրել էր նաև Մոլլա Հուսեյնին, հանձնվեց: Բաբիները հավատացին Դուրանի վրա տված հանդիսավոր երդմանը, որ իրենց անվնաս ազատ կարձակեն: Բայց բավական էր, որ ամրոցի պաշտպանները դուրս գային ամրության պատերից այն կողմ, երբ պաշարողները հարձակվեցին նրանց վրա: Շատերը սպանվեցին տեղում, շատերը ենթարկվեցին կտտանքների և տանջվեցին, ողջ մնացածները կողոպտվեցին, այնուհետև վաճառվեցին գերության: Կուդդուսն ընկավ տեղական հոգևորականության ղեկավարի ձեռքը: Նա հրամայեց Կուդդուսին քարշ տալ քաղաքի փողոցներով, ենթարկել տանջանքների, հետո գլխատել:

Նման իրադարձություններ տեղի ունեցան նաև երկու այլ խոշոր կենտրոններում՝ Նեյրիզում և Ջենջանում: Ամեն անգամ քաջարական դինաստիան զորքեր էր ուղարկում

օգնելու մոլեռանդների ամբոխներին, որոնք կատաղության էին հասել նոր կրոնի բոլոր համախոհներին ոչնչացնել ձգտող շիական հոգևորականության կողմից: Անգամ այն փաստը, որ Նեյրիզում բաբիների գլուխ կանգնեց այնպիսի անվանի մարդ, ինչպիսին էր Վահիդը, չկանգնեցրեց տեղական հոգևորականությանը և դրա կողմից հրահրվող կատաղած ամբոխին: Վահիդը վախճանվեց կոտորածի ժամանակ, երբ ընկավ փոքր ամրոցը, որտեղ թաքնվում էին բաբիները: Ջենջանում, ինչպես և շեյխ Թաբարսիի գերեզմանի մոտ գտնվող փոքր ամրոցի պաշտպանության ժամանակ, պաշարվածները խոստում ստացան, որ իրենց խաղաղությամբ կդիմավորեն. խոստումը գրված էր Ղուրանի վրա և ամրացված կնիքով: Բայց այն էլ կեղծ դուրս եկավ՝ ամրոցի հանձնումից հետո սկսվեց արյունալի հաշվեհարդարը:

Բռնության ալիքը տարածվեց ամբողջ երկրով մեկ: Բաբիների հետապնդումներին հաճախ մասնակցում էին տեղական իշխանությունները. մուլաների խորհրդով նրանք բռնագանձում էին «ուղտադրուժների» սեփականությունը: Բարձր հասարակական դիրքը չէր պաշտպանում: Թեհրանում, մոտավորապես այն ժամանակ, երբ տեղի ունեցավ Ջենջանի կոտորածը, կատարյալ դաժանությամբ հրապարակայնորեն մահապատժի ենթարկվեցին վաճառականների և գիտնականների խավի յոթ բավականին երևելի և հարգված ներկայացուցիչների, ովքեր չկամեցան հրաժարվել իրենց նոր հավատից: Չարական թշնամության մթնոլորտի մասին կարելի է դատել թեկուզ նրանից, որ մահապատժի ենթարկվածներից մեկը՝ Միրզա Կուրբան Ալին ուներ սուրբ մարդու համբավ և ինչպես շահի ընտանիքի, այնպես էլ կառավարության որոշ անդամների հոգևոր ուսուցիչն էր:

Այդ և հետագայում տեղի ունեցած բոլոր դաժանությունների համար պատասխանատվությունը պետք է դնել ոչ միայն շիական հոգևորականության, այլև նոր առաջին նախարար Միրզա Թաքի-խանի վրա: Նոր տիրակալը՝ Նասիր-իդ-Ղին շահն այն ժամանակ դեռ տասնյոթ տարեկան էր և դրա արդյունքում թագավորական իշխանությունը նորից հայտնվեց հերթական առաջին նախարարի ձեռքում: Միրզա Թաքի-խանը կանգնած էր այն խմբավորման գլխին, որը նոր տիրակալին գահին նստեցրեց՝ հաղթելով գահի մյուս երկու ժառանգների համախոհներին: Միրզա Թաքի-խանը որոշեց, որ ճնշելով բաբիների շարժումը, կարելի է ամրապնդել սեփական հզորությունը և վարչակարգի կայունությունը: Սակայն նա դարձավ Թաբարսի շեյխի գերեզմանի մոտ տեղի ունեցած արյունալի իրադարձությունների, Նեյրիզի ու Ջենջանի կոտորածների և «Թեհրանի յոթ մահատակների» (ինչպես նրանց հետագայում սկսեցին անվանել) մահապատժի մեղավորը: Այնուհետև նոր նախարարը որոշեց խոցել նոր կրոնական շարժման սիրտը:

Դեռ շարունակվում էր Ջենջանի պաշարումը, իսկ Միրզա Թաքի-խանը Ադրբեջանի նահանգապետին հրամայեց Բաբին բերել Թավրիզ, որտեղ նրան պետք է հրապարակայնորեն մահապատժի ենթարկեին: Տալով այդ կարգադրությունը՝ Միրզա Թաքի-խանը գերազանցեց իր լիազորությունները: Բացի այդ, նա չհամաձայնեցրեց իր որոշումը կառավարության այլ անդամների հետ: Այդ պատճառով Ադրբեջանի նահանգապետը՝ հարգանքով լցվելով իր գերու հանդեպ, հրաժարվեց կատարել հրամանը: Վերջ ի վերջո, առաջին նախարարը ստիպված էր այդ հանձնարարությամբ Ադրբեջան ուղարկել իր սեփական եղբորը՝ Միրզա Հասան-խանին: Բաբին շուտափույթ տեղափոխեցին Թավրիզ: Մուջտահիդներին առաջարկեցին Բաբի գործով որոշում կայացնել կրոնական օրենքների հիման վրա, այլ ոչ թե քաղաքացիական իրավունքի: Ինչպես և կանխատեսում էր Միրզա Թաքի-խանը, հոգևորականությունը

պատրաստակամորեն նրան ընդառաջ գնաց և ստորագրեց Բաբի մահապատիժը՝ մեղադրելով նրան հերետիկոսության մեջ: 1850թ. հուլիսի 9-ին Թավրիզի հրապարակներից մեկում, հազարավոր մարդկանց աչքերի առջև, որ խռնված էին կտուրներին ու տների պատուհանների մոտ, սկսեցին մահապատժի նախապատրաստությունները: Դրան հետևեցին բավականին արտասովոր իրադարձություններ:

Բաբին և նրա աշակերտներից մեկին պարաններով կախեցին զորանոցի պատին: Գնդակահարմանը պետք է մասնակցեր յոթ հարյուր հիսուն հայ-քրիստոնյաներից բաղկացած գունդը: Գնդապետը՝ ոմն Սամ-խանը, վախենալով բարկացնել Աստծուն՝ ուզում էր հրաժարվել հրամանի կատարումից: Սակայն Բաբը, ականատեսների պատմելով, հանգստացրեց նրան հետևյալ խոսքերով. «Կատարիր հրամանդ, և եթե քո մտադրությունները մաքուր են, Բարձրյալը քեզ չի թողնի դժվար կացության մեջ»:

Այն, ինչ տեղի ունեցավ հետո, հաստատվում է բազմաթիվ ականատեսների վկայություններով: Գունդը շարեցին, որոտաց յոթ հարյուր հիսուն հրացաններից արձակած համազարկը: Ծուխը պատեց հրապարակը, և այն ընկղմվեց մթության մեջ: Երբ ծուխը ցրվեց, ներկաները չհավատացին իրենց աչքերին. Բաբի աշակերտն անվնաս կանգնած էր պատի մոտ, իսկ ինքը՝ Բաբը, անհայտացել էր: Պարանները, որոնց վրա նրանք կախված էին, փամփուշտներով պոկոտված էին: Տենդագին փնտրումներից հետո Բաբին գտան այն նույն սենյակում, որտեղ նա գիշերել էր նախօրեին: Նա նստած էր այնտեղ ողջ ու անվնաս և հանգիստ վերջին կարգադրություններն էր տալիս իր քարտուղարին:

Հրապարակում խառնաշփոթություն սկսվեց: Հայկական գունդը հրաժարվեց մասնակցել կրկնակի գնդակահարությանը: Միրզա Հասան-խանը ստիպված էր հաշվի առնել, որ իրենց տրամադրություններում փոփոխական խաժամուժը, որը մեկ ողջունում էր Բաբին, մեկ հայիոյում, նրա փրկության մեջ կտեսնի նշան ի վերուստ և նրան պաշտպան կկանգնի: Շտապ կանչեցին մահմեդականներից բաղկացած գունդ. Բաբին ու նրա ընկերոջը նորից կախեցին պատից, հնչեց երկրորդ համազարկը: Այս անգամ դատապարտվածների մարմինները ծակծկված էին գնդակներով: Ամբոխին դիմած Բաբի վերջին խոսքերն էին.

«Ո՛վ, մոլորված սերունդ: Եթե դուք հավատայիք Ինձ, դուք մի հոգու պես կհետևեիք այս պատանու օրինակին, ով ծագումով ձեզանից շատերից վեր է և հոժարությամբ ձեզ կզոհաբերեիք Իմ ճանապարհի վրա: Կգա օրը և դուք կհասկանաք՝ ով եմ ես, բայց այդ օրը ես արդեն ձեր հետ չեմ լինի»:

Բաբի մահվան արտասովոր հանգամանքները նրա ուսմունքի նկատմամբ հետաքրքրության նոր ալիք առաջացրեցին: Տեղի ունեցածի մասին պատմությունը կայծակի արագությամբ տարածվեց ոչ միայն տեղական բնակչության մեջ, այլև արևմտյան դիվանագետների, առևտրականների, ռազմական խորհրդատուների, լրագրողների՝ բոլոր նրանց, ովքեր այն ժամանակ կազմում էին Պարսկաստանի բավականին բազմաթիվ եվրոպական համայնքը: Ֆրանսիական հյուպատոսության պետական պաշտոնյա՝ Ա. Լ. Մ. Նիկոլյայի խոսքերը թույլ են տալիս հասկանալ, թե որքանով է այդ ողբերգությունը ցնցել արևմտյան աշխարհի կրթված ներկայացուցիչներին.

«Դա մարդկությանը հայտնի արիության ամենահիասքանչ օրինակներից մեկն է, ինչպես նաև իր հայրենակիցների հանդեպ մեր հերոսի արտակարգ, հիացմունքի արժանի սիրո վկայությունը: Նա իրեն զոհաբերեց մարդկության համար: Հանուն մարդկանց բարօրության նա տվեց և՛ իր մարմինը, և՛ հոգին, հանուն նրանց նա զրկանքներ, խոշտանգումներ, վիրավորանքներ և տանջալից մահ կրեց: Նա իր արյամբ կնքեց համընդհանուր եղբայրության կոչը և Հիսուսի նման կյանքը տվեց, որպեսզի ազդարարի գալիք խաղաղության, արդարության և մերձավորի հանդեպ սիրո հաղթանակը»:

Բաբինների համայնքի համար, սակայն, Բաբի մահը, որին նախորդել էր նրա համախոհների զանգվածային ոչնչացումը (նրանց մեջ էին նաև նրա շատ անվանի աշակերտները, այդ թվում գրեթե բոլոր Ապրողի Տառերը), կործանիչ հարված դարձավ: Համայնքը զրկվեց ղեկավարությունից, որն անհրաժեշտ էր ոչ միայն էլ ավելի դաժանացող հետապնդումներին հակազդելու, այլև համայնքային կյանքի Բաբի հաստատած նորմերը անձեռնմխելիությամբ պահպանելու համար:

Բաբինները միշտ նշել են, որ իրենց միակ նպատակն է տարածել այն հոգևոր և հասարակական ուսմունքը, որը բերեց Բաբը: Միևնույն ժամանակ, Բաբի հիմնական կրոնական գաղափարները և համոզմունքները հենվում էին Իսլամի վրա: Այդ պատճառով բաբինները ենթադրում էին, որ իրենց կրոնական նպատակների նվաճման գործում հրաժարվելով բռնությունից՝ իրենք լիարժեք իրավունք են պահպանում զենքով պաշտպանել իրենց և իրենց ընտանիքները հետապնդումներից: Այժմ, երբ Միրզա Թաքի-խանի կողմից սանձազերծած դաժան հետապնդումների արդյունքում բաբինները զրկվեցին ղեկավարներից, ովքեր իսկապես ըմբռնում էին Բաբի հռչակած ճշմարտությունները, կարելի էր սպասել, որ համայնքում կգտնվեն անհավասարակշռված մարդիկ, ովքեր ընդունակ են խախտել ի սկզբանե սահմանված կարգ ու կանոնը:

Այդպես էլ եղավ: 1852թ. օգոստոսի 15-ին երկու պատանի բաբիններ, որ դարձան իրենց դավանակիցների նկատմամբ կատարած ծաղրանքի վկաները և հուսահատվեցին իշխանությունների վերաբերմունքից, շահի վրա մահափորձ կատարեցին: Ատրճանակը, որից նրանք կրակեցին, լիցքավորված էր մանրագնդակով, և միապետը լուրջ չվիրավորվեց: Սակայն այդ մահափորձը բաբինների նկատմամբ հետապնդումների նոր ալիք առաջացրեց: Իր դաժանությամբ այն գերազանցեց նախորդ բոլորը: Երկիրը հեղեղվեց բռնությամբ:

Պահպանվել է շահի մոտ ծառայության մեջ գտնվող ավստրիացի ռազմական կցորդ, կապիտան Ալֆրեդ ֆոն Գուլենսի վկայությունը: Սարսափահար լինելով զազանություններից, որոնք նա ստիպված էր դիտել՝ կապիտանը պաշտոնաթող եղավ, այնուհետև վիեննական թերթերից մեկում հրապարակվեց նրա նամակը.

«Հետևիք ինձ, իմ բարեկամ, դու, ում սրտում ընկած են եվրոպական բարոյականության նորմերը, հետևիք ինձ և ես քեզ կբերեմ դժբախտների մոտ, ում կուրացնում են, այնուհետև ստիպում են ուտել իրենց նոր կտրած ականջները: Դու կտեսնես՝ ինչպիսի անմարդկային կատաղությամբ է դահիճը պոկում նրանց ատամները, ինչպես են փշրվում մուրձի հարվածների տակ նրանց մերկ գանգերը: Դու կտեսնես՝ ինչպես են շուկայի հրապարակը լուսավորում դժբախտ զոհերը, որոնց կրծքերն ու ուսերը դահիճները խոցում են ու խոր վերքերի մեջ դնում վառված պատրոյզներ: Ես տեսել եմ, թե ինչպես են դժբախտներին շղթաներով քարշ տվել շուկայի հրապարակով ռազմական նվազախմբի հետևից: Նրանց մարմինների միջի վառվող պատրոյզներն այնքան խորն էին, որ վերքերում, ինչպես նոր հանգրված լամպում, բռնկվում էին հավիտյա յուղի կաթիլները: Իսկ անսպառ արևելյան երևակայությունը հնարում է նորանոր

տանջանքներ: Բաբիների ոտնաթաթերի տակից պոկում են մաշկը, ոտքերը թաթախում եռացող յուղի մեջ, ծիու նման պայտում դժբախտին և ստիպում վազել: Բայց ոչ մի բղավոց դուրս չի գալիս տառապողի կրծքից, նա տանջանքները կրում է լուրջ, մոլեռանդի անզգայությամբ: Ահա նրան ստիպում են վազել: Նրա ոգին արի է, բայց մարմինը չի դիմանում. նա ընկնում է: Ուրեմն նրան հասցրեք *coup de gra^se**: Ազատե՛ք ցավից: Ոչ, դահիճը թափահարում է մտրակը և (ես՝ ինքս էի դրա վկան) դժբախտ զոհը վազում է: Աա վերջի սկիզբն է: Ահա և վերջը՝ այրված, վիրավորված մարմինները դահիճները կախում են ծառից՝ զլուխները ներքև՝ կապելով նրանց ձեռքերից և ոտքերից, և ահա Պարսկաստանի ցանկացած բնակիչ կարող է կուշտ մարգվել դիպուկության մեջ՝ խոցելով որոշակի, ոչ այնքան մոտ տարածությունից իրեն հոշոտման տրված ազնվական որսը: Ես տեսել եմ հարյուրավոր գնդակներով ծակծկված դիակների»:

Ամենահայտնի անձը, որը զոհվեց նոր հետապնդումների ժամանակ, բանաստեղծուհի Թահիրան էր (մինչ այդ նա որոշ ժամանակ գտնվում էր տնային կալանքի տակ): Թահիրան ասում էր, որ Բաբի Հայտնության մեջ ազդարարված նոր դարաշրջանի գծերից մեկն այն արգելքների վերացումն է, որոնք թույլ էին տալիս կնոջը համարել ցածր կարգի էակ: Իմանալով մահվան դատավճռի մասին՝ նա իր բանտապանին ասաց. «Կարող ես սպանել ինձ, երբ ցանկանաս, բայց կանայք ազատություն կստանան և դու ի զորու չես դրան խանգարել»:

Այդպես ավարտվեց Բահայի հավատի պատմության առաջին շրջանը, որը դրա համախոհներն անվանում են «Բաբի Աստվածահայտնություն»: Որոշ ժամանակ ամբողջ Պարսկաստանը հայտնվեց հասարակական բեկման սահմանագծի վրա: Եթե Բաբը, ինչպես պնդում էին նրա թշնամիները, քաղաքական իշխանությունը խլելու պլաններ կրեր, ապա, շատերի կարծիքով, նրան կհաջողվեր իր իշխանությունը հաստատել երկրում: Նրա անվանի համախոհների ականավոր ունակությունները, ժողովրդի կողմից նոր Հայտնությունն ընդունելու ակնհայտ պատրաստակամությունը, բարքերի անկումը և իշխանավորների ու հոգևորականության միջավայրի տարածայնությունը, մահացու հիվանդ Մոհամեդ շահի իշխանության վերջին օրերին և նրա մահից հետո երկրում տիրող քաոսը՝ այդ ամենը միասին ստեղծեցին այնպիսի իրադրություն, երբ Բաբին պետք էր միայն օգտվել այն աջակցությունից, որը թախանձագին առաջարկում էին բոլոր կողմերից:

1846թ. վերջին Սպահանի գեներալ-նահանգապետ Մանուչիիր խանը՝ պետության ամենաազդեցիկ մարդկանցից մեկը, պատրաստ էր Բաբի տնօրինությանը տրամադրել և՛ իր բանակը, և՛ իր անհամար հարստությունները: Նա համոզում էր Բաբին մարտահրավեր նետել հոգևորականությանն ու շահին և գնալ դեպի Թեհրան: Շիական ուսմունքի տեսակետից այդպիսի գործողությունները միանգամայն արդարացված կլինեին: Պարսկաստանում միապետությունը հենվում էր հիմնավոր սկզբունքի վրա, որն ասում էր, որ շահն ինքնուրույն տիրակալ չէ, այլ իշխում է Մահդի իմամի անունից: Իսկ քանի որ Բաբը պնդում էր, որ ինքն է այդ ամենասպասված հոգևոր տիրակալը և շատ ականավոր մարդիկ, ովքեր համարվում էին գիտունության ու բարոյականության լուսատուներ, ճանաչեցին նրան որպես այդպիսին, ապա, համաձայն շիայության կտակների՝ Մոհամեդ շահը և Նասր-իդ-դին շահը պարտավոր էին մանրակրկիտ կերպով քննարկել և գնահատել նրա հայտարարությունները: Եվ եթե նրանք դա չեն արել, ապա պատճառը

* վերջին հարված (ֆր.)

կրոնական և քաղաքական ուժերի միջամտությունն է, որոնք Բաբի բարձրացման մեջ իրենց իշխանության սպառնալիքն էին տեսնում:

Հրաժարվելով ուժի գործադրումից անգամ հանուն սեփական կյանքի փրկության՝ Բաբն անհերքելիորեն ապացուցեց իր առաքելության խաղաղարար բնույթը և բարձրագույն հոգևոր ուժերի նկատմամբ ցուցաբերեց իր անսահման հավատը, որոնք, իր խոսքերով, հենց սկզբից իր միակ հենարանն էին:

Ի՞նչ էր իրենից ներկայացնում ուսմունքը, որն այդքան դաժան հակազդեցություն ունեցավ, ուսմունք, հանուն որի Բաբը և հազարավոր մարդիկ զոհաբերեցին իրենց կյանքերը: Այդ հարցին այնքան էլ հեշտ չէ պատասխանել: Բաբի Հայտնությունը հատուկ ձևով կապված է շիական Իսլամի աստվածաբանական ուսմունքի հետ և այդ պատճառով եվրոպացիներին դժվար է հասկանալ, թե ինչի մասին են նրա Սուրբ Գրքերը: Բաբը փորձում էր անվանի աստվածաբաններին և իր բազմաթիվ աշակերտներին իր հավատին բերել: Այդ փորձերը հաջողությամբ էին պսակվում և այդ հաջողության գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ նա ակնհայտ թեթևությամբ ու կատարյալ վարպետությամբ էր բացատրում Իսլամի օրենքներին, մարգարեություններին և հավատալիքներին վերաբերող ամենախճճված ու հակադիր հարցերը:

Նրանց, ովքեր լսում էին Բաբին, անհավանական էր թվում, որ Պարսկաստանի մտավորականների հետաքրքրությունների կենտրոնակետ հանդիսացող գիտական որոնումներում այդքան անփորձ երիտասարդն ընդունակ էր առանց դժվարության փակուղու մեջ զցել պատկառելի աստվածաբաններին, ովքեր ամբողջ կյանքը նվիրել էին գիտությանը և դրա շնորհիվ հասարակության մեջ բարձր դիրք էին գրավել: Հենց բաբիների առաջին պատմություններում մանրամասն նկարագրվում են այդ բացատրությունները և այն, թե ինչպիսի տպավորություն են դրանք գործել ունկնդիրների վրա: Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի բնակիչների համար այդ հարցերը հաճախ անհասկանալի էին:

Ունենալով այդպիսի զարմանալի հատկություն՝ Բաբը, սակայն, իր հետևորդների մեջ չէր խրախուսում (անգամ նրանց մեջ, ովքեր զբաղվում էին աստվածաբանությամբ) հակվածությունը նման գիտական զբաղմունքների հանդեպ: Հնարավոր է, որ մենք ավելի հեշտ կհասկանանք, թե ինչով էր նա ղեկավարվում, եթե հաշվի առնենք շիական աստվածաբանական գիտության մասին բրիտանացի արևելագետ Էդվարդ Գրենվիլ Բրաունի արտահայտությունները: Աստվածաբանական աշխատությունները, մեկնաբանությունները, մեկնաբանությունները, ծանոթագրությունները և այլը՝ այն ամենը, ինչ անցյալ դարում Պարսկաստանում համարվում էր «մտավոր արտադրանք», Բրաունն անվանում էր «բարբառանք», որն անհնար է կարդալ, ինչի հենց գոյությունը լուրջ գիտնականների մոտ կարող էր միայն «ափսոսանք» առաջացնել: Ըստ որում, նա ավելացնում էր, որ իր կարծիքը կիսում էին նաև Իսլամի առավել երևելի մտածողները:

«Հանգուցյալ շեյխ Մոհամեդ Աբդուն՝ Եգիպտոսի մեծ մուֆտին և Ալ-Ազխար համալսարանի ռեկտորը, թերևս, արաբերեն լեզվի ու գրականության ամենալուսավոր մտածողն ու վառվռուն երկրպագուն, որի նմանը չգիտի ժամանակակից Իսլամը, բազմիցս ասել է, որ այդ ամբողջ անպետքությունը պետք է այրել, որովհետև այն միայն ծանրաբեռնում է գրադարանների դարակները, որդեր աճեցնում և մթնեցնում իսկական գիտելիքները: Այդպիսին է անվանի և բազմագիտուն մահմեդական աստվածաբանի կարծիքը, և մենք կարող ենք դրան «առանց տատանվելու» միանալ»:

Մինչ այդ նման կարծիք հայտնել էր նաև Բաբը, ընդ որում բավականին ոչ երկիմաստ: Բաբն իր գլխավոր գրքում՝ Բայանում, կանխատեսում էր այն ժամանակի գալուստը, երբ Պարսկաստանի ժողովուրդը, դեն նետելով նախապաշարմունքները՝ այլևս չի ճաշակի խակ պտուղը: Բաբի խոսքերով, սարերի հետևում չէ այն դարը, որը մարդկության առջև կբացի միանգամայն նոր գիտելիքի ոլորտներ և գիտական հետազոտությունների օբյեկտներ, և այն ժամանակ անգամ փոքր երեխան գիտունության մեջ կգերազանցի իր ժամանակակիցներին:

Այդպիսով, մեզ համար իսկական հետաքրքրություն են ներկայացնում ոչ թե ընդարձակ աստվածաբանական մեկնաբանությունները, այլ Բաբի սոցիալական ուսմունքը: Քրիստոնեության համեմատ Իսլամի ամենակարևոր տարբերություններից մեկն այն է, որ Իսլամը հասարակության կյանքի կազմակերպման կոնկրետ սկզբունքները փնտրելիս դիմում է Աստվածային Հայտնությանը: Ղուրանում ասվում է հենց մահմեդական հասարակության կառուցման մասին: Այդ ուղղությամբ առաջին քայլը ձեռնարկեց Մոհամեդը, երբ Մեդինա քաղաքում հիմնեց մահմեդական պետություն: Անկասկած, պակաս կարևոր չէ նաև այն փաստը, որ ի տարբերություն Հիսուսի ենթադրյալ ծննդյան տարեթվից սկիզբ առնող քրիստոնեական օրացույցի, իսլամական օրացույցը հաշիվը վարում է հիջրայից* և Մեդինայի մահմեդական պետությունից: Իսլամական դավանաբանությունը, որ հեռու էր «կեսարինը կեսարին» սկզբունքից, իր մեջ ներառում է պետության կողմից մարդկանց կյանքի առօրյա ղեկավարմանը վերաբերող հոգևոր խրատների մի շարք: Շիա-մահմեդականները լրջորեն հավատում էին, որ Մահդի իմամի գալուստը ոչ միայն կբացի յուրաքանչյուր հոգու փրկության ճանապարհ, այլև կամրացնի «մարդկությանը բարեպաշտության կանչող ժողովրդի» գաղափարը»:

Դա պետք է հաշվի առնեն նրանք, ովքեր ձգտում են հասկանալ Բաբի ուսմունքի էությունը: Նրա ունկնդիրների մտքերն ու սրտերը սահմանափակված էին պատկերացումների փակ շրջանով, որոնք եթե ինչ-որ բանով փոխվել էին միջնադարից ի վեր, ապա միայն դեպի ավելի խոր խավարամոլություն, ճակատագրապաշտություն և ինքնամեկուսացում: Այդ խնդրի լուծումը Բաբը տեսնում էր նրանում, որ ստեղծվի բոլորովին այլ հասարակության կոնցեպցիա, որում կպահպանվեն իր ունկնդիրների համար սովորական մշակույթի և կրոնի հիմնական տարրերը, բայց որը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ընդունակ էր հզոր խթան տալ առաջխաղացմանը: Բաբը շահին ու Պարսկաստանի ժողովրդին կոչ էր անում հետևել իրեն և կառուցել այդպիսի հասարակություն: Ճակատագրի շնորհած կարճ ժամանակաշրջանում Բաբը մշակեց օրենքների համակարգ, որոնք վերաբերում են հասարակական կյանքի նորմերին, խաղաղության և կարգ ու կանոնի պահպանմանը, տնտեսական գործունեությանը, այնպիսի հասարակական ինստիտուտներին, ինչպիսիք են ամուսնությունը, ամուսնալուծությունը, ժառանգությունը, ինչպես նաև բաբիների պետության արտաքին քաղաքականությունը կարգավորող սկզբունքներին: Հավատացյալներին տրվել էին աղոթքներ, մեղիտացիաների համար տեքստեր, բարոյական պատվիրաններ, մարգարեություններ: Բահայի պատմաբաններից մեկն անվանեց այդ օրենքներն ու կանոնները չափազանց «բարդ ու դաժան»՝ նշելով, որ Բաբը

* Հիջրա՝ տարիների հաշվարկի համակարգ, որը սկիզբ է առել մեր թվարկության 622թ-ից, այսինքն՝ Մեքքայից Մեդինա Մոհամեդի «փախուստի» պահից

միտումնավոր է դրանք այդպես արել: Դրանք ուղղված էին հավատացյալների գիտակցության մեջ արմատավորված դավանաբանական մահմեդական մտածելակերպի վերացմանը, ինչպես նաև նրանց նախապատրաստմանը նոր, աննախադեպ պատմական առաքելության:

Այդ առաքելության մասին հիշատակումը հանդիպում ենք Բայան գրքի յուրաքանչյուր գլխում, իսկ Պարսկաստանի հոգևոր և հասարակական կյանքի վերափոխումները դիտվում էին որպես դրա նախադրյալներ: Բաբը հայտարարում էր, որ իր գլխավոր կոչումն է նախապատրաստել տիեզերական Աստվածային Հայտնիչի գալուստը: Այդ ավետյաց փրկչին Բաբն անվանում է «Նա, Ում կհայտնի Աստված»: Ինքը Բաբը, չնայած Աստծո անկախ դեսպանորդ է՝ կանգնած Մովսեսի, Հիսուսի և Մոհամեդի հետ մի շարքում, միայն նախագուշակ է Նրա, Ում սպասում են երկրի վրա բոլոր դավանանքների ներկայացուցիչները: Այդ նոր Հայտնության մեջ «բաբ» տիտղոսը նշանակում է շատ ավելին, քան Իսլամում. դրանք «դարպաս են» դեպի Աստծո այն Հայտնիչը, ում լուրը կգա «բոլոր ժողովուրդների մոտ»:

Այդ գլխավոր թեմային նվիրված են բազմաթիվ էջեր Բայան գրքում և Բաբի այլ Սուրբ Գրքերում: Դրանցից պարզ է դառնում, որ Բաբը դիտում է իր Հայտնությունը որպես ինչ-որ անցումնային շրջան: Երբ կհայտնվի Ավետյացը, նա մարդկանց կբերի գալիք դարի ուսմունքը և նրա կամքում է պահպանել որևէ բան Բաբի դավանաբանությունից կամ լիովին այն մերժել:

«Բայան գրքի հազարապատիկ կարդալը չի համեմատվի անգամ մի բանաստեղծության կարդալու հետ՝ Նրա կողմից, Ում կհայտնի Աստված... Այսօր Բայանը ցորենի հատիկի փուլում է, բայց Նրա գալուստով, Ում Կհայտնի Աստված, դրա ամբողջ կատարելությունն ակնհայտ կդառնա: Բայանի ամբողջ վեհությունը Նրանից է, Ում կհայտնի Աստված»:

Բաբը հաստատ չէր նշում, թե երբ կհայտնվի Ավետյացը, բայց ասում էր, որ դա տեղի կունենա ոչ հեռու ապագայում: Որոշ հետևորդների նա զգուշացնում էր, որ իրենք սեփական աչքերով կտեսնեն Նրան, Ում կհայտնի Աստված և պատիվ կունենան ծառայել Նրան: Բայանում և այլ Սուրբ Գրքերում հանդիպում են «իններորդ տարվա» և «տասնիններորդ տարվա» առեղծվածային հիշատակումներ: Բաբը միանգամայն որոշակի պնդում էր, որ ոչ մեկին չի հաջողվի իրեն ներկայացնել որպես Նա, Ում կհայտնի Աստված, քանզի կեղծ մարգարեն անխուսափելիորեն կներկացվի: Բաբիները ցուցմունք ստացան չհակադրվել ոչ ոքի, ով նման բան կհայտարարի, բայց պահպանել հանգստություն և ամեն ինչ տրամադրել Բարձրյալի կամքին: Որպես օրինակ բերենք Բաբի խոսքերը, որոնցով Նա դիմել է բարեպաշտ և հարգարժան Վահիդին.

«Հիրավի ասում եմ՝ սուրբ է Նա, Ով հրամայում է ցորենի հատիկին ծլել, Ով Կյանքի Ոգի է ներշնչում ամեն գոյի մեջ: Եթե Ինձ վիճակվի իմանալ, թե Նրա Հայտնության օրը դու կհրաժարվես Նրանից, ապա ես կմերժեմ և՛ քեզ, և՛ քո հավատը ... Իսկ եթե Ինձ ասեին, որ քրիստոնյան, այլահավատը կձանաչի Նրան, ապա այդ քրիստոնյան Իմ համար ավելի թանկ կդառնա, քան աչքի լույսը»:

Այսպիսով, բաբիների պետությունը, ինչպիսին այն ծրագրել էր Բաբը, պետք է գլխավորապես ծառայի նրան, որ ընդունվի ճշմարտությունը, որը կբացահայտի Ավետյացը և որ հետո այդ ճշմարտությունը հայտնվի ամբողջ աշխարհին: Բաբի և նրա մտերիմ աշակերտներից շատերի տանջալից մահից հետո, երբ ոչնչացվեցին նրա

հազարավոր հետևորդները, այդ երազանքը փլուզվեց՝ չհասցնելով իրականանալ: 1852թ. կարող էր թվալ, թե Բաբի առաքելությունն անհաջողությամբ ավարտվեց, և իր հիմնած կրոնն անհետացման եզրին է:

3. Բահաուլլան

1848-1853թթ. զանգվածային ջարդից փրկված բաբիների շարժման փոքրաքանակ առաջնորդների մեջ աչքի էր ընկնում Միրզա Հուսեյն Ալի անունով մի անվանի պարսիկ: Նրա ընտանիքը, որը պատկանում էր Պարսկաստանի հնագույն հողատիրական տոհմերից մեկին, ուներ մեծ կալվածքներ Մազենդարան գավառի Նուռ շրջանում: Միրզա Հուսեյն Ալին առաջիններից մեկն իրեն հայտարարեց Բաբի համախոհ: Դա տեղի ունեցավ 1844թ., երբ նա թեհրանում, որտեղ բնակվում էր իր ընտանիքի հետ, Մուլա Հուսեյնից լսեց Բաբի մասին: Մուլա Հուսեյնի պատմությունից երևում էր, որ Բաբը հանձնարարել էր նրան գտնել Միրզա Հուսեյն Ալիին: Եվ իսկապես, Բաբը հետաձգեց իր վաղուց մտածված ուխտագնացությունը Մեքքա (որտեղ և հետագայում նա կհայտարարի իր առաքելության մասին) այնքան ժամանակ, մինչև Մուլա Հուսեյնից ստացավ Միրզա Հուսեյն Ալիի հետ հանդիպման մասին նամակը: Նորահավատի չորս եղբայրները նույնպես ընդունեցին նոր հավատը: Նրանց մեջ էր նաև եղբայրներից կրտսերը՝ Միրզա Յահյան: Բաբի հետևորդների ճնշող մեծամասնությունը ծագումով հոգևոր, վաճառական և գյուղացիական դասից էր, այնպես որ ազդեցիկ, տիրող դասակարգին պատկանող ընտանիքի անդամների կողմից իր հավատն ընդունելը նշանակալից իրադարձություն էր:

Առաջին երեք-չորս տարիների ընթացքում հասարակության մեջ Միրզա Հուսեյն Ալիի (որ դարձավ նոր հավատի ակտիվ քարոզիչ) ընտանիքի բարձր դիրքը որոշ չափով պաշտպանում էր նրան այն հետապնդումներից, որոնց ենթարկվում էին նրա համախոհները: Նրան պաշտպանում էր նաև ազնիվ մարդու արժանի համբավը, ինչը հազվագյուտ երևույթ էր իշխանություն ունեցողների միջավայրում. կաշառքը երկրում դարձել էր սովորական երևույթ և կյանքի հաջողությունը լիովին կախված էր դրանից: Միրզա Հուսեյն Ալիի ընտանիքի անդամները սերնդից սերունդ կառավարությունում զբաղեցնում էին բարձր պաշտոններ և ունեին մեծ քաղաքական ազդեցություն: Նրա հայրը՝ Միրզա Աբասը, Մազենդարան գավառի առաջին նախարարն էր: Երբ նա մահացավ, Միրզա Հուսեյնը՝ ծնված 1817թ. նոյեմբերի 12-ին, ընդամենը քսաներկու տարեկան էր: Այնուամենայնիվ, նրան առաջարկեցին զբաղեցնել պաշտոն, որը նախկինում կառավարությունում զբաղեցնում էր նրա հայրը: Ի զարմանս ընտանիքի և մտերիմների, նա հրաժարվեց բարձր պաշտոնից: Դրա փոխարեն հաջորդ յոթ տարիները նա նվիրեց տոհմական կալվածքների կառավարմանը, կրտսեր եղբայրների և քույրերի դաստիարակմանը և լայնածավալ բարեգործական գործունեությանը, ինչի համար ժողովրդի կողմից անվանվեց «Աղքատների հայր»:

Քսանյոթ տարեկանում Միրզա Հուսեյն Ալին դարձավ Բաբի համախոհը և նվիրեց իրեն հավատի տարածման գործին, որի դեմ արդեն սկսվել էին առաջին

հետապնդումները: Միրզա Հուսեյն Ալին ճամփորդում էր երկրով մեկ: Նա հավատի բերեց շատ անվանի մարդկանց, այդ թվում նաև իր ընտանիքի մի քանի անդամների: Նա ֆինանսավորում էր բաբիների քարոզչական գործունեությունը Պարսկաստանի տարբեր մասերում:

Ընդունելով բաբիների հավատը՝ Միրզա Հուսեյն Ալին շուտով նամակագրական կապ հաստատեց Բաբի հետ: Նամակագրությունը շարունակվեց մինչև 1850թ.: Բաբի մահը: Շնորհիվ Բաբի հետ հաղորդակցման, ինչպես նաև բաբիների այնպիսի առաջնորդների հետ սերտ շփմանը, ինչպիսիք էին Վահիդը, Քուդուսը, Մուլա Հուսեյնը և Թահիրան, Միրզա Հուսեյն Ալին հավատի հարցերում իր եղբայրակիցների աչքերում ձեռք բերեց էլ ավելի մեծ հեղինակություն: Միրզա Հուսեյն Ալիի դերն ու ազդեցությունը հատկապես նկատելի դարձան 1848թ. Բեդաշտում՝ իր կողմից կազմակերպած հանդիպման ընթացքում: Այդ հանդիպմանը, որի մթնոլորտը բավականին դրամատիկական էր, լիովին արտահայտվեց Բաբի ուսմունքների հեղափոխական էությունը:

Հանդիպման ժամանակ տեղի ունեցավ ևս մեկ կարևոր իրադարձություն: Տիրոջ նոր Օրվա մոտենալը նշելու համար Միրզա Հուսեյն Ալին մասնակիցներից յուրաքանչյուրին (իսկ դրանք ութսունմեկն էին) տվեց նոր անուն՝ պայմանավորված յուրաքանչյուրի հոգևոր էության առանձնահատկություններով: Հենց Բեդաշտում Կազվինից ժամանած մեծ բանաստեղծուհի Կուռուատ-ուլ-Այնը ստացավ Թահիրա (Մաքուր) անունը: Դա ստիպեց լռել բոլոր նրանց, ովքեր վրդովված էին նրա՝ հանդիպմանը առանց չադրայի հայտնվելուց: Ինքն իր համար Միրզա Հուսեյն Ալին ընտրեց Բահա անունը (Մեծություն կամ Փառք): Հանդիպումից որոշ ժամանակ անց, Բաբը նամակներ գրեց հանդիպման որոշ մասնակիցներին, որոնցում նրանց անվանեց Միրզա Հուսեյն Ալիի տված անուններով: Այդպիսով, Բաբը հաստատեց, որ Միրզա Հուսեյն Ալին իրավունք ուներ նրանց տալ այդ անունները: Ինչ վերաբերում է Բահային, ապա նրան Բաբը դիմեց անսովոր ուղերձով: Բաբի ձեռքով գրած տեքստն ուներ աստղի ձև: Այն իր մեջ ներառում էր երեք հարյուրից ավելի կարճ բանաստեղծություններ: Դրանք բոլորը կազմված էին «Բահա» բառի տարբեր ձևերից՝ ներառյալ Բահաուլլայի տիտղոսը՝ «Աստծո Փառք»:

Գեղագրության մշակույթը շատ էր գնահատվում Պարսկաստանում: Դրան տիրապետելը համարվում էր կրթվածության նշան: Այդ ձեռագիրը ճանաչվեց որպես գլուխգործոց, որը գերազանցում էր այն ամենը, ինչի ընդունակ էր ամենահմուտ գեղագիրը: Մի գրողի հավաստումով գրվածքն «այնքան աննշմար է ու նրբարվեստ, որ տարածության վրա թվում է թղթի վրա քսած թանաքի հավասար նուրբ շերտ»:

Բեդաշտի հանդիպմանը հետևեց բռնության նոր ալիք: Դրությունն այնպիսին էր, որ նոր հավատի ոչ մի կողմնակից իրեն չէր կարող անվտանգ զգալ: Երբ Բահաուլլան փորձեց պաշտպանել Թահիրային, ինչպես նաև նրա որոշ սխրակիցներին, ում հանդիպումից հետո ձերբակալել էին, նրան ձերբակալեցին ու բանտ նետեցին՝ ենթարկելով փայտերով ծեծի: Դա մի անգամ էլ կրկնվեց: Այս անգամ դա տեղի ունեցավ շեյխ Թաբարսիի գերեզմանատուն գնալու ճանապարհին, ուր նա ուղևորվում էր Քուդուսի և Մուլա Հուսեյնի հետ տեսնվելու համար: Ազատություն ստանալով՝ Բահաուլլան բազմիցս փորձում էր բարձր պետական պաշտոններ գրավող (և նրա գործունեությունից դժգոհ) իր բարեկամներին և հարազատներին համոզել, որ բաբիները խաղաղ և օրինապահ մարդիկ են: Բահաուլլան զգուշացնում էր բարձրաստիճան պաշտոնյաներին այն մասին, որ եթե կառավարությունը չկատարի իր պարտքը և չկանխի

հոգևորականության կողմից հրահրվող անկարգությունները, երկրում կտիրեն անօրինականություն ու քաոս:

Կատարվեց հենց այն, ինչի մասին նա զգուշացնում էր: 1852թ. ամռանը երկու պատանի բաբիներ շահի դեմ մահափորձ կատարեցին: Բահաուլլային բաբիների մյուս առաջնորդների հետ ձերբակալեցին, տեղափոխեցին Թեհրան և զգեցին «Սիյահ-Չալ» (Սև հոր) կոչվող տխրահոռչակ բանտ: Դա Թեհրանի «ստորգետնյա բանտ էր՝ գարշելի փոս, որը նախկինում ծառայում էր որպես ամբար քաղաքի հասարակական բաղնիքներից մեկի կեղտաջրերի համար»:

Սիյահ-Չալում Բահաուլլան մնաց չորս ամիս: Այդ ժամանակ բաբիների դեմ հետապնդումների ալիքը տարածվեց Պարսկաստանով մեկ: Սիյահ-Չալի բանտարկյալները կանգնած էին մահվան վտանգի առաջ: Ամեն օր դահիճը իջնում էր աստիճաններով և ընտրում հերթական զոհին: Դատապարտվածներից ոմանց սպանում էին տեղում: Պատահում էր, որ զոհի բերանի մեջ մուրձով ծանր փայտե ցից էին մտցնում, իսկ մեռած մարմինը ժամերով և անգամ օրերով մնում էր պառկած՝ ողջերի մամիներին կպած:

Սիյահ-Չալում զոհվածներից մեկի անունը հավերժ մտավ բահայի պատմության մեջ: Դա Սուլեյման-խանն էր՝ մի երիտասարդ, որ նախկինում ծառայում էր հեծելազորում և հայտնի էր իր խիզախությամբ: Ենթարկվելով մահացու վտանգի՝ Սուլեյման-խանը փորձում էր ազատել Բաբի դիակը, երբ Թավրիզում մահապատժից հետո նրա մարմինը զգեցին փոսը: Եվ ահա եկավ դահճի առջև կանգնելու Սուլեյման-խանի հերթը: Դահիճը քանի անգամ սուր դանակով ծակեց նրա մարմինը և ամեն վերքի մեջ վառվող մոմ դրեց: Վիրավոր՝ նրան փողոցներով տարան այնքան, մինչև նա մահացած վայր ընկավ: Պարսիկների մոտ ոչինչ այնքան չի գնահատվում, որքան արժանապատվությամբ պահելու ունակությունը: Դրա հաստատումը կարող է լինել Սուլեյման-խանի մահապատժի դրամատիզմով լի դրվագը: Նա քայլում էր քաղաքի փողոցներով հոգևոր վերելքի վիճակում՝ ժպտալով ծանոթներին և հատվածներ արտասանելով պարսիկ մեծ բանաստեղծների դասական ստեղծագործություններից: Տանջողների հարցին, թե ինչու նա չի պարում, եթե այդքան ուրախ է, Սուլեյման-խանը մի քանի շարժում կատարեց Մաուլավիայի միստիկների ստեղծած վեհ պարից:

Թատերական զվարճանք հիշեցնող մահը միշտ ուժգին ազդում էր արևմտյան գիտնականների և նկարիչների երևակայության վրա: Պատանի Բաբի և նրա հերոսական զինակիցների ողբերգական պատմությունը խոր տպավորություն թողեց այնպիսի մարդկանց վրա, ինչպիսիք են կոմս դը Գոբինոն, Սառա Բեռնարը, Լև Տոլստոյը և Էռնստ Ռենանը: Եղվարդ Բրաունը Բաբի պատմությունն իմացավ կոմս դը Գոբինոյի մի ստեղծագործությունից: Հետագայում նա իր կյանքի մեծ մասը նվիրեց Բաբի և Բահայի հավատի ուսումնասիրմանը: Բրաունն այսպես է նկարագրում պատանի նահատակներին.

«Այդ մարդկանց կյանքն ու մահը, հուսահատությունից փրկող հույսը, կասկած չճանաչող սերը, տոկունությունը, որն անհնար էր տատանել՝ այդ ամենն այդ շարժման վրա թողնում էր հատուկ, անկրկնելի դրոշմ՝ դարձնելով այն հիրավի զարմանալի: Լավն է, թե վատ այն հավատը, որի համար իրենց կյանքերը զոհաբերեցին հարյուրավոր և հազարավոր մեր մերձավորները, բայց կա այդ հավատում ինչ-որ բան, հանուն ինչի նրանք»

*«Մերժեցին ամեն գոյը երկնքի տակ,
Արևի ու անձրևի տակ մերկ»*

*Ճանապարհ ընկան,
Որ չարչարվելով ու ապավինելով
Տարիների հաշիվը կորցնեն»:*

Քչերը կկրեին այն, ինչ կրեցին նրանք, և կասկած չկա, որ մեր ջանքերն արժեն նրան, որ հասկանանք, թե հանուն ինչի նրանք զոհաբերեցին իրենց կյանքերը: Ես չեմ խոսի այն մասին, թե ինչպես Բաբի կրոնը կազդի մարդկության ապագայի վրա (իսկ ես հավատում եմ, որ այն կվերափոխի մարդկության ճակատագիրը), ոչ էլ նոր կյանքի մասին, որն այն, գուցե, կներշնչի մահացածների մեջ, քանզի, այդ կրոնը հաջողության կհասնի, թե մոռացության կտրվի, այդ հավատի նահատակների հերոսությունը կմնա դարեր շարունակ:

Արդյոք կհաջողվի ինձ խոսքերով արտահայտել այդ մարդկանց անսահման համոզվածությունը և այն աննկարագրելի ուժեղ տպավորությունը, որն այդ համոզվածությունն այլ զարմանալի հատկանիշների հետ միասին թողնում է իրենց հանդիպած յուրաքանչյուր մարդու վրա: Հավատացե՛ք դա այդպես է...»

Բահաուլլան հրաշքով ողջ մնաց՝ զերծ մնալով այդ ամենասարսափելի հետապնդումների ալիքից: Աշխարհիկ իշխանությունները չէին ցանկանում նրան ազատ արձակել, քանզի գիտեին, թե ինչ հսկայական ազդեցություն ուներ նա բաբիների համայնքում: Միևնույն ժամանակ, նրա ընտանիքի բարձր դիրք գրավելու և ռուս դեսպան՝ կոմս Դոլգորուկովի անձնական պաշտպանության պատճառով, չափազանց անմիտ կլինեի մահապատժի ենթարկել նրան առանց դատի: Իսկ դատել նրան նույնպես անհնարին էր: Դատական քննության ժամանակ, որին ներկա էր ռուսական կառավարության ներկայացուցիչը, շահի դեմ մահափորձ կատարող մարդը խոստովանեց, որ իր արարքի պատասխանատվությունն ամբողջությամբ հանում էր շարժման առաջնորդների, այդ թվում և Բահաուլլայի վրայից:

Որոշ ժամանակ անց, Բահաուլլայի բարեկամը՝ առաջին նախարարը, կարողացավ համոզել շահի ընտանիքի անդամներին, ովքեր պահանջում էին մահապատժի ենթարկել բանտարկյալին, որ ավելի խելամիտ կլինի նրան աքսորել Պարսկաստանից: Բահաուլլան դատապարտվեց քսորի, բայց մինչ այդ նրա ամբողջ ունեցվածքը բռնագրավվեց շահի կողմից, Թեհրանի տունը կողոպտվեց, քաղաքամերձ տունը հիմնովին ավերվեց, իրեն պատկանող արվեստի գործերն ու բնագրերն անցան պարսիկ պաշտոնյաների՝ ներառյալ և առաջին նախարարի տիրապետության տակ:

Առանց գոյության միջոցների, քայքայված առողջությամբ, տանջված՝ բանտում կրած կտտանքներից՝ Բահաուլլան առանց դատի քսորվեց հարազատ երկրից և գրկվեց ապաստանից: Նրանք, ովքեր տեսել էին նրան այդ օրերին, չէին հավատում իրենց աչքերին. սարսափելի փորձությունները, որոնք պետք է բարոյագրվեին նրան, կարծես, ընդհակառակը, նրան վստահություն և ուժ էին տվել: Իսկապես, հենց այնտեղ, Սիյահ-Չալի մռայլ փոսում, տեղի ունեցավ բաբիների և բահայիների պատմության ամենակարևոր իրադարձությունը: Հենց այստեղ Բահաուլլան գիտակցեց, որ ինքն է Ավետաբերը, ում մասին մարգարեություն էր անում Բաբը՝ Նա, Ում կհայտնի Աստված: Բահաուլլան այսպես էր նկարագրում այն, ինչ վերապրեց զնդանում, երբ առաջին անգամ գիտակցեց իր նախասահմանումը.

«Մի անգամ գիշերով՝ երազում, բոլոր կողմերից Ինձ սկսեցին հասնել այս վեհ խոսքերը. «Հիրավի, Մենք հաղթանակ ենք ընծայում Քեզ և Քո գրչին: Թող Քեզ չտխրեցնեն այս դժվարությունները և չսարսափես, քանզի Դու սարսափելու ոչինչ չունես: Շուտով Աստված

կհայտնի երկրային գանձերը՝ մարդկանց, ովքեր կօգնեն Քեզ Քո և Քո անվան միջոցով, որով կենդանացնում է Աստված Իրեն հավատացողների սրտերը»... Այն օրերին, երբ Ես բանտարկված էի Թեհրանում, Ես քուն չունեի գարշելի բանտում, որտեղ տառապում էի շղթաների ծանրության տակ, բայց երբ հաջողվում էր ննջել, կարծես ինչ-որ բան հոսում էր գազաթից կրծքով, ինչպես լեռնային գազաթից սլացող ջրի հզոր հոսքը: Այդ ժամանակ Իմ ամբողջ մարմինը համակվում էր կրակով, իսկ լեզվիցս խոսքեր էին թռնում, որոնք նախատեսված չէին մահկանացուի խողովան համար»:

Այսպիսով, Բահաուլլան նա էր, ում մասին պատմեց Բաբն իր Հայտնության մեջ: Բահաուլլան իր հետևորդների համար ճշմարտության կենտրոնակետ էր: Շատ բան էր խոսում այն մասին, ինչը Բաբը գիտեր հենց սկզբից՝ նա հայտնվել էր հատկապես այն նպատակով, որ նախապատրաստի Բահաուլլայի գալուստը: Նա բազմիցս ակնարկել էր այդ մասին իր աշակերտների հետ զրույցներում: Ահա մի բավականին նշանակալից հատված Բայանից.

«Բարիք նրան, ով իր հայացքն ուղղում է Բահաուլլային և գովք է բարձրացնում իր Տիրոջը: Քանզի, անշուշտ, կգա Նրա Հայտնության ժամանակը: Այդպիսին է Բայանում դրոշմված Աստծո կամքը»:

Սիյահ-Չալում, չորս ամսվա բանտարկությունից հետո, Բահաուլլան առանց որևէ բացատրության ազատ արձակվեց, ինչպես մինչ այդ առանց որևէ հիմքի բանտարկվել էր: Նրան հայտնեցին, որ ըստ շահի պաշտոնական հրամանի, նա իր ընտանիքի և բոլոր նրանց հետ, ովքեր կորոշեն հետևել իրեն, աքսորվում է երկրից: Նկատենք, որ Բահաուլլան չօգտվեց այդ պահից, որպեսզի հայտարարի իր առաքելության մասին: Նրան ապաստան առաջարկեցին Ռուսաստանում, բայց փոխարենը նա ընտրեց Բաղդադը՝ ներկայիս Իրաքի մայրաքաղաքը, որն այն ժամանակ Օսմանյան կայսրության մարզ էր: Հաջորդ երեք տարիների ընթացքում նրա շուրջն աստիճանաբար բաբիների փոքր գաղութ աճեց, որը ներառում էր նաև իր հետևից աքսոր գնացած ընտանիքի անդամներին: Նրանց մեջ էր նաև Միրզա Յահյան՝ Բահաուլլայի խորթ եղբայրը, որը գաղտնի փախել էր Պարսկաստանից և միացել ընտանիքին քիչ ավելի ուշ՝ 1853թ.: Դժվար էր ենթադրել, որ նրա գալուստը կդառնա նոր ծանր փորձությունների և փորձանքների սկիզբ:

Միրզա Յահյայի կյանքի պատմությունը և՛ զվարճալի է, և՛ ողբերգական: Յահյայի գործունեությունը Բահաուլլայի առաքելության համար դառնում է սպառնալիք և չարականների կողմից այսօր էլ օգտագործվում է որպես կշտամբանքների առիթ բահայիների համայնքի նկատմամբ:

Միրզա Յահյան Բահաուլլայից տասներեք տարով փոքր էր, և կրթությունը ստացել էր մեծ եղբոր ղեկավարության տակ: Լինելով հմուտ գեղագիր՝ նա որոշ ժամանակ ծառայում էր որպես Բահաուլլայի անձնական քարտուղար: Ծանոթները նկարագրում էին նրան որպես երկչոտ, դյուրագգաց մարդ, որ հեշտությամբ է ընկնում ավելի ուժեղ անձնավորությունների ազդեցության տակ: Եղբորից հետո Միրզա Յահյան դարձավ Բաբի հավատի խանդավառ համախոհ և մի քանի անգամ ուղեկցեց եղբորը հավատի գործով կատարած ուղևորություններում:

Միրզա Յահյային՝ խառնվածքով բարեհամբույր մարդուն, Բաբի համայնքում հարգում էին որպես Բահաուլլայի ազգական և ազդեցիկ ընտանիքի ներկայացուցիչ: Բեդաշտի հանդիպումից առաջ, Բաբը, նախապես խորհրդակցելով Բահաուլլայի և

շարժման այլ առաջնորդների հետ՝ գրեց կարգադրություն, որի համաձայն իր մահվան դեպքում Բաբի համայնքի անվանական ղեկավար էր նշանակվում Յահյան: Այժմ ակնհայտ է, որ դրա շնորհիվ Բահաուլլան կարող էր շարունակել շարժման ղեկավարությունը՝ չենթարկվելով մեծ վտանգի, քանզի պաշտոնի ընդունումը, անշուշտ, իր հանդեպ ավելի մեծ ուշադրություն կգրավեր: Յահյային այդ ժամանակ գրեթե ոչինչ չէր սպառնում. նա ապրում էր մեկուսի, երկրի հյուսիսում գտնվող ընտանեկան կալվածքում, իսկ երբ հետապնդումների ալիքը հասավ այնտեղ, նա փախավ արտասահման:

Շուտով, երբ մի փունք փախստականներ հիմնվեցին Իրաքում, Յահյան հետևեց մի երիտասարդի՝ ոմն Սեիդ Մոհամեդի խորհրդին, որ ուսումնասիրում էր մահմեդական աստվածաբանություն: Այժմ Մոհամեդը՝ ճարպիկ ճոռոմախոսը, ըստ երևույթին, ցանկանում էր հավատի հարցերում բաբիների մեջ դառնալ հեղինակություն: Նա համոզում է Յահյային ազատվել ավագ եղբոր խնամակալությունից և իր վրա վերցնել դավանակիցների ղեկավարությունը: Որոշ ժամանակ Յահյան տատանվում էր, այնուհետև Սեիդ Մոհամեդի ազդեցության տակ, աստիճանաբար սկսեց հեռանալ Բահաուլլայից և իրեն անվանելով հանգուցյալ Բաբի ժառանգորդ՝ հայտարարեց իր իշխանության և համապատասխան դիրքի իրավունքների մասին:

Այդ պահանջների նկատմամբ Բահաուլլայի ցուցաբերած վերաբերմունքի մեջ արտահայտվեց նրա ողջ բնավորությունը: Չմտնելով վիճաբանության մեջ, որը վտանգի կենթարկեր ոչ միայն համայնքի միասնությունը, այլև գոյությունը, որի անդամներն առանց այդ էլ հուսահատվել էին՝ Բահաուլլան առանց զգուշացման լքեց իր դավանակիցների գաղութը և մեկնեց Սուլեյմանիայի մոտակա լեռները, որ հարևան Քուրդիստանում էին: Գրեթե երկու տարով նա խզեց ամեն տեսակի կապերը բաբիների համայնքի հետ: Այդ կամավոր մեկնումը Քուրդիստանի անապատ նմանատիպ դրվագներ է հիշեցնում այլ մեծ կրոնների հիմնադիրների կյանքից: Ինչպես հետագայում պարզվեց, դա լարված ստեղծագործության ժամանակ էր: Բահաուլլայի մոտ սկսեց ձևավորվել իր առաքելության հստակ ըմբռնում, ինչն իր արտահայտումը գտավ մեդիտատիվ տեքստերում, աղոթքներում և բանաստեղծություններում, որոնք նա ստեղծում էր՝ ապրելով լիակատար մեկուսացման մեջ: Մնացել են միայն մի քանի պարսկերենով գրված ստեղծագործություններ, որոնք ավետում են Աստվածային Ուղերձը մարդկությանը:

Քանի դեռ Բահաուլլան Սուլեյմանիայում էր, Բաբի համայնքի բոլոր գործերն ամբողջությամբ Յահյայի ձեռքում էին: Նա հենվում էր իր ուսուցչի՝ Սեիդ Մոհամեդի վրա: Արդյունքում, աքսորյալների փոքր գաղութում անարխիա սկսվեց: Երկու տարուց էլ կարճ ժամանակահատվածում գտնվեցին մեկ-երկու տասնյակ հանդուգն մարդիկ, ովքեր համայնքի իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու փորձեր ձեռնարկեցին: Շուտով Միրզա Յահյան հեռացավ գործերից՝ թույլ տալով Սեիդ Մոհամեդին աստվածաբանական հարցերը լուծել իր հասկացողությամբ: Համայնքի ենթադրյալ առաջնորդն այդպես արտահայտեց իր անկարողությունն այն իրավասությունների վերաբերյալ, որոնց նա հետամուտ էր լինում: Նրա բաբի ընկերների մեծ մասի համար այդ դասն ապարդյուն չանցավ:

Վիճակն օրեցօր վատանում էր: Այդ պատճառով մի քանի հոգի մեկնեցին փնտրելու Բահաուլլային՝ հուսալով, որ իրենց կհաջողվի համոզել նրան վերադառնալ: Պատահաբար առավել ջանասեր փնտրողներից մեկի ականջին լուրեր հասան լեռներում ապրող «սրբի» մասին: Շուտով նա գտավ Բահաուլլային: Բահաուլլայի ընտանիքը (այդ թվում և ինքը՝ Յահյան) և մյուս բաբիները սկսեցին աղաչել Նրան վերադառնալ համայնք և

նորից իր վրա վերցնել գործերի կառավարումը: 1856թ. մարտի 19-ին Բահաուլլան՝ զիջելով նրանց հորդորներին, վերադարձավ Բաղդադ:

Հետագա յոթ տարիների ընթացքում բաբիների համայնքի կյանքում տեղի ունեցան ապշեցուցիչ փոփոխություններ: Անձնական օրինակով, հորդորներով, խիստ կարգապահությամբ Բահաուլլային հաջողվեց համայնքի ոգին բարձրացնել այն նույն բարձրության վրա, որը Բաբի ժամանակ էր: Միրզա Յահյան նախկինի պես չէր մասնակցում գործերին: Բահաուլլայի փառքը՝ որպես հոգևոր ուսուցչի, տարածվեց ամբողջ Բաղդադով և արվարձաններով: Տիրակալները, գիտնականները, միստիկները, պաշտոնյաները նրա հետ հանդիպում էին փնտրում: Նրանց մեջ կային պարսիկ հասարակության բազմաթիվ ներկայացուցիչներ:

Բաղդադում Բահաուլլան գրեց Քիթաբ-ի-Իգանը կամ Վստահության Գիրքը, որում բացահայտեց մարդկային ցեղի փրկության Աստվածային պլանը: Գրքում մանրամասն շարադրված էին Բահաուլլայի հայեցակետերն Աստծո բնույթի, իրար փոխարինող Աստծո հայտնությունների դերի, մարդկության հոգևոր զարգացման վերաբերյալ: Ամփոփելով՝ Բահաուլլան բացահայտեց սեփական առաքելության գաղտնիքը: Հետագայում Բահաուլլայի բոլոր ստեղծագործություններից Իգան գիրքն ունեցավ առավել մեծ ճանաչում: Հատկապես այդ գրքի կանխադրույթները դրվեցին Բահայի հավատի քարոզների հիմքում:

Սակայն Բահաուլլայի աճող ազդեցությունը մտավախություն ու տագնապ առաջացրեց շահի ու նրա մերձավորների մոտ: Մեկը մյուսի հետևից թեիրանից հեռագրեր էին ուղարկվում՝ հասցեագրված Օսմանյան կայսրության կառավարությանը: Եվ ահա, միանգամայն անսպասելի, 1863թ. ապրիլին Բահաուլլային և իր ընտանիքին ծանուցեցին, որ Պարսկաստանի պահանջով Օսմանյան կառավարությունը որոշել է արքայազններին հեռացնել իր հայրենի երկրի սահմաններից: Ենթադրվում էր նրանց տեղափոխել Կոստանդնուպոլիս (ներկայիս Ստամբուլ):

Մինչ մեկնելը Բահաուլլան իր նստավայրը ժամանակավոր տեղափոխեց Տիգրիս գետի կղզիներից մեկի վրա՝ կալվածք, որն անվանեց «Ռիզվան», ինչը նշանակում է «Դրախտ» (հենց այդ անվանումով այն հետագայում մտավ պատմության մեջ): Այնտեղ Բահաուլլան իր մերձակա հետևորդներին բացահայտեց, որ ինքը Նա է, Ում կհայտնի Աստված, Աստծո դեսպանորդը՝ Բաբի և նախորդ կրոնների Սուրբ Գրքերի կողմից ամբողջ աշխարհին խոստացվածը: Բահայի պատմությունն ասում է, որ Բահաուլլայի հայտնության լույսը երևաց Սիյահ-Չալ բանտում: Ռիզվան այգում Բահաուլլան առաջին անգամ իր կոչման մասին հայտնեց որոշակիորեն, և դա դարձավ Բաբի հավատի պատմության բեկումնային կետ: Այդ իրադարձությունը ներկայումս ամբողջ աշխարհում նշվում է որպես Բահայի հավատի գլխավոր տոն՝ չնայած դրա նշանակությունն ակնհայտ դարձավ միայն չորս տարի անց, երբ Բահաուլլան ամբողջ ժողովրդի առաջ հռչակեց իր առաքելության մասին:

1863թ. օգոստոսի 16-ին ավելի, քան երեքամսյա ճանապարհորդությունից հետո, արքայազները հասան Կոստանդնուպոլիս, որտեղ, սակայն, նրանք երկար չմնացին: Օսմանյան և Պարսկական կայսրությունների միջև եղած հարաբերությունները վաղուց էին լարված: Սահմանների երկայնքով մշտապես տեղի էին ունենում զինված բախումներ և տարածքների զավթումներ: Վախենալով, որ Պարսկաստանի հետ կապ պահպանած արքայազն բաբիները կդառնան թուրքական քաղաքականության գործիք՝ շահի կառավարությունն էլ ավելի մեծ անհանգստություն ցուցաբերեց՝ կապված Օսմանյան

մայրաքաղաքում բաբիներին բնակեցնելու որոշման հետ: Պարսիկ դեսպան Միրզա Հուսեյն խանին հանձնարարված էր սկսել թուրքական իշխանությունների ճնշման քարոզարշավ և հասնել նրան, որ նրանք բաբիներին տեղափոխեն կայսրության ավելի հեռավոր վայրեր: Իր պահանջները դեսպանը հիմնավորում էր այն նախագգուշացումներով, որ բաբիները ցանկացած հաստատված կարգի թշնամիներ են և հատուկ վտանգ են ներկայացնում այնպիսի խառը և անկայուն հասարակության համար, ինչպիսին է Օսմանյան կայսրությունը: Դեսպանի ջանքերը հաջողությամբ պսակվեցին: 1863թ. դեկտեմբերի սկզբին Բահաուլլային, իր ընտանիքին և ընկերներին առանց զգուշացման, հանկարծակի աքսորեցին Ադրիանապոլիս (այժմ Էդիրնե), որը գտնվում է Թուրքիայի եվրոպական մասում:

Աքսորն Ադրիանապոլիս նշանավորեց նոր դարաշրջանի սկիզբը բահայի պատմության մեջ: Բահաուլլայի անձի հմայքը, անվերջ հոսքով նրա մոտ եկող այցելուների խմբերը, նրա շնորհիվ կատարված բաղդադյան համայնքի վերածնունդը, առաջվա պես խոշտանգումների ենթարկվող Պարսկաստանի բաբիների հետ նրա կատարած լայնածավալ նամակագրությունը, նրա աճող ազդեցությունը նրանց վրա՝ այդ ամենը վեհացրեց Բահաուլլայի կերպարը բաբի համախոհների մեջ: Բաբիները քննարկում էին այն, ինչը հայտնի էր Ռիզվան այգում կատարած Բահաուլլայի հայտարարությունից: Տեսնելով, որ համայնքը պատրաստ է ընդունել իր ուղերձը՝ Բահաուլլան որոշեց, որ եկել է իր առաքելությունը բացահայտ հռչակելու ժամանակը:

Պետք էր կատարել առաջին քայլը՝ բացել ճշմարտությունը Միրզա Յահյային, ով համարվում էր համայնքի անվանական ղեկավար: Սուրե-յի-Ամր անվամբ փաստաթղթի մեջ Բահաուլլան հռչակեց, որ հենց Ինքն է Նա, Ում կհայտնի Աստված և կոչ արեց Յահյային ճանաչել և աջակցել իրեն. այդպիսին էր ժամանակին Բաբի տրված կարգադրությունը: Սակայն Բահաուլլայի կոչը հավանություն չստացավ: Ադրիանապոլիս աքսորյալների տեղափոխումից քիչ անց, Յահյան, ում նորից սկսեց սադրել Սեիդ Մոհամեդը, սկսեց դավեր նյութել Բահաուլլայի դեմ՝ հուսալով համայնքում իրեն վերադարձնել նախկին դիրքը: Համոզվելով, որ ամեն ինչ անօգուտ է՝ Յահյան երկու անգամ Բահաուլլայի մոտ ուղարկեց վարձու մարդասպանների: Բահաուլլայի ուղերձը նրան կարդացին երկրորդ անհաջող մահափորձից հետո:

Երկար չտատանվելով՝ Յահյան հայտարարեց, որ ինքն է Բաբի ավետած Աստծո հայտնիչը, այլ ոչ թե Բահաուլլան, ինչով ցնցեց ամբողջ Բաբի համայնքը: Բացի այդ, համենայնդեպս, պարզաբանեց բարոյ և խճճված իրավիճակը, որը տիրում էր համայնքում Յահյայի ոչ հետևողական գործողությունների արդյունքում: Նրանից իսկույն երես թեքեցին Ադրիանապոլիսում գտնվող գրեթե բոլոր բաբիները և Պարսկաստանի ու Իրաքի բաբիների ճնշող մեծամասնությունը՝ ներառյալ Բաբի ողջ մնացած հարազատները՝ նրա հավատի համախոհները: Էդվարդ Բրաունի գնահատականով, Յահյային հետևեցին բաբիների երեք-չորս տոկոսը, իսկ մնացածը հավատարիմ մնացին Բահաուլլային: Հենց այդ ժամանակվանից բաբիներն իրենց սկսեցին անվանել բահայի, և Բահայի հավատը սահմանվեց որպես ինքնուրույն կրոն:

Հասնելով ճանաչման Բաբի հետևորդների մոտ՝ Բահաուլլան այժմ անցավ իր առաքելության անմիջական իրագործմանը: Սկսած 1867թ. սեպտեմբերից՝ նա գրեց մի քանի ուղերձ, որոնք կարելի է դասել կրոնի պատմության առավել անվանի փաստաթղթերի շարքին: Որոշ ուղերձներ հասցեագրված էին «Երկրային արքաներին», մյուսները՝ անձամբ յուրաքանչյուր թագավորին: Նամակներում Բահաուլլան իրեն

հայտարարեց Նա, Ով նախանշանակված է Տորայում (Հնգամատյանում), Ավետարանում և Ղուրանում և կոչ արեց միապետերին կանգնել իր հավատի պաշտպանությանը: Ուղերձներում նա զգուշացնում էր, որ XIX դարում աշխարհը կվերապրի ողբերգական բեկում, որից հետո կծնվի նոր համաշխարհային քաղաքակրթություն: Նոր դարի հիմնական գաղափարը պետք է լինի ամբողջ մարդկության համախմբումը: Բահաուլլան առաջատար եվրոպա-կան երկրների տիրակալներին կոչ էր անում, առաջին հերթին, ամենից վեր համարել աշխարհի միասնության նվաճման խնդիրը.

«Կգա ժամանակ, երբ ամենուր կընդունվի լայն համապարփակ ժողովի կենսական անհրաժեշտությունը: Երկրագնդի տիրակալներն ու թագավորները պետք է մասնակցեն դրա աշխատանքին և ուղիներ ու միջոցներ փնտրեն, որոնք կբերեն համընդհանուր Մեծ Խաղաղության հաստատմանը... Նա չպետք է հպարտանա, ով սիրում է իր երկիրը, այլ նա, ով սիրում է ամբողջ աշխարհը: Երկրագունդը մի երկիր է, իսկ մարդկությունը՝ դրա քաղաքացիները»:

Բահաուլլան ուղերձներում պնդում էր, որ Աստված գործի է դրել այնպիսի պատմական ուժեր, որոնց ոչ ոք չի կարող խանգարել: Պետությունների տիրակալները պետք է իմանան, որ իշխանությունն իրենց տրված է Աստծուց. իրենց պարտքն է ծառայել մարդկությանը, երկրագնդի վրա հաստատել խաղաղություն և արդարացի հասարակական կարգ, ժողովուրդներին բերել միասնության: Այն տիրակալները, ովքեր իրենց իշխանությունն օգտագործում են ի չարիք՝ հակազդելով մարդկության միասնության գործընթացին, դժբախտություններ են բերում իրենց և իրենց ժողովրդին:

Նոր հավատը նոր էր հայտնել իր մասին, երբ դրան հասցվեց ևս մի ծանր հարված, որի հետևանքները զգացվում են մինչ այժմ: Նորից խռովության հրահրիչ դարձավ Միրզա Յահյան: Մերժելով Բահաուլլային՝ Յահյան վերջնականապես կորցրեց իր ազդեցությունը Բաբի հետևորդների մոտ: Հետագայում նա պատմում էր պրոֆեսոր Բրաունին, որ բոլորը երես թեքեցին իրենից, այնպես, որ ինքն էր ստիպված շուկա գնալ և ուտելիք գնել: Սակայն նրան առաջվա պես աջակցում էր Սեիդ Մոհամեդը և երկու այլ ադրիանապոլսյան աքսորյալներ: Այդ խմբակը չէր ցանկանում հաշտվել այն մտքի հետ, որ Բահայի հավատն ընդունում են Բաբի բոլոր կողմնակիցներն ինչպես Պարսկաստանում, այնպես էլ օսմանյան հողերում: Իրենց նպատակներին հասնելու համար նրանք որոշեցին օգտագործել Բահաուլլայի նամակները միապետերին:

Այդ պատմական շրջանում, խարխլված Օսմանյան կայսրությունը գտնվում էր քայքայման շեմին: Լայնատարած տերության մեջ ազգային փոքրամասնությունների կողմից մշտապես դժգոհություն էր արտահայտվում: Իրադրությունը հատկապես լարված էր Ադրիանապոլսից այն կողմ տեղակայված եվրոպական տիրույթներում, որտեղ առաջացավ այնպիսի պետությունների առանձնանալու սպառնալիք, ինչպիսիք են Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան և Չերնոգորիան: Կոստանդնուպոլսում Պարսկաստանի դեսպան Միրզա Հուսեյն-խանը գործադրում էր բոլոր ուժերը՝ ջանալով համոզել թուրքական իշխանություններին, որ մի բուռ աքսորյալ բահայիներ իրենց համար վտանգ են ներկայացնում ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական տեսակետից: Միրզա Յահյան և Սեիդ Մոհամեդը՝ օգտվելով իրավիճակից, փորձեցին անհրապույր կերպով ներկայացնել Բահաուլլայի ուղերձները տիրակալներին: Կոստանդնուպոլիս հասան անանուն նամակներ, որոնք զգուշացնում էին քաղաքական դավադրության մասին: Անշուշտ, այդ սադրանքներին համոզվածություն էր տալիս այն փաստը, որ Բահաուլլայի մոտ՝ Ադրիանապոլիս, կայսրության բոլոր կողմերից անվերջ հոսքով

մարդիկ էին գնում և անգամ իշխանության ներկայացուցիչներ կարծես թե, չէին կարողանում անտարբեր մնալ Բահաուլլայի անձի հմայքի առջև:

Հիշելով Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կառավարությունների՝ Բահաուլլային իրենց հովանավորության տակ վերցնելու առաջարկությունների մասին (երբ հետապնդումները բաբինների դեմ նոր էին սկսվում)՝ Օսմանյան կայսրության իշխանությունների մոտ մտավախություն առաջացավ, որ Յահյայի մեղադրանքները հիմք ունեն: Որոշված էր վերջնականապես լուծել աքսորյալների համայնքի ճակատագիրը: Աբդ ուլ-Ազիզ սուլթանը վերանայման չենթարկվող հրաման արձակեց՝ Ադրիանապոլսյան աքսորյալներին ընդմիջտ բնակության աքսորել Պաղեստին՝ Աքքա քաղաք: 1868թ. օգոստոսի 21-ի առավոտյան Բահաուլլային, նրա ընտանիքի անդամներին և մերձավորներին (ընդամենը յոթանասուն-ութուն մարդ) Գալիպոլիում նավ նստեցրեցին: Տասնօրյա տանջալից ծովային անցումից հետո նրանց պահակախմբով իջեցրեցին Ծովային Դարպասների ափ, որը տանում էր դեպի մռայլ Աքքա ամրոց:

Ճակատագրի հեգնանքով Միրզա Յահյան և Սեիդ Մոհամեդն ընկան սեփական ցանցը: Թուրքական կառավարությունը, կասկածելով, որ Յահյան նույնպես դավադրության մեջ է, աքսորեց նրան Կիպրոս կղզի, որտեղ նա պետք է պահակախմբով պահվեր երեք բահայիների հետ: Իշխանություններն այդ կերպ ուզում էին խոչընդոտել նրա գործունեությանը: Ելնելով այդ նույն նկատառումներից՝ Սեիդ Մոհամեդին իր կամակատարներից մեկի հետ աքսորյալ բահայիների խմբի հետ աքսորեցին Աքքա:

Ընտրելով Աքքան որպես աքսորավայր՝ իշխանությունները հույս ունեին, որ Բահաուլլան այդպիսի փորձության չի դիմանա: 1860-ականներին այդ քաղաք-բանտը կործանիչ վայր էր: Այնտեղ՝ փողոցների և խոնավ գետնախորշերի նեղ լաբիրինթոսում, հավաքված էին հանցագործներ կայսրության բոլոր ծայրերից: Այդ վայրերում սովորական քամիներն ու մակընթացությունները Միջերկրական ծովից դեպի ափ թափոններ էին դուրս բերում: Այդ պատճառով այստեղ կլիման այնքան անառողջ էր, որ, ինչպես ասում էր ժողովուրդը, այդ վայրն ընկած թռչունները սատկում էին:

Աքսորի առաջին երկու տարիները բահայիների համար դժվարությունների և զրկանքների տարիներ էին: Կոստանդնուպոլսի պարսիկ դեսպանը հրաման արձակեց՝ Աքքա Պարսկաստանի ներկայացուցիչ ուղարկել, որպեսզի հետևի՝ արդյոք պատշաճ խստությամբ է կատարվում սուլթանի հրամանը: Աքսորյալների մի մասը զոհվեց դաժան վերաբերմունքի արդյունքում, այդ թվում՝ Բահաուլլայի կրտսեր որդի Մահդին: Որոշ թեթևացում սկսվեց 1870թ., երբ Թուրքիայի և Ռուսաստանի միջև հարաբերությունների սրման հետ կապված՝ անհրաժեշտություն ծագեց ամրոցն օգտագործել որպես ռազմական զորանոցներ: Այդ պատճառով աքսորյալներին տեղափոխեցին տեղի բնակիչներից վարձով վերցված տներ և այլ շինություններ:

Աքքայում Բահաուլլային սկզբից վերաբերում էին կանխակալությամբ, սակայն, հետո կրկնվեց Բաղդադում և Ադրիանապոլսում կատարվածը՝ Բահաուլլայի ազդեցությունը սկսեց աստիճանաբար աճել: Համակրանքով լցվելով Բահաուլլայի նկատմամբ՝ որոշ ժամանակ անց պարետները թուլացրեցին իրենց հսկողությունը: Ազդեցիկ մարդիկ նրա մասին խոսում էին հիացմունքով և հարգանքով: Եվ հանկարծ հետևեց անսպասելի հարված: Սեիդ Մոհամեդն ու նրա երկու ընկերները, տհաճությամբ դիտելով, թե ինչպես է լավանում աքսորյալների վիճակը՝ սկսեցին խռովություն տարածել քաղաքային ցածր շերտերի մեջ՝ հրահրելով նրանց հարձակ-վել Բահաուլլայի տան վրա: Նրանք հույս ունեին, որ Բահաուլլան այդ խժոժությունների ժամանակ կզոհվի:

Այդ նոր սպառնալիքը լցրեց մի քանի աքսորյալների համբերության բաժակը: Մոռանալով այն մասին, որ կրոնը կարգադրում է հրաժարվել բռնությունից և ամեն ինչում ապավինել Աստծո Կամքին՝ նրանցից յոթը որոշեցին գործել: Նրանք սադրանք կազմակերպեցին, որի ժամանակ Սեիդ Մոհամեդն ու նրա համախոհները սպանվեցին:

Ոչինչ չէր կարող ավելի մեծ վնաս հասցնել նոր կրոնին: Այդ սպանությունները մահմեդական հոգևորականության միջավայրի որոշ ժամանակով լռած թշնամիների համար բահայիներին մեղադրելու հերթական ամիս հանդիսացան: Բահաուլլան կատարվածը ավելի ծանր տարավ, քան իր ձերբակալումն ու բանտարկությունը, որովհետև բիծ դրվեց իր ուսմունքի մաքրության վրա: Ահա թե ինչ է ասվում այդ շրջանին վերաբերող Նրա նամակներից մեկում.

«Իմ բանտարկությունն Ինձ անպատվություն չի բերի: Ընդհակառակը, Իմ կյանքով եմ երդվում, որ այն կփառաբանի Ինձ: Իսկ եթե Ես ինչ-որ բանից ամաչում եմ, ապա միայն Իմ հետևորդների այն գործողություններից, ովքեր դավանելով Սեր դեպի Ինձ՝ գործնականում ծառայել են Սատանային: Հիրավի, նրանք մոլորյալներ են»:

Հետագայում քաղաքացիական դատարանով հաստատվեց, որ խռովություններում չի մասնակցել ո՛չ Բահաուլլան, ո՛չ էլ Աքքայում ապրող իր ընկերների մեծ մասը: Պատժվեցին միայն նրանք, ովքեր իսկապես մեղավոր էին: Կրքերն աստիճանաբար հանդարտվեցին: Մինչդեռ Բահաուլլան շարունակում էր ուղերձներ ուղարկել տիրակալներին և թագավորներին, որոնք ընդհատվել էին Ադրիանոպոլսից նրա մեկնելու պատճառով: Ուղերձներն ուղղված էին անձամբ յուրաքանչյուր տիրակալին: Դրանց հասցեատերերն էին՝ կայսր Լուի Նապոլեոնը, թագուհի Վիկտորիան, կայսր Վսիլիելմ I-ը, Ալեքսանդր II թագավորը, պարսից շահ Նասիր-ադ-Դինը, Ավստրիայի կայսր Ֆրանց Իոսիֆը, Թուրքիայի սուլթան Աբդ ուլ-Ազիզը: Բոլոր ուղերձները հասել էին հասցեատերերին:

Այդ ուղերձներում Բահաուլլան միապետերին կոչ էր անում համատեղ ջանքերով հիմնադրել միջազգային դատարան, որը լիազորված կլինի լուծել պետությունների միջև առաջացող բախումները՝ համաշխարհային կառավարության նախատիպը: Բահաուլլայի խոսքերով, այդ դատարանը պետք է հենվի կարգի պահպանման միջազգային ուժերի վրա՝ յուրօրինակ միջազգային ոստիկանության, որը կլինի մասնակից-պետությունների խնամակալության տակ՝ ապահովելով բոլոր վիճելի հարցերի խաղաղ լուծումը:

Տիրակալներին գրած նամակներում նաև տրված էին խորհուրդներ, թե ինչպես մարդկանց մեջ դաստիարակել երկրագնդի բոլոր ժողովուրդների ընդհանրության զգացում և միասնության ըմբռնում: Օրինակ՝ Բահաուլլան միջազգային հաղորդակցման օժանդակ լեզվի ստեղծման կոչ էր անում, ինչը թույլ կտար յուրաքանչյուր հասարակությանը, մի կողմից պահպանել իր մշակույթի անկրկնելիությունը, իսկ մյուս կողմից՝ բոլոր ժողովուրդների և ռասաների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելու հնարավորություն ունենալ: Պարտադիր կրթության համակարգը կդառնա համընդհանուր լուսավորության հիմք, չափերի ու կշիռների միջազգային համակարգը կսահմանի բոլորի համար ընդհանուր չափորոշիչներ՝ համաշխարհային տնտեսական համակարգին անցնելու համար անհրաժեշտ նախադրյալ, ռազմական կարիքների ծախսերն էապես կկրճատվեն, իսկ հարկերից գոյացած միջոցները կօգտագործվեն հասարակության կարիքների համար: Միջպետական գործերում միապետերը պետք է ղեկավարվեն ժողովրդավարության հիմնական սկզբունքներով:

Քանի որ աքսորյալները գտնվում էին խիստ մեկուսացման մեջ, այդ արտասովոր ուղերձները գաղտնի կերպով բանտից հանում էին Բահաուլլայի այցելուները, ում համակրանքը նա կարողացել էր վայելել: Ֆրանսիացի հյուպատոսն անձամբ հասցրեց Բահաուլլայի առաջին ուղերձը կայսր Լուի Նապոլեոնին:

Վառ և խոր իմաստով լեցուն ուղերձները գրվել էին նաև առաջատար կրոնների հոգևոր առաջնորդներին՝ ներառյալ Պողոս IX պապին: Դիմելով եկեղեցիների ղեկավարներին՝ Բահաուլլան նախ և առաջ կոչ էր անում նրանց չկարգել հնացած դավանություններից և աշխարհիկ իշխանությունից, այլ լրջորեն ուսումնասիրել դրույթները, որոնք ինքն առաջ է քաշում: Բահաուլլան ընդգծում էր, որ հենց հոգևորականության ներկայացուցիչներն են առաջինը մերժել և հետապնդել բոլոր համաշխարհային կրոնների հիմնադիրներին:

Պողոս IX պապին ուղղված ուղերձը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում պապական իշխանության պատմությունն ուսումնասիրողների համար, որովհետև այնտեղ պարունակվում են կարգադրագրեր, որոնցից շատերին ակամայից հետևեցին Պողոս IX պապի ժառանգորդները: Բահաուլլան կաթոլիկ եկեղեցու առաջնորդին կոչ էր անում պապական տիրույթներում իշխանությունը զիջել աշխարհիկ տիրակալներին, չպարփակվել Վատիկանի պալատի պատերում, այլ ձգտել հաղորդակցվել այլ կրոնների ղեկավարների հետ, դիմել բոլոր երկրների աշխարհիկ իշխանություններին խաղաղության և արդարության կոչով, վերջ տալ իրեն (պապին) պաշտելու պճնամուլ ծիսակատարություններին: «Նմանվիր քո Տիրոջը», - այդպիսի խոսքերով էր ավարտվում ուղերձը: Նման խոսքերով Բահաուլլան դիմում էր նաև կաթոլիկ հոգևորականությանը:

«Մի պարփակվեք եկեղեցիներում ու վանքերում: Դուրս եկեք և զբաղվեք նրանով, ինչը օգուտ է բերում ձեզ և այլ մարդկանց հոգիներին: Վերջին Դատաստանի Օրվա արքան այսպես է ձեզ հրամայում: Իմ սիրո պատվարում թաքնվեք: Բոլոր թաքստոցներից միայն այս մեկն է ի բարօրություն իր մոտ եկողներին... Սա հիրավի արժանի մեկուսացում է, եթե դուք նրանցից եք, ովքեր հասկանում են: Չպսակվողի (Հիսուսի) համար ապաստան չգտնվեց, որտեղ խոնարհեր Իր գլուխը: Դրա մեղավորը մարդկային նենգությունն է: Նրա սրբությունը նրանում չէ, ինչին դուք հավատում եք, այլ նրանում, ինչ Մենք ունենք»:

Բահաուլլան չստացավ այդ ուղերձներից ոչ մեկի պատասխանը: Մեզ հայտնի չնչին եղածից բերենք Վիկտորիա թագուհու ժլատ պատասխանը. «Եթե այդ խոսքերն Աստծուց են, ապա դրանցն է ապագան, իսկ եթե ոչ, ապա դրանք չարիք չեն պատճառի»:

Այդ ուղերձները, սակայն, ավելի ուշ ուշադրության արժանացան, երբ ապշեցուցիչ կերպով սկսեցին իրականանալ դրանց մեջ պարունակվող մարգարեությունները: Եվրոպայի ամենահզոր ինքնակալ միապետ համարվող Լուի Նապոլեոն կայսրը Բահաուլլայի կողմից մեղադրվում էր կեղծավորության և իշխանությունը չարաշահելու մեջ և ստացավ հետևյալ զգուշացումը.

«...քո արքայությունում կսկսվեն պառակտումներ, և թագը կընկնի քո գլխից քո արարքների համար... Դու քո մեծությամբ գոռոզացար: Երդվում եմ կյանքովս, այն երկար չի տևի...»:

Երկու տարի անց, Սեդանի մոտ անսպասելի խայտառակ պարտությունից հետո, կայսրը կորցրեց թագը և դարձավ աքսորյալ:

Այնուհետև Լուի Նապոլեոնին հաղթողը՝ Վիլիելմ I-ը, որ մինչ այդ հռչակվել էր միասնական Գերմանիայի կայսր, ստացավ նման զգուշացում. «Հպարտությունն ու աշխարհիկ իշխանության փափագը Գերմանիայի վրա կքաշեն «պատժիչ սուր», որն «արյամբ կողողի Ռենայի ափերը»: Զգուշացումներ ստացան նաև ռուսական ցարը, ավստրիական կայսր Ֆրանց Իոսիֆը և պարսից շահը:

Հատկապես արտահայտիչ են ուղերձները, որոնք ուղղված են թուրք սուլթան Աբդուլ-Ազիզին և նրա առաջին նախարար Ալի-փաշային, ումից կախված էր Աքքայի բանտարկյալների ճակատագիրը: Այդ ուղերձներում Բահաուլլան գուշակում էր Ալի-փաշային և արտաքին գործերի նախարար Ֆուադ-փաշային շուտափույթ մահ. նա գուշակում էր Եվրոպայի թուրքական տիրույթների կորուստը և սուլթանի անկումը: Այդ բոլոր գուշակումները կատարվեցին, և դա էլ ավելի փառաբանեց առանց այդ էլ լայն ճանաչում գտած Բահաուլլայի անունը:

Տասնամյա շրջանի գլխավոր իրադարձությունը, որը սկսվել էր 1863 թվականից՝ Բահաուլլայի առաքելության պաշտոնական հռչակումից հետո, դարձավ Քիթաբ-ի-Աղդասը (ինչը նշանակում է «Սուրբ Գիրք»): Մեր օրերում համարվում է, որ այդ գրքում է այն ուսմունքի էությունը, որը բահայիներն անվանում են Բահաուլլայի հայտնություն:

Քիթաբ-ի-Աղդասը հավաստում է, որ երկրի վրա հաստատված է Բահաուլլայի իշխանությունը, որը մարդկությունը կճանաչի: Սկզբում Բահաուլլան հաստատում է, որ ինքն Աստծո ուղարկած «Արքաների Արքան» է, որը պետք է նպաստի երկրի վրա Աստծո Արքայության կառուցմանը: Գրքում զարգացվում են երկու գլխավոր թեմաներ՝ հոգևոր օրենքների հռչակում, որոնց շնորհիվ պետք է վերափոխվի յուրաքանչյուր անհատի ոգին և որոնց պետք է հետևի մարդկությունը, ինչպես նաև ինստիտուտների ստեղծում, որոնց միջոցով պետք է կառավարվեր համայնքը: Ավելի մանրամասն այդ երկու հարցերն ուսումնասիրվում են յոթերորդ և ութերորդ գլուխներում: Այստեղ բավական է հիշատակել, որ Քիթաբ-ի-Աղդասում բերված օրենքների համակարգն ամբողջությամբ փոխարինել է և՛ Իսլամի այն օրենքները, որոնք Բաբը թողել էր անձեռնմխելի, և՛ Բաբի մշակված խիստ օրենսգիրքը: Արգելված էր ջիհադը, այսինքն՝ ուժի կիրառումը կրոնական նպատակներով և կարգադրված էր խուսափել կրոնական հողի վրա կատարված որևէ բախումից: Քանի որ արդեն կատարվել էր Բաբի հավատի անջատումն Իսլամից, ապա հանվել էր անգամ Բաբի աստվածաբանական ուսումնասիրությունների շուրջ սահմանված խիստ արգելքը: Բահայիները կոչված են ճշմարտության ընկալման համար լինել բաց, ինչպիսի աղբյուրից էլ այն բխի:

«Զգուշացեք... որպեսզի միակ ճշմարիտ Աստծո սիրեցյալները շատ խիստ չդատեն մարդկանց ասածներն ու գրածները: Եվ թող նրանք նման խոսքերին և գրածներին վերաբերվեն անկանխակալությամբ և մեղմաբարո կարեկցանքով»:

Քիթաբ-ի-Աղդասի ավարտով սկսվեց Բահաուլլայի ծառայության վերջին շրջանը: Մեկուսացմանը վերջ դրվեց: Բեղմնավոր աշխատանքով լի երկու տասնամյակների ընթացքում երևան եկան բազմաթիվ աշխատություններ, որոնցում Բահաուլլան նկարագրեց մարդկության ապագայի իր տեսունակությունը: Ամբողջ Պաղեստինում բարձր պաշտոններ գրավող մարդիկ դառնում էին սկզբից երկրպագու, այնուհետև Բահաուլլայի անձնվեր հետևորդներ: Նոր հավատն ընդունեց նաև տեղական մահմեդական հոգևորականության ղեկավար մուֆտի Աքքին: Քաղաքի տիրակալը, այցելելով Բահաուլլային, ի նշան խոր հարգանքի, միշտ իր ոտնամանները թողնում էր շեմին: Դեպի

քաղաք-բանտի դարպասներ սլացավ ուխտավորների անսպառ հոսքը: Նրանց պատմությունները, ինչպես նաև Աքքայից եկող նամակները, հոգևոր սնունդ էին ծառայում Իրաքի և Պարսկաստանի բահայիների համայնքի համար: Բահաուլլայի պնդմամբ կատարվեցին քաղաքի բարեկարգման աշխատանքներ, մասնավորապես, վերակառուցվեց հին ջրանցույց կամուրջը, որով Աքքան սկսեց ստանալ թարմ ջուր: Դա օգնեց հաղթահարել հասարակ ժողովրդի թշնամական վերաբերմունքը, որին աքսորյալները բախվեցին Աքքա գալով:

1877թ. Բահաուլլան համաձայնեց Աքքայից տեղափոխվել Մազրայե՝ մոտակա քաղաքամերձ կավվածք, որը վերակառուցել էին իր բարեկամները: Երկու տարի անց աքսորյալները չնչին վճարով վարձեցին սքանչելի առանձնատուն Աքքայի արվարձաններից մեկում: Տանտերը լքել էր այդ վայրերը՝ փրկվելով համաճարակից:

Իր այդ վերջին ապաստանում, որը հայտնի էր «Բահջի» (Ուրախություն) անվամբ, Բահաուլլան ընդունեց պրոֆեսոր Բրաունին՝ Արևմուտքի փոքրաքանակ ներկայացուցիչներից մեկին: Նախկինում նա հանդիպել էր Բահաուլլային և գրել նրա մասին: Նահատակ բաբիների մասին պատմությունն այնպես ցնցեց Բրաունին, որ նա որոշեց հավերժացնել նոր հավատի պատմությունը: Բրաունն այսպես է նկարագրում Բահջիում իր հանդիպումը Բահայի հավատի հիմնադրի հետ.

«Ես հայտնվեցի ընդարձակ բնակարանում: Ավելի բարձր մասում՝ պատի մոտ, դրված էր բազմոց, իսկ դռան դիմաց՝ երկու կամ երեք աթոռ: Չնայած ես ունեի աղոտ պատկերացում, թե ուր եմ գնում և ում պետք է տեսնեմ (ոչ մի հաստատ բան չէր հաջողվել իմանալ), ես միայն մի քանի վայրկյան անց հասկացա, որ սենյակում մենակ չեմ, և ինձ համակեց պատկառանքով լի ապշանքը: Սենյակի անկյունում՝ բազմոցին, նստած էր պատկառելի, ամենաապշեցուցիչ արտաքինով մի մարդ: Նրա գլխին թաղիքից գլխարկ էր, որը դերվիշներն անվանում են «թաջի», բայց արտասովոր բարձրության և ձևի, որի հիմքում փաթաթված էր փոքր սպիտակ չալմա: Այդ մարդու դեմքը մոռանալը իմ ուժերից վեր է, բայց և ուժերից վեր է այն նկարագրելը: Հայացքը, կարծես թափանցում էր հենց հոգու մեջ, ճակատին՝ ուժի և վեհության դրոշմ... Կարիք չկար հարցնելու, թե ով է իմ առջև, և ես խոնարհվեցի նրա առջև, ում շրջապատում էր այնպիսի անձնվիրություն և սեր, ինչպիսին չեն իմացել թագավորները և կարող էին նախանձել կայսրերը:

Մեղմ, վեհ ձայնով նա ինձ առաջարկեց նստել, այնուհետև արտասանեց. «Փա՛ռք Աստծուն, որ դու այստեղ ես... Դու եկել ես այցելելու բանտարկության մեջ տառապող աքսորյալին... Միայն բարություն և երջանկություն ենք ցանկանում Մենք մարդկանց, իսկ Մեզ համարում են երկպառակությունների սերմանող ու խռովարար, որ արժանի է կապանքների ու աքսորի... Կգա երկպառակությունների ու արյունահեղության վերջը, և բոլոր մարդիկ կդառնան մի ցեղ ու մի ընտանիք... Թող մարդը հպարտանա ոչ թե նրանով, որ սիրում է իր երկիրը, այլ նրանով, որ սիրում է ամբողջ մարդկությանը...»:

Նույն տարում Բահաուլլան «վրան խփեց» Կարմել լեռան վրա, որ ծոցի հակառակ կողմում է: Այնտեղ նա տեղ ընտրեց նահատակ Բաբի մասունքների թաղման համար: Հետագայում այդ վայրի շուրջ կառուցվեցին գերեզմանատներ, վարչական շենքեր, այգիներ, և այն դարձավ Բահայի հավատի համաշխարհային կենտրոն:

Կյանքի վերջին տարիներին Բահաուլլան խուսափում էր հասարակության հետ շփումներից՝ ամբողջությամբ տրվելով իր աշխատանքին և ուխտավոր բահայիների հետ հանդիպումներին: Համայնքի գործերը հանձնարարված էին նրա ավագ որդուն՝ Աքքասին՝ ում նա անվանեց Աբդուլ-Բահա (Բահայի ծառա): Ավելի ուշ՝ 1891թ. Բահաուլլան պատմեց մերձավորներին, որ իր աշխատությունն ավարտված է, և որ նա

ցանկանում է «հեռանալ այս աշխարհից»: Իրեն կանչում են, ասաց նա, «այլ վայրեր, որոնք անմատչելի են անուններով մարդկանց հայացքին»: Շուտով նա վարակվեց տենդով և կարճատև հիվանդությունից հետո մահացավ: Դա պատահեց 1892թ. մայիսի 29-ի լուսաբացին: Բահաուլլան այդ ժամանակ յոթանասունհինգ տարեկան էր:

4. Ղեկավարության ժառանգումը

Բահաուլլայի վախճանից հետո սկսվեց Բահայի հավատի զարգացման նոր փուլը: Բահաուլլան Չավատի միակ մեկնաբան և ղեկավար նշանակեց իր ավագ որդուն՝ Աբդուլ-Բահային: Այն բոլոր համաշխարհային կրոններից միակն է, որ խուսափել է աղանդների բաժանումից: Նա խնդիր դրեց բացատրել ամբողջ մարդկությանը Բահաուլլայի ուղերձի իմաստն աշխարհի հասարակական կառուցվածքի վերաբերյալ: Բազմաթիվ նամակներում ու շարադրություններում, ինչպես նաև ուխտավորների հետ զրույցներում Աբդուլ-Բահան մշտապես արտահայտում էր այն միտքը, որ պետք է փոխվի ոչ միայն առանձին մարդկանց հոգևոր պատկերը, այլ անհրաժեշտ է փոխել ամբողջ հասարակական կառուցվածքը: Միևնույն ժամանակ նա ընդգծում էր համաշխարհային կրոններից յուրաքանչյուրի գոյության հավասար իրավունքը, ուշադրություն էր դարձնում ռասայական նախապաշարմունքների արմատախիլ անելու անհրաժեշտությանը, նշում էր տղամարդու և կնոջ հավասարությունը, խոսում էր պարտադիր համընդհանուր կրթության և արդարացի հասարակական տնտեսական համակարգի հաստատման մասին, շոշափում էր դրա հետ կապված բազմաթիվ այլ թեմաներ: Սոցիալական կառուցվածքի մասին Բահաուլլայի ուսմունքը համապատասխանում էր հասարակության ամենակենսական կարիքներին. դրա վկայությունն էին աշխարհը մշտապես ցնցող քայքայիչ ձգնաժամերը:

Պրոֆեսոր Բրաունը, որ 1890թ. առաջին անգամ հանդիպեց Աբդուլ-Բահային, իսկ հետագայում բավականին մտերմացավ նրա հետ, գրում էր.

«Ես հազվագյուտ եմ հանդիպել ավելի տպավորիչ արտաքինով մարդկանց: Բարձրահասակ, ամուր կազմվածքով մարդ, նետի պես ուղիղ կեցվածքով, սպիտակ չալմայով և սպիտակ հագուստով, ուսերին հասնող սև զանգուր մագերով, լայն հզոր ճակատով, որը խոսում է ուժեղ մտքի ու անսասան կամքի մասին, սրատես ճուշակային հայացքով, սուր, սակայն համակրելի դիմագծերով՝ ահա իմ առաջին տպավորությունները Աբբաս էֆենդիից՝ «Ուսուցից» [sic], ինչպես նրան par excellence անվանում են բաբիները: Նրա հետ զրույցից հետո ես նրա նկատմամբ լցվեցի ավելի մեծ հարգանքով՝ այն տպավորության համեմատ, որ հենց սկզբից նա թողեց ինձ վրա: Նրա ռասայի անգամ լավագույն ներկայացուցիչների մեջ՝ պերճախոս, հնարամիտ, նրբենի, դժվար թե գտնվի մի մարդ, ով զրույցի ժամանակ ավելի ուշադիր է, վեճի մեջ ավելի հնարամիտ է, ապացույցների մեջ ավելի անսպառ է, հրեաների, քրիստոնյաների և մահմեդականների սուրբ գրքերի ավելի կատարյալ գիտակ է: Այդ հատկանիշները նրա շարժուձևի հետ միասին՝ միաժամանակ վեհ ու բարյացակամ, հանգեցրեցին նրան, որ ես այլևս չէի զարմանում այն ազդեցության ու հարգանքի վրա, որը նա վայելում էր, և ոչ միայն իր հոր*

ուսմունքի համախոհների մեջ: Նրա հետ հանդիպողներից ոչ ոքի տրված չէ կասկածի ենթարկել նրա վեհությունն ու իշխանությունը»:

Պատմական վերլուծության հետադարձ հայացքում պարզ է դառնում, որ Աբդուլ-Բահան իր կոչումը տեսնում էր նրանում, որ լայնորեն հաստատի Բահայի հավատը Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում: Այդպիսի հնարավորություններ բացվեցին նրա առջև մեծ մասամբ Բաբի հավատի դրամատիկական պատմության հանդեպ հետաքրքրության շնորհիվ, որը դիտվում էր գիտության և մշակույթի արևմտյան գործիչների միջավայրում, հատկապես Արևմտյան Եվրոպայում: Հյուսիսային Ամերիկայում Բահայի հավատի մասին առաջին հրապարակային հիշատակումը, որքան հայտնի է, արվեց Չիկագոյի միջազգային ցուցահանդեսի կապակցությամբ 1893թ. կազմակերպված կրոնների Պառլամենտի նիստերից մեկի ժամանակ: Հռետորներից մեկը՝ քրիստոնյա, իր ելույթն ավարտեց Բահաուլլայի խոսքերով, որոնցով նա երեք տարի առաջ դիմել էր Էդվարդ Բրաունին:

Ամենուր Միացյալ Նահանգներում ու Կանադայում ստեղծվում էին բահայիների համայնքներ: Հավատի ակտիվ համախոհները կազմակերպում էին բազմամարդ ժողովներ, բանավեճերի ակումբներ. լույս տեսան հավատին նվիրված առաջին համեստ հրատարակությունները: Այդ բրոշյուրների բովանդակությունը հիմնականում կազմում էին հատվածներ Բահաուլլայի և Աբդուլ-Բահայի հուշատախտակներից, ինչպես նաև Աքքան այցելած հյուսիսամերիկյան ուխտավորների հիշողությունները: Ակումբներում ձեռքից ձեռք էին անցնում մեքենագրական նյութերի պատճենները, որոնք պարունակում էին Բահաուլլայի հայտնած աղոթքներից ու մեդիտացիաներից ավելի մանրամասն հատվածներ, ինչպես նաև հատվածներ առանձին հավատացյալներին գրված նամակներից:

1908թ., երիտթուրքական հեղափոխության հաղթանակից հետո, ազատվեցին Օսմանյան կայսրության բոլոր քաղաքական բանտարկյալները, ինչպես նաև նրանք, ովքեր դատապարտված էին կրոնական հիմնավորումներով: Այդպիսով, Աբդուլ-Բահան հնարավորություն ստացավ լքել Պաղեստինը և նվիրել իրեն իր հոր հիմնած հավատի տարածման և ամրապնդման գործին Արևմուտքում: Սակայն, մինչ այդ Աբդուլ-Բահային հաջողվեց իրականացնել իր վաղեմի բաղձալի ցանկությունը՝ այդպիսով կատարելով հոր ամենակարևոր պատգամներից մեկը: 1909թ. մարտի 20-ին, արևելքի և արևելքի մի խումբ հավատացյալների ներկայությամբ Աբդուլ-Բահան փոքր փայտե դագաղը, որում հանգչում էին Բաբի մասունքները, դրեց սքանչելի մարմարե սարկոֆագի (քարադագաղի) մեջ, որը նվիրել էր բիրնական Բահայի համայնքը: Սարկոֆագն այնուհետև տեղադրվեց քարե դամբարանի մեջ, որը կառուցվել էր Կարմել լեռան լանջին, հենց այն տեղում, որը Բաբի մասունքների թաղման համար ընտրել էր ինքը՝ Բահաուլլան: Բահայի հավատի հիմնադիրը ենթադրում էր, որ հետագայում դամբարանի շուրջ կկառուցվի Բահայի հավատի համաշխարհային կենտրոնի տարբեր վարչական շենքերի համալիր: Բահայիների մոտ համարվում է, որ հատկապես նահատակ բաբիների արյան վրա են բարձրացել կառավարման այն ինստիտուտները, որոնց կայացման գործընթացը՝ ըստ Բահաուլլայի կտակի, Աբդուլ-Բահայի ղեկավարությամբ շուտով սկսեց իրականանալ ամբողջ աշխարհում: Այժմ, երբ Բաբի մասունքները հանգչում էին Բահայի հավատի սրբոց սրբոցում, ակնհայտ դարձավ Բաբի անձնագրի ծառայության և նոր կրոնական

համակարգի գլխավոր ինստիտուտների միջև անմիջական կապը՝ կապ, որն արտացոլում է երկու հավատների (բաբի և բահայի) խորը պատմական միասնությունը:

1910թ. իրադրությունը Սուրբ Հողում էապես փոխվեց, և այլևս ոչինչ չէր խոչընդոտում Աբդուլ-Բահայի մեկնելուն: Բազմամյա բանտարկությունը լուրջ հետք էր թողել նրա առողջության վրա, այդ պատճառով նա և նրա ուղեկիցները կանգ առան Եգիպտոսում, որպեսզի հանգստանան և վերականգնեն ուժերը: 1911թ. օգոստոսի 11-ին Աբդուլ-Բահան իր մերձավորների մի փոքր խմբի ուղեկցությամբ «Կորսիկա» նավով մեկնեց Մարսել: Այդպես սկսվեց երկու տարի և չորս ամիս տևողությամբ ճանապարհորդությունն Արևմուտքի երկրներով: Այդ ընթացքում նա երկու անգամ այցելեց Լոնդոն, Փարիզ, Շտուտգարտ, եղավ այլ եվրոպական երկրներում, ուղևորվեց Հյուսիսային Ամերիկա, որն ունեցավ շատ կարևոր հետևանքներ:

1912թ. ապրիլի 11-ին Աբդուլ-Բահան ժամանեց Նյու-Յորք: Հյուսիսային Ամերիկայում եղած ժամանակաշրջանում նա այցելեց ԱՄՆ-ի մոտ քառասուն մեծ և փոքր քաղաքներ, ինչպես երկրի արևելքում, այնպես էլ արևմուտքում: Նա եղավ Չիկագոյում, որտեղ դրեց այն շենքի առաջին քարը, որը պետք է դառնար «Արևմուտքի Մայր Տաճարը»: Էլիոտ քաղաքում (Մեն նահանգ) Աբդուլ-Բահան հանդիպեց Սառա Ֆարմերի՝ «Գրին Էյկր» (Կանաչ Անտառաբաժին) ուսումնական կենտրոնի հիմնադրի հետ, որը լինելով բահայի, կանոնավոր կերպով օգտագործում էր այդ ուսումնական հաստատության տարածքները Բահայի ուսմունքի հիմունքներն ուսումնասիրելու համար: Կանադայում Աբդուլ-Բահան այցելեց Մոնրեալը և հյուրընկալեց կանադացի ճարտարապետ Վիլյամ Սազերլենդին և նրա կնոջը՝ Մեյ Բուլգ Մաքսվելին: Մեյ Մաքսվելը դեռ երիտասարդության օրոք էր ընդունել Բահայի հավատը. 1898թ. նա տիկին Հերստի հետ Աքքա ուխտագնացություն կատարեց:

Մոնրեալում Աբդուլ-Բահային ցուցաբերած ընդունելությունը չի կարելի արտասովոր անվանել: Նույն ձևով էին նրան դիմավորում նաև Արևմուտքի այլ քաղաքներում: Նա այցելեց Նոտր-Դամի տաճարը, թույլտվություն ստացավ հավատացյալներին դիմել Փրկչի տաճարում և Սուրբ Հակոբի եկեղեցում, ելույթ ունեցավ բազմամարդ լսարանի առջև Սենտ-Լորենս փողոցի վրա գտնվող արհմիության կենտրոնում, զրուցեց բազմաթիվ մարդկանց հետ «Վինձոր» հյուրանոցում և Մաքսվելների տանը Փայն-ավենյուում, որտեղ սկզբից հյուրընկալել էր Մոնրեալ ժամանելիս: Այցելության ընթացքը մանրամասն լուսաբանում էին խոշորագույն թերթերը: Աբդուլ-Բահան մամուլի ուշադրությունը գրավել էր ոչ միայն Մոնրեալում գտնվելու ժամանակ, այլև Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի երկրներում եղած ամբողջ ընթացքում:

Այդ ուղևորության հետևանքներն անգնահատելի են: Արևմուտքի բահայիների համար հնարավորություն ստեղծվեց անմիջական շփման մեջ մտնել իրենց հավատի ղեկավարի և համընդհանուր ճանաչված մեկնաբանի հետ: Հավատացյալների ամբոխները փափագում էին հանդիպել նրա հետ, լսել նրա խորհուրդները և այդպիսով հարստացնել և խորացնել ուսմունքի հիմքերի իրենց ըմբռնումը բոլոր ոլորտներով՝ աստվածաբանական, սոցիալական, բարոյագիտական: Արևմուտքում լայն հասարակության մոտ բավականին բարենպաստ պատկերացում կազմվեց նոր կրոնի մասին, ինչը հետագայում օգնեց Բահաուլլայի հետևորդներին դրա տարածման մեջ: Աբդուլ-Բահան դիմում էր ոչ միայն եկեղեցական համայնքներին, այլ նաև խաղաղության պաշտպանության հասարակության անդամներին, արհմիութենական և

համալսարանական լսարանին, տարբեր սոցիալական բարեփոխման ուսմունքների կողմնակիցների խմբերին: Ուղևորության ավարտին ակնհայտ դարձավ, որ Բահաուլլայի սոցիալական ուղերձը հասել է աշխարհին: Բահայիներին միացավ նոր սերունդ՝ մարդիկ, ովքեր պատկանում էին հասարակության ամենատարբեր շերտերին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Աբդուլ-Բահան մեկուսացած ապրում էր Հայֆայում՝ Սուրբ Հողում: Նրա խորթ եղբորը՝ Մոհամեդ Ալիին հաջողվեց արթնացնել օսմանյան իշխանությունների կասկածները՝ մեղադրելով Աբդուլ-Բահային արևմտյան աշխարհի հետ կապերի մեջ: Աբդուլ-Բահային մահապատիժ էր սպառնում, իսկ Սուրբ հողում գտնվող բահայիների փոքր գաղութին՝ աքսոր: Վտանգն անցավ միայն 1918թ., երբ պատերազմն ավարտվեց Կենտրոնական ուժերի պարտությամբ, ինչի արդյունքում Թուրքիան Մերձավոր Արևելքում զրկվեց իր բոլոր տիրույթներից:

Աբդուլ-Բահան վերսկսեց մի գործունեություն, որն ուղղված էր կարևորագույն նպատակի նվաճմանը՝ Բահաուլլայի ուսմունքներով ապրող համաշխարհային համայնքի ստեղծմանը: Այդ նպատակը նա իր առջև դրեց 1908թ. Աքքայի բանտից ազատվելու օրվանից: Նախ և առաջ պետք էր զգուշորեն աճեցնել բահայի վարչական ինստիտուտները: Հետևելով Բահաուլլայի խրատներին՝ Աբդուլ-Բահան հավատացյալներին Հոգևոր ժողովների, ինչպես նա անվանում էր դրանք, ձեռնարկման կոչ արեց: Համաձայն իր մտահղացմանը՝ այդ ընտրովի մարմինները պետք է գործունեություն ծավալեին ինչպես Հյուսիսային Ամերիկայում, այնպես էլ Պարսկաստանում: Հոգևոր ժողովները կոչված էին գրքեր հրատարակել, հավատի տարածման նախագծեր մշակել, ծիսակատարություններ կատարել: Ընդ որում, այդ մարմինները ստեղծվում էին երկու մակարդակներում՝ տեղական համայնքների և ազգային: Հետագայում Հոգևոր ժողովները պետք է փոխարինվեցին Արդարության Տներով (ինչպես դրանք անվանում էր Բահաուլլան):

1908թ. Աբդուլ-Բահան կազմեց մի փաստաթուղթ, որն անվանեց «Կամք և Կտակ»: Այդ փաստաթղթում նկարագրված են Բահաուլլայի հիմնադրած հավատի գործերի կառավարման կենտրոնական ինստիտուտների գործունեության առանձնահատկությունները և սկզբունքները: Դրանք, առաջին հերթին, երկու ինստիտուտներն են՝ «Պահապանություն» և «Արդարության Համաշխարհային Տուն»: Բահայի ուսմունքը մեկնաբանելու բացառիկ իրավունքը փոխանցվում էր Աբդուլ-Բահայի ավագ թոռանը՝ Շողի Էֆֆենդի Ռաբանիին, որը ստացավ «Հավատի Պահապան» տիտղոսը: Ինչպես Աբդուլ-Բահան Բահաուլլայի կամքով անվանվեց Կենտրոնակետ և հավատի Մեկնաբանիչ, այնպես էլ Պահապանն օժտվում էր անվիճելի հեղինակությամբ ուսմունքին վերաբերող բոլոր հարցերում: «Կամք և Կտակում» Արդարության Համաշխարհային Տունն անվանվեց Բահայի համայնքի գլխավոր օրենսդիր և վարչական մարմին: Հավատի Պահապանին՝ որպես օգնություն, տրվում էր իր ընտրած անվանի բահայիների՝ Աստծո Գործի Աջերի խումբ: Արդարության Համաշխարհային Տունը կոչված էր իրականացնել Բահայի համաշխարհային համայնքի ղեկավարությունը: Այդ բարձրագույն վարչական օրգանների անդամներին պետք էր ընտրել աշխարհի բոլոր երկրների Հոգևոր ժողովների ներկայացուցիչների միջազգային համագումարի ժամանակ: Ընտրվել կարող էր ցանկացած չափահաս բահայի:

Բահաուլլայի Կտակի մարմնավորումն դարձան երկու փաստաթղթեր՝ Աբդուլ-Բահայի Կամքն ու Կտակը և Բահաուլլայի Քիթաբ-ի-Ահդը (Կտակի գիրքը): Այդ

փաստաթղթերում սահմանված են Աբդուլ-Բահայի մահից հետո մշտապես աճող Բահայի համայնքի կազմակերպման ձևերը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Աբդուլ-Բահան 14 ուղերձ թվադրեց Հյուսիսային Ամերիկայի հավատացյալներին: Դրանցից չորսը հասցեագրված էին Հյուսիսային Նահանգների և Կանադայի բոլոր բահայիներին: Ութ նամակները՝ որպես կոնկրետ հարցերի շուրջ խրատներ, հավատացյալներին ուղարկվեցին Միացյալ Նահանգների տարբեր տարածաշրջաններ: Երկու նամակ ուղարկվեց հավատի կանադացի եղբայրակիցներին: Հիշատակված տասնչորս նամակներում խոսքը գնում էր «Աստվածային Նախանշանակման» մասին, որը, Աբդուլ-Բահայի խոսքերով, Բահաուլլայի ուղերձն ամբողջ երկրագնդով մեկ տարածելու մեջ էր: Աբդուլ-Բահան կոչ էր անում ամերիկյան և կանադական բահայիներին Բահաուլլայի կրոնի տարածման գործում իրենց վրա վերցնել առաջատար դերը: Աբդուլ-Բահան նրանց հավատացնում էր, որ իրենց վրա վերցնելով այդ խնդրի կատարման պատասխանատվությունը՝ նրանք ապագայում շնորհակալ հետնորդների աչքերում հանդես կգան որպես ամբողջ աշխարհի բահայիների «հոգևոր առաջնորդներ»: Հյուսիսամերիկյան դավանակիցներին ուղղված այդ կոչի պատասխանը դարձավ հավատի տարածման նախագծերի նրանց մշակումը. շնորհիվ դրանց իրականացման՝ Բահայի համայնքը համալրվեց բազմաթիվ նոր անդամներով, իսկ Բահաուլլայի ուղերձը հասավ երկրագնդի ամենահեռավոր անկյուններ:

1921թ. նոյեմբերի 28-ի վաղ առավոտյան 78 տարեկանում կարճատև հիվանդությունից հետո Աբդուլ-Բահան վախճանվեց: Նրա թաղումը տեղի ունեցավ արտասովոր հանդիսավորության մթնոլորտում: Այդ մասին կարելի էր դատել նրանից, թե Բահայի հավատի նկատմամբ որքան ապշեցուցիչ փոփոխություններ էին տեղի ունեցել Սուրբ Հոլում նրա վախճանին նախորդող տարիների ընթացքում: Դրանից ընդամենը տասներեք տարի առաջ Աբդուլ-Բահան՝ առանց իրավունքի աքսորյալը, հազիվ խուսափեց հրապարակային մահապատժից: Իսկ իր կյանքի վերջում նա արդեն վայելում էր անսահման իմաստունություն և մարդասիրություն ունեցող մարդու՝ գրեթե սրբի համբավ: Պաղեստինում բոլոր եկեղեցական դպրոցների ներկայացուցիչները վերաբերում էին նրան մեծ հարգանքով: Երբ հանվեցին թուրքական իշխանությունների կողմից նրա նկատմամբ դրված սահմանափակումները, Աբդուլ-Բահայի փառքը սկսեց աճել: Նրան ամենուր սկսեցին մեծարել: Առաջին համաշխարհային պատերազմից հետո սովի ժամանակ Պաղեստինի բնակչությանը հումանիտար օգնություն ցուցաբերելու համար, ի նշան Աբդուլ-Բահայի արժանիքների ճանաչման՝ բրիտանական կառավարությունը շնորհեց նրան ասպետի կոչում:

Նոյեմբերի 29-ին կայացած թաղումը, հավանաբար, հավասարը չունեի Պաղեստինի ամբողջ պատմության մեջ: Ավելի, քան տաս հազար մարդուց բաղկացած սգո թափորում մասնակցում էին բարձրագույն մահմեդական, հռոմեական կաթոլիկ, հունական ուղղափառ, հուդեայական և դրուզական հոգևորականության ներկայացուցիչներ, ինչպես նաև բրիտանական գերագույն կոմիսարը, Երուսաղեմի և Փյունիկիայի նահանգապետերը: Ակնհայտ դարձավ, որ երկրագնդի տարբեր անկյուններում ինչպիսի փորձանքներ էլ թափվեն նոր հավատի վրա, Աբդուլ-Բահայի հովվության ընթացքում այն հասավ ամենագլխավորին՝ հիմնադրվեց Բահայի հավատի համաշխարհային Կենտրոնը, որը հիմնված էր իշխանությունների ճանաչման և հասարակության հարգանքի վրա:

Իր պատմության այդ շրջանում Բահայի համայնքը ներառում էր, հավանաբար, մոտ հարյուր հազար հավատացյալներ Պարսկաստանում (որտեղ իշխանությունները

սկսեցին նրանց նկատմամբ որոշ օրինապահություն ցուցաբերել) և մի քանի փոքրաքանակ խմբեր այլ երկրներում: Պարսկաստանի սահմաններից դուրս առաջին Բահայի համայնքները ծագեցին Հնդկաստանում և Հյուսիսային Ամերիկայում: Համայնքների կազմակերպչական և ֆինանսական ռեսուրսներն այն ժամանակ աննշան էին, չկար բավականաչափ գրականություն: Ճիշտ է, Աբդուլ-Բահայի և նրա զինակիցների շնորհիվ բահայի կրոնի մասին լուրը տարածվեց ամբողջ աշխարհով, սակայն համայնքի թվաքանակի արագ աճի ժամանակը դեռ չէր եկել: Նույն կերպ այն ճանաչումը, որին արժանացավ Աբդուլ-Բահան քաղաքացիական իշխանությունների կողմից, դեռ չէր նշանակում Բահայի հավատի պաշտոնական ճանաչում՝ որպես ինքնուրույն կրոնական համակարգի:

Ավելի, քան կես դար անց, արդեն մեր օրերում, իրավիճակն արմատապես փոխվեց: Բահայի հավատն ամենուր ճանաչվեց որպես արագ աճող համաաշխարհային կրոն: Այդ կրոնի համախոհների մեջ կան տարբեր հասարակական խավերից դուրս եկած բոլոր ռասաների, ազգերի, մշակույթների ներկայացուցիչներ: Դրա կողմնակիցներն իրականացնում են լայնամասշտաբ գործունեություն այնպիսի տարածքի վրա, որն ընդգրկում է մոտ երկու հարյուր անկախ պետություններ և տարածքներ: Ձևավորվեց վարչական մարմինների ցանց ինչպես տեղերում, այնպես էլ պետական և միջազգային մակարդակի վրա, որոնք, որպես կանոն, պաշտոնապես ճանաչված են քաղաքացիական իշխանությունների կողմից:

Բաբի, Բահաուլլայի, Աբդուլ-Բահայի՝ Բահայի կրոնի գլխավոր անձանց գրավոր ժառանգությունը թարգմանված և հրատարակված է ավելի քան յոթ հարյուր լեզուներով: Ամբողջ աշխարհով կառուցված են Պաշտամունքի տներ, բահայի դպրոցներ, հավատի վարչական և համայնքային կենտրոններ, ձեռք է բերվել գույք զարգացումների համար: Բահայիների համաաշխարհային համայնքը ՄԱԿ-ում պաշտոնապես գրանցված է որպես տնտեսական և սոցիալական հարցերի կոմիտեին կից խորհրդակցական կարգավիճակով միջազգային ոչ կառավարական կազմակերպություն: Նման հաջողությունները, անկասկած, պետք է ճանաչել որպես երևելի: Այդ բոլոր ապշեցուցիչ նվաճումների ներշնչողն էր Շողի Էֆֆենդի Ռաբանին, ով իր պապի կամքով դարձել էր Բահաուլլայի հավատի Պահապան:

Պահապանության ինստիտուտի գաղափարը մտածել էր դեռ Բահաուլլան, սակայն ավելի կոնկրետ Պահապանի իրավասություններն առաջին անգամ սահմանվեցին Աբդուլ-Բահայի Կամքում և Կտակում: Պահապանի երկու գլխավոր պարտա-կանություններն էին բահայիների ուսմունքների մեկնաբանությունը և համայնքի ղեկավարությունը: Հիշելով Մոհամեդ Ալիի դեպքը, որը փորձում էր ոտնձգություններ կատարել համայնքի առաջատար դերի հարցում՝ Աբդուլ-Բահան ամենաաներկմիտ արտահայտություններով նշեց, որ Շողի Էֆֆենդիի հեղինակությունը հավատի բոլոր հարցերում անխախտ է: Նրա դատողությունները վիճարկելու փորձը հավասարվում էր կրոնի հիմնադիրների Կտակները դրժելուն:

«Ո՛վ Աբդուլ-Բահայի սիրեցյալներ: Դուք պետք է մեծագույն խնամք տանեք Շողի Էֆֆենդիի մասին, քանզի նա երկու օծված ու Աստվածային Լոտոս Ծառերի ճյուղն է ու պտուղը, պետք է ջանաք, որպեսզի հուսահատության ու տխրության աննշան ստվերն անգամ չմթազնի նրա շողացող էությունը, որպեսզի օր օրի նա մեծանա երջանկության, ուրախության ու հոգևորության մեջ, և մեծանալով՝ դառնա առատ պտուղներ բերող ծառի նման:

Քանզի Աբդուլ-Քահայից հետո նա է Աստծո գործի պահապանը և այդ պատճառով Աֆնանները՝ գործի Աջերը (պատվարները) և Տիրոջ սիրեցյալները պետք է ենթարկվեն նրան: Նա, ով չի ենթարկվում նրան, չի ենթարկվում Աստծուն, նա, ով շրջվի նրանից, կշրջվի Աստծուց, և նա, ով չճանաչի նրան, չի ճանաչի իրական Աստծուն: Ջգուշացեք, որպեսզի որևէ մեկը սխալ չմեկնաբանի այս խոսքերը և չնմանվի նրանց, ովքեր նրա (Քահաուլլայի) Համբարձումից հետո խախտեցին Կտակը՝ բարձրացնելով խռովության դրոշը, համառորեն պնդելով իրենցը և լայնորեն բացելով կեղծ մեկնաբանությունների դուռը ...»:

Սկսելով Պահապանի պարտականությունների կատարումը՝ Շողի Էֆֆենդին հայտարարեց, որ Քահայի հավատը մուսուլմանները և գործում իր զարգացման նոր փուլ: Ավելին, Շողի Էֆֆենդին հասկացրեց, որ այն իշխանական իրավասությունները, որոնք վստահված են իրեն՝ համաձայն վերը նշված և նման այլ փաստաթղթերի, չեն սահմանափակվում Աբդուլ-Քահայի նշած՝ համայնքի խարիզմատիկ առաջնորդի դերով: Շողի Էֆֆենդիի արտահայտությամբ ավարտին է մոտեցել «առաքելական դարաշրջանը» և գալիս է «ստեղծագործական դարաշրջանը»:

Այդ նոր պայմաններում բահայիները կոչված էին պաշտել Պահապանության ինստիտուտը որպես այդպիսին: Ինչ վերաբերում է այն անձնավորությանը, ում վրա դրվել էին այդ իրավասությունները, ապա նրան հատկացվում էր ենթակա դեր: Բահայիներին չէր թույլատրվում հանդիսավոր կերպով նշել Պահապանի անձնական կյանքի որևէ իրադարձություն, չէր խրախուսվում հետաքրքրությունը նրա լուսանկարների նկատմամբ: Բոլոր ձևական գործառույթները՝ կապված Պահապանի պաշտոնի հետ, կատարում էին Շողի Էֆֆենդիի նշանակած ներկայացուցիչները: Բազմաթիվ և դժվարին պարտականությունները, որոնք վերաբերում էին համայնքի գործերի կառավարմանը և ուսմունքի դրույթների մեկնաբանմանը, ինչպես նաև գրական և գիտական աշխատությունները, ամբողջությամբ կլանում էին Շողի Էֆֆենդին՝ ժամանակ չթողնելով ուղևորությունների համար, ինչպիսիք ձեռնարկում էր Աբդուլ-Քահան:

Միակ բանը, որի համար Պահապանը խախտում էր իր մենությունը, գրույցներն էին ուխտավորների հետ, ովքեր անսահման հոսքով գալիս էին Քահայի հավատի համաշխարհային կենտրոն և՛ Արևելքից, և՛ Արևմուտքից: Դրան Շողի Էֆֆենդին նվիրում էր ամբողջ ժամանակը: Սակայն, անգամ այդ հանդիպումները երկարատև չէին. սովորաբար դրանք անցկացվում էին ճաշի ժամանակ «Ուխտավորների Տանը» Հայֆայում:

1921-1963թթ. միջև ընկած ժամանակաշրջանը Քահայի հավատի պատմության մեջ նշանավորված է մի շարք կարևորագույն նախաձեռնություններով, որոնք ձեռնարկել էր Շողի Էֆֆենդին որպես հավատի Պահապան: Հատկապես հետաքրքիր են նրա գործունեության չորս ուղղությունները՝ Քահայի հավատի համաշխարհային կենտրոնի զարգացումը, Քահաուլլայի ուսմունքների թարգմանությունն ու մեկնաբանումը, կառավարման համակարգի ամրապնդումը և Աբդուլ-Քահայի աստվածային նախագծի իրականացումը:

Պահապանի պաշտոնը ստանալուց անմիջապես հետո Շողի Էֆֆենդին իր վրա վերցրեց Հայֆայի ծովախորշին կից շրջանում հավատի համաշխարհային կենտրոնի շինարարության ղեկավարությունը: Այդ գործին նա շատ ժամանակ նվիրեց նաև հետագայում: Դեռ Քահաուլլայի և Աբդուլ-Քահայի օրոք արքայալների համայնքը Հայֆայում ձեռք բերեց մի քանի հողատարածքներ: Այդ տարածքներից մեկում գտնվում

էր դամբարանը, ուր թաղեցին Բահաուլլայի աճյունը (Աքքայի արվարձանում Բահջի կավվածքի մոտ), մյուսում՝ դամբարանը, որտեղ հանգչում էին Բաբի մասունքները (Հայֆայի շրջանի Կարմել լեռան լանջին): Շնորհիվ համայնքի ունևոր անդամների և Շողի Էֆֆենդիի կոչին արձագանքող բահայիների առատածեռն նվիրատվությունների՝ Պահապանի կառավարման տարիներին համայնքի տիրույթները բավականաչափ լայնացան: Տնկվեցին սքանչելի այգիներ, կառուցվեցին առաջին վեհակերտ շինությունները՝ մշակվեց հողևոր և վարչական շենքերի համալրի կառուցման գլխավոր պլանը, որը համապատասխանում էր արագ աճող Բահայի համաշխարհային համայնքի պահանջներին: Նախատեսված էր նաև այդ համալրի լայնացման հնարավորությունը, որը հետագայում վերածվեց աշխարհի գեղեցկագույն ճարտարապետական անսամբլներից մեկի: Ամբողջ աշխարհով սփռված կրոնական համայնքը ձեռք բերեց, այսպիսով, իր հավատի սրբավայրը՝ վայր, որը դարձավ ուխտավորության օբյեկտ և որտեղից իրականացվում էր միասնական ղեկավարությունը: Դա գերազանց կերպով նպաստում էր միասնության մթնոլորտի ստեղծմանը:

Ցանկացած կրոնական համակարգի արժեքների գլուխ են դրվում սուրբ գրվածքներից կանոնների սահմանումը և դրանց կիրառումը առանձին հավատացյալների և կրոնական համայնքի կյանքում: Աբդուլ-Բահայի կամքի համաձայն, Շողի Էֆֆենդին՝ օժտված հավատի հիմնադիրների աշխատությունները մեկնաբանելու բացարձակ իրավունքով, համաշխարհային պատմության ընթացիկ իրադարձությունները մեկնաբանում էր բահայի սուրբ գրքերի լույսի ներքո՝ շարադրելով իր հայեցակետերը մանրամասն ուղերձներում՝ հասցեագրված բահայի տարբեր համայնքներին:

Միևնույն ժամանակ ամբողջ աշխարհի Բահայի համայնքներից Հայֆա էր սլանում նամակների հոսք: Բահայի սուրբ գրքերին վերաբերող այդ նամակներում պարունակվող հսկայական քանակով զանազան հարցերի Պահապանի պատասխանները կազմեցին Բահաուլլայի ժառանգության մեկնաբանության աշխատությունների մեծ մասը: 40-ականների սկզբից Շողի Էֆֆենդին ձեռնարկեց Բահայի հավատի պատմական ժամանակագրության ստեղծումը: 1944թ. Բաբի Հայտնության հարյուրամյակի տոնակատարության առթիվ Շողի Էֆֆենդին հրապարակեց բավականին հանգամանալից պատմական աշխատություն՝ նվիրված այդ հարյուրամյակի իրադարձությունների նկարագրմանը՝ սկսած այն օրվանից, երբ Բաբն առաջին անգամ իր առաքելությունը բացահայտեց Մոլլա Հուսեյնին, մինչև առաջին «Յոթամյա պլանի» ավարտը:

Բահաուլլայի ուսմունքի մեկնաբանմանը նվիրված Շողի Էֆֆենդիի աշխատությունների նշանակությունը, հաստատվում էր նրանով, որ նա հեղինակություն էր բահայի սուրբ գրքերի պարսկերենից ու արաբերենից անգլերեն թարգմանության մեջ: Անգլերեն լեզուն Շողի Էֆֆենդին սկսել էր ուսումնասիրել դեռ վաղ մանկությունում: Պատանեկության տարիներին նա շարունակեց դրա ուսումնասիրումը Բեյրութի ամերիկյան համալսարանում, այնուհետև Օքսֆորդի համալսարանում, որտեղ մնաց մինչև Աբդուլ-Բահայի վախճանը՝ 1921թ-ը.: Պահապանության ինստիտուտի ձեռնարկումից հետո առաջին տասնամյակներին, որոնք որոշիչ էին նոր հավատի պատմության մեջ, բահայի վարչական ինստիտուտները ստեղծվում էին նախ և առաջ անգլալեզու երկրներում, այդ պատճառով անհնարին է թերագնահատել այն փաստի նշանակությունը, որ Շողի Էֆֆենդին հնարավորություն ուներ անգլերեն լեզվով շարադրել և մեկնաբանել հավատի հիմնական տեսակետները և այդպիսով, ղեկավարել դրա կայացման գործընթացն արևմտյան աշխարհում:

Բահայի համայնքի զարգացման համար չափազանց կարևոր էր նաև Շողի Էֆֆենդիի՝ որպես մեկնաբանի, դերը: Միակ մեկնաբանի արևայությունն ուսմունքի ամբողջականության պահպանման գրավականն էր: Դրա շնորհիվ կանխվում էր պառակտման վտանգն այն վաղ շրջանում, երբ նոր հավատը սկսում էր տարածվել ամբողջ աշխարհով:

Ղեկավարելով Բահայի հավատի Համաշխարհային կենտրոնի շինարարությունը և մշտապես աշխատելով թարգմանությունների վրա՝ Շողի Էֆֆենդին շատ ջանք էր գործադրում, որպեսզի կյանքի կոչի Բահաուլլայի մշակած վարչական ինստիտուտների համակարգը, որը սկսեց ձևավորվել դեռ Աբդուլ-Բահայի կյանքի օրոք: Յուրաքանչյուր տեղական համայնքին, որի քանակությունը պակաս չէր ինը հասուն անդամից, կարգադրվում էր ընտրել Տեղական Հոգևոր ժողով, որի վրա էր դրվում հավատի գործերի ղեկավարությունը տվյալ վայրում: Այնուհետև Պահապանը նշում էր, որ երբ երկրում ստեղծվում են բավականաչափ Տեղական Հոգևոր ժողովներ, պետք է անցկացնել Ազգային Հոգևոր ժողովների ընտրություններ: Հավատի բոլոր հարցերը տվյալ երկրի սահմաններում ենթակա էին այդ մարմնի իրավասությանը:

Բազմաթիվ նամակներում, որոնք Պահապանի կողմից հասցեագրված էին այդ ծագող վարչական ինստիտուտներին, կային ուղեցույցներ այն մասին, թե ինչպես Բահայիների ուսմունքների համաձայն, պետք է կազմակերպվի համայնքի արժույթային կյանքը: Բոլոր հավատացյալներին ուղղված ուղերձները նրանց կոչ էին անում անվերապահորեն աջակցել ու ենթարկվել իշխանության ընտրված մարմիններին: Սահմանվում էր խորհրդակցության սկզբունք՝ որպես որոշումների ընդունման հիմք: Հոգևոր ժողովները պետք է սովորեին կառավարել համայնքի գործերն այդ սկզբունքի հիման վրա:

Կատարելով Աբդուլ-Բահայի կամքը՝ Պահապանը հավատի արածվել ականավոր հետևորդներից ընտրեց (1951-1957թթ. ժամանակաշրջանում) մի քանի մարդկանց, ովքեր ստացան «Աստծո գործի Աշեր» տիտղոսը: Նրանց վրա դրվեցին հատուկ իրավասություններ հավատի տարածման և դրա վարչական ինստիտուտների աջակցման գործում: Այդ գլոբալ վարչական համակարգը պսակում էր դրա բարձրագույն ինստիտուտը՝ Բահաուլլայի կողմից մշակված և անվանված Արդարության Համաշխարհային Տունը: Ինչպես նշում էր Շողի Էֆֆենդին, այդ մարմինը պետք է ընտրվի Բահայի համաշխարհային համայնքի բոլոր անդամների կողմից իրենց Ազգային Հոգևոր ժողովների միջոցով, երբ այդ կրոնի համախոհների քանակն ամբողջ աշխարհում կհասնի պահանջվող մակարդակի:

Անհրաժեշտ է նշել այն դերը, որը Բահայի հավատի կայացման գործում խաղաց հյուսիսամերիկյան համայնքը, հատկապես դրա ներկայացուցիչները Միացյալ Նահանգներում: Աբդուլ-Բահան չէր զլանում զովեստներ հղել, երբ խոսում էր այդ մարդկանց հոգևոր հնարավորությունների և անձնագրի ծառայության մասին: Որպես համընդհանուր ազգ՝ նա բարձր էր գնահատում Միացյալ Նահանգների ժողովրդին: Ավելին, Աբդուլ-Բահան նշում էր, որ Ամերիկային վիճակված է դառնալ Բահաուլլայի մշակած վարչական համակարգի «բնօրրան»: Կանխագուշակելով համաշխարհային պատմության գալիք շրջադարձը՝ Բահաուլլան ասում էր. «...կգա օրը, և դուք կտեսնեք..., թե ինչպես Արևմուտքից և ոչ թե Արևելքից կբխի Աստվածային խրատի լույսը»:

Հենց այդ պատճառով Շողի Էֆֆենդին ձեռնամուխ լինելով վարչական համակարգի կառուցմանը՝ աջակցության համար դիմեց նախ և առաջ ամերիկյան հավատացյալներին: Նրանցից մեկը՝ Մարթա Ռուտը, որը պատկանում էր բավականին ազդեցիկ ընտանիքին,

մեծ հաջողության հասավ. նրա միջոցով առաջին անգամ Բահայի հավատն ընդունեց թագակիր անձնավորություն՝ ռումինացի թագուհի Մարիան: Ամերիկյան բահայիներին անվանեցին Աբդուլ-Բահայի կամքի «Գլխավոր Կատարողներ»: Հատկապես ԱՄՆ-ի ու Կանադայի Ազգային Հոգևոր Ժողովների հետ նամակագրության ընթացքում Շողի Էֆֆենդին աստիճանաբար մշակեց համայնքների կառավարման կազմակերպչական ձևեր տեղական և ազգային մակարդակներում, որոնք հենվում էին ուսմունքի հիմնական դրույթների վրա: Այլ երկրների համայնքներին առաջարկվում էր հետևել այդ օրինակին: Չնայած մշակութային տարբերությունները սահմանում են կոնկրետ գործունեության յուրօրինակությունը՝ վարչական համակարգը պետք է լինի միասնական՝ կառուցվելով մի օրինակի հիման վրա:

Այդպիսին էր կոչված դառնալ բահայի ամերիկյան համայնքը: Ճիշտ է, համայնքի անդամները տեղեկացված էին, որ այդպիսի որոշման հիմք հանդիսացավ բնավ ոչ իրենց հայրենի երկրի քաղաքական համակարգը: Ինչպես Պարսակաստանում Բահաուլլայի հայտնվելը բացատրվում էր ոչ թե պարսիկ ազգի մշակութային գերազանցությամբ, այլ խորը բարոյական անկումով, որում այն գտնվում էր, այնպես էլ դրա վարչական համակարգը պետք է առաջին անգամ ծագեր մի հասարակության մեջ, որն ընկղմված էր նյութապաշտության, անօրինականության և քաղաքական կոռուպցիայի մեջ: Այստեղ, ինչպես նախկինում Պարսակաստանում, Բահաուլլան ցույց կտա, որ Աստծո իշխանությամբ կարելի է մոխրից վերածնել ժողովրդին ու հասարակությունը:

Շուտով հասկանալի դարձավ, թե ինչու իր ծառայության առաջին տարիներին Շողի Էֆֆենդին այդքան ուժ ու ժամանակ էր տրամադրում բահայի վարչական համակարգի ստեղծման խնդիրներին: Հավատի վարչական մարմինները դարձան այն գործիքը, առանց որի անհնար էր կյանքի կոչել Աբդուլ-Բահայի «Աստվածային Նախասահմանումը» և մարդկությանը հասցնել Բահաուլլայի ուղերձը: Այդ հսկայական խնդիրն ամբողջ աշխարհով սփռված համայնքների առջև դնելուց առաջ, անհրաժեշտ էր հաստատել վարչական մարմիններ, որոնք օժտված կլինեն որոշումներ ընդունելու իրավունքով և ընդունակ կլինեն ճիշտ օգտագործել մարդկային և ֆինանսական ռեսուրսները: Ավելին, պահանջվում էր որոշակի ժամանակ, որպեսզի այդ մարմինները ձեռք բերեին կառավարման տարրական հմտություններ, որոնք հենվում են խորհրդակցության սկզբունքի վրա:

Դրանով է բացատրվում այն փաստը, որ Շողի Էֆֆենդին կանոնավոր աշխատանք սկսեց Աբդուլ-Բահայի մտահղացումների իրականացման ուղղությամբ, որոնք շարադրված էին Հյուսիսային Ամերիկայի բահայիներին ուղղված նամակներում, միայն 1937թ.՝ Աբդուլ-Բահայի վախճանից տասնվեց տարի անց: 1937թ. ապրիլին սկսվեց առաջին պլանի իրականացումը, որը նախատեսված էր մոտակա յոթամյակի համար: Այդ պլանի հիմնական խնդիրները այսպես էին ձևակերպվել. 1. ձեռնարկել առնվազն մեկ Տեղական Հոգևոր Ժողով ԱՄՆ-ի յուրաքանչյուր նահանգում և Կանադայի յուրաքանչյուր մարզում, 2. թեկուզ մի հավատացյալ Բահայի հավատի տարածման համար ուղարկել Լատինական Ամերիկայի յուրաքանչյուր երկիր և 3. ավարտել բահայի առաջին տաճարի արտաքին տեսքի նախագծումը Հյուսիսային Ամերիկայում՝ այն նույն կառույցի, որի հիմնաքարը դրեց Աբդուլ-Բահան 1912թ. Ամերիկայում իր այցելության ժամանակ: Այդ շենքը շատերի կողմից ընկալվում էր որպես Բահայիների համաշխարհային համայնքի խորհրդանիշ: Չնայած դժվարություններին, որոնք ծագել էին երկրորդ համաշխարհային պատերազմի հետ կապված՝ 1944թ. մայիսին, այսինքն, Բաբի կողմից իր առաքելության հռչակման հարյուրամյակին, այդ պլանը հաջողությամբ կատարվեց:

Երկու տարվա ընդմիջումից հետո, 1946թ. սկսվեց հաջորդ յոթամյա պլանի իրականացումը: Այս անգամ ջանքերը կենտրոնացած էին գլխավորապես Եվրոպայի երկրներում, որտեղ այդ ժամանակ կար միայն երկու Ազգային Հոգևոր Ժողով՝ Մեծ Բրիտանիայում և Գերմանիայում: Պլանով նախատեսվում էր նաև Հոգևոր Ժողովների ձեռնարկում ամբողջ Լատինական Ամերիկայում և դրանց թվի նշանակալից աճ Հյուսիսային Ամերիկայում: Այդ պլանների հաջող ավարտը համընկավ Բահայի հավատի ևս մեկ հոբելյանի հետ. անցել էր ուղիղ մեկ դար այն օրվանից, երբ 1853թ. Սիյահ-Չալ բանտում գտնվող Բահաուլլային հայտնություն տրվեց: Յոթամյա պլանի հիմնական խնդիրներից մեկն էր Կանադայում անկախ Ազգային Հոգևոր Ժողովի ձեռնարկումը: Այդ ժողովը գումարվեց 1948թ., իսկ 1949թ. հետևեց ազգային ժողովի կողմից օրենքի ուժ ստացած հատուկ հրամանագիր: Այդ նվաճումը, ինչպես նշում էր Շողի Էֆֆենդին, «հավատի տարեգրություններում չունի իրեն հավասարը ո՛չ Արևելքում, ո՛չ Արևմուտքում»:

Երկրորդ յոթամյակի առավել տպավորիչ հաջողությունների մեջ կարելի է նշել երկու իրադարձություն հյուսիսամերիկյան համայնքի կյանքից: 1953թ. ապրիլին կայացավ Վիլմեթթի (Իլլինոյս նահանգ) տաճարի հանդիսավոր օծումը: Ղա այդ կարգի աշխարհի առաջին կառույցն էր: Նախագծի հեղինակն էր ֆրանսիական Կանադայից ճարտարապետ Ժան-Լուի Բուրժուան: Նրա վեհ մտահղացման մասին իտալացի ճարտարապետ Լուիջի Կվալյինոն այսպես է ասել. «Այս ստեղծագործությունը նոր խոսք կդառնա համաշխարհային ճարտարապետության մեջ»: «Անշուշտ,- ավելացրել է Կվալյինոն,- այն հետք կթողնի պատմության մեջ»: Նշանակալի նվաճում պետք է ճանաչել նաև ևս մի շենքի կառուցումը. հիասքանչ դամբարանի, որը դարձավ Աբդուլ-Բահայի՝ մինչ այդ կառուցած Բաբի քարի դամբարանի բաղադրիչ մասը: Նախագիծը պատկանում էր մեկ այլ կանադացու՝ Վիլյամ Սազերլենդ Մաքսվելլին (Աբդուլ-Բահան նրա հյուրն էր Մոնրեալում գտնվելու ժամանակ): Շնորհիվ շենքի շքեղության ու նրբաձաշակության, որի ոսկեզօծ գմբեթը տեղավորված է սպիտակ մարմարե կամարների և վարդագույն գրանիտե քանդակազարդ սյուների վրա՝ Կարմել լեռան վրա գտնվող Բահայի հավատի համաշխարհային Կենտրոնը դարձավ Միջերկրական ծովի ափի առավել հանրաճանաչ տեսարժան վայրերից մեկը:

1953թ.՝ նախորդ պլանի ավարտից անմիջապես հետո, Շողի Էֆֆենդին հռչակեց նոր՝ ամբողջ բահայի պատմության ամենավիթխարի համապարփակ պլանի մասին, որն անվանվեց «Տասնամյա Համաշխարհային Արշավ»: Այդ նախագիծը պետք է ավարտվեր 1963թ.՝ հերթական հոբելյանին՝ Ռիզվան այգում Բահաուլլայի Հռչակման հարյուրամյակի առթիվ: Նախատեսվում էր սկսել հավատի տարածումը 132 երկրներում և խոշոր տարածաշրջաններում, ամրապնդել արդեն գոյություն ունեցող համայնքները 120 պետություններում և վարչական տարածքներում: Նախատեսվում էր նաև Ազգային Հոգևոր Ժողովների ձեռնարկում Եվրոպայի և Լատինական Ամերիկայի երկրների մեծ մասում, Տեղական Հոգևոր Ժողովների զգալի ավելացում, հավատացյալների թվի աճ, համայնքին պատկանող սեփականության բազմապատկում: Եվ այս անգամ էլ հերթական պլանը հաջողությամբ կատարվեց (ավելին, դրա արդյունքները գերազանցեցին բոլոր սպասումները), սակայն դրան նպաստեցին այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք չէր կարող կանխատեսել հավատացյալներից և ոչ ոք:

1957թ. նոյեմբերի սկզբին, Կարմել լեռան վրա գտնվող բահայի արխիվի շենքի համար սարքավորում ձեռք բերելու համար ժամանելով Անգլիա՝ Շողի Էֆֆենդին

վարակվեց հոնկոնգյան գրիպով և նոյեմբերի 4-ին վախճանվեց սրտի նոպայից: Նրա հանկարծակի մահը մեծ հարված էր ամբողջ Բահայի համաշխարհային համայնքի համար, որը որոշ ժամանակով համայնքը զգեց շփոթվածության մեջ: Տասնամյա պլանն այդ ժամանակ կատարված էր կիսով չափ:

Հավատի Պահապանության ինստիտուտը մտադրված էր որպես ղեկավարության անընդմեջ գործող համակարգ: Աբդուլ-Բահան Կամք ու Կտակուն պարտադրեց Բահայի հավատի յուրաքանչյուր հերթական Պահապանին իր համար հետևորդ նշանակել Բահաուլլայի ուղիղ ժառանգներից: Թեկնածուն պետք է ունենար մի շարք որոշակի հատկանիշներ: Շողի Էֆֆենդին մահացավ՝ չթողնելով հետևորդ, քանզի, ըստ երևույթին, իր ընտանիքի անդամներից և ոչ ոք չէր համապատասխանում այն խիստ պահանջներին, որոնք ներկայացնում էին Պահապանի հոգևոր պատկերի վերաբերյալ Բահաուլլան իր Կտակուն և Աբդուլ-Բահան Կամք և Կտակուն: Այստեղից հետևում էր եզրակացություն՝ քանի որ չկա Պահապան, Արդարության Համաշխարհային Տունը՝ մարմին, որը դեռ պետք է ընտրվի, իրավասու է Բահայի համայնքի ղեկավարությունն իր վրա վերցնել:

Խնդիրը կարելի էր լուծել՝ հաշվի առնելով երեք փոխկապված գործոն. 1. Շողի Էֆֆենդիի արտահայտություններից հետևում էր, որ, իր կարծիքով, Արդարության Համաշխարհային Տան ընտրության համար անհրաժեշտ պայմանները կառաջանան տասնամյա պլանի հաջող կատարման դեպքում, 2. մինչ այդ Բահայի համայնքը պետք է ղեկավարվի այն սկզբունքներով, որոնք մանրամասն ձևակերպված են Շողի Էֆֆենդիի մշակված պլանում, և, վերջապես, 3. Բահայի համաշխարհային համայնքին դիմած նամակներից մեկում Շողի Էֆֆենդին Աստծո Գործի Աջերին անվանեց հավատի «Գլխավոր Կառավարիչներ» և կոչ արեց նրանց սերտ համագործակցելով Ազգային Հոգևոր Ժողովների հետ՝ անել ամեն հնարավորը, որպեսզի տասնամյա պլանի կատարումը հաջողությամբ ավարտվի և ապահովվի հավատի միասնության պահպանումը:

Ղեկավարվելով Շողի Էֆֆենդիի հիշատակված ուղերձով՝ Աստծո Գործի Աջերը կազմակերպեցին մի քանի ամենամյա խորհրդակցություններ, որոնց ընթացքում մշակվեցին կարևոր փաստաթղթեր, այդ թվում պաշտոնական հայտարարություն այն մասին, որ Շողի Էֆֆենդին չէր թողել կտակ և չէր ընտրել նրան, ով իրենից հետո կդառնար հավատի Պահապան (1957թ խորհրդակցություն), ինչպես նաև որոշվեց, որ Արդարության Համաշխարհային Տունը կընտրվի 1963թ: Ընտրություններում պետք է մասնակցեին աշխարհում գոյություն ունեցող բոլոր Ազգային Հոգևոր Ժողովների ներկայացուցիչները (1959թ. խորհրդակցություն):

1961թ. ապրիլին Լատինական Ամերիկայում կազմավորվեցին քսանմեկ նոր Ազգային Հոգևոր Ժողովներ: Մեկ տարի անց Եվրոպայում կայացան ևս տասնմեկ Ազգային Հոգևոր Ժողովների ընտրություններ: Տասնամյա պլանով նախատեսված մյուս բոլոր խնդիրները նույնպես կատարվեցին կամ գերակատարվեցին: 1963թ. գարնանը Ռիզվան այգում հիշարժան իրադարձությունների հարյուրամյա հոբելյանի տոնակատարության օրերին, որտեղ Բահաուլլան իր աշակերտներին առաջին անգամ բացահայտեց իր առաքելությունը, կայացան Արդարության Համաշխարհային Տան ընտրությունները: Ընտրություններում մասնակցեցին 56 Ազգային Հոգևոր Ժողովների ներկայացուցիչներ: Ընդ որում, Աստծո Գործի Աջերը ցուցադրեցին իսկական ինքնահրաժարեցման ոգի՝ հրաժարվելով Բահայի համայնքի այդ բարձրագույն վարչական մարմին ընտրվելու հնարավորությունից:

Արդարության Համաշխարհային Տան առաջին կազմի ընտրությունները բահայինների համար դարձան հսկայական նշանակություն ունեցող իրադարձություն: Առաջին անգամ, հարյուր տարվա պայքարից, հետապնդումներից, պարբերաբար ծագող ներքին պառակտումներից հետո Բահայի համայնքին, վերջապես, հաջողվեց ժողովրդավարության հիման վրա կազմակերպված ընտրությունների ճանապարհով ձևավորել հավատի գործերի ղեկավարության մշտական գործող մարմին: Ավելին, այդ մարմնի ստեղծումը մտածված էր Բահաուլլայի կողմից, որ մշակել էր ու իր աշխատություններում շարադրել էր դրա կազմակերպման որոշ սկզբունքներ: Այդ նույն թեման իր ստեղծագործություններում զարգացրեց նաև Աբդուլ-Բահան: Արդարության առաջին Համաշխարհային Տան անդամների ինտերնացիոնալ կազմը, ինչպես երևում է, հաջողությամբ արտացոլում էր այդ մարմնի էությունն ու նպատակը. չորս մայրցամաք ներկայացնող ինն անդամներն անցյալում երեք մեծ համաշխարհային կրոնների հետևորդներ էին (Հուդայականության, Իսլամի և Քրիստոնեության): Բազմազան էր նաև ընտրվածների էթնիկական կազմը:

Ընդգծելով կառավարման այդպիսի ինստիտուտի ստեղծման փաստի կարևորությունը՝ անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ Արդարության Համաշխարհային Տան ձեռնարկումը խորհրդանշում էր այն, ինչը բահայինները համարում էին իրենց աշխարհայացքի էական տարր՝ միասնությունը: Արդարության Համաշխարհային Տան ստեղծումը՝ մի մարմնի, որն օժտված էր Բահայի համայնքին վերաբերող բոլոր հարցերի լուծման իրավասություններով, վկայում էր այն, որ Բահայի հավատը ցանկացած կրոնի համար ամենակրիտիկական շրջանում պահպանել էր իր միասնությունը՝ իր պատմության առաջին հարյուրամյակում, երբ բոլոր կրոնները գրեթե անխուսափելիորեն պառակտվել էին:

Անկայունության այդ շրջանում, որի ապացույց են ծառայում Միրզա Յահյայի, Մոհամեդ Ալիի և Իբրահիմ Հեյրոլլայի հետ կապված պատմությունները, Բահայի համայնքի ներսում պառակտում մտցնելու բազմաթիվ փորձեր ձեռնարկվեցին: Այն փաստը, որ այդ բոլոր փորձերն ապարդյուն անցան, համոզիչ կերպով վկայում է հավատի բոլոր երեք հիմնադիրների իսկական հաջորդականության մասին՝ Բահաուլլայի, Աբդուլ-Բահայի և Շողի Էֆֆենդիի: Մշտապես գործող ընտրովի վարչական մարմնի ձեռնարկումով, որին ենթարկվում են ինչպես առանձին հավատացյալները, այնպես էլ տեղական ու ազգային մակարդակի վարչական մարմինները, համայնքի միասնականությունը դարձավ դրա գոյության իրական սկզբունք, որն անմիջականորեն շոշափում էր յուրաքանչյուր հավատացյալի:

Արդարության Համաշխարհային Տան ընտրությունը թույլ տվեց նորից ջանքերը կենտրոնացնել դեռ հավատի պահապանի կողմից առաջադրված երկու առաջնահերթ խնդիրների լուծման վրա: Առաջին խնդիրն էր նոր հաստատությունների և կազմակերպությունների ստեղծումը, որոնք համապատասխանում են արագ աճող համայնքի պահանջներին, երկրորդը՝ հավատի տարածման լայնամասշտաբ պլանների մշակումը, որոնք պետք է կյանքի կոչեն այն, ինչը Աբդուլ-Բահան անվանում էր «մոլորակի հոգևոր նվաճում»:

1964թ.՝ առաջին ընտրություններից մեկ տարի անց, Արդարության Համաշխարհային Տունը ձեռնամուխ եղավ իննամյա պլանի իրականացմանը: 1973թ.՝ Բահաուլլայի «Քիթաբ-ի-Ադդաս» գրքի հարյուրամյա հոբելյանին, այդ պլանն արդեն լրիվ կատարված էր: Դրան հաջորդող տասնամյա պլանի իրականացումն ավարտվեց 1979թ.

Դրանից հետո Արդարության Համաշխարհային Տունն առաջ քաշեց ամբողջ աշխարհով հավատի տարածման երրորդ պլանը՝ հերթական յոթամյա պլան՝ հաշվարկված մինչև 1986թ:

5. Հիմնական ուսմունքները

ԵՐԵՔ ԳԼԽԱՎՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Սկսելով Բահայի հավատի ուսումնասիրումը՝ նախ և առաջ դիմենք դրա երեք հիմնական դրույթներին՝ 1. Աստծո միասնությունը, 2. Մարդկության միասնությունը և 3. Բոլոր կրոնների միասնական հիմքը:

ԱՍՏԾՈՒ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Բահայի հավատում միակ Աստծո գաղափարը նշանակում է, որ համաձայն այդ ուսմունքի՝ ամբողջ Տիեզերքը, այն բնակեցնող կենդանի էակները և այնտեղ գործող բոլոր ուժերը ստեղծված են միասնական՝ մարդուց և բնությունից վեր կանգնած էակի կողմից: Այդ էակը, որին մենք անվանում ենք Աստված, իր արարման նկատմամբ ունի անսահման իշխանություն (ամենակարողություն) և, բացի այդ, կատարյալ ու լիարժեք գիտելիք (ամենագիտություն): Ինչպիսին էլ լինեն մեր հայացքներն Աստծո բնույթի վերաբերյալ, ինչ լեզուներով էլ մենք ապավինենք Նրան, ինչ անուններ էլ տանք Նրան՝ Ալլահ, թե Յահվե, Աստված, թե Բրահմա՝ բոլոր դեպքերում խոսքը գնում է միևնույն՝ իր բնույթով միակ էակի մասին:

Փառաբանելով արարման աստվածային գործողությունը՝ Բահաուլլան ասում է.

«Գովք աստվածային միասնությանը և պատիվ Նրան՝ Ամենագոր Տիրոջը, Տիեզերքի աննման և ամենափառապանծ Տիրակալին, Նրան, Ով լրիվ անգոյությունից արարեց ամենի բնությունը, Ով ոչնչից կյանքի կոչեց իր արարման մաքրագույն և նրբագույն ակունքները և Ով իր արարումները լքվածության նվաստացումից և լրիվ ոչնչացման վախից փրկելու համար ընդունեց իր հավերժական փառքի արքայությունում: Հավետ չի մտնի այնտեղ նա, ով զրկված է Նրա համապարփակ ողորմածությունից և Նրա ամենաներող գթասրտությունից»:

Բահաուլլան սովորեցնում է, որ Աստված չափազանց մեծ ու անճանաչելի էակ է, որպեսզի սահմանափակ մարդկային բանականությունը կարողանա երբևէ պատշաճ կերպով հասկանալ Նրան կամ վերստեղծել Նրա ճիշտ կերպարը.

«Որքան հրաշալի է Կենդանի Անփոփոխ Աստծո միասնությունը՝ միասնություն, որը չգիտի սահմաններ, որը վեր է ամեն արարված էակի ըմբռնունից: Դարեր ի վեր կենում էր Նա սրբության ու փառքի Իր անհասանելի կացարանում և կմնա հավերժ Իր կատարյալ տիրակալության ու վեհության բարձր գահին: Որքան վեհ է Նրա անարատ Էությունը, որքան անկախ է ամեն արարածի գիտելիքից և որքան բարձր է երկնքի ու երկրի բոլոր բնակիչների գովեստներից»:

ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Բահայի հավատի երկրորդ հիմնական դրույթը մարդկության միասնությունն է: Դա նշանակում է, որ ամբողջ մարդկությունն իրենից ներկայացնում է հատուկ միասնական տեսակ, մեկ օրգանիզմ: Այդ միասնական մարդկային ցեղը՝ «արարման պսակը», կյանքի ու գիտակցության բարձրագույն ձևն է՝ գերազանցող բոլոր մյուս արարումները, քանզի միայն մարդն է ընդունակ ըմբռնել Տիրոջ գոյությունը և հաղորդակցվել Նրա ոգու հետ:

«Արարելով աշխարհը և այն ամենը, ինչ ապրում ու շարժվում է այնտեղ՝ որոշեց Նա Իր անսահման ու ամենազոր Կամքով օժտել մարդուն Իր բնույթով միակ տարբերությամբ ու անկրկնելի ունակությամբ՝ ճանաչել Նրան և սիրել Նրան՝ ունակությամբ, որում պետք է տեսնել ամեն արարման զլխավոր խթանը և սկզբնական նպատակը... Բոլոր արարումներից միայն մարդն էր օժտվել այդպիսի մեծ բարիքով, այդքան անանց ընծայով»:

«Մարդկության միասնության» գաղափարն իր մեջ պարունակում է այն իմաստը, որ Աստված բոլոր ժողովուրդներին օժտել է նույն ընդունակություններով: Այնպիսի ֆիզիկական տարբերությունները, ինչպիսիք են մաշկի կամ մազերի գույնը, երկրորդական առարկա է, և հակառակ այլ մարդկանց պատկերացումների՝ ոչ մի կերպ չի ցուցադրում որևէ էթնիկական խմբի գերազանցությունը մյուսների նկատմամբ: Բահայի ուսմունքը մերժում է ռասայական գերազանցության ցանկացած տեսություններ՝ որպես անկիրթ գաղափարների երևակայության պտուղ:

Բահայիները համարում են, որ մարդկությունը միշտ իրենից ներկայացրել է միասնական ցեղ, սակայն նախապաշարմունքները, տգիտությունը, իշխանության ձգտումը և եսասիրությունը շատ մարդկանց խանգարում են հասկանալ և ընդունել այդ: Բահաուլլայի վրա առաքելություն էր դրվել՝ լուսաբանել մարդկությանը և յուրաքանչյուրի գիտակցությանը հասցնել երկրագնդի վրա ապրող բոլոր մարդկանց միասնության գաղափարը: Բահայիները հավատում են, որ մարդկությունը՝ որպես միասնական կենդանի էակ, Տիրոջ հայրական խնամքի տակ վերապրում է կոլեկտիվ աճի գործընթաց: Այնպես, ինչպես առանձին օրգանիզմը հասունության ճանապարհին անցնում է զարգացման մի շարք հաջորդական փուլեր, այնպես էլ մարդկային ցեղը, աստիճանաբար զարգանալով՝ մոտենում է հասունության: Մարդկային հասարակության էվոլյուցիայի սահմանող գիծն էլ ավելի մեծ միասնության նվաճումն է: Հասարակության բաղադրիչ տարրերն իրենց գործունեության էլ ավելի մեծ մասնագիտացման միտում են ցուցաբերում, համապատաս-

խանաբար, աճում է դրանց փոխկախվածությունը և համագործակցության անհրաժեշտությունը: Ընտանիքը, ցեղը, քաղաք-պետությունը, երկիրը հասարակության կատարելագործման հերթական փուլերն են: Կոլեկտիվ զարգացման գործընթացի գալիք փուլը նշանավորում է մարդկային էվոյուցիայի գագաթը՝ համաշխարհային միասնություն, գլոբալ քաղաքակրթություն:

Շողի էֆֆեկտին այսպես է ասում այդ մասին.

«Մարդկության միասնության կոնցեպցիան՝ հիմնաքարը, որի վրա հիմնված է Բահայի ուսմունքը, անմիտ զգացմունքների պտուղ է կամ անորոշ բարի ցանկությունների արտահայտում... Այդ կոնցեպցիան ճիշտ է ոչ միայն առանձին մարդկանց առումով, այլ, նախ և առաջ, արտացոլում է ի սկզբանե մարդկային ցեղին բնորոշ կապերի բնույթը, որոնք ապագայում անխուսափելիորեն մի ընտանիքի մեջ կհամախմբեն բոլոր պետություններին, բոլոր ազգերը... Այն ենթադրում է ամբողջ արդի հասարակության կառուցվածքի բացառիկ վերակառուցումը... Այն վճռական կոչ է ամբողջ քաղաքակիրթ մարդկությանը՝ փոխել գոյություն ունեցող կարգը և հրաժարվել սպառազինումից... Այն մարդկային հասարակության զարգացման պսակն է, հասարակություն, որը ճանապարհ է անցել՝ սկսած ընտանիքի առաջացումից, միջցեղային համերաշխության միջով մինչև քաղաք-պետությունների և, վերջապես, անկախ և ինքնիշխան երկրների ստեղծում:

Բահաուլլայի հռչակած մարդկության միասնության սկզբունքը լուր է այն մասին, որ այդ վիթխարի էվոյուցիայի ավարտական փուլը ոչ միայն անհրաժեշտ է, այլև անխուսափելի, որ այն մոտենում է յոթ մղոնանոց քայլերով, և դրա գալուստն առաջ կգա Աստծուց բխող ուժերով»:

Մարդկության միասնության սկզբունքը ենթադրում է ոչ միայն անհատական գիտակցության նորոգում, այլև պետությունների համախմբում, համաշխարհային կառավարության ձեռնարկում և, վերջին հաշվով, միասնական համամոլորակային քաղաքակրթության ստեղծում: Համապատասխանաբար, մարդկանց կողմից միասնական մարդկային ցեղին պատկանելու ուղղակի ընդունումը բավական չէ, եթե աշխարհը նախկինի նման պառակտված է, լի է բախումներով, նախապաշարմունքներով և ատելությամբ: Միասնության գաղափարը կյանքի կկոչվի ամբողջական և ունիվերսալ հասարակական համակարգի միջոցով, որը հիմնված է հոգևոր արժեքների վրա: Այդպիսի համակարգի ստեղծումն Աստծո նախասահմանած մարդկային զարգացման արդյունքն է.

«... Բահայիի գոյության իմաստն է նպաստել մարդկության միասնության նվաճմանը: Մեզանից յուրաքանչյուրի կենսական ձգտումները սերտորեն կապված են բոլոր մարդկանց շահերի հետ. մեզ մտահոգում է ոչ թե մեր անձնական փրկությունը, այլ ամբողջ մարդկության փրկությունը... Մեր նպատակն է համաշխարհային քաղաքակրթության կառուցումը, որն, իր հերթին, կազդի յուրաքանչյուր մարդու հոգևոր կերպարի վրա: Այդ ուղին հակառակ է քրիստոնեությանը, որը դիմում է, առաջին հերթին, առանձին անհատի, այնուհետև նրա միջոցով՝ կոլեկտիվ գիտակցությանը»:

Բահայիի տեսակետից հասարակության գոյության բարձրագույն հոգևոր իմաստը այնպիսի միջավայրի ստեղծումն է, որը բարենպաստ կլինի նրա յուրաքանչյուր անդամի ճիշտ զարգացման ու կատարելագործման համար:

Բահաուլլան առաջարկեց մանրամասն մշակված համակարգ, որի կյանքի կոչելը կբերի համաշխարհային միասնության նվաճմանը: Այդ համակարգի մասին կխոսվի այս գրքի հետագա գլուխներում: Համառոտ կարելի է ասել, որ հիշատակված համակարգի իմաստը կոլեգիալության և խորհրդակցության սկզբունքների վրա հիմնված նոր

հասարակական կառուցվածքների ստեղծման մեջ է: Այդ կառուցվածքների նպատակն է շահերի հնարավոր բախումներից խուսափելը, որի շնորհիվ կարող են նվազագույնի հասնել բախումները հասարակության կյանքի բոլոր ոլորտներում: Բահաուլայի մտահաղացմամբ այդ նոր կառուցվածքներն իրենց մեջ ներառում են լայն իրավասություններով համաշխարհային մասշտաբի իշխանության մարմիններ՝ իսկապես ներկայացուցչական և իրավասու օրենսդրական մարմին, միջազգային դատարան, որի իրավասության մեջ մտնում է միջպետական վեճերի լուծումը և կարգի պահպանման միջազգային ուժեր:

Բահաուլյան սովորեցնում էր, որ այդ նոր սոցիալական կառուցվածքների ստեղծմանը զուգահեռ պետք է լայնանա մարդկության միասնության հիմնադիր սկզբունքի կոլեկտիվ յուրացումը.

«Դուք մի ծառի պտուղներ եք և մի ճյուղի տերևներ: Ուրեմն, իրար վերաբերվեք մեծագույն սիրով ու հեզությամբ, բարյացակամությամբ ու ընկերակցությամբ... Միասնության լույսն այնքան հզոր է, որ կարող է լուսավորել ամբողջ երկրագունդը»:

Եվ նորից.

«Նա չպետք է հպարտանա, ով սիրում է իր երկիրը, այլ նա, ով սիրում է ամբողջ աշխարհը: Երկրագունդը մի երկիր է, իսկ մարդկությունը՝ դրա քաղաքացիները»:

Համաձայն Բահաուլայի կոնցեպցիայի՝ միասնությունը բազմազան, այլ ոչ թե միատեսակ տարրերի միասնություն է: Միասնության է բերում ոչ թե տարբերությունների վերացումը, այլ գիտելիքների աճը և այն արժեքների իսկական հարգանքը, որ բնորոշ են յուրաքանչյուր առանձին մշակույթին և յուրաքանչյուր անձին: Թշնամության արմատը ոչ թե հենց տարբերությունների, այլ դրանց նկատմամբ մեր անհասությունն արտացոլող վերաբերմունքի մեջ է, մեր անհանդուրժողականության ու նախապաշարմունքների մեջ է: Այդ առումով Աբդուլ-Բահան այսպես էր արտահայտվում.

«Եթե որևէ մեկն առարկի, ասելով, թե իսկական և ամուր միասնությունն այս աշխարհում անհասանելի է, քանզի տարբեր են ժողովուրդների բարքերն ու սովորույթները, ճաշակները, հակումներն ու բնավորությունները, մտքերն ու հայացքները, ապա մենք կպատասխանենք, որ տարբերությունները լինում են երկու տեսակի: Որոշ տարբերություններ տանում են կործանման, ինչպես թշնամության ու պառակտման ոգին, որը դրդում է իրար հակասող և թշնամական ժողովուրդներին ու տերություններին ապստամբել իրար դեմ: Բայց կան նաև տարբերություններ, որոնք ըստ էության ոչ այլ ինչ են, քան բազմազանություն, որն իր մեջ թաքցնում է կատարելություն և բացահայտում է մեզ Ամենապահապանձի ընծաների առատածեռնությունը:

Նայեք այգու ծաղիկներին: Դրանք տարբերվում են իրենց բույրով, գույնով, ձևով ու տեսքով, բայց երբ ողողվեն աղբյուրի ջրով, թարմանան քամու շնչով, կենդանանան արևի ճառագայթներով, ապա դրանց տարբերությունների հմայքն ու գեղեցկությունը միայն կբազմապատկվեն: Եթե բոլոր ծաղիկներն ու խոտերը, տերևներն ու պտուղները, ճյուղերն ու ծառերն իրենց ձևով ու գույնով նույնը լինեին, որքա՞ն կծանձրանար մեր աչքը: Գույների, երանգների ու ձևերի բազմազանությունը զարդարում է այգին և ուժեղացնում դրա թողած տպավորությունը: Այդպես էլ տարբեր մարդկային մտքերն ու բարքերն են: Եթե դրանք միահյուսվեն միակ ձգտման ուժի և ազդեցության շնորհիվ, մարդկային խառնվածքի կատարելությունը կարտահայտվի իր ամբողջ գեղեցկությամբ ու փայլով: Միայն ամբողջ գոյին

տիրող Տիրոջ Աստվածն է իր երկնային ամենագործությամբ ի գործու ներդաշնակությամբ միաձուլել մարդու որդիների բոլոր մտադրությունները, զգացմունքները, ձգտումները և համոզմունքները»:

Հասնելով համաշխարհային միասնության և ստեղծելով գլոբալ քաղաքակրթություն՝ մարդկային ցեղը կհասնի իր երկրային կատարելության սահմանին և մուտք կգործի իր «չափահասության» կամ հասունության փուլին: Շողի Էֆֆենդին այսպես արտահայտեց այդ միտքը.

«Բահաուլլայի հայտնությունը, որի բարձրագույն նպատակը ոչ այլ ինչ է, քան բոլոր ժողովուրդների բնական և հոգևոր միասնությունը, երբ այն իրական դառնա (իսկ դա կախված է մեր ջանքերից), կնշանավորի ամբողջ մարդկային ցեղի չափահասությունը: Դա կնշանակի... որ եկել է մարդու՝ որպես կոլեկտիվ էակի, երկրային զարգացման վիթխարի գործընթացի վերջին և բարձրագույն փուլը: Մարդկանց համաշխարհային ընդհանրությունը, նրանց այն մտքի գիտակցումը, որ իրենք բոլորը մոլորակի քաղաքացիներ են, համաշխարհային քաղաքակրթության և մշակույթի ստեղծումը... այդ ամենը կնշանակի, որ (երկրային սահմաններում) մարդկային հասարակությունը հասել է իր զարգացման բարձրագույն փուլին: Մինևույն ժամանակ առանձին մարդը՝ որպես անհատ, գտնվելով այդպիսի իդեալական պայմաններում՝ կարող է, ավելին, պետք է անսահմանորեն կատարելագործվի»:

Մարդկային հասարակության զարգացման փուլերը դիտվում են որպես առանձին մարդու կյանքի տարիքային փուլեր: Ներկայումս ավարտվում է մարդկության պատանեկության շրջանը և այն մոտենում է հասունության շրջանին.

«Մանկության երկարատև դարերը, որոնք ապրել է մարդկային ցեղը, արդեն պատկանում են անցյալին: Մարդկությունը մուտք է գործել այնպիսի ցնցումների դարաշրջան, որոնք կարելի է համեմատել զարգացման ամենաբուռն շրջանի՝ երիտասարդության հետ, երբ երիտասարդությանը բնորոշ պոռթկունությունն ու տաքարյունությունը հասնում են բարձրագույն սահմանին, այնուհետև աստիճանաբար իր տեղն են գիջում իմաստունությանն ու զսպվածությանը՝ հասուն տարիքի ուղեկիցների: Այդ ժամանակ մարդկային ցեղը կհասնի այնպիսի կատարելության, որն իրեն թույլ կտա ձեռք բերել ուժեր և գիտելիքներ՝ գալիք բարգավաճման գրավականը»:

Խոսելով մարդկության հասունության դարաշրջանին մոտենալու մասին՝ Շողի Էֆֆենդին նկատում է.

«Այն խորհրդավոր, խորին ու գրեթե աննշան փոփոխությունը, որը մեր պատկերացման մեջ կապված է յուրաքանչյուր մարդու մոտ անխուսափելիորեն հասած հասունության շրջանի հետ... պետք է նմանություն ունենա հասարակական օրգանիզմի զարգացման գործընթացներում: Եվ մարդկային հասարակության կյանքում վաղ, թե ուշ կգա նման շրջան, և դրա հետ կապված մարդկանց միջև եղած հարաբերությունների տրանսֆորմացիան էլ ավելի ապշեցուցիչ կլինի: Հասունության շրջանում մարդկային ցեղը կհասնի այնպիսի բարգավաճման, որը կդառնա մարդկության կողմից իր դերի կատարման կարևորագույն պայման»:

Անշուշտ, մարդկության պատմությունը (որքանով այն մեզ հայտնի է) մանկության և պատանեկության պատմություն է: Բահաուլլան պնդում է, որ հենց այդ պատճառով էլ մեր մեջ արմատացել է մարդու իսկական ունակությունները չգնահատելու հակումը: Բայց կգա հասունության շրջան, և հիմք դրված հնարավորությունները լիովին կբացահայտվեն.

«Իսկությամբ եմ ասում. այս հզորագույն Հայտնության մեջ անցյալի բոլոր կտակները հասել են իրենց բարձրագույն և վերջնական մարմնավորման: Աստծո ավետյաց Օրը կհայտնա-

բերվեն մարդուն բնորոշ թաքնված հնարավորությունները, կբացահայտվի երկրի վրա նրա դերի լիակատար չափը և նրա էության ներքին կատարելությունը»:

Արդյունքում բահայիների դավանած մարդկության միասնության սկզբունքը նշանակում է, որ երկրագնդի բոլոր ժողովուրդներն իրենցից ներկայացնում են միասնական օրգանիզմ, որի կոլեկտիվ գոյությունն անցել է զարգացման որոշակի ուղի՝ աստիճանաբար բարձրանալով հասարակության ինտեգրացիայի էլ ավելի բարձր մակարդակների՝ ընտանիք, ցեղ, քաղաք-պետություն, ազգ: Բահաուլլայի առաքելության առանձնահատկությունն է՝ խթանել մարդկանց բարձրանալ զարգացման հերթական աստիճանի, որի անունն է տիեզերական քաղաքակրթություն: Այդ նպատակին հասնելու ճանապարհը անցնում է նոր հասարակական կառուցվածքների ստեղծման միջով, որոնց շնորհիվ կնվազի, իսկ հետագայում նաև կբացառվի շահերի բախումը, ինչպես նաև մարդկային գիտակցության նոր մակարդակի նվաճման միջով, ինչը մարդկության միասնության հիմքն է: Ավելին, երկրագնդի բոլոր մարդկանց միավորումը կնշանակեր մարդկության՝ որպես ամբողջական օրգանիզմի, հասունության գալուստ:

Բահայի համայնքը կարելի է դիտել որպես գալիք համաշխարհային քաղաքակրթության սաղմ, ինչպես նաև դրա նախատիպ: Այն յուրաքանչյուր մարդուն հնարավորություն է տալիս զգալու, թե ինչ է մարդկանց իսկական միասնությունը և իր մեջ զարգացնել այդ նոր գիտակցությունը: Հաջորդ գլխում այդ թեման ավելի մանրամասն կդիտարկվի:

ԿՐՈՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

Կրոնների ընդհանրությունը՝ Բահայի հավատի երրորդ հիմնադիր սկզբունքը, անմիջականորեն բխում է մարդկության միասնության սկզբունքից: Խոսելով մարդկության՝ որպես ամբողջական օրգանիզմի մասին, մենք մարդկային ռասայի զարգացման գործընթացը նմանեցրեցինք առանձին մարդու աճի և հասունացման գործընթացին. ինչպես մեզանից յուրաքանչյուրը կյանք է մտնում անօգնական մանկան պես, այնուհետև անցնելով զարգացման բոլոր փուլերը՝ հասունանում է, այնպես էլ հասարակությունը հասարակական կյանքի նախնական ձևերից աստիճանաբար անցնում է հասուն, կատարյալ ձևերին: Երբ խոսքը գնում է անհատի մասին, ապա կասկած չկա, որ այն զարգանում է դաստիարակության շնորհիվ, որը նրան տալիս են ծնողները, ուսուցիչները և հասարակությունն ամբողջությամբ: Իսկ ո՞րն է մարդկության զարգացման շարժիչ ուժը:

Բահայի ուսմունքը տալիս է այսպիսի պատասխան. այդ ուժը Աստծո տված կրոնն է: Քիթաբ-ի-Իզանում (Վստահության Գրքում)՝ Բահաուլլայի հիմնական աշխատություններից մեկում, հաստատվում է, որ Աստծո՝ Արարչի, միջամտությունը պատմության ընթացքի մեջ Իր ընտրած դեսպանորդների միջոցով, ում շուրթերով Նա դիմում է մարդկանց, տեղի էր ունենում անցյալում և կրկնվի ապագայում: Աստծո դեսպանորդները, ում Բահաուլլան անվանում է Աստվածային Հայտնիչներ, առաջին հերթին Հայտնության մեծ կրոնների հիմնադիրներ են՝ Աբրահամը, Մովսեսը, Բուդդան, Հիսուսը, Մոհամեդը և այլոք: Հատկապես հոգևոր վերականգնումը, որը կապված է Աստծո այդ Հայտնիչների գալստյան հետ, նրանց ուսմունքների ու հասարակական համակարգերի ազդեցության հետ միասին, որոնք համապատասխանում են սահմանված օրենքներին ու պատգամներին, թույլ է տալիս մարդկությանը՝ որպես ամբողջություն, շարժվել առաջըն-

թացի ճանապարհով: Այլ խոսքերով, Աստծո հայտնիչները մարդկության գլխավոր դաստիարակներն են:

Պատմությանը հայտնի տարբեր կրոնական համակարգերի մասին Բահաուլլան այսպես էր ասում.

«Այս կանոններն ու օրենքները, այս անխախտ ու հզորագույն ուսմունքները բխում են միևնույն Աղբյուրից, դրանք միևնույն Լույսի ճառագայթներն են: Իսկ դրանց տարբերությունները բացատրվում են դարաշրջանների տարբեր պահանջներով, որոնցում դրանք հռչակվել են»:

Այսպիսով, կրոնների ընդհանրության սկզբունքը կարելի է բացատրել այսպես. բոլոր մեծ կրոնների հիմնադիրները՝ Աստծո Հայտնիչները, եկել են Աստծուց, և նրանց ստեղծած բոլոր կրոնական համակարգերը առաքված են ի վերուստ՝ որպես միակ աստվածային նախասահմանման մասեր:

Ըստ էության, կա միայն մի կրոն՝ հավատ Աստծուն: Այդ կրոնն անցնում է էվոլյուցիոն զարգացման ուղի, և յուրաքանչյուր նոր դավանանք իրենից ներկայացնում է դրա էվոլյուցիայի հերթական աստիճանը: Մեր օրերում այդպիսի աստիճան է Բահայի հավատը:

Բահաուլլան ընդգծում է, որ Աստծո Հայտնիչների քարոզչական և ցանկացած այլ գործունեություն ուղղորդվում է Տիրոջ կողմից և ունի ոչ երկրային՝ Աստվածային աղբյուր: Այդ պատճառով յուրաքանչյուր Հայտնիչի գալստյան հետ կապված հանգամանքների նկարագրման ժամանակ, նա միշտ օգտվում է «Հայտնություն» տերմինից: Բահաուլլան նշում է, որ Աստվածային դեսպանորդների Սուրբ Գրքերը Աստծո անսխալ խոսքն են: Դրանք կազմում են Հայտնության ամենակարևոր մասը, քանզի ապրում են այս աշխարհում իրենց արարիչներից շատ ավելի երկար: Հենց այդ պատճառով «Հայտնություն» տերմինը երբեմն օգտագործում են նեղ իմաստով՝ վերագրելով այն բացառապես Աստծո հայտնիչների Սուրբ Գրքերին և արտահայտություններին:

Կրոնի պատմությունը Բահայի ուսմունքի լույսի ներքո իրենից ներկայացնում է Տիրոջ առաքած հաջորդական Հայտնությունների շարք: Այդ գործընթացի նկարագրման համար օգտագործվում է «Ժագող Աստվածային Հայտնություն» տերմինը: Բահայիները համարում են, որ ծագող Հայտնությունը մարդկության զարգացման շարժիչ ուժն է, իսկ Բահաուլլայի Հայտնությունը ամենավերջինն է:

Բահայի ուսմունքում կրոնի ըմբռնումն ավելի պարզ պատկերացնելու համար դիտենք կրոնը դրա մասին այլ պատկերացումների լույսի ներքո: Մի կողմից, գոյություն ունի կարծիք, որ տարբեր կրոնական համակարգերի աղբյուրը մարդուն բնորոշ ճշմարտության ձգտումն է: Այդպիսի մոտեցումը ենթադրում է, որ մեծ կրոնների հիմնադիրները Աստվածային Հայտնության կրողներ չեն: Նրանք, ավելի շուտ, փիլիսոփաներ կամ մտածողներ են, այսինքն, մյուս մահկանացուներին նման մարդկային էակներ են, ովքեր ճշմարտության փնտրման ճանապարհին առաջ են անցել մյուս բոլորից: Բոլոր կրոնների միակ հիմքի գաղափարն այդ տեսակետի մեջ չի ներգրվում, քանի որ համաձայն վերը բերված տեսության՝ տարբեր կրոնական համակարգերը սահմանափակ մարդկային բանականության արդյունք են, այլ ոչ թե հավաստի ճշմարտության միակ աղբյուրից բխած Հայտնություններ:

Մյուս կողմից, տարբեր ավանդական կրոնների բազմաթիվ ուղղափառ հետևորդներ պնդում են, որ Աստվածային Հայտնության միակ իսկական կրող պետք է համարել իրենց դավանաբանության հիմնադրին, իրենց մարգարեին, իսկ այլ

դավանաբանությունների հիմնադիրները, կամ կեղծ մարգարեներ են, կամ, առնվազն, կանգնած են իրենց սեփական կրոնի հիմնադրից շատ ավելի ցածր: Այսպես, շատ հրեաներ հավատում են, որ Մովսեսն Աստծո իսկական դեսպանորդն էր, իսկ Հիսուսն այդպիսին չէր: Նման կերպով քրիստոնյաների մեծ մասը՝ հավատալով Հիսուսի աստվածային ներշնչվածությանը, Մոհամեդին համարում են կեղծ մարգարե և պնդում են, որ Մովսեսը՝ որպես մարգարե, զիջում է Քրիստոսին:

Կրոնների ընդհանրության բահայիների կոնցեպցիան էապես տարբերվում է վերը բերված ավանդական մոտեցումներից: Հիմնական դավանաբանությունների որոշ դրույթների տարբերությունները Բահաուլլան չի համարում դրանց ստեղծողների մարդկային անկատարության արդյունք, այլ բացատրում է յուրաքանչյուր դարաշրջանի (երբ այդ Հայտնություններն առաքվել են) տարբեր պահանջներով: Բացի այդ, Բահաուլլան պնդում է, որ կրոնական ուսմունքները սուրբ տեքստերի աղավաղումների և հետագա ուղղումների և ավելացումների մտցնելու արդյունքում նշանակալիորեն աղավաղվեցին հենց մարդկանց կողմից: Բահայի ուսմունքի համաձայն, համաշխարհային կրոնների հիմնադիրները ոչնչով չէին զիջում մեկը մյուսին: Ընդհանրացնելով այդ հայացքները՝ Շոդի Էֆֆենդին գրում էր.

«Բահաուլլայի հետևորդները համոզված են, որ Նրա ուսմունքի հիմքում դրված է կրոնական ճշմարտության հարաբերականության սկզբունքը: Աստվածային Հայտնությունը երկարատև է վոլյուցիոն գործընթաց է, բոլոր մեծ համաշխարհային կրոններն ունեն աստվածային ծագում, իսկ այդ կրոնների հիմնադիր սկզբունքները լիովին համաձայնեցվում են իրար մեջ: Բոլոր կրոններն ուղղված են միակ նպատակին և բոլոր ուսմունքներն իրենց մեջ կրում են տարբեր կողմերում լույս տեսած միևնույն ճշմարտությունը: Բոլոր կրոնները փոխադարձ լրացնում են մեկը մյուսին. կրոնական ուսմունքների տարբերությունները քիչ էական են, իսկ յուրաքանչյուր նոր դավանաբանություն իրենից ներկայացնում է հասարակության հոգևոր զարգացման որոշակի աստիճան»:

ԲԱՀԱՅԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ՝ ՍՈՒՐԲ ԳՐՎԱԾՔՆԵՐ

Բահաուլլայի գրավոր ժառանգությունը կազմում է ավելի, քան հարյուր գիրք և հուշատախտակ: Դրանց մեծ մասը, ինչպես արդեն նշվել է, Բահաուլլան գրել էր բանտարկության ծանր պայմաններում: Այդ բազմաթիվ աշխատություններն էլ կազմում են Բահայի հավատի Հայտնությունը: Աբդուլ-Բահայի աշխատությունները և Շոդի Էֆֆենդիի մեկնաբանությունները, թեև բահայիները համարում են բացատրություններ, նույնպես ունեն Սուրբ Գրքերի կարգավիճակ:

Բահաուլլայի աշխատությունների թեմատիկան կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի.

1. աստվածաբանական ուսմունքներ, օրինակ՝ Քիթաբ-ի-Իզանում շարադրված ծագող Հայտնության մասին թեման,
2. գլխավոր կենսական դրույթներ և բարոյական պատգամներ, որոնք արտահայտված են Բահաուլլայի խրատներում, ում շուրթերով Աստված դիմում է մարդկանց (Բահաուլլան բացատրում է մարդկային կյանքի իմաստն ու նպատակը, դրա օրինաչափությունները, մարդկանց կոչ է անում իրենց արարքներում ղեկավարվել Աստծո կամքով, խոսում է վատ

արարքների համար պատասխանատվության և լավ արարքների համար հատուցման մասին),

3. օրենքներ և դրույթներ, որոնք նման են վերը հիշատակված պատգամներին, բայց, ի տարբերություն դրանց, Բահաուլլայի հետևորդների համար պարտադիր են,

4. Բահաուլլայի մշակած հավատի հասարակական և վարչական ինստիտուտների կառուցման սկզբունքներ, դրանց իրավասությունների սահմանազատում, այդ ինստիտուտների իրավունքներն ու պարտականությունները:

Վերջին երկու կատեգորիաները՝ օրենքներն ու հավատի ինստիտուտները, համատեղ կազմում են Բահաուլլայի Վարչական Կարգը: Վարչակարգի նպատակն է պահպանել Բահայի համայնքի միասնությունը և երկրագնդի բոլոր մարդկանց ապագա միասնության հիմքերը: Հաջորդ գլուխներում Վարչական Կարգին վերաբերող հարցերը կդիտվեն ավելի մանրամասն:

Բահաուլլայի աշխատություններն արտացոլում են նաև նրա ուսմունքի այլ տեսակետներ՝ առեղծվածաաստվածաբանական, փիլիսոփայական, պատմագրական. դրանցում նույնպես շոշափվում են ծիսականությանը նվիրված հարցեր: Թեմաների բազմազանությունը վկայում է առանձին մարդու և հասարակության պահանջների նկատմամբ Բահաուլլայի արտասովոր ուշադրության մասին:

Բահաուլլայի Սուրբ Գրքերում սահմանված հիմնական օրենքներն ու պատգամներն իրենց էությամբ ենթակա են մեկ նպատակին՝ միակ Համաշխարհային Կարգի կառուցման նվաճման շահերին: Այդ դրույթներին հետևելը թույլ կտա ոչնչի հանգեցնել բախումները՝ ինչպես հասարակական խմբերի, այնպես էլ առանձին մարդկանց միջև և, այդպիսով, ստեղծել բարենպաստ պայմաններ համընդհանուր միասնության համար: Շողի էֆֆենդին տվեց համառոտ ձևակերպում Բահայի հավատի հիմնական սկզբունքներին: Այդ հատվածը բերում ենք ամբողջությամբ, քանի որ այստեղ ասվածը հետագա քննարկման հիմք է ծառայում.

«Բահայի հավատն ընդունում է Աստծո և Նրա Մարգարեների միասնությունը, աջակցում է ազատ, ոչնչով չսահմանափակված ճշմարտության փնտրման գաղափարին, դատապարտում է սնահավատությունների և նախապաշարմունքների բոլոր ձևերը, ցանկացած կրոնական քարոզի հիմնական նպատակ է համարում խաղաղության և համերաշխության նվաճումը, ինչի շնորհիվ կոչ է անում կրոնի և գիտության սերտ համագործակցությանը, քանզի դա միակ և վերջնական հիմքն է խաղաղասիրական, համակարգված և առաջադեմ հասարակական կարգի համար: Բահայի հավատը ճանաչում է տղամարդկանց և կանանց հավասար հնարավորությունները, իրավունքներն ու արտոնությունները, մտցնում է պարտադիր կրթության սկզբունքը, ձգտում է վերացնել ինչպես ծայրահեղ աղքատությունը, այնպես էլ հարստությամբ առաջացած ավելորդությունները, ծառայության ոգով կատարված աշխատանքը բարձրացնում է Աստծուն պաշտելու մակարդակի վրա, միջազգային հաղորդակցման համար կոչ է անում օգտվել հատուկ օժանդակ լեզվից, ցուցադրում է համընդհանուր խաղաղության հաստատման և պահպանման ուղին»:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ՓՆՏՐՈՒՄԸ

Աշխարհում ծագող ցանկացած բախումների առաջնահերթ պատճառ է հանդիսանում մարդկանց կույր, անգիտակից հակվածությունն այս կամ այն ավանդույթներին,

հասարակական շաժուճներին, աշխարհայացական համակարգերին: Յուրաքանչյուր մարդկային էակի Աստված շնորհել է բանականություն և ճշմարտությունը ստից տարբերելու ունակություն: Ով չի օգտագործում բանականությունն ըստ նպատակի, այլ նախընտրում է չմտածված կերպով կիսել ուրիշների կարծիքները կամ գաղափարները՝ արդարացնելով դա այդ գաղափարները քարոզողների հանդեպ հարգանքով, կամ, ընդհակառակը, նրանց նկատմամբ վախով, նա արհամարհում է բանական էակի վրա դրված հիմնական բարոյական պատասխանատվությունը:

Ավելին, վարվելով նման կերպ՝ մարդիկ հաճախ ընկնում են մոլեռանդության մեջ և անհանդուրժելի են դառնում այլ հայացքների համախոհների նկատմամբ: Պատմությունը լի է բախումների և անգամ արյունահեղությունների օրինակներով, որոնց համար առիթ են դարձել կրոնական ծիսակատարության աննշան տարբերությունները կամ ամենաանէական շեղումներն աստվածաբանական ուսմունքից:

Ճշմարտության ինքնուրույն փնտրումն օգնում է մարդուն գիտակցել, թե հատկապես ինչն է նրան ստիպում ընդունել որոշակի գաղափարական կամ կրոնական ուսմունք: Բահայիները հավատում են, որ գոյություն ունի միայն մեկ իրականություն, մարդիկ, վերջին հաշվով կտվորեն հասկանալ իրար և ապրել սերտ միության մեջ: Ապագա միասնության գրավական կարող է դառնալ ճշմարտությունը հասկանալու ձգտումը: Աբդուլ-Բահան այսպես է ասում այդ առիթով.

«Ճշմարտությունը միակն է, ուրեմն՝ անբաժանելի: Եթե ազգերի միջև տարածայնություններ են ծագում, ապա դրա պատճառը միայն կանխակալ դատողությունների նկատմամբ հակվածությունն է: Ճշմարտության փնտրումներն ականայից կստիպեին մարդկանց համախմբվել»:

Եվ նորից.

«Մենք հակված ենք համարել, թե միայն մենք ենք ճշմարտացի, իսկ մյուսները սխալվում են: Այդ պատրանքը գլխավոր փորձաքարն է միասնության ճանապարհին, իսկ առանց միասնության հնարավոր չէ ճանաչել ճշմարտությունը, քանզի ճշմարտությունը միակն է»:

ՀՐԱԺԱՐՈՒՄ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԻՑ ԵՎ ՍՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Բահաուլլան հատուկ ուշադրություն էր դարձնում նախապաշարմունքների խնդրին: Նախապաշարմունքը մարդու ուժեղ զգացմունքային հակվածությունն է որևէ գաղափարին, որը չի ուղեկցվում հասկանալու փորձերով՝ ճշմարիտ է այդ գաղափարը, թե կեղծ: Նախապաշարմունքների տարածված ձևերից մեկը հետևյալն է՝ մարդն անբաժանելիորեն իրեն նույնացնում է որևէ խմբի հետ, որին պատկանում է և որին վերագրում է գերազանցություն այլ խմբերի համեմատ: Այդպիսի մարդու մոտ ձևավորվում է բացասական պատկերացում բոլոր նրանց մասին, ովքեր չեն մտնում այդ խմբի մեջ, ինչպիսին էլ որ լինեն նրանց անձնական հատկությունները: Խմբային նախապաշարմունքները կարող են հիմնվել ռասայական, սոցիալ-տնտեսական, լեզվային և այլ մոտեցումների վրա: Ծնելով պառակտություն մարդկանց խմբերի միջև՝ այդ կանխակալ դատողությունները ծառայում են բախումների աղբյուր: Նախապաշարմունքները հանգեցնում են ատելության, որն ընդունակ է բերել և հաճախ բերում է հասարակական անկարգությունների, պատերազմների և անգամ ցեղասպանության: Բահաուլլան հատկապես պնդում էր, որ իր

հետևորդները մշտապես ձգտեն ազատվել բոլոր նախապաշարմունքներից և սնահավատություններից, որոնք վերաբերվում են մարդու բնույթին, քանզի հենց դրանք են մարդկանց մեջ ծնում փոխադարձ ատելություն:

Նվիրական Խոսքերում, որոնք նվիրված են հիմնականում էթիկայի հարցերին, Բահաուլլան կոչ է անում.

«Ո՛վ, մարդու որդիներ:

Արդյոք դուք գիտեք, թե ինչու եմ ես ձեզ արարել միևնույն հողից: Որպեսզի ոչ ոք չգոռոզանա: Ամեն թույլ հիշեք ձեր սրտում ձեր արարման մասին: Քանի որ դուք արարված եք միևնույն նյութից, դուք պետք է լինեք ինչպես մի հոգու: Այնպես որ քայլեք նույն ոտքով, կերեք նույն շուրթերով և կացեք նույն երկրում, որպեսզի ձեր էությանը, գործերով ու արարքներով հայտնեք միասնության նշանները և հրաժարեցման էությունը»:

ԿՐՈՆԻ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս բախումների և պառակտումների ամենատարածված պատճառներից մեկը համընդհանուր ընդունված պատկերացումներից մեկն է, թե գիտությունը հակասում է կրոնին և գիտական ճշմարտությունը մի շարք հարցերով արմատապես տարբերվում է կրոնական տեսակետից, ինչի հետևանքով մարդու առջև անխուսափելիորեն ծագում է ընտրության հարց՝ կրոնի և գիտությանը զբաղվելու, բանականությանը ծառայելու միջև:

Բահայի ուսմունքում ընդգծվում է գիտության և կրոնի սկզբնական ընդհանրությունը: Դա հետևում է Աբդուլ-Բահայի վերը բերված անդումից, որ ճշմարտությունը (կամ իրականությունը) միակն է: Քանզի, եթե գոյություն չունի երկու ճշմարտություն, ապա կարելի է արդյոք համարել, որ ինչ-որ դատողություն գիտական տեսակետից կեղծ է, իսկ աստվածաբանականից՝ ճշմարիտ: Այդ առիթով Աբդուլ-Բահան արտահայտվել է միանգամայն աներկիմաստորեն.

«Կրոնական դավանաբանությունները և գաղափարները, որոնք հակասում են գիտությանը, գուտ սնահավատություններ են և մոլորություններ, քանզի գիտության հակառակը տգիտությունն է, իսկ տգիտությունը ծնում է կեղծ դավանանքներ: Իսկական կրոնը համերաշխ է գիտության հետ: Այն, ինչ հակառակ է բանականությանը, հակառակ է և հավատին և ծնում է միայն կասկածներ ու տատանումներ»:

Բահաուլլան պնդում էր, որ միտքը, դատողություններ անելու ընդունակությունը շնորհված են մեզ Տիրոջ կողմից: Գիտությունը ծագում է, երբ մենք կանոնավորապես դիմում ենք Տիրոջ այդ ընծաներին: Գիտական ճշմարտությունները մեր կողմից բացահայտված ճշմարտություններ են: Մարգարեների կրոններում տրված ճշմարտությունները հայտնված են մեզ ի վերուստ: Դրանք Աստծո հայտնած ճշմարտություններն են, որոնք մենք չենք բացահայտում: Բահայիները համարում են, որ Աստված միաժամանակ և՛ հայտնության Աղբյուրն է, և՛ տիեզերքի Արարիչը, որ գիտական հետազոտության օբյեկտ է, հետևաբար, այստեղ չեն կարող լինել հակասություններ:

Հակասությունը գիտության և ավանդական կրոնական տեսակետների միջև մարդկային սխալների և գոռոզության արդյունք է: Դարերի ընթացքում շատ կրոնական համակարգեր աստիճանաբար ենթարկվում էին աղավաղումների, որոնք մթագնում էին

հավատի հիմնադրից՝ Աստծո հայտնիչից բխող ուսմունքի սկզբնական մաքրությունը: Ժամանակի ընթացքում էլ ավելի դժվար էր դառնում այդ աղավաղված ուսմունքները տարբերել Աստծո տրված սկզբնական ուղերձից: Նմանապես տարբեր գիտական դպրոցների անհիմն տեսակետները ժամանակի ընթացքում դառնում էին այնքան հանրաճանաչ, որ խանգարում էին մարդկանց ընկալել լուրջ, ճշգրիտ հետազոտությունների տվյալները և տալիս էին աշխարհի աղավաղված պատկերը:

Աբդուլ-Բահայի պնդմամբ կրոնն ու գիտությունը փոխադարձ լրացնում են իրար.

«Կրոնն ու գիտությունը երկու թևեր են, որոնց վրա սավառնում է մարդկային բանականությունը, իսկ հոգին սլանում է դեպի կատարելություն: Մի թևը բավական չէ թռիչքի համար: Եթե մարդը փորձի սավառնել մի թևով՝ կրոնի թևով, նա անխուսափելիորեն կընկղմվի սնահավատությունների ճահիճը, իսկ եթե հույսը դնի միայն գիտության թևի վրա, այն ժամանակ էլ հեռու չի թռչի. կընկնի մատերիալիզմի մռայլ անդունդը: Մեր դարում բոլոր կրոնները՝ առանց բացառության, խոցված են սնահավատությամբ, բոլորը առանձնացել են և՛ իսկական ուսմունքից, և՛ արդիական գիտական պատկերացումներից»:

Նույն աշխատության մեջ Աբդուլ-Բահան հավաստիացնում է, որ գիտության և կրոնի համերաշխության արդյունքում հավատի դիրքերը չեն թուլանա, ինչպես մտահոգվում են կրոնի շատ ջատագովներ, այլ հակառակը՝ կամրանան.

«Այն օրը, երբ կրոնը դեն նետելով սնահավատությունները, հետամնաց և անմիտ ուսմունքները՝ իր համաձայնությունը կհայտնի գիտության հետ, աշխարհ կգա մեծ, համախմբող և մաքրող ուժ: Ընդմիջտ վերջ կտրվեն պատերազմներին, երկպառակություններին, թշնամությանը, և մարդկությունն աստվածային սիրո ուժով ձեռք կբերի միասնություն»:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Շատ կրոնական և փիլիսոփայական ավանդույթներ համարում են, որ կինը տղամարդու համեմատ պետք է հասարակության մեջ լինի ենթակա դիրքում: Կան նաև այնպիսիները, որոնց համաձայն կինը համարվում է ցածր էակ: Բահայի հավատը հռչակում է սեռերի հավասարություն: Ե՛վ Բահաուլլան, և՛ Աբդուլ-Բահան բազմիցս նշել են, որ կինն իր մտքի հնարավորություններով չի զիջում տղամարդուն: Կգա ժամանակ, երբ կանայք կապացուցեն՝ նրանք ընդունակ են հասնել հաջողության մարդկային գործունեության ցանկացած ոլորտում, այդ թվում և գիտության մեջ: Կանանց ներկայիս ետ մնալու պատճառը տղամարդկանց հետ հավասար հնարավորությունների կիրառման բացակայությունն է, ինչպես կրթության ոլորտում, այնպես էլ հասարակական կյանքի մյուս ոլորտներում: Բացի այդ, ավելի մեծ ֆիզիկական ուժ ունեցող տղամարդը հասարակության մեջ ավանդորեն գլխավորել է՝ կնոջն իրեն ենթարկելով և զրկելով նրան իր ընդունակությունները զարգացնելու հնարավորությունից.

«Անցյալում աշխարհին տիրել է ուժը, և տղամարդը գլխավորել է կնոջը, քանզի նա կնոջից ավելի ուժեղ է և հաստատական, ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր առումով: Բայց ժամանակը փոխում է արժեքների չափանիշները, ուժն այլևս հարգված չէ. նախընտրությունը տրվում է ընկալունակությանը, ինտուիցիային, հոգևոր հատկանիշներին, այնպիսի, ինչպիսիք են սերն ու ծառայությունը, որոնք ավելի բնորոշ են կնոջը: Այդ պատճառով գալիք դարում կշեռքի

նժարը կթեքվի կանանց իդեալների կողմը, իսկ ավելի ճիշտն ասած, քաղաքակրթության տղամարդկային և կանացի բաղադրիչներն ավելի հավասարակշռված կլինեն»:

Համաշխարհային միասնության նվաճման համար հասարակության կյանքում շատ կարևոր է կանացի և տղամարդկային էությունների ներդաշնակությունը: Ըստ էության, հատկապես կանացի էության աճող ազդեցությունը կարող է օգնել խուսափել ռազմական բախումներից և երկրի վրա հաստատել ամուր խաղաղություն:

«Անցյալ դարերում մարդկային ցեղը տառապում էր իր թերարժեքությունից ու անկարողությունից, և դրա պատճառը ոչ լիարժեք, միակողմանի զարգացումն էր: Մոլեգնում էին ավերիչ պատերազմները, աշխարհը հաճախ կանգնած էր կործանման շեմին: Այդ ամենին վերջ տալու լավագույն միջոցը կնոջը կրթություն տալն է, և կինը կանի հնարավոր ամեն ինչ, որպեսզի երկրագնդի վրա պատերազմներն ավարտվեն... Կնոջ ազդեցությունն ամենահզոր գործոնն է համընդհանուր խաղաղության և արդարության նվաճման գործում»:

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Բահաուլլայի ուսմունքը՝ և դրանում է ուսմունքի բնորոշ գիծը, չի սահմանափակվում վերացական կոչերով, այլ ուրվագծում է իր հիմնական դրույթների գործնական իրականացման ուղիները: Դա վերաբերվում է նաև տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքին: Բահաուլլան խոսում է, առանց բացառության, բոլոր երեխաներին կրթություն տալու անհրաժեշտության մասին: Իսկ եթե ընտանիքի ֆինանսական կամ այլ հնարավորությունները բավական չեն, իսկ համայնքն ի վիճակի չէ ընտանիքին աջակցություն ցուցաբերել, ապա այդ դեպքում առանց տատանումների պետք է ընտրություն կատարել ի օգուտ աղջիկների: Դա ծառայում է միաժամանակ երկու նպատակների: Մի կողմից կանանց հնարավորություն է տրվում լրացնել անցյալում բաց թողնվածը, մյուս կողմից՝ կրթություն տալով ապագա մայրերին՝ ընտանիքն ու համայնքը հոգ են տանում ապագա սերնդի բարեկեցության մասին, քանզի մայրն է երեխայի առաջին ուսուցիչն ու դաստիարակը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԹՈՒՅԼ ՉՏԱԼ ԻՆՉՊԵՍ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԱՎԵԼՈՐԴ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Բահաուլլայի հռչակած մարդկության միասնությունն արդարության վրա հիմնված միասնությունն է: Արդի աշխարհում տիրող անարդարության առավել վառ օրինակներից մեկը բնակչության կյանքի նյութական պայմանների կտրուկ տարբերությունն է: Փոքրամասնության ձեռքում է արտադրության միջոցների և բաշխման համակարգի հսկողությունը, իսկ մեծամասնությունն ապրում է սարսափելի աղքատության մեջ: Անհավասարություն գոյություն ունի ինչպես ազգերի ներսում, այնպես էլ առանձին ազգերի միջև. բարձր զարգացում ունեցող արդյունաբերական երկրների ոչ մեծ խումբն ունի հսկայական հարստություններ, մյուսները տառապում են աղքատությունից և հետամնացությունից: Ավելին, հարուստների և աղքատների միջև եղած անդունդն ամեն տարի խորանում է: Դա վկայում է այն մասին, որ գոյություն ունեցող տնտեսական

համակարգը ընդունակ չէ վերականգնել արդարացի հավասարակշռությունը: Բահաուլլան պնդում էր, որ տնտեսական անարդարությունը չարիք է, և այդ պատճառով այն դատապարտելի է Աստծո աչքերում: Աբդուլ-Բահան գրում էր. «Եթե որևէ տեղ մենք տեսնում ենք դեպի սով տանող ծայրահեղ աղքատություն, ապա դա ճշգրիտ նշան է, որ մոտակայքում բույն է դրել բռնապետությունը»:

Նվիրական Խոսքերում Բահաուլլան կոչ էր անում բռնապետերին.

«Ո՛վ երկրային հարստահարիչներ:

Ձեր ձեռքերը հեռու տարեք բռնապետությունից, քանզի Ես որոշել եմ չներել անգամ մարդկային փոքրագույն անարդարությունը»:

Հարստության և աղքատության վերաբերյալ Բահաուլլան գրում էր.

«Հարուստներին պատմեք աղքատի կեսգիշերային տառապանքի մասին, որպեսզի իրենց անփութությունը չդատապարտի նրանց կործանման ուղու և չգրկի Լիության Ծառից»:

Տնտեսական անարդարության հիմնական պատճառներից մեկը չափազանց մեծ և դեպի շռայլություն տանող մրցակցությունն է: Մրցակցությունը, անշուշտ, օգտակար դեր խաղաց հասարակական արտադրության մեջ այն շրջանում, երբ արտադրության միջոցները բավականաչափ զարգացած չէին, բայց մեր օրերում դրան պետք է փոխարինի համագործակցությունը: Առկա մարդկային և նյութական ռեսուրսները պետք է օգտագործվեն հանուն բոլորի ապագա բարօրության, այլ ոչ թե քչերի ներկա շահերի համար: Այդ նպատակին անհնարին է հասնել, եթե տնտեսական ոլորտի մրցակցությունն իր տեղը չգիջի փոխադարձ շահավետ համագործակցությանը:

Համագործակցությունը տնտեսության մեջ անհրաժեշտ է ներդնել ամենուր, բոլոր մակարդակներում: Աբդուլ-Բահան բացատրում էր, որ յուրաքանչյուր ձեռնարկություն պետք է օրինակ դառնա աշխատակիցների և ձեռնարկատերերի միջև: Նախ և առաջ, անհրաժեշտ է, որ աշխատակիցները ստանան ձեռնարկության շահույթի մի մասը՝ յուրաքանչյուրին սահմանվում է աշխատավարձ և շահույթի որոշակի տոկոս: Այդպիսով, աշխատակիցները տիրոջ հետ համատեղ դառնում են ձեռնարկության տեր, և այդ դեպքում շահերի բախումը բացառվում է: Այժմ գոյություն ունեցող համակարգը, երբ ամբողջ շահույթը հասնում է տիրոջը, բախումներ է առաջացնում ձեռնարկատերերի և ծառայողների միջև, խախտում է տնտեսական հավասարակշռությունը, անարդարության և հաճախ, շահագործման աղբյուր է:

Մրցակցության և իշխանության ձգտման մասին Բահաուլլան գրում էր.

«Մեծարանքների և արտոնությունների ձգտման հետ աշխարհ եկավ անայացումը: Երկրագունդը դարձավ վշտի հովիտ... Մարդը ծագումով բարձր է, քանզի յուրաքանչյուրն աստվածային նախանշանակների անոթ է: Բայց մեծարվելով իր գիտությամբ ու տաղանդներով, ձգտելով բարձրանալ իր մերձավորի նկատմամբ՝ նա ընկնում է ծանր մեղքի տակ»:

Աբդուլ-Բահան ասում էր, որ ինչպես օրգանիզմն աշխատում է իր օրգանների ներդաշնակ աշխատանքի շնորհիվ, այնպես էլ հասարակությունը գոյատևում է մարդկանց համագործակցության շնորհիվ.

«... կյանքի հիմքը կազմում են փոխադարձ օգնությունն ու աջակցությունը: Բավական է դրանք դադարեն և վրա է հասնում քայքայումն ու մահը: Որքան ավելի է աշխարհը ձգտում

քաղաքակրթության, այնքան ավելի ակնհայտ է դառնում համագործակցության անհրաժեշտությունը»:

Համագործակցության վրա հիմնված տնտեսական համակարգի շրջանակներում Բահայի ուսմունքն ընդունում է մասնավոր սեփականության և ազատ ձեռնարկատիրության սկզբունքը: Բահաուլլան երբեք չի պնդել, թե բոլոր մարդիկ պետք է ունենան միևնույն եկամուտները: Գոյություն ունեն բնական տարբերություններ պահանջների և ընդունակությունների միջև: Բացի այդ, հասարակական օգտակար գործունեության որոշ տեսակներ (օրինակ՝ կրթության բնագավառում) արժանի են ավելի բարձր վարձատրության, քան մյուսները:

Սակայն եկամուտների բոլոր տեսակների վրա պետք է դրվեն սահմանափակումներ: Մի կողմից, յուրաքանչյուրի համար պետք է սահմանել որոշ նվազագույն երաշխիքային եկամուտ այնպիսի չափով, որն անհրաժեշտ է հիմնական կենսականորեն կարևոր պահանջների բավարարման համար: Եթե ինչ-որ պատճառով (աշխատունակության կորուստ կամ այլ անբարենպաստ հանգամանքներ) մարդու եկամուտներն իջնեն սահմանված նվազագույն մակարդակից, ապա նրան պետք է տրվի նպաստ հասարակական հիմնադրամներից: Մյուս կողմից, պետք է սահմանվի նաև եկամուտների բացարձակ առավելագույն չափը: Առաջադեմ հարկավորման և այլ միջոցների օգնությամբ պետք է կանխել սահմանված չափը գերազանցող միջոցների կուտակումը մի ձեռքում: Աբդուլ-Բահան բազմիցս միանգամայն որոշակիորեն պնդել է, որ Բահայի հավատի սկզբունքների վրա հիմնված հասարակության մեջ չեն կարող լինել «միլիոնատերեր», որովհետև այդպիսի հասարակության անդամների մոտ ուղղակի հնարավորություն չի լինի կուտակել հսկայական՝ իրենց համար անպիտան կարողություն:

Աշխատանքի վարձատրության մակարդակի որոշակի տարբերությունը կպահպանվի, որպեսզի խրախուսվեն հասարակական բարեկեցության համար հատկապես կարևոր գործունեության ձևերը (օրինակ՝ բժշկությամբ կամ ֆերմերությամբ զբաղվելը): Սակայն տարբերությունները խիստ սահմանափակ չափերից դուրս չեն գա, որպեսզի, մի կողմից ոչ ոք զրկանք չկրի, մյուս կողմից արժեքների կենտրոնացում չլինի մի ձեռքում: Այդպիսով, բահայի տնտեսական ուսմունքն առանձին գծերով նման է որոշ գոյություն ունեցող համակարգերին, բայց ի տարբերություն դրանց, ենթադրում է նոր, իր ձևով եզակի տնտեսական կարգ, որի հիմքում դրված է բարիքների և աշխատանքային պարտավորությունների արդարացի բաշխում:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՀԻՄՔԵՐԸ

Խոսելով տնտեսական և սոցիալական հարցերի մասին՝ Բահաուլլան և Աբդուլ-Բահան նշում էին, որ հնարավոր բախումների լրիվ վերացման համար միայն տնտեսական համակարգի վերափոխումը բավական չէ: Աշխատանքի ու սպառման բնագավառում արդարության սկզբունքի խախտումները մարդկային ազահության արդյունք են: Հետևաբար, վերաբերմունքը նույնպես պետք է հիմնովին փոխվի. անգամ ամենակատարյալ տնտեսական համակարգն անարդյունավետ կլինի, եթե մարդն առաջվա պես լինի եսասեր, ազահ և հոգեպես տհաս: Արդի աշխարհում աղետալի նյութական վիճակի լուծումը հնարավոր է միայն մարդկանց սրտերում և մտքերում խորը

փոփոխությունների պայմաններում, իսկ մարդու ներքին աշխարհին ընդունակ է վերափոխել միայն կրոնը. «Օրենքները, որոնք կառավարում են մարդկանց տնտեսական գործունեությունը, իրենց հիմքում ունեն աստվածային բնույթ և սերտորեն կապված են հոգևոր աշխարհի հետ»:

Այդ սկզբունքը գործադրելի է ոչ միայն տնտեսության համար, այլև մարդկային գործունեության այլ ոլորտների: Բահայի դավանաբանության համաձայն, մարդն իր էությանը հոգևոր էակ է և առանց մարդու հոգևոր բնույթը հաշվի առնելու ցանկացած որոշում, որը վերաբերում է նրա գործունեության որևէ բնագավառին, ժամանա-կավոր կլինի: Մարդը, վեջին հաշվով, հոգով ձգտում է միայն նրան, որ ճանաչի ու սիրի Աստծուն, ինչպես նաև ձգտում է հոգևոր կատարելության:

Հենց այդ պատճառով են Բահաուլլան և Աբդուլ-Բահան քննարկում այնպիսի հարցեր, որոնք կարծես թե անմիջական կապ չունեն կրոնի հետ: Կյանքում չափազանց դժվար է առանձնացնել աշխարհիկը հոգևորից: Հաջողակ կլինի միայն այն գործունեությունը, որն ունի որոշակի հոգևոր հեռանկար:

Այն ըմբռնմամբ, որը տալիս է Բահաուլլան, այսինքն, որպես Աստծուց մարդկությանն առաքված հաջորդական Հայտնություն, կրոնը մարդուն դիտում է որպես հոգևոր էակ: Այստեղից հետևում է, որ հասարակության հիմքում կարող է դրվել միայն իսկական կրոնական աշխարհայացքը: Առանց կրոնի Աստծո Նախախնամությանը դիմելու՝ միայն մարդկանց ուժերով, համաաշխարհային խնդիրները լուծելու բոլոր փորձերը անհաջողության են մատնված: Այդ առիթով Շոդի էֆֆենդին գրում էր.

«Մարդկությունը ... ցավոք, այնքան է մխրձվել մոլորությունների և արատների մեջ, որ նրա փրկության համար բավական չեն անգամ տիրակալների և պետական այրերի համաձայնեցված ջանքերը, որքան էլ մաքուր լինեն նրանց դրդապատճառները... Լավագույն քաղաքագետների ոչ մի պլան, ամենաակադամոր տնտեսագետների առաջարկված ոչ մի ուսմունք, բարոյականության ամենամուեզին ջատագովների ոչ մի սկզբունք չի կարող ստեղծել այն անհրաժեշտ հիմքը, որի վրա մեր խելագար աշխարհը կկարողանար սկսել կառուցել իր ապագան»:

ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵՁՈՒ

Մարդկության համախմբման ճանապարհին իրենից լուրջ խոչընդոտ է ներկայացնում աշխարհում գոյություն ունեցող լեզուների առատությունը: Մարդկանց բաժանումը խմբերի, որոնցից յուրաքանչյուրը խոսում է իր լեզվով, խանգարում է հաղորդակցմանը, արգելակում է լրատվության հոսքը: Օտար լեզվին չտիրապետող մարդու համար դժվար է լրիվ պատկերացում կազմել աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Բացի այդ, որոշ լեզվային ընդհանրությունների ներկայացուցիչներ չափազանց կողմնապահորեն են վերաբերում իրենց ազգային լեզվին ու գրականությանը՝ նվազեցնելով այլ ժողովուրդների լեզուն և մշակութային ժառանգությունը: Լեզվային ազգայնամոլությունն իրենից ներկայացնում է բարենպաստ հող բախումների առաջացման համար:

Այդ պատճառով օրինաչափ է, որ դեպի մարդկության համախմբումը տանող այլ ուղիների մեջ Բահաուլլան նշել է համընդհանուր լեզվի ներդրումը: Բահաուլան բազմիցս ասել է, որ որպես երկրորդ լեզու, աշխարհի բոլոր երկրներում պետք է դասավանդել նույն լեզուն: Այդպիսով, նոր սերնդի բոլոր ներկայացուցիչները բացի մայրենի լեզվից, կտիրապետեն ևս մեկ լեզվին, որն ընդհանուր կլինի բոլորի համար: Որպես այդպիսի

համաշխարհային լեզու կարելի է կիրառել կամ արհեստական ստեղծված լեզուն՝ օրինակ էսպերանտոն, կամ գոյություն ունեցող ազգային լեզուներից որևէ մեկը: Բնական ծագում ունեցող լեզվի օգտին խոսում է այն հանգամանքը, որ երկրագնդի բնակչության մեծ մասն արդեն տիրապետում է այդ լեզվին: Սակայն, արհեստական լեզուն ունի այն առավելությունը, որ այն հուզականորեն չեզոք է, իսկ քերականության իմաստով շատ պարզ է և կարգավորված:

Բահայիներն աջակցում են համընդհանուր լեզվի գաղափարին՝ նախապատվություն չտալով լեզուներից ոչ մեկին՝ լինի դա բնական, թե արհեստական ծագում ունեցող լեզու: Լեզվի ընտրությունը պետք է հանձնարարել փորձագետների միջազգային հանձնաժողովին, իսկ հանձնաժողովի որոշումն այնուհետև ներկայացնել բոլոր ժողովուրդների հավանությանը:

Բահաուլլան ընդգծում էր, որ համընդհանուր լեզվի գործառույթը զուտ օժանդակ է, այսինքն այդպիսի լեզուն ոչ մի կերպ չպետք է դուրս մղի գոյություն ունեցող բնական լեզուները: Միասնության շրջանակներում բազմազանության սկզբունքը լեզվային տարբերությունների հարցերի նկատմամբ կիրառելի է այնքանով, որքանով այն կիրառելի է մյուս բոլոր երևույթների նկատմամբ: Համընդհանուր օժանդակ լեզվի ներդրումը կօգնի փոքր ժողովուրդների լեզուներին կանգուն մնալ այլ՝ ավելի տարածված ու հետագա տարածման միտում ունեցող լեզուների ճնշման տակ, իսկ ժողովուրդներին հնարավորություն կտա պահպանել իրենց մշակույթի անկրկնելիությունը:

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

Բահայի դավանաբանության իմաստն ըմբռնելու համար անհրաժեշտ է նախ և առաջ հասկանալ այն դերը, որը համաշխարհային պատմության մեջ խաղաց Աստվածային Հայտնությունը: Բահաուլլայի ու Աբդուլ-Բահայի խոսքերով մարդկությանը տրված Հայտնություններից յուրաքանչյուրն ուներ երկակի նպատակ: Առաջինը՝ Հայտնությունը մարդկությանը տալիս է գիտելիք Աստծո և մեր մերձավորների ու մեր համար նախասահմանված Նրա Կամքի մասին: Բայց յուրաքանչյուր նոր հայտնություն տրվում է մարդկությանը միայն այն ժամանակ, երբ այն հասնում է զարգացման որոշակի աստիճանի, երբ այն բախվում է նոր՝ նախկինում անհայտ խնդիրների ու կարիքների հետ: Դրա հետ է կապված Հայտնության երկրորդ դերը՝ ճիշտ հունով ուղղել մարդկանց առօրյա գործունեությունը, ապահովել նրանց անհրաժեշտ գիտելիքներով ընթացիկ հարցերը լուծելու համար:

Հայտնության այդ երկու դերերի միջև եղած տարբերությունն այն է, որ դրանցից մեկն ունի համընդհանուր բնույթ, իսկ մյուսը՝ ավելի կոնկրետ: Առաջին դեպքում Աստծո Հայտնիչը՝ դիմելով մարդկությանը, շոշափում է գոյության այնպիսի դարավոր խնդիրներ, ինչպիսիք են տառապանքը, ծնունդը, մահը, վախը, սերը: Այդ խնդիրներին բախվում է յուրաքանչյուր մարդ՝ երբ և որտեղ էլ ապրի: Իսկ երկրորդ դեպքում Հայտնիչի ուղերձը որոշվում է կոնկրետ պայմաններով՝ Նրա հայտնվելու վայրով և ժամանակով:

Եվ, այսպես, յուրաքանչյուր նոր դարաշրջանի պահանջներին համապատասխանելու համար, ցանկացած Հայտնություն տալիս է, մի կողմից համապիտանի (հավերժ) Պատգամներ, մյուս կողմից՝ սոցիալական (անցողիկ): Կրոնի այդ երկու տեսակետների մասին Աբդուլ-Բահան գրում է.

«Աստվածային ուսմունքներն իրենց բնույթով երկակի են: Դրանց առաջին և հիմնական մասն Աստծո Խոսքի հոգևոր քարոզն է: Դրանք խրատներ են այն մասին, թե ինչպես հավատալ Աստծուն, ինչպես հասնել կատարյալ առաքինության, ինչպես խուսափել մեղքից, ինչպես հաղորդակցվել վերին օգնությանը: Այս է Աստծո տված ցանկացած կրոնի հիմքը, քանզի Աստծուն ճանաչելն առաջնահերթ մարդկային պահանջ է... Այս է բոլոր աստվածային ուսմունքների ամենագլխավոր էությունը, բոլորի համար միակ իրականությունը...»

Երկրորդը, ինչն իր մեջ ներառում է յուրաքանչյուր կրոնական ուսմունք, առօրյա գործերին վերաբերող անցողիկ օրենքներն ու պատգամներն են: Այդ բնույթի օրենքները չունեն բացարձակ արժեք: Դրանք պատասխանատու են վայրի և ժամանակի պահանջների համար: Դրանց դարձ կարճ է... Սոցիալական օրգանիզմի գործունեությունը կարգավորող օրենքներն էական չեն և կարող են փոփոխվել կամ լրիվ վերացվել»:

Կրոնական Հայտնության էական տեսակետը երկրորդականից տարբերելու անկարողությունը հաճախ դառնում է բախումների պատճառ տարբեր կրոնական համակարգերի համախոհների միջև: Ուղղափառ հավատացյալների համար, ովքեր պնդում են, որ իրենց դավանաբանության բոլոր սկզբունքներն անսասան են, հասարակական հիմքերի օրինաչափ փոփոխությունը զարգացման գործընթացի համար սովորաբար դառնում է ողբերգություն: Բավական է հիշել, օրինակ, Մովսեսի օրենքների համախոհների վերաբերմունքը, երբ Հիսուսը փոփոխություններ մտցրեց սոցիալական հարցերին վերաբերող Հուդայականության մի շարք դրույթների մեջ:

Այս գլխի նախորդ մասերում ուսումնասիրված որոշ բահայի սկզբունքներ վերաբերում են սոցիալական ուսմունքներին: Ըստ Բահայիների արդի ամենասուր խնդիրը մարդկանց անմիասնությունն է: Այնպիսի սկզբունքներից մեկը, ինչպիսին է համընդհանուր օժանդակ լեզվի մտցնելը, կոչված է ծառայել աշխարհի բոլոր ժողովուրդների միասնության նվաճմանը:

Հիշենք, սակայն, որ միասնությունը բխում է սիրուց, իսկ բաժանվածությունը ատելության դրսևորում է: Աբդուլ-Բահան սովորեցնում էր, որ մարդկությանն Աստծուց տրված սերը կարևորագույն պատգամներից մեկն է, որ այդ պատգամը տրված է բոլոր կրոնական ուսմունքներում: Այստեղից հետևում է, որ առանձնացումը և դրա հետ կապված բախումները բխում են հավատի պակասությունից: Այդ պատճառով բահայիները Բահաուլլայի ուսմունքի շատ տեսակետներ (օրինակ, տղամարդու և կնոջ հավասարության դրույթը) դիտում են և՛ որպես համընդհանուր կրոնական ճշմարտության արտահայտում, և՛ որպես հասունացած սոցիալական խնդիրների լուծման ազդեցիկ միջոց:

6. Աստված, Նրա Հայտնիչները և մարդը

Հենվելով նախորդ գլխում շարադրված Բահայի ուսմունքների համառոտ տեսության վրա՝ դիմենք այժմ պատասխանների ավելի խորը վերլուծությանը, որոնք տվել է Բահաուլլան ցանկացած կրոնի հիմքում ընկած հարցերին: Ո՞րն է մարդկային գոյության իմաստը: Ո՞րն է մարդու իսկական բնույթը և ի՞նչ դեր է խաղում կրոնը նրա հոգևոր զարգացման մեջ: Ի՞նչ է «բարությունը» և ի՞նչ է «չարը»: Ո՞րն է մարդու պարտքն Աստծո առջև և ի՞նչ տեղ է զրավում կյանքում հոգևոր սկիզբը: Վերջապես, Բահայի ուսմունքում ո՞րն է «Աստծո հայտնություն» գաղափարի նշանակությունը և ինչպե՞ս է այդ գաղափարը հարաբերակցվում Աստծուց տրված գաղափարների հետ, որոնք ծանոթ են այլ մեծ ուսմունքների մասին պատկերացում ունեցող ցանկացած մարդուն:

ԲԱՀԱՅԻ ՀԱՎԱՏԸ ՄԱՐԴՈՒ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Շատ մարդիկ ապրում են՝ չմտածելով այն մասին, թե ինչ է կյանքը և որն է իրենց սեփական գոյության իմաստը: Կողքից այդպիսի մարդու կյանքը կարող է թվալ բավականին հազեցված: Նա ամուսնանում է, երեխաներ է ունենում, զբաղվում է բիզնեսով, գիտությամբ կամ երաժշտությամբ: Սակայն նա բոլորովին չի ըմբռնում իր գործողությունների իմաստը: Նրա կյանքում բացակայում է ընդհանուր նպատակը, որը կարող է իմաստավորել առանձին իրադարձություններ: Նա ոչ մի պատկերացում չունի սեփական բնույթի և իր մարդկային էության մասին:

Բահաուլլան սովորեցնում է, որ գոյության աննպատակության դեմ կա միայն մեկ միջոց՝ իսկական հավատ: Եթե Արարիչ չկա, իսկ մարդն (ինչպես դա ենթադրում են այսօր աշխարհում շատերը) ընդամենը թերմոդինամիկական համակարգի պատահական արդյունք է, ապա կյանքի իմաստի մասին խոսելն էլ անիմաստ է: Այդպիսի մոտեցման դեպքում մարդը ոչ այլ ինչ է, քան անհարատև, գիտակցությամբ շնորհված կենդանի օրգանիզմ, որը ձգտում է մի բանի՝ քանի դեռ տևում է անցավոր գոյությունը, լիարժեք կերպով վայելել բոլոր մատչելի հաճույքները և, ըստ հնարավորության, խուսափել տառապանքներից: Կյանքն իմաստավորված է այնքանով, որքանով այնտեղ ներկա է Արարիչը, ով Իր արարումն ուղղորդում է որոշակի նպատակի: Բահաուլլան այսպես է խոսում Աստծո Նախախնանության մասին:

«Նպատակը, որի համար Աստված արարել է մարդուն, եղել է և հավերժ կյանի այն, որ թույլ տա նրան ճանաչել իր Արարչին և ձեռք բերել Նրա Ներկայությունը: Այս ամենաբարձր նպատակի, այս գերագույն մտահաղացման մասին ոչ երկիմաստ վկայում է ամեն Աստվածային Գիրք, այս են անհերքելիորեն հաստատում Աստծով ներշնչված Սուրբ Գրվածքները»:

Կյանքն անվերջ, բերկրանքով լի հոգևոր ըմբռնում է, աճի և զարգացման անվերջ գործընթաց: Իր երկրային գոյության սկզբնական փուլերում մարդն անցնում է աշակերտության փուլը: Այդ ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները կազմում են մտավոր և հոգևոր հիմք, որն անհրաժեշտ է ապագա կատարելագործման համար: Երբ մարդը մուտք է գործում հասունության շրջան, նրա հետագա հոգևոր աճն ամբողջությամբ կախված է իրենից: Բախվելով նյութական աշխարհի դժվարություններին ու տառապանքներին՝ մարդն էլ ավելի խորն է ըմբռնում իրականության հոգևոր հիմքը. լուսավորված միտքն օգնում է էլ ավելի սերտ կապ հաստատել սեփական անձի, մերձավորների և Աստծո հետ: Աճի և զարգացման գործընթացը շարունակվում է նաև ֆիզիկական գոյության սահմաններից դուրս՝ հոգևոր աշխարհում, որն այնքանով է ավելի լայնարձակ ֆիզիկականից, որքանով ֆիզիկական աշխարհն ավելի լայնարձակ է մայրական արգանդից:

Վերջին պնդումը հիմնված է բահայիների դավանած անմահ ոգու և մարմնական մահից հետո դրա գոյության գաղափարի վրա: Բահայի հավատը սովորեցնում է, որ մարդն իր իսկական էությանը հոգևոր էակ է: Մեզանից յուրաքանչյուրն ունի ոչ միայն ֆիզիկական մարմին, այլև բանական հոգի, որն արարել է Աստված: Հոգին նյութական չէ և մարմնից անկախ է: Մարմինը կարելի է դիտել որպես հոգու գործիք, որն օգնում է դրան գոյատևել ֆիզիկական աշխարհում: Հոգին ծնվում է ֆիզիկական մարմնի բեղմնավորման պահին և շարունակում է գոյություն ունենալ մահից հետո: Հոգին, որը նաև ոգի են անվանում, «ես»-ի՝ մարդու գիտակցության, նրա անհատականության կրողի կացարանն է:

Հոգու զարգացման (կատարելագործման) մեջ է մարդկային գոյության նպատակը: Հոգին զարգանում է Աստծուն ընդառաջ, և դրան ուղեցույց թել է ծառայում Աստծո մասին միտքը և սերն առ Աստված: Որքան ավելի ենք մենք ըմբռնում Աստծուն, այնքան ավելի մեծ է մեր սերն առ Աստված և այնքան ավելի սերտ է մեր կապն Արարչի հետ: Որքան ավելի ենք մենք մոտենում Աստծուն, այնքան ավելի կատարյալ ենք դառնում, մեր գործողություններում այնքան ավելի նկատելի է դառնում աստվածայինի հետքը:

Բահաուլլան սովորեցնում է, որ Աստծո հատկությունների մասին մտորելու ունակության մեջ է մարդկային հոգու էությունը: Դրանում է արտահայտվում այն, որ մարդը ստեղծված է «Աստծո պատկերով և Աստծո նման»: Աստվածայինը խորթ չէ մարդկային հոգուն: Այն ննջում է այնտեղ այնպես, ինչպես սերմերում թաքնված են ծաղկի բույրը, գույները և կենսական ուժը: Բայց, որպեսզի դրանք արտահայտվեն, ծաղիկը պետք է աճեցնել: Բահաուլլան այսպես է խոսում այդ մասին.

«Ամեն արարվածի նվիրական բնույթին գեղեց Նա Իր անուններից մեկի լույսը և դարձրեց այն Իր հատկանիշներից մեկի փառքի արտահայտումը: Իսկ մարդկային բնությունը Նա դարձրեց Իր բոլոր անունների և հատկանիշների կենտրոնակետ և հենց Իր Անձնավորության հայելի: Բոլոր արարումներից միայն մարդն օժտվեց այդքան մեծ բարիքով, այդքան անանց ընծայով»:

Բահայի հավատի Սուրբ Գրքերում հանդիպում է «հոգևոր աճ» գաղափարը: Հոգևոր աճի տակ հասկացվում է Աստծո Կամքի համաձայն գործելու ընդունակության աստիճանաբար ձեռքբերումը և սեփական անձի և մերձավորների հետ հարաբերություններում Աստծո էությունն ու ոգին արտահայտելու ունակությունը: Բահաուլլան սովորեցնում է, որ իսկական, անանց երջանկությունը կարելի է գտնել միայն հոգևոր զարգացման ուղիներում:

Նրան, ով գիտակցում է իր հոգևոր էությունը և գիտակցաբար ձգտում հոգևոր ինքնակատարելագործման, Բահաուլլան անվանում է «փնտրող»: Բահաուլլայի կարծիքով, նա պետք է ունենա հետևյալ հատկանիշները.

«Այս փնտրողը պետք է ամեն ժամ ապավինի Աստծուն, նա պետք է հրաժարվի երկրի մարդկանցից, հրաժարվի հողի աշխարհից և ամուր բռնվի Նրանից, Ով Տերերի Տերն է: Նա չպետք է գերազանցի որևէ մեկին, այլ իր սրտի հուշատախտակից պետք է մաքրի անչափ գոռոզության և փառամոլության հետքը, պահպանի համբերություն և հնազանդ լինի Աստծո կամքին, պահպանի լռություն և ձեռնպահ մնա աննպատակ խոսքերից: Քանզի լեզուն մարմնող կրակ է, իսկ խոսքի անչափավորությունը մահացու թույն է: Սովորական կրակը խժռում է մարմինը, իսկ լեզվի կրակը խժռում է և՛ սիրտը, և՛ հոգին: Առաջինի ուժը ժամանակավոր է, իսկ երկրորդի ազդեցությունը տևում է դարեր:

Այս փնտրողը պետք է չարախոսությունը համարի ծանր մեղք և չենթարկվի դրա ազդեցությանը, քանզի չարախոսությունը հանգնում է սրտի լույսը և սպանում հոգու կյանքը: Նա պետք է բավարարվի քչով և ազատվի բոլոր անչափ ցանկություններից: Թող նա գնահատի այս աշխարհից հրաժարվողների հասարակությունը և պարծենկոտ ու ճղճիմ մարդկանցից խուսափելու մեջ մեծ օգուտ տեսնի: Յուրաքանչյուր օրվա արշալույսին նա պետք է հաղորդություն առնի Աստծուց և ամբողջ հոգով արձագանքի իր Սիրեցյալի կամքին: Նա պետք է ամեն պիղծ միտք այրի Նրա Անվան սիրով լի հիշատակման կրակում և կայծակի արագությամբ հեռանա բոլորից, բացի Նրանից: Նա պետք է օգնի չունևորներին և բարերարություն անի կարիքավորներին: Նա պետք է բարությամբ վերաբերվի կենդանիներին և ավելի շատ՝ իր մերձավորներին, որ օժտված են խոսքի ունակությամբ: Առանց տատանումների նա իր կյանքը կտա Սիրեցյալի համար... Նա չի ցանկանա ուրիշներին այն, ինչ չի ցանկանում ինքն իրեն և չի խոստանա այն, ինչ ի գործու չէ կատարել... Նա կների մոլորվածին և երբեք չի արհամարհի նրա ցածր դիրքը, քանզի ոչ ոք չգիտի իր սեփական վերջը: Որքան հաճախ մեղավորը մահվան ժամին հասկացել է հավատի էությունը և հագեցնելով իր մշտական ծարավը՝ իր թռիչքը սլացրել է դեպի երկնային Բազմություններ: Եվ որքան հաճախ նվիրվածն ու հավատարիմն այն պահին, երբ հոգին անջատվում էր մարմնից, փոխվում էր այնպես, որ ընկղմվում էր անդունդի կրակի մեջ:

Այս ծանրակշիռ և համոզիչ խոսքերով Մենք ցանկանում ենք ներշնչել փնտրողին, որ նա պետք է ամեն բան, բացի Աստծուց, համարի անցողիկ և ամեն բանին, բացի Նրանից, Ով ամեն պաշտամունքի Առարկա է, վերաբերվի այնպես, ինչպես ոչ մի արժեք չունեցողի:

Այդպիսին են վեհ մարդկանց հատկանիշները և ոգով բարձրների տարբերիչ հատկությունները... Երբ հրաժարված և սրտանց փնտրող օտարականը համապատասխանում է այս կարևորագույն պահանջներին, այն ժամանակ է միայն նա արժանի իսկական փնտրողի կոչման»:

Բահաուլլան կրոնի մեծ հոգևոր նպատակը տեսնում էր այն բանում, որ օգնի մարդուն գիտակցել իր սեփական էությունը և հասկանալ Աստծո Կամքն ու Աստծո Կամքը իր վերաբերյալ: Աստծուց Իր Հայտնիչների միջոցով մարդուն ուղարկված հոգևոր ճշմարտությունները պետք է մեզ տանեն դեպի հոգևոր բնույթ ունեցող կենսական գործընթացների ճիշտ ընկալում: Հենվելով այդ ճշմարտությունների իմացության վրա՝ մենք կարող ենք ըմբռնել գոյության օրենքները: Ավելին, հոգևոր աճն ամփոփված է Աստծո Հայտնիչների ուսմունքների հետ համերաշխ ապրելու փորձի մեջ: Օրինակ՝ հետևելով Բահաուլլայի խրատներին և հրաժարվելով նախապաշարմունքներից և սնահավատություններից՝ մարդը կարող է ավելի լավ հասկանալ և ավելի շատ սիրել մերձավորներին, իսկ այդ, իր հերթին, նրա կյանքն ավելի բովանդակալից կդարձնի:

Բահաուլլան բազմիցս կրկնել է, որ մեզ համար հոգևոր աճի և զարգացման միակ աղբյուրը Աստծո Հայտնիչների գալուստն է և նրանց բերած օրենքներն ու Տիրոջ ուսմունքը: Առանց դրա, որքան էլ մենք ջանանք, կյանքի հոգևոր իմաստը հասկանալու մեր բոլոր փորձերն անպտուղ կմնան: Ահա, թե ինչու, բահայիների տեսակետից, Աստծո հայտնած կրոնը մարդու՝ որպես հոգևոր էակի, կայանալու բանալին է:

Խոսելով Աստծո Հայտնությունների և մարդու հոգևոր զարգացման վրա դրանց ազդեցության մասին՝ Բահաուլլան նշում էր.

«Այս ճշմարտության Ցերեկային Լուսատուի Ուսմունքի միջոցով ամեն մարդ կկատարելագործվի ու կզարգանա, մինչև հասնի այնպիսի դիրքի, երբ կկարողանա արտահայտել իր մեջ թաքնված բոլոր պոտենցիալ ուժերը, որոնցով օժտված է նրա ներքին իսկական էությունը: Ահա, թե հանուն ինչի են յուրաքանչյուր դարում և հոգևոր բոլորաշրջանում մարդկանց մեջ հայտնվում Աստծո Մարգարեները և Նրա Ընտրյալները՝ ցուցաբերելով ուժ, որը բխում է միայն Աստծուց և հզորություն, որը միայն Հավերժն է ընդունակ հայտնել»:

Քանի որ կրոնական ուսմունքները շոշափում են նաև հասարակության կյանքի կառուցման հարցերը, բահայիները ենթադրում են, որ ճգնաժամային և հրաժարունակ հասարակության և մարդկանց հետ շփվելուց, նշանակում է հեռացում կյանքից և այդ, որպես կանոն, չի նպաստում մարդու հոգևոր աճին, այն դեպքում, երբ մեկուսացման կարճատև շրջանները միանգամայն արդարացված են և օգտակար: Մարդը հասարակական էակ է և այդ պատճառով առավելագույն զարգացման է հասնում իր նմանների հետ փոխազդեցության ժամանակ: Իսկապես, սերտ համագործակցությունը, որը հենվում է մերձավորի նկատմամբ սիրո և փոխադարձ համերաշխության վրա, հոգևոր աճի կարևորագույն գործոնն է:

Բերենք մարդու համար Աստծո նախախնամության մասին Բահաուլլայի արտահայտությունը, որը կիրառելի է կրոնի երկու տեսակետների համար՝ հոգևոր և սոցիալական.

«Աստված ուղարկում է Իր Մարգարեներին երկակի նպատակով: Առաջինը՝ ազատել մարդկային որդիներին տգիտության խավարից և տանել նրանց դեպի իսկական ըմբռնման լույսը: Երկրորդը՝ մարդկության համար ապահովել խաղաղություն և հանգիստ և տալ բոլոր միջոցները, որոնց միջոցով դրանք կարող են հաստատվել»:

Այլ խոսքերով, մարդկության հասարակական առաջընթացը, եթե այն ընթացում է ճիշտ ուղղությամբ, պետք է արտացոլի նրա հոգևոր աճը.

«Բոլոր մարդիկ ստեղծված են, որպեսզի առաջ տանեն հավերժ զարգացող քաղաքակրթությունը: Ամենազորը Ինձ վկա՝ մարդուն վայել չէ վարվել վայրի գազանների պես: Նրա արժանապատվությանը վայել առաքինություններն են համբերությունը, բարությունը, կարեկցանքը և սերը դեպի երկրագնդի բոլոր ժողովուրդներն ու ցեղերը»:

Հոգու (կամ ոգու) և ֆիզիկական մարմնի կապի մասին Բահաուլլան ասում էր հետևյալը.

«Գիտցի՛ր, որ մարդկային հոգին օժված է ի վերուստ և ազատ է մարմնի և բանականության բոլոր թուլություններից: Երբ հիվանդը ցուցաբերում է թուլության նշաններ, դա բացատրվում է խոչընդոտներով, որոնք առաջացել են նրա հոգու և մարմնի միջև, քանզի հոգին ինքնին չի դիպչում ցանկացած մարմնական թուլությունների... Իսկ երբ հոգին լքում է մարմինը, այն ձեռք է բերում այնպիսի իշխանություն և ցուցաբերում է այնպիսի հզորություն, որոնց հետ չի համեմատվի

ոչ մի ուժ երկրի վրա... Նայիր ամպերի հետևում թաքնված արևին: Թվում է, որ դրա փայլը նվազել է՝ չնայած իրականում այդ լույսի աղբյուրը մնացել է նույնը: Մարդկային հոգին կարելի է նմանեցնել արևին, իսկ ամբողջ երկրայինը դիտել որպես դրա մարմինը: Մինչև արտաքին խոչընդոտը չկանգնի դրանց միջև, մարմինն ամբողջությամբ կարտացոլի հոգու լույսը և կսնվի դրա ուժով: Իսկ երբ դրանց միջև արգելք է առաջանում, թվում է, թե այս լույսը խավարում է... Մարդկային հոգին արև է, որով մարմինն օծվում է և ամրապնդվում: Այդպես է պետք դիտել այն»:

Հոգին ոչ միայն շարունակում է գոյատևել մահից հետո, ավելին՝ այն հավերժ է: Բահաուլլան գրում է.

«Գիտցի՜ր ճշմարիտ, որ հոգին՝ բաժանվելով մարմնից, շարունակում է իր զարգացումը, մինչև հասնում է Աստծո ներկայության այնպիսի կերպարով ու վիճակով, որոնց վրա չեն կարող ազդել ոչ դարերի շրջապտույտները, ոչ այս դարի ճակատագրի անակնկալները: Եվ կկենա այն այնքան, որքան կկենա Աստծո Արքայությունը, և Նրա տիրապետությունը»:

Խորհելով բանականությամբ օժտված հոգու անմահության մասին՝ Աբդուլ-Բահան նշում էր, որ վաղ, թե ուշ մասնիկներից բաղկացած ամենը կքայքայվի.

«Հոգին մասնիկների զուգակցում չէ, այն բաղկացած չէ բազմաթիվ հյուլներից: Հոգին բաղկացած է անբաժանելի էությունից և այդ պատճառով հավերժ է: Նյութական աշխարհի օրենքները հոգուն չեն կարող տիրել: Հոգին անմահ է»:

Բահաուլլան սովորեցրել է, որ մարդը գոյություն չունի մինչև իր երկրային կյանքը: Հոգին բազմիցս չի վերածնվում տարբեր մարմիններում: Բահաուլլայի պնդմամբ, ընդհակառակը, հոգին իր զարգացման մեջ միշտ սլանում է առ Աստված՝ հեռանալով նյութական աշխարհից: Մարդկային էակը՝ ինը ամիս կենալով մոր արգանդում, պատրաստվում է մուտք գործել երկրային կյանք: Այդ ինն ամիսների ընթացքում պտուղն աստիճանաբար ձեռք է բերում այն ամենը, ինչ իրեն գոյության համար անհրաժեշտ կլինի ֆիզիկական աշխարհում (այսինքն, աչքեր, վերջույթներ և այլն): Անցկացնելով համեմատություն՝ ֆիզիկական աշխարհը կարելի է անվանել մայրական արգանդ, որտեղ հոգին պատրաստվում է ծնվելու հոգևոր աշխարհում: Երկրային կյանքը, այսպիսով, նախապատրաստական շրջան է, երբ մենք պետք է ձեռք բերենք այլ աշխարհում կյանքի համար անհրաժեշտ հոգևոր և մտավոր հատկանիշներ:

Սակայն, էական տարբերությունն այն է, որ մոր արգանդում օրգանիզմի ֆիզիկական զարգացումը տեղի է ունենում ինքնաբերաբար, այն դեպքում, երբ հոգևոր և մտավոր կատարելագործումն այս աշխարհում ամբողջությամբ կախված է մարդու գիտակցական ջանքերից.

«Աննման Արարիչն արարեց բոլոր մարդկանց նույն նյութից և բարձրացրեց նրանց էությունն Իր բոլոր մյուս արարումներից վեր: Այդ պատճառով հաջողությունը կամ անհաջողությունը, հաղթանակը կամ պարտությունը կախված են մարդու սեփական ջանքերից: Որքան ավելի հաստատակամ է նա իր ճիգերում, այնքան ավելի հեռու է գնում»:

Բահայի հավատի Սուրբ Գրքերում բազմիցս հիշատակվում է այն մասին, թե որքան մեծ է Աստծո ողորմածությունը մարդկության նկատմամբ: Սակայն, ամեն անգամ նշվում է, որ մարդը պետք է արձագանքի Աստծո կոչին, որպեսզի այդ ողորմածությունը թափանցի նրա հոգու մեջ և վերափոխի այն. «Որքան էլ առատ լինի Աստծո վերին օգնությունը,

առանց մարդու մշտական գիտակցական ջանքերի դրա պտուղները կլինեն վաղան-ցիկ»: Այսպիսով, Բահայի ուսմունքի համաձայն, հոգու փրկությունը ոչ միայն ի վերուստ տրված ընծա է, այլ, ավելի շուտ, երկխոսություն, համատեղ ստեղծագործություն, որում գլխավոր մասնակիցն Աստված է, սակայն, մարդուց պահանջվում են լուրջ և գիտակցված ջանքեր:

Քանի որ մարդն իր բնությամբ հոգևոր էակ է, նրա հնարավորությունները որոշվում են, առաջին հերթին, նրա հոգու հատկանիշներով: Այլ խոսքերով, մարդու հոգին նրա բոլոր մտավոր ունակությունների և հոգևոր հատկանիշների կենտրոնակետն է՝ չնայած այն կարճատև ժամանակաշրջանում, երբ մարդն ապրում է երկրի վրա, այդ բոլոր հատկանիշները կապված են մարմնի հետ: Թվարկենք դրանցից որոշները, որոնք Բահաււլլան անվանում էր հոգու ունակություններ. 1. խելքը, այսինքն, տրամաբանական մտածելակերպ, վերլուծելու ունակություն, 2. կամքը, այսինքն, ինքնուրույն գործելու ունակություն և 3. «սիրտ»ը, այսինքն, գիտակցաբար, անշահախնդիր, զոհաբերաբար սիրելու ունակություն (երբեմն այդ ունակությունն անվանում են ալտրուիզմ՝ այլասիրություն):

Այդ ունակությունները բնորոշ են միայն մարդուն: Կենդանիները և կյանքի այլ ձևերի ներկայացուցիչները չունեն բանական հոգի: Կենդանական աշխարհում դիտվում է մտքի և հուզականության որոշ նմանություն, սակայն, դա ոչ մի ընդհանուր բան չունի մարդկային մտածելակերպի և ինքնագիտակցության հետ: Կենդանիների վարքը թելադրվում է բնազդներով, որոնք կազմում են նրանց ֆիզիկական գոյության անբաժանելի մասը: Իսկ մտածողության, վերլուծության ունակությունը, ինչպես նաև կամքը, մարդու տարբերիչ առանձնահատկություններն են: Կենդանին ընդունակ չէ ըմբռնել գոյության իմաստը:

Սակայն, Բահայի հավատը ակնհայտորեն ուսուցանում է, որ մարդկային ռասան հասել է իր ներկա ֆիզիկական վիճակին ցածրագույն աստիճաններից ավելի բարձր աստիճաններին անցնելու աստիճանաբար կատարվող էվոլյուցիայի ճանապարհով: Բնությունը մարդկությանը ծառայել է որպես այն, ինչ մարդու համար ծառայում է մոր արգանդը: Ահա, թե ինչ էր այդ առիթով ասում Աբդուլ-Բահան.

«... մարդն իր գոյության սկզբում Երկրագնդի արգանդում, ինչպես սաղմը մոր արգանդում, աստիճանաբար աճեց և զարգացավ, անցավ մի ձևից մյուսին, մի վիճակից մյուսին, մինչև հայտնվեց իր ամբողջ գեղեցկությամբ և կատարելությամբ, ուժի և հնարավորությունների լիությամբ: Ակնհայտ է, որ սկզբում նա օժտված չէր ներկա հաճելի արտաքինով, նրբագեղությամբ և պերճաշուքությամբ, և որ նա միայն աստիճանաբար ձեռք բերեց այս տեսքը, ձևը, գեղեցկությունն ու նրբագեղությունը»:

Միևնույն ժամանակ, Աբդուլ-Բահան մշտապես նշում էր, որ իր ֆիզիկական էվոլյուցիայի բոլոր փուլերում, այդ թվում նաև վաղ փուլում, մարդկային ռասան կենդանական աշխարհի մաս չէր, այլ կազմում էր հատուկ տեսակ.

«...սաղմն անցնում է տարբեր վիճակներով և մի կողմ է թողնում բազմաթիվ աստիճաններ... մինչև առաջանում են բանականության և հասունության նշաններ: Նույն ձևով մարդու զարգացումը Երկրի վրա ծագումից մինչև ներկայիս վիճակը, ձևի և դիրքի ձեռքբերումն անհրաժեշտ կերպով պետք է տևեր երկար ժամանակ և անցներ շատ փուլեր: Բայց հենց ծագման պահից մարդն իրենից ներկայացնում է որոշակի տեսակ: Այդ նույն ձևով մարդու սաղմը մոր արգանդում սկզբից այլ տեսք ուներ: Այնուհետև այն ընդունում է մի ձևը մյուսի հետևից, անցնում է մի վիճակից մյուսը, անցնում է մի տեսքից մյուսին, մինչև հայտնվում է ամբողջ գեղեցկությամբ և կատարելությամբ: Բայց անգամ մոր արգանդում, երբ նա ունի այդքան անսովոր ձև ու արտաքին,

որն ապշեցուցիչ կերպով տարբերվում է նրա ներկայիս արտաքինից, նա բարձրագույն տեսակի սաղմ է, այլ ոչ կենդանու. նրա ձևային տեսակը և էությունը փոփոխությունների չեն ենթարկվում»:

Այսպիսով, իր ֆիզիկական էվոլյուցիայի անգամ ցածրագույն փուլում, երբ մարդն իր տեսքով հիշեցնում էր կենդանական աշխարհի ներկայացուցչի, նա միանգամայն հատուկ բարձրագույն տեսակ էր և միշտ օժտված էր ոչ նյութական բանական հոգով, ինչը, ինչպես արդեն ասվեց, բոլոր կենդանի էակների մեջ մարդուն դնում է բացարձակ դիրքի:

Սակայն, միևնույն ժամանակ, մարդու ֆիզիկական մարմինը բաղկացած է քիմիական տարրերից և գործում է՝ ենթարկվելով ֆիզիոլոգիայի օրենքներին, որոնք ընդհանուր են մարդու և կենդանիների համար: Քանի դեռ տևում է մեր երկրային գոյությունը, մենք զգում ենք նույն ֆիզիկական պահանջները, որոնք զգում են նաև կենդանիները, և մեր մարմինը նույնքան խոցելի է: Սովը, սեքսուալ ձգտումը, վախը, ցավը, զայրույթը, հիվանդությունները՝ մարմնական և հոգևոր, այդ ամենը, ինչպես և շատ այլ բաներ, մեզ մոտեցնում են կենդանիներին: Մարդու երկակի բնույթը ստեղծագործական ազդակի աղբյուր է. ֆիզիկական պահանջները և մարմնական ցանկությունները երբեմն մղում են մեզ նախնական կենդանական արարքների, այն ժամանակ, երբ հոգևոր սկիզբը ստիպում է սլանալ դեպի միանգամայն այլ նպատակներ: Բահաուլլան պնդում էր, որ այն ջանքերը, որոնք ուղղված են ֆիզիկական ցանկությունները սանձելուն և դրանք ստեղծագործական հունով ուղղելուն, մարդկային աճի անհրաժեշտ պայման են: Մենք հասնում ենք կատարելության շնորհիվ հոգևոր և ֆիզիկական բնույթների ներդաշնակության:

Եթե մենք ջանքեր չգործադրենք, որպեսզի մեր ֆիզիկական ուժերը ուղղենք հոգևոր բնույթին ծառայելուն, կրքերը վեր կբարձրանան: Մենք կդառնանք մեր մարմնական ցանկությունների ստրուկներ և նշանակալիորեն կկորցնենք մեր հոգևոր բնույթին հետևելու ունակությունը: Օրինակ՝ թմրադեղերին կամ ալկոհոլին հակումը խոչընդոտ է հանդիսանում անձի հոգևոր աճի ճանապարհին: Առանց նման վնասակար սովորույթներից հրաժարվելու առաջխաղացումն անհնար է: Այդպես էլ նյութական նպատակների նվաճման մշտական ձգտումը ոչ այլ ինչ է, քան ուժերի և ժամանակի անիմաստ վատնում, որոնք տրված են մեզ մեր իսկական, հոգևոր «ես»-ի կատարելագործման համար:

Բահայի հավատը (և դրանում է դրա տարբերությունը բազմաթիվ այլ կրոնական ուսմունքներից և փիլիսոփայական ուղղություններից) չի համարում մարմնական ցանկությունները «վատ», «մեղսագործ»: Աստծո ամեն արարվածը բարիք է իր հիմքում: Իսկապես, մարդկային մարմնի նպատակն է ծառայել որպես գործիք, որն անհրաժեշտ է հոգու զարգացման համար: Երբ հոգին աստիճանաբար իրեն է ենթարկում մարմնական սկիզբը, այն ստանում է ավելի լիարժեք արտահայտվելու հնարավորություն: Վնասակար են անսանձ կրքերը, որոնք իրեն են ենթարկում մարդուն, քանզի հատկապես դրանք են դանդաղեցնում նրա հոգևոր աճը:

Օրինակ՝ սեքսուալ ձգտումը համարվում է Աստծուց մարդուն տրված ընծա: Մեր կամքին ենթարկված, ամուսնության կապերով օժված՝ այն դառնում է հոգու հատկություններից մեկի՝ սիրո հզոր միջոց: Սակայն, այդ ընծայի չարաշահումը կործանարար է, քանզի տանում է դեպի դատարկ և արատավոր կյանք:

Լինելով հոգու գործիք երկրային կյանքի ընթացքում՝ մարմինը, համապատասխանաբար, խնամք է պահանջում: Բահաուլլան կտրուկ դատապարտում էր ճգնավորության ցանկացած ձևեր և այլ ծայրահեղություններ՝ կապված ցանկասիրության ճնշման հետ, և կոչ էր անում հետևել առողջ սովորություններին: Բահայի հավատի Սուրբ

Գրքերում կան բազմաթիվ գործնական ցուցմունքներ, որոնք վերաբերում են մարմնի խնամքին: Խոսքը գնում է ճիշտ սնվելու, կանոնավոր լվացումների և այլնի մասին: Բահայի ուսմունքում շարադրված այդ և բազմաթիվ այլ կանոնների հիմքում դրված է չափավորության սկզբունքը՝ այն ամենը, ինչ չափավոր քանակով է, օգտակար է, բայց դառնում է վնասակար, եթե հասցվում է ծայրահեղության:

Բահայի ուսմունքն ընդունում է, որ մարդկային օրգանիզմի զարգացման վաղ շրջանում լուրջ ազդեցություն կարող են թողնել մարդուց անկախ այնպիսի գործոններ, ինչպիսիք են ժառանգական հիվանդությունները, սխալ կամ ոչ լիարժեք սնունդը: Սակայն, նման գործոնների ազդեցությունը հավերժ չէ, և դրանք իրենք իրենցով չեն կարող հոգուն որևէ վնաս պատճառել: Ամենաշատը, ինչ կարող է սպառնալ մարդուն՝ կապված այդպիսի անբարենպաստ հանգամանքների հետ, դա հոգևոր աճի ժամանակավոր դանդաղեցումն է: Բայց անգամ այդ դեպքում այդ գործոնների բացասական ազդեցությունը կարող է հաղթահարվել հոգևոր զարգացման հետագա հզոր թռիչքով դեպի առաջ: Բահայի ուսմունքի համաձայն, հաճախ մարդու կայուն և խիզախ հակազդումն անբարենպաստ գործոններին (որ ոլորտին էլ դրանք վերաբերեն՝ ֆիզիկական, զգայական կամ մտավոր) դառնում է անձնավորության հզոր հոգևոր աճի աղբյուր: Հետագայում մարդը հասկանում է, որ դժբախտությունը վերափոխվել է բարիքի և, վերջին հաշվով, օգտակար էր նրա հոգուն: Այսպիսով, ընդունելով, որ արտաքին գործոնները կարող են թողնել թեև ժամանակավոր, սակայն, իր ուժով նշանակալի ազդեցություն հոգևոր աճի գործընթացի վրա՝ բահայիները միաժամանակ հեռու են նրանից, որ կիսեն այն փիլիսոփա-մատերիալիստների տեսակետները, ովքեր մարդկային անձը դիտում են ընդամենը որպես մի շարք գենետիկական և արտաքին գործոնների միասնական ազդեցության արդյունք:

«... բնությանը բնորոշ է առաջընթաց շարժում: Ցանկացած նյութական օբյեկտ սկզբից կատարելագործվում է, այնուհետև հասնելով իր զարգացման բարձրագույն աստիճանին՝ սկսում է անկում ապրել: Այդպիսին է ամբողջ ֆիզիկական աշխարհը կառավարող օրենքը... Բայց ինչ վերաբերում է մարդկային հոգուն, ապա հոգու համար անկում գոյություն չունի: Հոգուն բնորոշ է միայն շարժումը դեպի կատարելություն. աճն ու զարգացումը՝ ահա հոգու սկզբնական հատկությունները...»

Անցավորության աշխարհը հակասությունների աշխարհ է. ամեն բան անխուսափելիորեն շարժվում է կամ դեպի ծաղկում կամ դեպի անկում: Իսկ ոգու արքայությունում շարժումը դեպի ետ անհնարին է. այստեղ ամեն բան սլանում է դեպի իդեալ»:

«Հոգևոր աճը՝ որպես պայքարի և տառապանքների հետևանք» թեման հաճախ շոշափվում է Բահայի ուսմունքներում: Ճակատագրի շատ անհաջողություններից կարելի էր խուսափել, եթե մարդիկ չլինեին այդքան անհոգ: Ինչ-որ չափով տառապանքն անհրաժեշտ է հոգու աճի համար: Իսկապես, չի կարելի չընդունել, որ առանց տառապանքների և ինքնազոհողության հաջողությունն անհասանելի է անգամ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են նյութականը և մտավորը: Ուրեմն, զարմանալի չէ, որ ավելի կարևոր հոգևոր ոլորտում՝ շարժումը դեպի առաջ պահանջում է նույնպիսի զոհեր:

«Այն ամենը, ինչին ձգտում է մարդը, պահանջում է նրանից ուժերի լարում: Հաջողության և ցանկությունների իրականացման ճանապարհը միշտ անցնում է տառապանքների և զրկանքների միջով: Եթե այդքան դժվար հասանելի է այն ամենը, ինչի ջանում են հասնել մարդիկ այս մահկանացու աշխարհում, ապա ինչ խոսենք Բարձրագույն Աշխարհի մասին»:

Այդ դատողությունները բերում են մեզ մարդու մեջ գոյություն ունեցող բարու և չարի կոնցեպցիային: Աբդուլ-Բահան գրում էր այդ առիթով.

«Արարման մեջ չարիք չկա. ամենը բարիք է: Որոշակի հատկանիշներ ու հակումներ, որոնք որոշ մարդկանց բնորոշ են ի ծնե և ակնհայտորեն դատապարտելի են, իրականում այդպիսին չեն: Օրինակ՝ նորածնի կյանքի հենց սկզբից մենք կարող ենք տեսնել նրա մեջ ազահության, զայրույթի և դյուրաբորբոքության նշաններ: Թվում է՝ կարելի է ասել, թե բարին ու չարն ի սկզբանե առկա են մարդկային բնույթի մեջ, սակայն դա հակասում է բնության և արարման լիարժեք ողորմածությանը: Դրա պատասխանն այսպիսին է՝ ազահությունը, այսինքն, ավելիին ու ավելիին հասնելու ձգտումը, գովելի հատկություն է, եթե այն ճիշտ է օգտագործվում: Այսպես, եթե մարդն ազահ է գիտելիքի և գիտությունների նկատմամբ կամ փափագում է արտահայտել կարեկցանք, առատաձեռնություն և հասնել արդարության, դա շատ գովելի է: Եթե նա ուղղում է իր զայրույթը դաժան գազանների նման արնախում բռնակալների դեմ, դա նույնպես գովելի է: Սակայն, եթե մարդն այդ հատկությունները սխալ է օգտագործում, դրանք արժանի են կշտամբանքի... Նույն կերպ է գործն ընթանում նաև մարդու կյանքի գանձը կազմող բոլոր բնական հատկանիշների հետ. եթե դրանք օգտագործվում են և արտահայտվում օրենքի խախտումով, ապա արժանի են պարսա-վանքի: Այստեղից պարզ է դառնում, որ արարման մեջ միայն բարիք է»:

Հետևաբար, Բահայի հավատը մերժում է «առաջին մեղքի» և այլ ուսմունքների գաղափարը, որոնք պնդում են, թե չարիքը մարդկային բնության հիմքում է: Մեր բոլոր հատկություններն ու ընդունակությունները Աստծուց են և, հետևաբար, պետք է ծառայեն մեր հոգևոր զարգացմանը: Դրա հետ մեկտեղ, Բահայի հավատը չի ընդունում Սատանայի, այլ խոսքով «համաշխարհային չարիքի» գոյությունը: Չարիքը, ինչպես սովորեցնում է Բահայի հավատը, ոչ այլ ինչ է, քան բարու բացակայությունը, մութը՝ լույսի բացակայությունը, ցուրտը՝ ջերմության բացակայությունը: Ինչպես արևը կյանքի միակ աղբյուրն է արևային համակարգում, այնպես էլ Տիեզերքը կառավարող միակ ուժն այն ուժն է, որը մենք անվանում ենք Աստված...

Սակայն, եթե մարդը շրջվի այդ ուժից և չձգտի իր մեջ զարգացնել հոգևոր հատկանիշներ, իսկ նա կարող է այդպես վարվել, քանզի Տերն ընծայել է նրան ընտրության ազատություն, ապա աշխարհ մուտք կգործի անկատարությունը: Մի մարդու հոգում, ինչպես և ամբողջ հասարակության մեջ, այդ դեպքում ծագում են «մութ բծեր», այլ խոսքերով, անկատարության արտահայտումներ: Աբդուլ-Բահան ասում էր, որ չարիքն անկատարություն է:

Նրա մեջ, որ վագրը սպանում և ուտում է այլ կենդանիներին, չարիք չկա. այդ ամենն ինքնապահպանման բնագոյ է: Իսկ, եթե մարդը սպանում է մերձավորին և սնվում նրա մսով, ապա այդ չարիք է, քանզի մարդը կարող է վարվել այլ կերպ: Այդ բնույթի գործողությունները մարդու իսկական բնության արտահայտում չեն:

Որպես համեմատաբար ցածր զարգացում ունեցող էակներ, մենք ունենք որոշ պահանջներ, որոնք այսպես կամ այնպես պետք է բավարարվեն: Մասամբ դրանք ֆիզիկական պահանջներ են՝ շոշափելի, մասամբ՝ հոգևոր՝ ոչ շոշափելի: Աստված մեզ այդպիսին է ստեղծել և հնարավորություն է տվել մեր բոլոր կարիքները բավարարել օրինական ճանապարհով, քանզի նա սիրում է մեզ: Իսկ եթե մենք տգիտության արդյունքում կամ չար կամքով ընտրենք ոչ առաքինի կամ վտանգավոր ճանապարհ, ապա դրանով իսկ կաղավաղենք մեր իսկական «ես»-ը և մեր մեջ կծնենք նոր անհագ ցանկություններ:

«... ընդունակությունները լինում են երկու տեսակի՝ բնական և ձեռքբերովի: Առաջինները, որ տրված են Աստուծուց, իրենց մեջ պարունակում են միայն բարիք՝ Աստծո արարման մեջ չկա չարիք: Իսկ ձեռքբերովի ընդունակությունները չարիքի առաջացման պատճառ են: Օրինակ՝ Աստված բոլոր մարդկանց ստեղծել է այնպես և տվել նրանց այնպիսի կառուցվածք և հատկություններ, որ շաքարն ու մեղրը նրանց համար օգտակար են, իսկ թույնը վնասակար է և քայքայիչ: Այդպիսին են բնածին էությունը և բնածին կառուցվածքը, և դրանք տրված են Աստծուց և հավասարապես բնորոշ են բոլոր մարդկանց: Բայց ահա մարդը սկսում է աստիճանաբար իրեն սովորեցնել թույնի՝ ընդունելով այն ամեն օր փոքր քանակով, այնուհետև ավելացնելով չափը: Եվ գալիս է մի օր, երբ նա արդեն չի կարողանում ապրել՝ չընդունելով ամեն օր մեկ գրամ ափիոն: Այսպիսով, բնական ընդունակությունները լիովին աղավաղվում են: Տեսնում եք, թե որքան ուժեղ կարելի է ազդել բնական ընդունակությունների և կառուցվածքի վրա, որոնք տարբեր սովորությունների և վարժությունների ազդեցության տակ ամբողջովին աղավաղվում են: Արատավոր մարդկանց մեջ պետք է պախարակել ոչ թե նրանց բնածին ընդունակություններն ու բնույթը, այլ ձեռք բերված ընդունակություններն ու բնույթը»:

Բահաուլլան նշում էր, որ հոգևոր զարգացման ճանապարհին ամենազլխավոր խոչընդոտներից մեկը հպարտությունն է կամ էգոցենտրիզմը (եսակենտրոնությունը): Հպարտությունը կապված է աշխարհում իր «ես»-ի դերի չափազանցման հետ, իսկ դրա հետևանքով առաջանում են մերձավորների նկատմամբ գերազանցության հավակնություններ: Հպարտ մարդուն բնորոշ է իրեն համարել սեփական կյանքի և իրեն շրջապատող ամեն ինչի տեր: Նա ձգտում է իշխել մյուս մարդկանց. չէ որ այդ իշխանությունն օգնում է նրան պահպանել գերազանցության պատրանքը: Այսպիսով, հպարտությունը խոչընդոտում է հոգևոր աճին՝ դարձնելով մարդուն սեփական «ես»-ի մասին կեղծ պատկերացումների ստրուկ:

Այլ խոսքերով, Բահայի հավատի բարոյաէթիկական հայեցակետերի ըմբռնման բանալին պետք է փնտրել հոգևոր աճի կոնցեպցիայում. այն ամենը, ինչ նպաստում է հոգևոր աճին, բարիք է, ինչը խոչընդոտում է՝ չարիք: Ըստ Բահայիների տարբերել բարիքը չարիքից (կամ ճշմարտությունը մոլորությունից), նշանակում է բարձրանալ ինքնագիտակցության այնպիսի մակարդակի, երբ տեսնում ես տարբերությունը, թե ինչն է նպաստում հոգևոր աճին և ինչն է խոչընդոտում դրան: Այդ բնույթի գիտելիք կարելի է քաղել միայն մի աղբյուրից՝ Աստծո Հայտնիչների ուսմունքներից:

Բահաուլլան բազմիցս ընդգծել է, որ միայն Հայտնության կրոնն է ընդունակ փրկել մեզ անկատարությունից: Հանուն այդ նպատակի են մարդկանց մոտ գալիս Աստծո Դեսպանորդները, ովքեր մեզ ցույց են տալիս հոգևոր զարգացման ճանապարհը և մեր սրտերը լցնում աստվածային սիրո ոգով: Աստված նրանց ուղարկում է մեզ մոտ, որպեսզի մենք ճանաչենք մեր իսկական «ես»-ը և ձգտենք մոտենալ Նրան: Այդպիսին է կրոնական «փրկության» ճանապարհը: Փրկությունն ինչ-որ «առաջնա-ծին մեղքից» մաքրվելը չէ, դրսից ազդող չար ուժերից կամ սատանայից պաշտպան-վելը չէ: Փրկությունը մարդու ազատումն է ստրկային ենթարկությունից իր ցածրագույն «ես»-ին, այդ արատավոր կախվածությունից, որը մարդու հոգում ծնում է հուսահատություն, իսկ հասարակության մեջ՝ քայքայում: Փրկությունը մեզ իսկական և կատարյալ երջանկության ճանապարհ է ցույց տալիս:

Իրականում կյանքից համընդհանուր անբավարարության զգացման և սարսափելի սոցիալական բախումների պատճառը հեռացումն է իսկական կրոնից և հոգևոր ու կրոնական արժեքների արհամարհումը: Բահայի հավատը սովորեցնում է, որ բոլոր

ժամանակներում փրկությունը պետք է փնտրել Աստծո մեջ՝ դիմելով Նրան և ղեկավարվելով Նրա ուսմունքով, Ում Նա դարձրել է տվյալ դարաշրջանի Ղեսպանորդ: Բահաուլլայի խոսքերով, բավական է լրջորեն մտածել մեր գոյության մասին, և մենք կհասկանանք, որ այս կյանքում մեզ, ըստ էության, ոչինչ չի պատկանում: Այն ամենը, ինչ մենք ունենք՝ իսկ դա մեր մարմինն է և մեր բանականությամբ օժտված հոգին, տվել է մեզ Արարիչը: Այդ ընծաները մենք ստացել ենք Աստծո կամքով և, բնականաբար, պարտավոր ենք Նրան ենթարկվել: Իսկ Նա մեզանից պահանջում է, ինչպես պնդում էր Բահաուլլան, հետևյալը.

«Առաջին պարտականությունը, որ Աստված դրել է Իր Ծառաների վրա, Նրա ճանաչումն է, Ով Նրա Հայտնության Արշալույսն է, Նրա օրենքների Աղբյուրը, Աստծո Էության Ներկայացուցիչը Նրա Գործի Արքայությունում և արարման աշխարհում... Յուրաքանչյուրը, ով հասել է այս բարձրագույն կանգառին, սքանչելի փառքի այս գագաթին, պետք է պահպանի յուրաքանչյուր պատգամը Նրա, Ով աշխարհների Ցանկությունն է: Այս երկու պարտականություններն անբաժանելի են: Դրանցից ոչ մեկն ընդունելի չէ առանց մյուսի»:

Մեկ այլ խրատում Բահաուլլան հիշեցնում է, որ պարտականությունները, որոնք մեզ վրա է դրել Աստված, ծառայում են բացարձակապես մեր իսկ բարօրությանը: Աստված մեր պաշտամունքի կարիքը չունի, Նա միանգամայն ինքնաբավարար է և Իր ցանկացած արարումից անկախ: Այդ պատճառով կասկած չկա, որ Նրա բոլոր գործողությունների խթանիչը սերն է դեպի մեզ: Աստված չունի «անձնական դրդապատճառներ»:

«Ցանկացած պարտականություն, որը Դու սահմանել ես Քո ծառաների համար, որ անվերջ պետք է փառաբանեն Քո մեծությունն ու փառքը, միայն Քո ողորմածության նշանն է նրանց նկատմամբ, որպեսզի նրանք ձեռք բերեն դիրք, որը վայել է իրենց ներքին էությանը, դիրք, որում իրենք իրենց են ճանաչում»:

Ամփոփենք ասվածը: Երկրի վրա մեր գոյության իմաստն այն է, որ մեր հոգին ինչ-որ բան սովորի: Երկրային կյանքն աճի շրջան է և մեր խնդիրն է բացահայտել և զարգացնել մեր մեջ դրված հոգևոր և մտավոր կարողությունները: Այդ կարողությունները մեր անմահ հոգու հատկանիշներն են և, ուրեմն, կկենան հավերժ: Դրանց զարգացումը մեծ ջանքեր է պահանջում, բայց այդ ջանքերը հարյուրապատիկ կվարձատրվեն, քանզի միայն հոգին է մարդուն հաղորդակից դարձնում հավերժությանը: Բարիք է այն ամենը, ինչը նպաստում է մեր հոգևոր աճին, իսկ այն ամենը, ինչը խոչընդոտում է դրան, չարիք է:

Աստծո Ղեսպանորդների գալստյան նպատակը մեր հոգևոր բնույթը գիտակցելու հնարավորություն տալն է: Որպեսզի հոգևոր աճի գործընթացը հաջողությամբ անցնի, մարդը պետք է դիմի Հայտնության կրոնին և ընդունի Աստծո հայտնիչների ուսմունքները: Հոգևոր զարգացման արդյունքն այն է, որ մարդը խորացնում է իր գիտելիքներն Աստծո բնույթի մասին և դառնում է Նրան ավելի մոտ: Միևնույն ժամանակ Հայտնիչների քարոզած հասարակական կառուցվածքի սկզբունքները (եթե դրանք իրականանում են) ծառայում են հոգևոր աճի համար բարենպաստ սոցիալական միջավայրի ստեղծմանը: Հասարակության գոյության իմաստն է, եթե դատենք հոգևորության դիրքերից, նման միջավայրի ստեղծումը:

Բահաուլլան մարդու համար սահմանել է բարոյականության բարձրագույն չափանիշներ և կոչ է արել նրան իր բոլոր ուժերով ձգտել հետևել դրանց: Աստված մեզ ընծայել է կամքի ազատություն, իսկ դա նշանակում է, որ մենք Աստծո առջև պատասխանատու-

վություն ենք կրում մեր բոլոր արարքների համար: Աստված արդար է և մեզանից չի պահանջի ավելին, քան այն, ինչի մենք ի վիճակի ենք հասնել: Միևնույն ժամանակ Աստված գթասիրտ է, և ցանկացած հոգի, որ սրտանց զղջացել է, կարող է հուսալ, որ կներվի իր մեղքերի և մոլորությունների համար:

Ստորև բերված հատվածում, որը լցված է բարձր պոեզիայով, Բահաուլլան նկարագրում է մարդու կերպար, որը հասել է բարոյական բարձրության և կոչ է անում իր հետևորդներին ապրել այդ չափանիշներով:

«Եղիբ առատաձեռն լիության մեջ և շնորհակալ դժվարությունների մեջ: Արժանի եղիբ հարևանիդ վստահությանը, և նայիր նրան պարզ ու բարեկամական հայացքով: Աղքատի համար եղիբ գանձարան, հարուստի համար՝ հորդորում, կարիքավորի կոչին՝ պատասխան, քո երաշխավորության սրբության պահապան: Եղիբ արդար քո դատողություններում և զգուշավոր քո խոսքում: Եղիբ անկողմնակալ բոլորի նկատմամբ և հեզություն ցուցաբերիր ամեն մարդուն: Եղիբ լուսատու խավարում կեցողների համար, ուրախություն՝ տխրողների համար, ջուր՝ ծարավների համար, վշտացողների համար՝ երկինք, հարստահարության զոհի համար՝ հովանավոր և պաշտպան: Թող քո բոլոր գործերը լինեն առաքինի և ազնիվ: Օտարականի համար եղիբ տուն, տառապողի համար՝ սպեղանի, փախստականի համար՝ ուժի աշտարակ: Եղիբ աչքեր կույրի համար և ճանապարհի ցույց տվող կրակ եղիբ մոլորվածի ոտքերի համար: Եղիբ զարդարանք ճշմարտության համար, պսակ՝ հավատարմության համար, հենարան՝ առաքինության տաճարի համար, կյանքի շունչ՝ մարդկության մարմնի համար, դրոշ՝ արդարադատության զորքի համար, լուսատու՝ առաքինության տեսադաշտի համար, ցող՝ մարդկային սրտի մարգագետնին, ծիածան՝ գիտելիքի օվկիանոսի վրա, արև՝ ողորմածության երկնքին, ադամանդ՝ իմաստունության թագի վրա, կրակ, որը շողում է քո սերնդի պատվարի վրա, պտուղ՝ խոնարհության ծառին»:

ԱՍԾՈՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱՍԾՈՆ ՀԱՅՏՆԻՉՆԵՐ)

Ինչպես արդեն ասվեց, Բահայի հավատն անվանում է Աստծո Հայտնիչների կամ Աստծո Մարգարեների գալուստները մարդու և մարդկային հասարակության զարգացման շարժիչ ուժ: Անհնարին է հերքել, որ համաշխարհային մեծ կրոնների հիմնադիրները հսկայական ազդեցություն թողեցին պատմության ընթացքի վրա: Համաշխարհային քաղաքակրթության ճակատագրերի վրա այնպիսի անձնավորությունների ազդեցությունը, ինչպիսիք են Հիսուս Քրիստոսը, Բուդդան, Մովսեսը կամ Մոհամեդը, արտահայտվեց ոչ միայն նրանց ուսմունքների վերափոխող ուժի և արժեքների և այլ մշակութային ստեղծողների նոր համակարգի հաստատման մեջ, մարդկության վրա ուժգին ազդեցություն թողեց նաև հավատի ուսուցիչների կյանքի օրինակը: Այդ անվանի մարդկանց ազդեցությունն անհատի, ինչպես նաև հասարակության կյանքի վրա, ընդունվում է անգամ նրանց կողմից, ովքեր չեն պատկանում նրանց համախոհների թվին:

Այո, մեծ կրոնների հիմնադիրները հզոր խթան հանդիսացան համաշխարհային պատմության համար: Գիտակցելով այդ՝ մենք տալիս ենք փիլիսոփայական հարց՝ ովքե՞ր են նրանք: Այդ հարցը կրոնի փիլիսոփայության մեջ ամենավիճելիներից մեկն է: Առաջարկվում են բազմաթիվ պատասխաններ: Համաձայն որոշ հայեցակետերի՝ կրոնների հիմնադիրները փիլիսոփաներ են, անվանի մտածողներ, ովքեր, հավանաբար, ունեն ավելի խորը և լայնարձակ գիտելիքներ, քան իրենց ժամանակակիցները, այդ թվում և տվյալ դարաշրջանի գիտնականները: Մեկ այլ տեսակետի կողմնակիցները, ի դեմս

կրոնի մեծ ուսուցիչների՝ տեսնում են հենց Աստծուն կամ Նրա երկրային մարմնավորումը: Այդ երկու բևեռային տեսակետների միջև ներգրվում են բազմաթիվ այլ տեսություններ:

Ջարմանալի չէ, որ տվյալ հարցը, որը շոշափում է կրոնի խորքային էությունը, դարձավ մանրամասն դիտարկման առարկա նաև Բահայի հավատի Սուրբ Գրքերում: Բահաուլլայի հիմնական աշխատություններից մեկում՝ Քիթաբ-ի-Իզանում (Վստահության Գրքում), մանրամասն շարադրված են նրա հայեցակետերն Աստծո հայտնությունների բնության վերաբերյալ:

Բահաուլլան պնդում էր, որ Աստծո բոլոր Հայտնիչները միասնական են իրենց մետաֆիզիկական էությամբ և հոգևոր նշանակալիությամբ: Նրանցից ոչ ոք չի գերազանցում մյուսներին: Բահաուլլան գրում էր.

«Նախահավիտենական փառքի այս անարատ Հայելիները, այս Առավոտյան Արշալույսները՝ բոլորը և ամենքը, հայտնում են Նրա երկրային Մարմնավորումները, Ով Տիեզերքի Կենտրոնակետն է, դրա Էությունը և վերջնական Նպատակը: Նրանից է բխում նրանց գիտելիքն ու իշխանությունը, Նրանից է բխում նրանց տիրակալությունը... Աստվածային Առաքինության Փայլաքարերի Հայտնություն են հռչակվում Աստծո բոլոր անունները և հայտնվում են Նրա նշանները՝ գիտելիքներն ու իշխանությունը, տիրակալությունը, ներումն ու իմաստունությունը, փառքը, առատաձեռնությունը և ողորմածությունը:

Երբեք չի եղել այնպես, որ այս աստվածային նշաններով օժտված լինեն որոշ մարգարեներ և զրկված լինեն մյուսները... Իսկ եթե ինչ-որ աստվածային նշան ակնհայտորեն չի հայտնվել այս Հրաժարեցման Էությունների միջոցով, ապա դա բնավ չի նշանակում, որ նրանք, ովքեր Աստծո նշանների բուն Առավոտյան Արշալույսներն են և Նրա կատարյալ անունների Գանձարանները, իրականում չունենին դրանք»:

Բահաուլլան բացատրում էր (և այդ մասին արդեն հիշատակվել է գլուխ 5-ում, որտեղ խոսքը գնում էր կրոնների միասնության մասին), որ Աստծո հայտնիչների ուսմունքներում եղած տարբերությունների հիման վրա, պետք չէ հետևություն անել համապատասխան կրոնների նշանակալիության տարբեր աստիճանի մասին: Կրոնական ուսմունքները համապատասխանում են իրենց ժամանակների պահանջներին և հնարավորություններին: Այստեղից էլ բխում է դրանց բազմազանությունը.

«... Այս հզորագույն ուսմունքները բխում են մի Աղբյուրից, դրանք մի Լույսի ճառագայթներ են: Իսկ դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունները բացատրվում են այն դարաշրջանների տարբեր պահանջներով, որոնցում դրանք հռչակվել են»:

Բահաուլլան հատուկ նախազգուշացրել է, որ ուսմունքներում եղած հակասությունների և Աստծո Հայտնիչների իրար նման չլինելու փաստի հիման վրա չի կարելի եզրակացնել, որ այս կամ այն հավատը գերազանցում է մյուսներին.

«Ձգուշացեք, ով Աստծո Միասնությանը հավատացողներ, գայթակղվել տարբերություններ անցկացնելուց Նրա Գործի Հայտնիչների միջև կամ կանխակալությամբ նայելուց նախանշանակների վրա, որոնք ուղեկցում են նրանց Հայտնությունները և հռչակում դրանց մասին: Ավելին, գիտցեք, որ Աստծո Հայտնիչներից յուրաքանչյուրի աշխատություններն ու գործերը... նշանակված են Աստծուց և Նրա Կամքի ու Նախախնամության արտացոլումն են: Իսկ նա, ով գեթ փոքրագույն նշանակություն է տալիս նրանց անձերի, խոսքերի, ուղերձների, գործերի և բնավորությունների տարբերությանը, հիրավի, չի հավատում Աստծուն, մերժում է Նրա մտադրությունները և դավաճանում Նրա Դեսպանորդների Գործը»:

Պետք է, սակայն, համարել, որ Աստծո Հայտնությունների միասնության մասին Բահայի ուսմունքը թույլ է տալիս միևնույն հոգու հայտնվելը տարբեր ֆիզիկական թաղանթներում: Մովսեսը, Հիսուս Քրիստոսը, Մոհամեդն ու Բահաուլլան անկրկնելի անձնավորություններ են եղել, ու գոյություն են ունեցել մեկը մյուսից անկախ: Իսկ նրանց միասնության էությունն այն է, որ նրանցից յուրաքանչյուրը աստվածային հատկանիշների հավասարաչափ արտահայտումն է, քանզի Աստծո ոգին միասնական է, իսկ բոլոր Հայտնիչները Նրա շտեմարանն են:

Բահաուլլան, որպեսզի բացատրի, որ Աստծո Հայտնիչները հարաբերակցվում են մեկը մյուսի, իսկ նրանցից յուրաքանչյուրը Աստծո հետ, բերում է հետևյալ նմանօրինակությունը: Աստված՝ լինելով կյանքի միակ աղբյուրը Տիեզերքում, նմանվում է արևին՝ երկրի վրա կյանքի միակ աղբյուրին: Աստծո ոգին և հատկությունները կարելի է համեմատել արևի ճառագայթների հետ, իսկ Աստծո Հայտնիչին՝ հայելու: Եթե կա մի քանի հայելի և դրանք բոլորն ուղղված են դեպի արևը, ապա այդ միակ արևն էլ արտացոլվում է յուրաքանչյուր հայելու մեջ: Միևնույն ժամանակ հայելիները տարբերվում են մեկը մյուսից ձևով և իրար հետ կապված չեն:

Այդպես էլ Աստծո Հայտնիչները՝ տարբերվելով իրարից իրենց անհատական գծերով, իրենց մեջ արտացոլում են միակ Աստծո ոգին և հատկությունները:

Աստծո Հայտնիչներն իրենցից ներկայացնում են գոյության հատուկ մակարդակ, որը միջանկյալ է աստվածայինի և մարդկայինի միջև: Մարդը գերազանցում է կենդանիների, քանի որ ունի հատկություններ (հատկություններ, որոնք բնորոշ են նրա ոչ նյութական հոգուն), որոնք չունեն նրանք: Այդպես էլ Աստծո Հայտնիչներին բնորոշ են հատկություններ, որոնք չունի սովորական մարդը: Տարբերությունները նրանց և այլ մարդկանց միջև ոչ թե դիրքի տարբերություններ են, այլ ավելի շուտ, հատկանիշների: Ականավոր մտածողներն ու փիլիսոփաները, որքան էլ խորը թափանցեն իրերի էության մեջ, Աստծո դեսպանորդներ չեն: Վերջիններս իրենց բնությամբ բարձրագույն կարգի էակներ են, քանզի օժտված են այլ մարդկանց համար անհասանելի հատուկ հատկություններով:

Հայտնի է, որ մարդու բնությունը երկակի է: Մի կողմից, մարդն ունի ֆիզիկական մարմին, որը բաղկացած է քիմիական տարրերից և ենթարկվում է նույն օրենքներին, որոնց ենթարկվում են կենդանիների մարմինները, իսկ մյուս կողմից, այն ունի ոչ նյութական, բանականությամբ օժտված անմահ հոգի: Բահաուլլան սովորեցնում էր, որ ի տարբերություն մարդու, Աստծո հայտնիչների բնույթը եռակի է, քանզի նրանք օժտված են ևս մեկ յուրահատուկ հատկությամբ՝ Աստծո Հայտնությունն ընկալելու և անսխալ ճշտությամբ այն մարդկանց հասցնելու ունակությամբ:

«Թող ձեզ հայտնի լինի, որ Սրբազան Հայտնիչները՝ չնայած օժտված են կատարելության անսահման աստիճանով, հայտնվում են երեք վիճակներով: Առաջինը՝ ֆիզիկական, երկրորդը՝ մարդկային, այսինքն, բանականությամբ օժտված հոգու վիճակ, երրորդը՝ աստվածային արտահայտման և երկնային փայլատակման վիճակ:

Ֆիզիկական վիճակը սահմանափակված է ժամանակի մեջ: Ամբողջ ֆիզիկականը կազմված է տարրերից և այդ պատճառով անխուսափելիորեն ենթարկվում է քայքայման: Նրա բաժանումը, ինչը երբևէ միացված է եղել, անխուսափելի է:

Երկրորդ վիճակը բանականությամբ օժտված հոգու վիճակն է, որը մարդկային էությունն է: Այն նույնպես սահմանափակված է ժամանակի մեջ, և Սրբազան Հայտնիչները կիսում են այդ

ճակատագիրն ամբողջ մարդկության հետ... Մարդու ոգին ունի սկիզբ, բայց չունի վերջ. այն կենում է հավերժ...

Երրորդ վիճակն աստվածային արտահայտման և երկնային փայլատակման վիճակն է. այս է Աստծո Խոսքը, Հավերժ Առատածեռնությունը, Սուրբ Ոգին: Այն չունի ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ... Մեսիայի էությունը, որը Աստծո Խոսքն է և Աստվածային Հայտնության կատարյալ վիճակը, չուներ սկիզբ և չի ունենա վերջ: Նրա արշալույսը տարբերվում է մյուս ամենից և նման է արևի ծագելուն»:

Աբդուլ-Քահան նշում էր, որ անգամ ամեն Հայտնիչի մարդկային հոգին տարբերվում է մյուս բոլորի հոգիներից.

«Աստծո Հայտնիչների անհատական էությունը Սուրբ Էություն է, և այդ պատճառով այն բարձրացված է նաև նրանում, ինչը վերաբերում է դրա բնույթին և հատկանիշներին, այն տարբերվում է մյուս բոլոր երևույթներից: Այն նման է արևի, որն իր բնույթով լույս ճառագող է և չի կարող համեմատվել լուսնի հետ... Այլ մարդկանց էությունները զուտ հոգիներ են, որ լուսնի նման արտացոլում են արևի լույսը: Սակայն Սուրբ Էությունը` Ինքն է լույս արտացոլում»:

Այսպիսով, չի կարելի համարել, որ Հայտնիչը սովորական մարդ է, որ իր կյանքի ուղու որոշակի փուլում արժանացել է Աստծո դեսպանորդ ընտրված լինելուն: Ո՛չ, Աստծո Հայտնիչը հատուկ բնույթի էակ է: Նա կապված է Աստծո հետ հատուկ կապով և երկիր է ուղարկվում հոգևոր աշխարհից, որպեսզի ծառայի որպես Աստվածային Հայտնության գործիք: Չնայած ամեն Հայտնիչի հոգին աշխարհ է գալիս նրա ծագման պահին` այնուամենայնիվ, երկրի վրա դրա հայտնմանը նախորդում է կյանքը հոգևոր աշխարհում: Իսկ սովորական մարդու հոգին ծագում է միայն բեղմնավորման պահին, իսկ մինչ այդ կենում է անգոյության մեջ: Ահա թե ինչ էր ասում Աստծո Հայտնիչի նախագոյության մասին Շողի Էֆֆենդին.

«Մարգարեները, ի տարբերություն մեզ, նախահավիտենական են: Քրիստոսի հոգին մինչև իր երկրային ծնունդը գոյություն ուներ հոգևոր աշխարհում: Այդ աշխարհի առջև երևակայությունն անգոր է և, ուրեմն, խոսքերով այն չես նկարագրի»:

Աստծո Հայտնիչը մանկությունից իր էության մասին ունի հստակ պատկերա-ցում: Դա, սակայն, չի նշանակում, որ Հայտնության կրողը վաղ մանկությունից սկսում է իր առաքելության իրականացումը: Լինելով աստվածային գիտելիքի շտեմարան` Հայտնիչն ավելի խորը, քան որևէ մեկը, ըմբռնում է կյանքի իրականությունը: Շնորհիվ ի ծնե տրված, Աստծո ներշնչած գիտելիքի` Հայտնիչն իր ուսմունքն ու օրենքներն արտահայտում է այն ձևով, որն առավել լավ է համապատասխանում ժամանակի պահանջներին.

«Քանի որ աստվածային էությունները` Աստծո բարձրագույն Հայտնիչներն ընդգրկում են էակների բնույթն ու հատկանիշները, գերազանցում ու ներառում են գոյություն ունեցող իրականությունը և հասկանում են ամենը, հետևաբար, Նրանց գիտելիքն աստվածային գիտելիք է, այն ձեռքբերովի չէ, այսինքն, այն սուրբ ընծա է, այն Աստվածային Հայտնություն է... Աստծո բարձրագույն Հայտնիչներին հայտնի է ապրողների էությունն ու գաղտնիքների գաղտնիքը: Եվ այդ պատճառով Նրանք սահմանում են օրենքներ, որոնք ընդունելի են և համապատասխանում են մարդու ներքին աշխարհին, քանզի կրոնն իրերի էությունից բխող խորքային կապ է... Նրանք գիտակցում են խորքային կապը և այդ գիտելիքով հաստատում են Աստծո Օրենքը»:

Մարդը` ով և ինչպիսին էլ լինի, չի կարող դառնալ Աստծո Հայտնիչ: Մարդկային հոգին կարող է միայն հաղորդակցվել աստվածային ոգուն և դրա շնորհիվ իր համար

բացահայտել հոգևոր աճի հնարավորությունները: Իսկ Հայտնիչի հոգևոր մակարդակը մնում է անհասանելի անգամ մարդկանցից ամենակատարյալի համար:

Եթե վերադառնանք հայելու հետ համեմատության, ապա սովորական մարդ-կանց էլ կարելի է համեմատել հայելու հետ, որոնք, սակայն, ի տարբերություն Աստծո Հայտնիչների, իդեալական մաքուր չեն: Այլ խոսքերով, ամեն մարդկային էակ ընդունակ է արտացոլել Աստծո առանձին հատկությունները, սակայն այդ արտացոլումը կատարյալ չէ և սահմանափակ է: Սովորական մարդու հոգևոր աճը հոգու հայելու մաքրումն ու ողորկումն է, որպեսզի աստվածային հատկությունները կարողանան ավելի լավ արտահայտվել: Որպես փոխաբերություն՝ «մաքրել հայելին» արտահայտությունն իր որոշ աշխատություններում օգտագործում էր Բահաուլլան հոգևոր կատարելագործումը ցուցադրելու համար: Այդ համեմատությունը ցույց է տալիս, որ մարդը ստեղծված է ոչ կատարյալ՝ չնայած սահմանափակված չէ ինքնակատարելագործման հնարավորություններում, այն դեպքում, երբ Աստծո Հայտնիչին կատարելությունը բնորոշ է ի սկզբանե:

Բահաուլլան և Աբդուլ-Բահան սովորեցրել են, որ կա գոյության ընդամենը երեք մակարդակ, այսինքն, վերը նկարագրվածները՝ մարդը, Աստծո Հայտնությունը և Աստված: Դևերի, հրեշտակների և հրեշտակապետերի նվիրապետություն գոյություն չունի: Նման տերմինները կիրառելի են բացարձակապես որպես մարդու հոգևոր զարգացման տարբեր մակարդակների սիմվոլիկ նշաններ. «դև, դիվային» բառերը խորհրդանշում են անկատարելությունը, «հրեշտակ, հրեշտակային» բառերը՝ հոգևորությունը: Աստծո հայտնիչներն ի սկզբանե կենում են կատարելության վիճակում, այն դեպքում, երբ մյուս մարդիկ կատարյալ են միայն ենթադրյալ. նրանց կատարելությունն այն է, որ նրանց հոգու հայելին ընդունակ է արտացոլել Աստծո հատկությունները: Մարդուն հասանելի կատարելության բարձրագույն աստիճանը, ինչպես բացատրում է Աբդուլ-Բահան, Աստծուն հավատարիմ ծառայելն է.

«Թող ձեզ հայտնի լինի, որ գոյության վիճակները հանգեցվում են ծառայության, քարոզչության և աստվածայնության վիճակների, բայց Աստվածային կատարելությունները և դրանցից բխողներն անսահման են... Որքան անսահման են Աստվածային առատաձեռնությունները, այնքան անսահման են մարդկային կատարելությունները: Եթե հնարավոր լիներ հասնել կատարելության սահմանին, այդ դեպքում առանձին՝ իրականորեն գոյություն ունեցող բաները, կհասնեին Աստծուց անկախ լինելու վիճակին, այլ խոսքով ասած, կախյալը կհասներ Աստվածության վիճակին: Սակայն, ամեն էակի համար կա սահման, որից այն կողմ նա չի կարող անցնել... Ու, ով ծառայության վիճակում է, որքան էլ հեռու գնա կատարելության անսահման ճանապարհի վրա, երբեք չի հասնի Աստվածության վիճակին... Պետրոսը չի կարող դառնալ Քրիստոս: Այն ամենը, ինչ նա կարող է անել իր ծառայության սահմաններում, իր մեջ անսահման կատարելություններ զարգացնելն է...»:

Սակայն, քանի որ մարդն ընդունակ է հաղորդակցվելու աստվածայինին և դրանով իսկ համակվել Աստծո ոգով, նա ընդունակ է «ոգեշնչվել»: Բահայի հավատի Սուրբ Գրքերում անցկացվում է տարբերություն ոգեշնչման և Հայտնության միջև: Հայտնությունն Աստծո ստեղծագործ խոսքի անսխալ և անմիջական ընկալումն է: Հայտնությունը տրվում է միայն Աստծո Հայտնիչներին, ովքեր և բերում են այն մարդկությանը: Իսկ ոգեշնչումը ցանկացած մարդու հոգուն հասանելի, ոչ ուղիղ համեմատական ընկալումն է: Դրա համար սնուցող հող է ծառայում հոգևորությամբ թափանցված մշակութային միջավայրը, որը ծագում է Աստծո Հայտնիչի գալստյան ազդեցության արդյունքում: Յուրաքանչյուր մարդ ընդունակ է ոգեշնչվել Աստծո ոգով: Սակայն ոգեշնչումը հնարավոր է այնքանով,

որքանով Աստծո նոյն մարդկանց է փոխանցվում Հայտնիչների Աստծո և մարդու միջև միջնորդների միջոցով: Այլ խոսքերով, Հայտնությունը ոգեշնչման աղբյուր է:

Բահաուլլան սովորեցնում էր, որ Աստվածային Նախախնամությունը որոշ մարդկանց համար նախասահմանում է Մարգարեի ճակատագիր: Քարոզչական շնորհով օժտված մարդը՝ ոգեշնչում ստանալով, ընդունակ է ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Որպես օրինակ՝ Բահաուլլան բերում էր հուդայական մարգարեներ Եսայիին և Երեմիային: Հայտնվում էին նաև այլ Մարգարեներ և սրբեր: Սակայն, անգամ Մարգարեի կարգավիճակն անսահման հեռու է Հայտնիչի կարգավիճակից՝ այսինքն, Աստծո իսկական Հայտնության կրողի: Մարգարեները սովորական, սակայն, Աստծուց ուղղորդվող մարդիկ են: Նրանք քաղում են ոգեշնչման աղբյուրից և արտահայտում են Աստծո կամքը: Բահայիների Սրբազան տեքստերում նրանք անվանվում են «փոքր Մարգարեներ» կամ «հետևորդ-Մարգարեներ»: Կիրառելով նույն տերմինաբանությունը՝ Աստծո Հայտնիչներին կարելի է անվանել «մեծ» կամ «համաշխարհային» Մարգարեներ:

«Գոյություն ունի Մարգարեների երկու կարգ: Աշխարհ են գալիս անկախ Մարգարեներ, այնուհետև գալիս են նրանք, ովքեր անկախ չեն, սակայն հանդիսանում են որպես առաջինների հետևորդներ:

Անկախ Մարգարեները նոր դարաշրջանների օրենսդիրներն ու հիմնադիրներն են... Այլ Մարգարեներ հետևորդներ ու շարունակողներ են: Նրանք նման են ճյուղերի և չունեն անկախության կարգավիճակ: Նրանք ստանում են անկախ մարգարեների առատածեռնությունից, և նրանց լույսը տիեզերական Մարգարեների խրատի լույսն է: Նրանց կարելի է համեմատել լուսնի հետ, որը չի փայլատակում և ճառագայթում ինքնին, այլ արտացոլում է արևի լույսը»:

Բահայի ուսմունքում, ինչպես դա հետևում է վերը շարադրված դատողություններից, փիլիսոփաները, բարենորոգիչները, սրբերը, միստիկները, մարդասիրական շարժումների հիմնադիրները դասվում են սովորական մարդկանց շարքին: Շատ դեպքերում նրանց գործերը ոգեշնչվում են բարձրագույն ուժով: Սակայն Հայտնությունը տրվում է միայն ընտրյալ Աստծո Հայտնիչներին: Հատկապես նրանց մեջ է մարմնավորված այն ուժը, որը շարժում է մարդկության առաջընթացը:

ԲԱՀԱՅԻ ՀԱՎԱՏՆ ԱՍՏԾՈՒ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Ո՞վ է Աստված, ով էր Ղեսպանորդների միջոցով Իրեն հայտնում է մարդկանց: Բահայի ուսմունքի համաձայն, Աստված այն չափով է բարձրացված ամբողջ արարման վրա, որ մարդկային պատկերացումներն Աստծո բնույթի մասին աղոտ են ու հեռավոր և այդպիսին կլինեն միշտ: Անգամ Աստծուն անվանելով Ամենագոր, Ամենաողորմած, Արդար՝ մենք քաղում ենք հզորության, ողորմածության, արդարության մեր ըմբռնումը մեր մարդկային փորձից: Մեր գիտելիքները որևէ առարկայի մասին սահմանափակվում են այդ առարկայի՝ մեր ընկալմանը հասանելի, առանձին հատկանիշների իմացությամբ:

«Թող ձեզ հայտնի լինի, որ գոյություն ունեն երկու տեսակի գիտելիքներ՝ իրի հիմնական էության իմացությունը և դրա հատկանիշների իմացությունը: Հիմնական էությունն ըմբռնվում է դրա հատկանիշների միջոցով: Հակառակ դեպքում էությունը մնում է թաքնված և չհասկացված:

Քանի որ իրերի մեր իմացությունը, անգամ արարման աշխարհի մահկանացու իրերի իմացությունը, դրանց հատկանիշների, այլ ոչ թե էության իմացությունն է, ապա ինչպե՞ս կարելի է ըմբռնել աստվածային էության բնույթը, որն անսահման է... Ուրեմն, Աստծո ճանաչումը նշանակում է Նրա հատկանիշների, այլ ոչ թե Նրա էության ըմբռնումն ու իմացությունը: Հատկանիշների այդպիսի իմացությունը նաև կախված է մարդու հնարավոր-ություններից և ընդունակություններից. այն բացարձակ չէ»:

Այսպիսով, մարդկային էակի համար Աստծո ըմբռնումը նշանակում է Նրա հատկությունների, այլ ոչ բնավ Նրա էության ըմբռնում: Բայց ինչպե՞ս մենք կարող ենք ըմբռնել այդ հատկությունները: Բահաուլլան գրում էր, որ աշխարհում ամեն բան Աստծո արարումն է և, բնականաբար, կրում է իր վրա Նրա հատկանիշների հետքը: Օրինակ՝ քարի կամ բյուրեղի կառուցվածքում կարելի է տեսնել Աստծո ստեղծած Համաշխարհային կարգի տարրեր: Սակայն, որքան ավելի բարդ է առարկան, այնքան ավելի շատ են արտահայտված աստվածային հատկությունները: Աստծո Հայտնիչը արարման թագն է և, հետևաբար, մենք հենց նրա միջոցով կարող ենք ստանալ առավել լիարժեք գիտելիքներ Աստծո բնույթի մասին.

«Ամեն գոյը երկնքում ու երկրի վրա անհերքելիորեն վկայում է Աստծո հայտնված հատկանիշների և անունների մասին, ինչպես նաև ամեն տեսակի մանրագույն մասնիկ իր մեջ ներառում է նախանշանակներ, որոնք պերճախոսորեն հավաստում են այս Վառ Լույսի Հայտնության մասին... Սա չափազանց արդարացի է մարդու նկատմամբ... Հենց նրա մեջ են Աստծո բոլոր հատկանիշներն ու անուններն այն չափով, որը չի գերազանցել ոչ մի այլ արարում... Իսկ այդ մարդկանց մեջ ամենակատարյալները, ամենաանվանիները և ամենաարժանիները Ճշմարտության Արևի Հայտնիչներն են: Ավելին, բոլորը, բացի Հայտնիչներից, ողջ են շնորհիվ նրանց Կամքի և գործում ու ապրում են նրանց ողորմածությունների զեղման միջոցով»:

Զնայած քարը կամ փայտն ինչ-որ չափով իրենց մեջ ներառում են տիեզերքի որոշ գաղտնիքներ՝ այնուամենայնիվ, միայն բանական էակը, այսինքն, մարդն է ընդունակ իր կյանքով ու գործերով հայտնել աստվածային հատկություններ: Առավել լիարժեք ու խորը կարելի է հասկանալ աստվածային հատկանիշները, եթե ուշադիր դիտենք Աստծո Հայտնիչներին, քանզի Նրանք օժտված են բացարձակ կատարելությամբ: Աստված կապված չէ նյութական սուբստանցիայի հետ, ուրեմն Նրան չի կարելի տեսնել: Մենք ոչ մի այլ ճանապարհ չունենք առ Աստված, քան միայն Նրա Հայտնիչների իմացության միջոցով.

«Հստակ իմացիր, որ Անտեսանելին չի կարող մարմնավորել Իր էությունը և այն բացահայտել մարդկանց: Նա միշտ եղել է և կլինի անսահմանորեն ավելի բարձր այն ամենից, ինչը ենթարկվում է շարադրության կամ ընկալման... Նրան, Ով դարերն ի վեր թաքնված է մարդկային աչքերից, կարելի է ըմբռնել միայն Նրա Հայտնիչի միջոցով, իսկ Հայտնիչին Իր դեսպանորդության իսկության մասին տրված չէ ավելի մեծ վկայություն, քան անձնական վկայությունը»:

Եվ էլի.

«Գիտելիքի դարպասները Նախահավիտենական էության մասին մարդկանց առջև միշտ եղել են և կլինեն փակ: Մարդկային ըմբռնումը Նրա սուրբ կացարան երբեք չի հասնի: Սակայն, Իր ողորմածությամբ և հանուն Իր բարեհաճության, Նա մարդկանց հայտնեց Իր Աստվածային

Առաջնորդության Ցերեկային Լուսատուները, Իր Աստվածային Միասնության Նշանները և օժտեց այս օժված Արարումները գիտելիքով, որը նույնական է Իր գիտելիքին»:

Անշուշտ, Աստծո Հայտնիչին կարող են տեսնել միայն նրանք, ովքեր ապրում են Նրա հետ միևնույն ժամանակաշրջանում: Այդ պատճառով, բացատրում էր Բահաուլլան, մարդու և Աստծո միջև կապը պահպանվում է Հայտնիչի Սուրբ Գրքերի՝ Նրա աշխատությունների և Նրա խոսքերի գրառումների միջոցով: Բահայի-ների համար Հայտնիչի խոսքը հավասարազոր է Աստծո խոսքին: Անեն օր իր կյանքում դիմելով Նրա արտահայտություններին՝ մարդը հաղորդակցվում է վերին օգնությանը և ավելի խորն է ըմբռնում Աստծուն: Աստվածային Սուրբ Գիրքն այն է, ինչը օգնում է մեզ առօրյա կյանքում զգալ Աստծո ներկայությունը.

«Ասա՛. առաջին և գլխավոր վկայությունը, որը հաստատում է Նրա ճշմարտությունը, Նրա սեփական էությունն է: Այս վկայությունից հետևում է Նրա Հայտնությունը: Նրանց համար, ովքեր ընդունակ չեն ընդունել ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, Նա հաստատեց խոսքեր, որոնք հայտնվել են որպես Նրա գոյության և հավաստիության վկայություն... Ամեն հոգի օժտել է Նա Աստծո նախանշանակները ճանաչելու կարողությամբ»:

Հատկապես այդ պատճառով է, որ ամենօրյա պարտադիր աղոթքները, մեղիտացիաները և Սուրբ Գրքերի ուսումնասիրումը Բահայի կրոնի համախոհների կողմից ճանաչվում են որպես անձի հոգևոր կյանքի կարևորագույն մաս: Հավատացյալների անձնական փորձը հուշում է, որ նշված գործընթացը շատ կարևոր է, քանզի դա ուղի է, որը մարդուն մոտեցնում է Աստծուն:

Եկեք ամփոփենք. բահայիների հայեցակետերն Աստծո բնույթի վերաբերյալ հանգում են նրան, որ Նրա էությունը մարդկային երևակայության սահմաններից դուրս է: Սակայն, միևնույն ժամանակ, Աստծո հատկություններն անբաժանելիորեն բնորոշ են Նրա Հայտնիչներին: Քանի որ մեր իմացության հնարավորությունները սահմանափակվում են միայն արտաքին բնութագրերի ընկալմամբ, մարդու համար Աստծո Հայտնիչների ճանաչումը նշանակում է Աստծո ճանաչում: Գործնականում պահանջվող գիտելիքը նվաճվում է Սուրբ Գրքերի ուսումնասիրմամբ, աղոթքներով, մեղիտացիաներով, ինչպես նաև գործերով, որոնք ոգեշնչված են Աստծո հայտնված խոսքով (այսինքն, Աստծո Հայտնիչների Սուրբ Գրքերով):

7. Բահաուլլայի Համաշխարհային Կարգը

Շատ մարդիկ կասկածում են Աստծո գոյությանը, քանզի ընդունակ չեն տեսնել դրա ոչ մի ապացույց: Պետք է ընդունել, որ Աստծո և Նրա գոյության հարցը փիլիսոփայական և կրոնական ամենաբարդ հարցերից մեկն է: Բահայիների հայեցակետերը բավականին մանրամասն լուսաբանված են գլուխ 5-ում: Բահայի հավատն ուսուցանում է, որ Աստված հստակությամբ վկայում է Իր գոյության և մեր նկատմամբ Իր սիրո մասին՝ հետզհետե երկիր ուղարկելով Իր Հայտնիչներին, որպեսզի Նրանք մարդկությանը բերեն Աստծո Կամքը:

Բահաուլլայի պնդմամբ, Աստված խոստացել է Հայտնիչների գալուստը, ում կոչումն է մարդկանց իսկական ճանապարհի վրա ուղղելը: Այդ ավետումը բահայիների Սուրբ Գրքերում անվանվում է Մեծ Պատգամ: Հայտնիչների կամ Աստծո Դեսպանորդների գալուստը սկսվեց անհիշելի ժամանակներից: Աբրահամից հետո եկավ Մովսեսը, Մովսեսից հետո՝ Հիսուսը, այնուհետև եկավ Մոհամեդը: Մեր ժամանակի Դեսպանորդ դարձավ Բահաուլլան: Անցյալի Աստծո Դեսպանորդներից յուրաքանչյուրին՝ և՛ նրանց, ովքեր մտան պատմության մեջ, և՛ նրանց, ում հիշատակը չի պահպանվել, կարևոր դեր էր հատկացված աշխարհի աստվածային կառուցվածքում:

Պատգամը համաձայնություն է կամ պայմանագիր, որն իր մեջ պարունակում է երկու կողմերի փոխադարձ պարտավորություններ: Համաձայն Մեծ Պատգամի՝ Աստված պարտավորվում է մարդկանց մոտ ուղարկել Իր Հայտնիչներին: Բահաուլլան նշում էր, որ մարդիկ, իրենց հերթին, պետք է կատարեն հետևյալ երկու պայմանները՝ ճանաչել Աստծո Դեսպանորդներին՝ ընդունելով նրանց ուսմունքները, ինչպես նաև աշխատել փոխել իրենց կյանքը Նրանց պատգամներին համապատասխան: Բահաուլլան ասում էր. «Այս երկու պարտականություններն անբաժանելի են: Դրանցից ոչ մեկն ընդունելի չէ առանց մյուսի»:

Այդ պատճառով հուդայականները, քրիստոնյաները և այլ դավանությունների ներկայացուցիչները, չեն հրաժարվում իրենց նախկին հավատից: Նրանք համարում են, որ այդպիսով կատարում են իրենց պարտականությունը՝ ընդունում են Աստծո հաջորդ Հայտնիչին, որը եկել է նոր կրոնական համակարգ հիմնելու համար: Դրանով նրանք «Պատգամին հավատարիմ են մնում», քանզի ճանաչում են Աստծո բոլոր Հայտնիչներին, և ոչ թե հետևում են միայն մեկին և միայն նրա ուսմունքն են հռչակում որպես բարձրագույն

ճշմարտություն: Այդ մարդիկ ենթադրում են, որ հավատարիմ են մնում այն հոգևոր պարտավորություններին, որ իրենց վրա դրված են եղել իրենց սկզբնական հավատի կողմից:

Անհրաժեշտ է ընդգծել մեծ Պատգամի ևս մեկ կարևոր տեսակետ: Աստծո Հայտնությունների հետևողականությունը չի ունեցել սկիզբ և չի ունենա վերջ: Բահաուլլայի Հայտնությունը, իր խոսքերով, մարդկության հոգևոր էվոլյուցիայի գործընթացի ավարտական փուլ չէ: Ահա, թե ինչ էր այդ առիթով ասում Բահաուլլան. «Մովսեսից և Հիսուսից հետո Աստված ուղարկեց Իր մյուս Ավետաբերներին և այդպես կլինի հավիտյանս հավիտենից...»: Բահայիների Սուրբ Գրքերում հաստատվում է, որ «հազարամյակ անց» կգա նոր Մեսիա կամ Աստծո հայտնիչ, ով նոր մղում կտա էվոլյուցիայի անվերջ գործընթացին:

Այդ համապարփակ Պատգամն իր մեջ պարունակում է նաև այլ պայմաններ, որոնք վերաբերում են մարդու և Աստծո փոխհարաբերություններին մարդկության զարգացման և երկրային քաղաքակրթության տարբեր փուլերում: Արդեն անցել են բազմաթիվ փուլեր, և բահայիները հավատում են, որ Հայտնության բոլոր կրոնները կատարել են իրենց հատուկ նախանշանակումն այդ ընդհանուր գործընթացում: Ինչպես երեխան աճի և զարգացման ընթացքում հետևողականորեն ձեռք է բերում տարբեր հմտություններ (ուտելու, քայլելու, կարդալու, միասին աշխատելու և այլ հմտություններ), այնպես էլ մարդկությունը քայլ առ քայլ մոտենում է հոգևոր հասունության՝ յուրաքանչյուր դարաշրջանում կենտրոնացնելով ջանքերն իր հոգևոր գոյության հերթական փուլի զարգացման վրա:

Այդպես, Աբրահամի Հայտնության շնորհիվ հրեաները ճանաչեցին միասնական Աստծո մասին մեծ ճշմարտությունը, ինչը հզոր խթան ծառայեց մարդու հոգևոր աշխարհի զարգացման համար: Հետագայում հավատը միասնական Աստծո հանդեպ տարածվեց և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում՝ իսլամական աշխարհում: Այսպես, Մովսեսն աշխարհին հայտնեց Աստծո Օրենքը, Բուդդան ցույց տվեց սեփական «ես»-ից հրաժարվելու ճանապարհը, Հիսուսը սովորեցրեց սիրել Աստծուն և մերձավորին: Բահաուլլան նշում էր, որ մարդու հոգևոր գիտակցության աստիճանաբար զարգացումը բնական և, միաժամանակ, անհրաժեշտ գործընթաց է: Նախքան վազել և թռնել սովորելը, երեխան պետք է սովորի քայլել:

Սկսելով որևէ խնդրի կատարումը՝ պետք է նախ և առաջ ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ: Համաձայն Բահայի հավատի՝ Աստծո յուրաքանչյուր Հայտնիչ իր հետևորդներին հատուկ Պատգամի միջոցով սովորեցրել է համապատասխան «հմտություններ»: Այդ բնույթի Պատգամները բահայիներն անվանում են «Փոքր Պատգամներ»: Աստծո յուրաքանչյուր Ղեսպանորդ իր Պատգամը համաձայնեցնում է զարգացման որոշակի փուլում գտնվող մարդկության կենսական պահանջներին: Փոքր՝ չի նշանակում քիչ կարևոր. այդ սահմանումը միայն ցուցադրում է հերթական Պատգամի ենթակա դերը համապարփակ մեծ Պատգամի շրջանակներում: Փոքր Պատգամը կարելի էր անվանել օժանդակ կամ լրացուցիչ, քանզի այդպիսին է դրա գործառույթը մեծ և հավերժ Աստծո Նախասահմանման վերաբերյալ:

Ինչպես արդեն նշվել է, Բահայի կրոնի համախոհները տեսնում են Բահաուլլայի Հայտնության հատուկ առաքելությունը մարդկանց համընդհանուր միասնության կայացման մեջ: Այդ նպատակին էլ ծառայում է Բահաուլլայի պատգամը: Բահայիների տեսակետից, համընդհանուր միասնությունը ենթադրում է ոչ միայն եղբայրական կապվածություն և փոխադարձ սեր երկրի բոլոր բնակիչների միջև, այլև համաաշխարհային

հասարակական ինստիտուտների ձեռնարկում, որոնք անհրաժեշտ են մոլորակի հասարակական կյանքը ներդաշնակության և համագործակցության հունով ուղղելու համար: Պետք է ընդմիջտ վերջ դրվի պատերազմներին և կայուն խաղաղություն հաստատվի երկրի բոլոր ժողովուրդների և համայնքների միջև:

Բահայիների Սուրբ Գրքերում մարդկության ապագայի այդ տեսունակությունը կրում է Բահաուլլայի Համաշխարհային Կարգ անվանումը: Այդ տեսունակությունը ցնցում է իր վիթխարիությամբ: Հավանաբար, շատերի մոտ Բահաուլլայի այդ մեծ նախանշանակումը հիացմունք կառաջացներ, սակայն, մյուս կողմից, շատերը ուտոպիա կհամարեին այդ կարգի իդեալական հասարակության կառուցման պլանը: Չէ որ մարդկանց մեծամասնությունը ենթադրում է, որ կրոնի ոլորտը սահմանափակվում է բացարձակապես մարդու ներքին աշխարհով, և նրանց մոտ կարող է տարակուսանք առաջացնել այն, որ կրոնը շեշտ է դնում մարդկանց կոլեկտիվ կյանքին, որ այն սահմանում է հասարակության կազմակերպման ձևերը և ձևավորում է սոցիալական նպատակներ:

Բահայի կրոնի կողմնակիցները համոզված են, որ եկել է մարդկության համախմբման ժամանակը, քանզի նրանք հավատում են, որ մարդկանց համաշխարհային միավորումը Տիրոջ կամքն է: Արարելով մարդուն՝ Աստված նրա մեջ դրեց միասնության յուրովի ձգտում և տվեց նրան ունակություններ, որոնք անհրաժեշտ են դրա նվաճման համար: Բահաուլլայի Պատգամը կարևորագույն գործիք է այդ հոգևոր ունակությունների զարգացման համար: Արդյունքում, հատկապես դա պետք է մարդկությանը միասնության բերի: Պատգամը աղբյուր է, որից մարդը քաղում է հոգևոր ուժեր: Դրանց շնորհիվ ծնվում է հույսը, վերափոխվում են սրտերը և հաղթահարվում են նախապաշարմունքները: Պատգամը սահմանում է նաև օրենքների և հասարակական ինստիտուտների համակարգ՝ հիմնված մարդկանց գործնական կյանքում հոգևոր սկզբունքների կիրառման վրա: Բահայիների համոզմամբ, այդ համակարգը ստեղծում է համաշխարհային հասարակություն, որը հենվում է արդարության վրա:

«Աշխարհի հավասարակշռությունը խախտված է այս մեծագույն նոր Համաշխարհային Կարգի հզոր տատանումների ազդեցության տակ: Մարդկության կարգավորված կյանքը ենթարկվել է մեծ փոփոխությունների՝ շնորհիվ այս չտեսնված, այս սքանչելի Պլանի, որի նմանը չեն տեսել մահկանացուների աչքերը»:

Բահաուլլայի Համաշխարհային Կարգի հիմքը դրվեց, առաջին հերթին, նրա որդու՝ Աբդուլ-Բահայի կողմից: Բահայի հավատի պատմության մեջ Աբդուլ-Բահայի դերի մասին արդեն ասվել է: Նրա առաքելության նշանակալիությունը գիտակցելու համար բավական է հիշել, որ Բահաուլլան անվանեց նրան Իր Պատգամի Կենտրոնակետ: Աբդուլ-Բահային էր տրված Բահայի հայտնությունը մեկնաբանելու բացարձակ իրավունքը: Հայրը հավատացրեց որդուն, որ նրա մեկնաբանությունը կլինի անսխալ, քանզի Աստված կուղղորդի նրա մտքերը: Բահաուլլան իր հետևորդի վրա դրեց նաև իր ուսմունքի սկզբունքները կյանքի կոչելու խնդիրը և նրան իրավունք տվեց ընդունել Նոր Համաշխարհային Կարգի ինստիտուտների ստեղծմանը վերաբերող որոշումներ: Հենվելով իրեն տրված իրավասությունների վրա՝ Աբդուլ-Բահան ստեղծեց մի շարք աշխատություններ, որոնք այժմ ներառված են Բահայի հավատի գրականության մեջ:

Աբդուլ-Բահան, իր հերթին, Բահայի հավատի Պահապան և Սուրբ Գրքերի մեկնաբանման մեջ իրեն հետևորդ նշանակեց Շողի Էֆֆենդի Ռաբանիին: Աբդուլ-Բահան օրհնեց առաջին Տեղական Հոգևոր Ժողովների ձեռնարկումը, որոնք կոչված էին դառնալ

Նոր Համաշխարհային Կարգի հիմնական ինստիտուտները: Շողի Էֆֆենդիի ջանքերի շնորհիվ, հնարավոր դարձավ Արդարության Համաշխարհային Տան ստեղծումը:

Իր կյանքով Աբդուլ-Բահան Բահաուլլայի ուսմունքի սկզբունքները կյանքի կոչելու օրինակ հայտնեց՝ ցուցադրելով դրանց նշանակալիությունը մարդու հոգևոր զարգացման համար: Սակայն, ճիշտ չէր լինի Բաբի և Բահաուլլայի նման Աբդուլ-Բահային համարել Աստծո Հայտնիչ, կամ Մեսիա: Հոգևոր իշխանությունը, որով օժտված է Հայտնիչը, բխում է անմիջականորեն Աստծուց՝ Նրա հոգևոր էությունից: Իսկ իրավասությունները, որոնցով օժտված էր Աբդուլ-Բահան, տրված էին նրան Բահաուլլայի կողմից: Բահայիներն Աբդուլ-Բահայի անձի մեջ տեսնում են սեփական հոգևոր հատկանիշներով բացառիկ մարդու, հավատի Պատգամների իդեալական մարմնավորումը: Շողի Էֆֆենդին այսպես ասաց նրա մասին.

«Նա (և այդպիսին կհամարվի միշտ) Բահաուլլայի աննման և համապարփակ Պատգամի Կենտրոնակետն է և Հիմքը, Նրա ամենավեհ արարումը, Նրա Լույսն արտացոլող անխավար Հայելին, Նրա Ուսմունքի կատարյալ մարմնավորումը, Նրա խոսքերի անսխալ մեկնաբանիչը, Հավատի իդեալների մարմնացումը... Աբդուլ-Բահայի անձի մեջ ներդաշնակորեն միաձուլվել են անհամատեղելի երրորդությունները. մարդկային խառնվածքը և գերմարդկային իմաստությունն ու կատարելությունը»:

Համաշխարհային միասնության գաղափարի իրականացման համոզվածությունը և անձնվիրական գործունեությունը հանուն այդ նպատակի, Բահայի համայնքի հիմնական տարրերից գծերն են: Դրանում է արտահայտվում Բահայի հավատի ակնհայտ տարբերությունը Հայտնության ավելի վաղ կրոններից: Բահայի հավատի հոգևոր ուսմունքը և հիմնական վարդապետությունները շատ ընդհանրություններ ունեն ավանդական կրոնների հետ, հատկապես այն կրոնների, որոնք վերաբերում են սեմական խմբին (Հուդայականություն, Քրիստոնեություն և Իսլամ): Սակայն համընդհանուր միասնության և համաշխարհային քաղաքակրթության ստեղծման ձգտումը, որը բխում է Բահաուլլայի Պատգամին հավատալուց, Բահայի կրոնի յուրօրինակ և ժամանակին համահունչ առանձնահատկությունն է: Համընդհանուր եղբայրությանը և համաշխարհային քաղաքակրթությանը նվիրված իր հայտնի աշխատությունում ամերիկացի՝ սոցիալական հարցերով մասնագետ, պրոֆեսոր Ուորեն Ուեյգարը գրում է. «...բոլոր արդի ճանաչված կրոններից, որոնք հռչակում են աստվածային իշխանությունը, միայն Բահայի հավատն է նպատակասլաց և ամբողջությամբ ծառայում մարդկության համախմբման գործին»:

Բահաուլլայի հատուկ Կտակը, որը կնքվել է մարդկության հետ, գործում է նրա մշակած Կարչական Կարգի միջոցով: Վերևում արդեն նշվեց, որ Բահաուլլայի աշխատությունները բաժանվում են մի քանի տեսակի: Նրա շոշափած թեմաների մեջ կարելի է նշել, առաջին հերթին, հիմնական վարդապետություններն ու կոնցեպցիաները, այնուհետև բարոյական սկզբունքներն ու խրատները, որոնցով մարդիկ պետք է կողմնորոշվեն առօրյա կյանքում, օրենսդրության պատգամները, որոնք վերաբերում են անձի և հասարակության հոգևոր զարգացմանը, հավատի հատուկ ինստիտուտների նկարագրությունը, որոնք իրենցից ներկայացնում են Բահայի հայտնության անբաժանելի բաղկացուցիչ մասը և բխում են հոգևոր ուսմունքներից:

Պատգամներն ու օրենքները, մի կողմից, և Բահայի համայնքի ինստիտուտները, մյուս կողմից, ամբողջությամբ իրենցից ներկայացնում են մի համակարգ, որն անվանվեց Բահայի հավատի Կարչական Կարգ: Հատկապես այդ Կարչական Կարգում է Բահաուլլայի Փոքր Պատգամի հիմնական բովանդակությունը: Այդ Պատգամի տարրերից

առանձնահատկությունն այն է, որ դրանում հստակ սահմանված են կառավարման օրենքները և այն ինստիտուտները, որոնք կոչված են ղեկավարել հավատացյալների համայնքի գործերը երկարատև պատմական շրջանի ընթացքում: Ավելին, սեփական ձեռքով գրված տեքստերում, որոնք ամրագրված են ստորագրությամբ և անձնական կնիքով, հավատի ուսուցիչը նախօրոք մանրամասն որոշում է իրավասությունների սահմանները, իրավունքներն ու պարտավորությունները, գործունեության սկզբունքները և նշված ինստիտուտների նպատակը: Վարչական Համակարգի հիմքերը դրված էին Աբդուլ-Բահայի և Հավատի Պահապան Շողի Էֆֆենդիի կողմից: Նրանք երկուսն էլ գործել են՝ հենվելով Բահաուլլայի տրված իրավասությունների և նրա գրավոր խրատների վրա:

Երկու կարևորագույն ինստիտուտներ, որոնք Շողի Էֆֆենդին անվանել է Վարչական Կարգի սյուներ, Պահապանությունն է և Արդարության Համաշխարհային Տունը: Պահապանի դերը և Պատգամի համաձայն նրան վստահված իրավասությունների բնույթը, դիտարկվեցին վերևում: Չնայած Պահապանն արդեն չկա, Բահայի ուսմունքների վերաբերյալ նրա մեկնաբանությունների հեղինակությունը բահայիների միջավայրում նույն մակարդակի վրա է, ինչ նրա կյանքի օրոք: Արդարության Համաշխարհային Տան ձեռնարկման նախաձեռնությունը՝ որպես բահայիների Վարչական Կարգի գերագույն օրենսդրական մարմին, պատկանում է Բահաուլլային: Պահապանության ինստիտուտի և Արդարության համաշխարհային Տան միջև փոխկապվածության մասին վերջինիս փաստաթղթերում ասված է.

«Հավատացյալները պետք է հասկանան... որ որևէ օրենք ընդունելու նախապատրաստման ընթացքում Արդարության Համաշխարհային Տունն անցկացնում է Սուրբ Տեքստերի և Շողի Էֆֆենդիի աշխատությունների մանրակրկիտ ուսումնասիրում, որոնք կապ ունեն տվյալ հարցի հետ: Սիրեցյալ Պահապանի մեկնաբանությունները շոշափում են թեմաների լայն ծավալ և նրա հեղինակությունը նույնքան անվիճելի է, որքան Սուրբ գրքերի հեղինակությունը»:

Բահաուլլան հավատի կենտրոնական օրենսդիր մարմինն անվանեց Արդարության Տուն: Այն բաղկացած է ինն անդամներից, ովքեր պարբերաբար ընտրվում են Բահայի համայնքի բոլոր հասուն անդամների կողմից: Հետագայում Արդարության Տները կգործեն երեք մակարդակներում. 1. տեղական (մունիցիպալ կամ կոմունալ), 2. երկրորդական (սովորաբար՝ ազգային) և 3. միջազգային: Մեր օրերում այդ ինստիտուտը հաստատված է միայն միջազգային մակարդակի վրա: Արդարության Համաշխարհային Տան առաջին ընտրությունները կայացան 1963թ.՝ միջազգային համագումարի ժամանակ: Ներկայումս այդ մարմինն է կառավարում Բահայի համաշխարհային համայնքի գործերը: Այն հավատի միակ օրենսդիր մարմինն է և համաձայն Բահաուլլայի և Աբդուլ-Բահայի աշխատություններում պարունակվող հստակ ցուցումների՝ դրա որոշումներին պետք է ենթարկվել նույնքան անվերապահորեն, որքան Սուրբ Գրքերի պատգամներին: Տարբերությունն այն է, որ Արդարության Համաշխարհային Տունը, համակերպվելով հանգամանքներին, իրավասու է չեղյալ հայտարարել կամ փոփոխություններ մտցնել իր օրենսդրական ակտերից ցանկացածի մեջ, այն դեպքում, երբ բահայիների տեքստերի բաղկացուցիչ մասը կազմող օրենքները փոփոխության չեն ենթարկվում:

Ազգային և տեղական մակարդակներում Բահայի համայնքի գործերի կառավարումը ներկայումս իրականացվում է Ազգային և Տեղական Հոգևոր Ժողովների կողմից: Դրանք ընտրովի մարմիններ են, որոնց գործունեության սկզբունքները նման են այն

սկզբունքներին, որոնք դրված են Արդարության Տան աշխատանքի հիմքում. հետագայում դրանք կանվանվեն Արդարության Տեղական և Ազգային Տներ:

Բահայիները համարում են, որ չնայած Արդարության Տեղական և Ազգային Տների գործունեությունը կուղղորդվի Աստծո կողմից՝ միայն Արդարության Համաշխարհային Տան որոշումներն են ենթարկվում անվերապահ կատարման, քանզի այն աստվածային ոգեշնչման անբասիր ուղեկից է: Այդ մարմինը բարձրագույն աստիճանն է, որի վրա բարձրացել է մարդկությունը ներդաշնակության և միասնության նվաճման միջոցով Աստծուն մոտենալու իր ձգտման մեջ: Բահաուլլան ասում էր, որ դրա երաշխիքն Ինքն Աստվածն է, և որ Տերը կպահպանի Արդարության Համաշխարհային Տան կարգադրությունները սխալներից:

Բահայի հավատի տարբեր ինստիտուտներ գործում են մայրցամաքային, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում: Դրանցից որոշները ձևավորվում են ընտրության հիման վրա և իրենց գործունեության մեջ ղեկավարվում են խորհրդակցությունների և որոշումների համատեղ ընդունման սկզբունքով, մյուս ինստիտուտների անդամները նշանակվում են, և նրանց աշխատանքը հիմնված է անհատական գործունեության վրա: Ավելի մանրամասն այդ համակարգը կդիտարկվի հաջորդ գլխում:

Բահայի հավատի ինստիտուտների համակարգը հավատի նույնքան անբաժանելի մասն է, որքան և հոգևոր ուսմունքները: Բահայիների կարծիքով, իրենց հավատի Վարչական Կարգը իրենից ներկայացնում է նոր հասարակական կառուցվածքի «սաղմ» և «օրինակ», որը կդառնա մարդկության միասնության գրավական: Ահա թե ինչ էր ասում այդ առիթով Շողի Էֆֆենդին.

«... Այդ վարչական Կարգն իր հիմքում տարբերվում է Մարգարեների բոլոր ավելի վաղ հաստատումներից, քանզի Ինքը՝ Բահաուլլան հրապարակեց այդ Վարչական կարգի սկզբունքները և ձեռնարկեց ինստիտուտները, նշեց նրանց, ում վստահված է մեկնաբանել Նրա Խոսքը և անհրաժեշտ իրավասություններ հանձնեց մարմնին (Արդարության Համաշխարհային Տանը), որը կոչված է լրացնել և կիրառել Նրա օրենքները»:

Անհրաժեշտ է հստակ գիտակցել Բահայի հավատի Վարչական Կարգի և ապագա Համաշխարհային Կարգի միջև տարբերությունը, որը նախանշել էր Բահաուլլան: Խոսելով Համաշխարհային Կարգի մասին՝ բահայիները պնդում են, որ իրենց հավատի հիմնադրի ուսմունքը որոշիչ դեր կխաղա երկրի վրա կայուն խաղաղության հաստատման և միասնական երկրային քաղաքակրթության ստեղծման մեջ: Ակնհայտ է, որ այդպիսի Համաշխարհային Կարգ դեռ չկա. այն ավելի ճիշտ, նպատակ է, որին ձգտում են բահայիները: Այնուամենայնիվ, Վարչական Կարգի կարևորագույն ձեռնարկներն արդեն կան՝ դառնալով Բահայի համաշխարհային համայնքի անբաժանելի մաս:

Ստորև մենք բերում ենք Շողի Էֆֆենդիի աշխատությունից մի հատված, որում նա համառոտ շարադրում է Բահաուլլայի պատկերացումներն ապագա Համաշխարհային Կարգի մասին.

«Մարդկային ռասսայի միասնությունն այնպես, ինչպես այդ տեսնում էր Բահաուլլան, ենթադրում է համաշխարհային պետության ստեղծում, որում բոլոր ազգերի, ռասսաների, դավանությունների և դասակարգերի ներկայացուցիչները կապրեն սերտ, անխախտ միասնությամբ, միևնույն ժամանակ անվերապահորեն և անտարակույս կերպով կձանաչվի, ինչպես դրա կազմի մեջ մտնող պետությունների ինքնավարությունը, այնպես էլ յուրաքանչյուրի անձնական ազատությունը և նախաձեռնությունը: Այդպիսի պետությունը, ինչպես մենք ենթադրում ենք,

իրենից կներկայացնի համաշխարհային օրենսդիր մարմին, որի անդամները, որպես ամբողջ մարդկության ներկայացուցիչներ, օժտված կլինեն վերջնական որոշումներ ընդունելու իրավունքով այն հարցերում, որոնք վերաբերում են բոլոր ազգերի միասնական ռեսուրսների օգտագործմանը: Համաշխարհային օրենսդիր մարմինը պետք է, մեր պատկերացմամբ, մշակի այնպիսի օրենքներ, որոնք կապահովեն կարգ ու կանոն, կծառայեն մարդկանց կենսական կարիքների բավարարմանը և կպահպանեն արդարություն բոլոր ազգերի և ժողովուրդների միջև փոխհարաբերություններում: Համաշխարհային գործադիր մարմինը՝ հենվելով կարգի պահպանման միջազգային ուժերի վրա, կյանքի կկոչի որոշումներ և կկատարի օրենքներ, որոնք ընդունված են համաշխարհային օրենսդիր մարմնի կողմից, ինչպես նաև կծառայի որպես ամբողջ միասնական համաշխարհային օրգանիզմի երաշխավոր: Համաշխարհային տրիբունալը կդատի և վերջնական որոշումներ կկայացնի առանց բացառության բոլոր վիճելի հարցերի շուրջ, որոնք կարող են ծագել այդ միջազգային համակարգի անդամների միջև... Միասնական մատենագրությունը և գրականությունը, ունիվերսալ դրամական համակարգը, չափերի և կշիռների ընդհանուր համակարգը կծառայեն բոլոր ազգերի և ռասսաների մերձեցմանն ու փոխըմբռնմանը...

Վերջ կդրվի ազգերի մրցակցությանը, ատելությանն ու թշնամությանը, ռասսայական անբարյացակամությունն ու նախապաշարմունքները կփոխարինվեն բարեկամությամբ, փոխըմբռնմամբ և համագործակցությամբ: Մոռացության կմատնվեն կրոնական երկպառակությունները, ամբողջությամբ կհանվեն բոլոր տնտեսական արգելքներն ու սահմանափակումները և կջնջվեն բազմադարյան դասակարգային տարբերությունները...»:

Բահայիները ենթադրում են, որ միայն իրենց ջանքերն ու հավատը բավական չեն նոր Համաշխարհային Կարգ հաստատելու համար: Նրանք հավատում են, որ այդ մեծ պլանները կիրականան Աստծո Նախախնամությամբ, որն իրեն արտահայտում է ամենաբազմազան ճանապարհներով երկրագնդի բոլոր անկյուններում, մոլորակի բոլոր ժողովուրդների գործողությունների միջոցով: Ազգերի Լիգայի և Միացյալ Ազգերի Կազմակերպության ձեռնարկումը դիտվում է որպես չափազանց կարևոր քայլ համաշխարհային ինտեգրացիայի ուղղությամբ: Այդ կապակցությամբ շատ բահայիներ ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ՄԱԿ-ի և դրա ստորաբաժանումների աշխատանքում, ինչպես նաև միջազգային ոչ քաղաքական այլ շարժումներում: Ըստ այնմ, բահայիները պնդում են, որ հատկապես իրենց հավատը և դրա Վարչական Կարգն են կոչված կատարել որոշիչ, կենսականորեն կարևոր դեր միասնական աշխարհի ստեղծման գործընթացում:

Հավատի և Վարչական Կարգի միջև փոխադարձ կապի ճիշտ ըմբռնման համար, մի կողմից, և համընդհանուր խաղաղության հաստատման և միասնական Համաշխարհային Կարգի կառուցման գործի միջև, մյուս կողմից, օգտակար է հիշել, որ ապագա համաշխարհային քաղաքակրթությունը բահայիների պատկերացումներում զուգորդվում է նրա հետ, ինչն այլ կրոններում կոչվում է Ռսկե դար և Աստծո Արքայություն երկրի վրա: Բահայիները համոզված են, որ անցյալի դավանաբանները «Աստծո Արքայություն երկրի վրա» և «բարու վերջնական հաղթանակ չարի նկատմամբ» գաղափարների մեջ դրել են հենց այդ միտքը՝ համընդհանուր խաղաղությունը և մարդկանց միասնության նվաճումը: Բահայի հավատը սովորեցնում է, որ այդպիսի Համաշխարհային Կարգը Աստծո Նախախնամության արտահայտումն է:

Որոշ կրոնական ավանդույթներ երկրի վրա Աստծո Արքայության հաստատումը կապում են միայն Աստծո Կամքի միջամտության հետ: Ենթադրվում է, որ այդ գործընթացում մարդուն բաժին է ընկնում միայն պասիվ դեր և Աստծո Արքայությունը կառուցվում է ակնթարթորեն, կարծես մոգական գավազանի շարժումով:

Բահայիները հավատում են, որ ամենագոր Տերը, անշուշտ, կարող էր կառուցել Իր Արքայությունը երկրի վրա Իր կամքի արտահայտումով: Բահաուլլան, սակայն, բացատրում էր, որ Աստված տալիս է մեզ Իր խրատները, որպեսզի մեր առջև բացի մեր կողմից Աստծո Արքայություն կառուցելու հնարավորությունը: Համաձայն բահայիների տեսակետի, ներկայումս երկրի վրա գոյություն ունեցող ընկերակցությունները չեն համապատասխանում մարդկանց պահանջներին, քանի որ հիմնված են այն սկզբունքների և ավանդույթների վրա, որոնք հակասում են Աստծո պատգամներին: Այսպիսով, երկրի վրա կառուցելով Իր ավետյաց Արքայությունը՝ Տերը մեզ նաև հնարավորություն է տալիս սեփական փորձի հիման վրա, մեր գործողությունների միջոցով ձանաչել մեր հնարավորությունների իսկական բնույթը և սահմանները: Բահաուլլան զգուշացնում էր, որ միայն անցյալ մոլորությունների խոր գիտակցումը կփրկի մեզ այն ողբերգական սխալների կրկնումից, որոնք բերեցին աշխարհում տիրող ներկայիս իրավիճակին, որի բնորոշ գծերն են շահագործումը, հուսահատությունը, պատերազմի մշտական սպառնալիքը և դրա հետ կապված մարդկանց տառապանքները:

Բահաուլլան կանխատեսում էր միասնական Համաշխարհային Կարգի կայացման երեք փուլ: Առաջին փուլն անկման և համընդհանուր աղետների շրջանն է, որոնց նմանն աշխարհը դեռ չէր տեսել: Բահայիները համարում են, որ այդ շրջանն արդեն եկել է և երկրի վրա տիրող քաոսն աստիճանաբար կներգործի առանց բացառության բոլոր մարդկանց ձակատագրերի և բոլոր գոյություն ունեցող հասարակական ինստիտուտների վրա: Իր «Ավետյաց օրը գալիս է» գրքում Շոդի Էֆֆենդին մարդկային տառապանքներն անվանեց «վաստակած հատուցում» և Աստծո «բարձրագույն սուրբ արդարության արտահայտում»:

«Ղա և՛ Աստծո պատիժ է, և՛ ազատում ամբողջ մարդկության համար: Ղա կրակ է, որն այրում է մարդկային ցեղի մեղքերը և դրանից արարում միասնական ու անբաժանելի համաշխարհային ծուլվածք: Մեր ձակատագրական ժամանակներում ամբողջ մարդկային ցեղը ... միաժամանակ կոչված է պատասխան տալ նախկին արարքների համար, մաքրվել և արժանի դառնալ իր սպազա առաքելությանը: Մարդկությունը չի խուսափի պատասխանատվությունից, ինչպես անցյալի համար, այնպես էլ՝ ապագայի»:

Համաձայն բահայիների պատկերացումների՝ մարդկության աղետներն ու տառապանքները շուտով կհասնեն իրենց գագաթնակետին: Աշխարհին սպասում են ծանր հոգևոր և հասարակական ցնցումներ, բնական աղետներ: Դրանով կնշանավորվի միասնական Համաշխարհային Կարգին անցնելու առաջին փուլի ավարտը և երկրորդի սկիզբը: Բահաուլլան այսպես է նկարագրում այդ բեկումնային պահը.

«Ո՛վ մարդիկ, կգա ձակատագրի ժամը: Դիմեք Տիրոջը, քանզի, եթե չանեք այդ նշանակված ժամին, ձեզ վրա կընկնի Աստծո պատիժը և բոլոր կողմերից կշրջապատվեք անհամար դժբախտություններով: Հիրավի, ծանր է պատիժը, որը կտա ձեզ Տերը»:

Միասնական Համաշխարհային Կարգի կառուցման երկրորդ փուլի արտահայտում կդառնա այսպես կոչված Փոքր Խաղաղության հաստատումը: Բահայիների Սուրբ Գրքերից հետևում է, որ այդ գործընթացի երկրորդ փուլը պետք է հասկանալ ոչ թե որպես ամուր համընդհանուր խաղաղության հաստատում, այլ որպես մշտական զինադադար: «Փոքր Խաղաղություն» արտահայտությունն օգտագործվում է երկրագնդի բոլոր ժողովուրդների միջև խաղաղության պայմանագրի նշման համար: Այդ Փոքր Խաղաղության հիմնական առանձնահատկությունը կլինի միջազգային անվտանգության երաշխիք-

ների ապահովումը, որոնք բացառում են պատերազմների վերսկսումը: Այդ երաշխիքները մանրամասն կքննվեն բոլոր պետությունների կողմից ստորագրված փաստաթղթում, որը հիմնված է «կոլեկտիվ անվտանգության» սկզբունքի վրա: Այդ սկզբունքի համաձայն, բոլոր ազգերը պարտավորվում են օգնության գալ ագրեսիայի գոհին: Բահաուլլան ասում էր. «Եթե ձեզանից որևէ մեկը մյուսի վրա գենք բարձրացնի, բոլորդ բարձրացեք նրա դեմ, քանզի այս է ակնհայտ արդարությունը»:

Ստորև մենք շարադրում ենք Աբդուլ-Բահայի արտահայտությունը.

«Նրանք (բարձրագույն իշխանությունները) պետք է միություն կնքեն և վավերացնեն այն հստակ և անքակտելի պայմանագրով: Նրանք պետք է այդ մասին հայտարարեն երկրագնդի բոլոր ժողովուրդներին և կանխապես ստանան բոլոր մարդկանց համաձայնությունը... Թող մարդկության բոլոր ուժերն ուղղվեն Մեծ Պայմանագրի անխախտելիության ապահովմանը: Այդ համապարփակ համաձայնության մեջ անհրաժեշտ է հստակորեն նշել պետական սահմանները, որոշել սկզբունքները, որոնց վրա պետք է կառուցվեն փոխհարաբերությունները տարբեր երկրների կառավարությունների միջև, նորից հաստատել բոլոր միջազգային պայմանագրերը և փոխադարձ պարտավորությունները... Այդ Սրբագան Ղաշինքի գլխավոր պայմանը պետք է դառնա բոլոր կառավարությունների, ոչ՝ ամբողջ մարդկության հետևյալ պարտավորությունը՝ պայմանագրի որևէ հոդվածի խախտման դեպքում անել ամեն հնարավորը, որպեսզի ստիպեն ենթարկվել կամ իշխանությունից հեռացնել պայմանագիրը խախտած կառավարությանը: Նշված արմատական միջոցը կապաքինի մարդկության հիվանդ մարմինը, և մարդկային ցեղը կոգեշնչվի նոր՝ խաղաղ և անվտանգ կյանքի համար»:

Բահայիները հավատում են, որ այսօրվա քառսը շուտով կփոխարինվի Փոքր Խաղաղությամբ: Նրանց կարծիքով, արդի մարդկության տառապանքները կդառնան ամեն գնով պատերազմների դադարեցման գլխավոր դրդապատճառը: Աբդուլ-Բահայի կանխատեսմամբ, Փոքր Խաղաղությունը պետք է հաստատվեր XX-րդ դարում:

Փոքր Խաղաղությունը պետք է դառնա նախերգանք միասնական Համաշխարհային Կարգի կառուցման երրորդ՝ երկարատև փուլի համար: Բահաուլլան այդ ավարտական փուլն անվանում էր Մեծագույն Խաղաղություն: Ըստ Բահաուլլայի մարգարեության, դրա սկիզբը կհամընկնի Բահայի Համաշխարհային Կարգի հաստատման հետ: Ավելի վաղ մենք շարադրել ենք Շողի Էֆֆենդիի աշխատությունից մի մեջբերում, որտեղ նկարագրված է այդ ապագա Համաշխարհային Կարգը: Շողի Էֆֆենդին ասել է նաև «բոլոր ռասսաների, դավանանքների, դասակարգերի և ազգերի վերջնական միացման» մասին: Եթե Փոքր Խաղաղությունը կկառուցեն «ազգերը, որոնք դեռ չեն հասկացել Հայտնությունը (Բահաուլլայի), սակայն, բնագդաբար հետևում են դրա հիմնական ճշմարտություններին», ապա Մեծագույն Խաղաղության կառուցման համար անհրաժեշտ է «Բահաուլլայի հավատի ուսումնասիրումն ու դավանությունը»: Բահայիները ենթադրում են, որ Փոքր և Մեծագույն Խաղաղության հաստատման միջև ընկած շրջանում մարդկանց ձնշող մեծամասնությունը կընդունի Բահաուլլայի առաքելությունն ու ուսմունքը և կղեկավարվի նրա պատգամներով:

Բահայի հավատի Վարչական Կարգը դիտվում է որպես ապագա Համաշխարհային Կարգի սաղմ: Շողի Էֆֆենդիի անդամաբ, Բահայի Վարչական Կարգի ինստիտուտներն ու օրենքներն «օրինակ կծառայեն ապագա հասարակության համար որպես ամենաազդեցիկ գործիք՝ Մեծագույն Խաղաղության հաստատման, մարդկության միավորման և երկրագնդի վրա արդարության արքայության հռչակման համար»:

Մեծագույն Խաղաղության տեսունակությունը նման է Հաբակկուկի, մի ժամանակի, երբ «երկիրը կլցվի Տիրոջ փառքի ըմբռնումով, ինչպես ջրերը լցնում են ծովը» (Հաբակկուկ, 2, 14): Մեծագույն Խաղաղությունը կբերի «ժողովուրդների ապաքինմանը», որը խոստացվել էր Քրիստոսի Հայտնության մեջ (Հայտնություն, 22, 2): Այն իր հետ կբերի ոչ միայն համաշխարհային քաղաքակրթություն, այլև «ժողովրդական զանգվածների ոգեշնչում»: Մեծագույն Խաղաղության հաստատումը կլինի «մարդկային ցեղի հասունացման» նշան:

Ահա, թե ինչ է ասում Մեծագույն Խաղաղության մասին Շողի Էֆֆենդին.

«Այնուհետև կծնվի, կծաղկի և հավերժ կհաստատվի համաշխարհային քաղաքակրթությունը, որի շնորհիվ մարդը ճանաչում է կյանքի չտեսնված լիարժեքությունը: Հիրավի, թող իրականանա Հավիտենական Կտակը: Կիրականանա այն ամենը, ինչ խոստացել էին Սուրբ Գրքերը և հին ժամանակների մարգարեները. այն ամենը, ինչ կանխատեսել են մարգարեները և գովերգել են բանաստեղծները: Մոլորակը, որը լիցքավորված է նրա բնակիչների՝ Աստծուն, միակ Հայտնությանը միահամուռ կերպով հավատալու ուժով, կդառնա հսկայական, թեև իր երկրային շրջանակներով սահմանափակված հայելի, որում կարտա-ցույվեն Բահաուլլայի փայլն ու փառքը... և այն կանվանվի երկրային դրախտ, քանզի կկատարվի նրա կոչումը, որը հնուց նախասահմանված էր Արարչի իմաստությամբ և սիրով»:

Բահայիները ենթադրում են, որ Աստծո Կամքն արտահայտվում է երկակի կամ գործում է երկու մակարդակներում: Մի կողմից, կա Աստծո ընդհանուր Նախախնամություն, որը թափանցում է ամեն ինչի մեջ: Դուք այն կտեսնեք համաշխարհային պատմության ցանկացած ամենաաննշան իրադարձության մեջ: Աշխարհում ամեն ինչ, վերջին հաշվով, ծառայում է մեկ՝ Աստծո նախանշված նպատակին՝ մարդկության համախմբմանը: Այդ պատճառով բահայիները ջերմորեն աջակցում են բազմաթիվ միջազգային և մարդասիրական շարժումների և փորձում են գնահատել դրանց դրական կողմերը չնայած կարող են լիովին համաձայն չլինել դրանց փիլիսոփայության հետ:

Մյուս կողմից, բահայիները համոզված են, որ իրենց հավատում և Վարչական Կարգում մարմնավորված է արդի դարաշրջանին վերաբերող հատուկ աստվածային Նախախնամություն: Դրա միջոցով միասնության ոգին ու նախատիպը մտնում են մարդկային գործերի մեջ: Բահայի կրոնի համախոհներն իրենց կարևորագույն խնդիրը տեսնում են այդ Աստծո տրված գործիքի կատարելագործման մեջ: Հասարակության մեջ նոր Հայտնության ոգու էլ ավելի խորը թափանցելուն զուգընթաց, մարդկությունն անշեղորեն կշարժվի Փոքր Խաղաղությունից դեպի Մեծագույնը: Մարդիկ կըմբռնեն Աստծո Նախախնամությունը և երկրի վրա Աստծո Արքայության կառուցման ականատեսը կդառնան:

8. Վարչակարգը և օրենքները

Բահայի հավատի համախոհներն իրենց կրոնի տարբերիչ առանձնահատկություններից մեկն են համարում Բահաուլլայի Կտակը, որը ցույց է տալիս ապագա Համաշխարհային Կարգի և համաշխարհային քաղաքակրթության ճանապարհը: Բահայի-

ները ենթադրում են, որ ապագա համաշխարհային կառուցվածքի նախատիպը և սաղմերն արդեն գոյություն ունեն. դրանք օրենքներն են և Վարչական Կարգը, որոնք նախասահմանված են իրենց հավատի հիմնադրի կողմից և մանրամասնորեն մշակված են Աբդուլ-Բահայի և Շողի Էֆֆենդիի կողմից: Դրանք նաև վերջիններիս պրակտիկ գործունեության պտուղներն են: Հատկապես այդ պատկերացումներով են ղեկավարվում բահայիները՝ ջանքեր և ժամանակ նվիրելով իրենց համայնքի ղեկավարության ինստիտուտների կատարելագործմանը: Հիշատակված վարչական մարմինների խնդիրների մեջ է մտնում ոչ միայն առաջացող խնդիրների լուծումը և համայնքի գործերի կոլեկտիվ ղեկավարությունը: Այդ մարմինները մշտապես ձգտում են գործնականում իրագործել դա՝ Աստծո տված Վարչական Համակարգի առավելությունները, աստիճանաբար բացահայտել դրանում եղած հնարավորությունները: Այդ գործընթացը նման է անձի կայացման գործընթացին՝ ուսման և մշտական վարժությունների միջոցով բացահայտվում և կատարելագործվում են մարդու ընդունակությունները:

Դրանում է այն մեծ ուշադրության պատճառը, որին, ինչպես նշում են բազմաթիվ դիտորդներ, Բահայի համայնքում արժանանում են վարչական հարցերը: Բահայիները հավատում են, որ մարդկային գործունեության այդ ոլորտը՝ ոլորտ, որն առավելապես խոցված է կոռուպցիայով, Աստված մաքրել է չարաշահումների ապականությունից և նախատեսել է բարձրագույն նպատակների համար: Աստծուն ցանկալի է, ենթադրում են նրանք, որ աշխատանքը վարչական ոլորտում վերածվի հոգևոր ծառայության և օրհնանք դառնա ոչ միայն նրանց համար, ովքեր զբաղվում են նման գործունեությամբ, այլև ամբողջ հասարակության համար, որը ղեկավարվում է այդ ադմինիստրացիայի կողմից:

ԲԱՀԱՅԻ ՀԱՎԱՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ

Բահայի հավատի Պահապանի գրավոր ժառանգության մեջ պարունակվող ցուցմունքների, ինչպես նաև Արդարության Համաշխարհային տան օրենսդրական ակտերի և կարգադրությունների համաձայն, համայնքի կառուցվածքային կազմակերպումը նախատեսում է երկու տեսակի ինստիտուտների առկայություն՝ 1. ինստիտուտներ, որոնց վրա դրված է համայնքի կյանքին, զարգացմանն ու ամրապնդմանը վերաբերող որոշումներ ընդունելու պարտականությունը, 2. ինստիտուտներ, որոնց խնդիրների մեջ է մտնում համայնքի պաշտպանությունը և հավատի տարածումը: Որոշումներ ընդունելու իրավասություններ ունեցող ինստիտուտներին են վերաբերվում, առաջին հերթին, միջազգային մակարդակում գործող Արդարության Համաշխարհային Տունը և Հոգևոր ժողովները (ազգային և տեղական մակարդակներում): Պահպանության և հավատի տարածման ինստիտուտները ժառանգել են գործառույթներ, որոնք Բահաուլլայի Կտակի համաձայն վստահվել են Աստծո Գործի Աջերին: Վերջին մարմնի կազմն ընդարձակվել էր Պահապանի, այնուհետև Արդարության Համաշխարհային Տան կողմից: Ներկայումս այն իր մեջ ներառում է խորհրդա-կանների կոլեգիա և օժանդակ կոլեգիաներ: Նշված ինստիտուտների նշանակման նպատակն է խորհուրդներ տալը և աջակցությունը, ինչպես Հոգևոր ժողովներին, այնպես էլ առանձին հավատացյալներին: Ստորև մենք կքննարկենք Բահայի հավատի Վարչական Կարգի հիշատակված երկու ճյուղերի առանձնահատկությունները:

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԵԱՐՀԱՅԻՆ ՏՈՒՆԸ և ՀՈԳԵՎՈՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Տեղական մակարդակում Արդարության Տների ձեռնարկման համար, որոնց մասին ասվեց Բահաուլլայի սուրբ Գրքերում, որպես նախապատրաստական միջոց Աբդուլ-Բահան որոշեց հետևյալը՝ երբ տվյալ ինքնակառավարվող տարածքում հասուն բահայիների թվաքանակը կհասնի իննի, անհրաժեշտ է կազմակերպել Տեղական Հոգևոր Ժողով, այսինքն, բահայի տեղական համայնքի կառավարման մարմնի ընտրություն: Յուրաքանչյուր Հոգևոր Ժողովը բաղկացած է ինը մարդուց, ովքեր ընտրվում են քվեարկությամբ չափահաս տարիքի հասած տեղական համայնքի անդամներից: Հոգևոր Ժողովների վրա է դրվում տվյալ վայրում բահայիների ամբողջ գործունեության ղեկավարությունը. դա ուսմունքի տարածումն է և լուսավորչական գործունեությունը, ելքը դեպի ՋԼՄ-ներ և գրականության հրատարակումը, ժամերգությունների անցկացումը, համայնքի նյութական միջոցների տնօրինումը, բահայի օրենքներին վերաբերող հարցերով հավատացյալների խորհրդատվությունները և շատ այլ պարտականություններ:

Աբդուլ-Բահան դիտում էր Պարսկաստանում և Արևմուտքում Հոգևոր Ժողովների կայացումը՝ ուղղորդելով դրանց գործունեությունը սկզբնական շրջանում: Այդ բնույթի գործունեությունը շատ ժամանակ էր տրամադրում նաև հավատի Պահապանը՝ Շողի էֆֆենդին: Վարչական սկզբունքների ժողովածուն, որը կազմված է երկու դավանաբանության ուսուցիչների լայնարձակ նամակագրության մեջ պարունակվող ցուցմունքների հիման վրա, հրապարակված է բահայիների շրջանում լայն տարածում գտած մի շարք գրքերում և տեղեկատուներում: Այդ գրքերում պարունակվող ցուցմունքները ներառում են թեմաների լայն ծավալ և կարելի է չկասկածել, որ ապագայում էլ Բահայի համայնքի զարգացումը կընթանա Բահաուլլայի և նրա հետևորդների նախատեսած ճանապարհով, ովքեր, ըստ նրա Կտակի, Ուսմունքի լիազոր մեկնաբանիչներն էին:

Հոգևոր Ժողովները ստեղծված էին նաև ազգային (որոշ դեպքերում՝ տարածաշրջանային) մակարդակի վրա: Նրանց և Տեղական Հոգևոր Ժողովների պարտականությունների շրջանակը նույնն է, բայց նրանց առջև դրված խնդիրներն ավելի բարդ են և ավելի նշանակալից իրենց մասշտաբներով: Դրան պետք է ավելացնել Տեղական հոգևոր Ժողովների գործունեության ղեկավարությունը, ինչպես նաև իրավասությունների բաշխումը կառավարման տեղական, ազգային և տարածաշրջանային մարմինների միջև:

Այն ժամանակ, երբ Տեղական Հոգևոր Ժողովների անդամներն ընտրվում են ուղիղ քվեարկության ճանապարհով, Ազգային Հոգևոր Ժողովների ընտրություններն ընթանում են երկու աստիճանով: Բահայի համայնքի բոլոր հասուն անդամները տվյալ շրջանում ընտրում են որոշակի թվով պատվիրակներ, որոնց թիվը կախված է համայնքի թվաքանակից: Այնուհետև պատվիրակները երկրի բոլոր անկյուններից հանդիպում են ամենամյա համագալին համագումարի ժամանակ և երկրի բոլոր հասուն բահայիների թվից ընտրում են (այլ ոչ միայն համագումարի պատվիրակներից) Ազգային Հոգևոր Ժողովի ինը անդամ:

Հոգևոր Ժողովների ընտրությունները բնորոշվում են մի շարք ուշագրավ, հնարավոր է նաև յուրօրինակ առանձնահատկություններով: Քվեարկությունը գաղտնի է: Ավելին, Բահայիների ուսմունքով արգելվում է թեկնածուների նախնական առաջադրումը: Յուրաքանչյուր ընտրող իր ընտրական թերթիկի մեջ գրում է ինը անուն: Ձայների հաշվարկից հետո ընտրված են համարվում այն ինը անդամները, ում անունները գրված

են առավել մեծ քանակով ընտրաթերթիկների մեջ: Այն դեպքում, երբ վերջին՝ իններորդ տեղի թեկնածուները հավաքել են միևնույն քանակի ձայներ, անցկացվում է լրացուցիչ քվեարկություն այդ թեկնածուների մասնակցությամբ: Այդպիսի համակարգում բացառվում է թեկնածուների նախնական առաջադրումը և ընտրարշավը. քվեարկողներին տրվում է ընտրության առավելագույն ազատություն: Բացի այդ, նշված համակարգը թույլ չի տալիս դրսևորվելու իշխանատենչ ամբիցիաներ, որոնք անխուսափելի են ընտրությունների այլ կերպ կազմակերպման դեպքում: Ենթադրվում է, որ համայնքի հասուն անդամներից յուրաքանչյուրը, ում անվանել են ընտրողները, ընդունակ և պատրաստ է կատարել Տեղական կամ Ազգային Հոգևոր ժողովի անդամի պարտականությունները:

Ընտրությունները համընկնում են Ռիզվան տոնին և անցկացվում են ամեն տարի ապրիլի վերջին: Հոգևոր ժողովի ընտրված կազմն աշխատանքը սկսում է ընտրություններից անմիջապես հետո կամ մոտակա ժամանակում և կատարում է իր գործառույթները մեկ տարվա ընթացքում:

Հավանաբար, ընտրությունների մթնոլորտը և առանձնահատկությունները առավել վառ լուսաբանում են Շոդի Էֆֆենդիի ստորև բերված խոսքերը.

«Եթե մենք դիմենք այն պահանջների ցուցակին, որոնք Աբդուլ-Բահան իր հուշատախտակներում ներկայացնում է Բահայիների ժողովների անդամներին, հավանաբար, մենք կընկճվենք՝ գիտակցելով մեր ոչ կատարյալ լինելը: Բայց մեզ օգնության կգա մի սկիզբից միտք՝ եթե մենք աշխատենք պատվով կատարել մեր վրա դրված պարտքը, մեզ համար անբավարար հատկանիշները կլրացնի Տիրոջ ողորմածության և ուժի ամենահաղթական ոգին: Հետևաբար, ընտրված պատվիրակների վրա դրվում է պարտականություն՝ պահպանելով սառնասրտություն, անկանխակալություն և լիակատար անշահախնդրություն, առաջ քաշել միայն այն թեկնածու-թյունները, ում մեջ լավագույն կերպով են համակցվում անսահման նվիրվածությունը գործին, ինքնամոռաց հավատը, սուր միտքը, ճանաչված ընդունակությունները և հասուն փորձը»:

Անհրաժեշտ է Բահայի համայնքում ընտրությունների հարցում ուշադրություն դարձնել ևս մեկ կարևոր տեսակետին: Ինչպես և բազմաթիվ այլ դեպքերում, օրինակ, երբ խոսքը գնում էր սեռերի հավասարության մասին (գլուխ 5), Բահաուլլան նշում էր այն ուղին, որն անհրաժեշտ էր իր հոգևոր պատգամները կյանքի կոչելու համար: Երկրագնդի շատ վայրերում փոքրաթիվ ժողովուրդները և էթնիկական խմբերը տառապում են ռասսայական խտրականությունից: Փոքրամասնությունների ներկայացուցիչներն իրենց բնածին մտավոր կարողություններով չեն զիջում նրանց, ովքեր գտնվում են ավելի բարենպաստ պայմաններում, բայց զրկված են դրանք զարգացնելու հնարավորությունից: Բահայի համայնքում պետք է գիտակցաբար կիրառվեն բոլոր միջոցները, որպեսզի չթույլատրվի ոչ մի անհավասարություն կամ անարդարություն: Այդ կապակցությամբ ընտրությունների ժամանակ, երբ կշեռքի թաթը տատանվում է երկու հավասարապես արժանի թեկնածուների միջև, քվեարկողը պետք է ընտրություն կատարի ի օգուտ էթնիկական փոքրամասնության ներկայացուցիչ՝ չհամարելով, որ ինքն իր խղճի դեմ է գնացել: Նույն կերպ, եթե նշանակված է ընտրությունների լրացուցիչ փուլ և ցուցակում իններորդ տեղի համար թեկնածուներից մեկը որևէ փոքրաթիվ ժողովուրդներից մեկի ներկայացուցիչ է, պետք է քվեարկել այդ թեկնածուի օգտին:

Այդ նույն հիմնական սկզբունքները պահպանվում են նաև Արդարության Համաշխարհային Տան անդամների ընտրության ժամանակ: Այդ դեպքում ընտրողները բոլոր երկրների Ազգային Հոգևոր ժողովների անդամներն են: Սակայն ի տարբերություն

Տեղական և Ազգային Հոգևոր ժողովների, Արդարության Համաշխարհային Տունն ընտրվում է հինգ տարին մեկ Միջազգային Համագումարի ժամանակ Բահայի հավատի համաշխարհային կենտրոնում՝ Հայֆայում (Իսրայել):

ԱՍՏԾՈ ՓՈՐԾԻ ԱԶԵՐԸ, ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Որոշումների կոլեկտիվ ընդունման նկարագրված համակարգը լրացվում է մի շարք խորհրդատվական մարմիններով: Բահաուլլան և Աբդուլ-Բահան ժամանակին իրենց կրոնի ամենաանվանի համախոհներին անվանեցին Աստծո Փործի Աջեր: Նրանց պարտականությունների մեջ էին մտնում Բահայի հավատի տարածումն ու պաշտպանությունը: Աբդուլ-Բահան Կամք և Կտակում նշում էր, որ Աստծո Փործի Աջերի գործունեությունը պետք է շարունակվի, քանի դեռ կա Բահայի հայտնությունը: Համապատասխան դրան Շողի Էֆֆենդին այդ լիազորությունները կատարելու համար նշանակեց իր համախոհներից մի քանիսին: Շողի Էֆֆենդիի մահից հետո 1957թ. նոյեմբերին նրանցից քսանյոթը դեռ ողջ էին: Բերենք հատված Կամքից և Կտակից.

«Ո՛վ բարեկամներ: Աստծո Փործի Աջերը պետք է առաջադրվեն և նշանակվեն Աստծո գործի Պահապանի կողմից: Բոլորը պետք է լինեն նրա ղեկավարության տակ և ենթարկվեն նրա հրամանին...»

Աստծո Փործի Աջերը պետք է տարածեն աստվածային բուրնունքը, վեհացնեն մարդկային հոգիները, նպաստեն լուսավորմանը, կատարելագործեն մարդկանց բնավորությունները և մշտապես ու ամենուր պահպանեն մաքրությունն ու հրաժարեցուն մասն երկրայինից: Իրենց վարքով, բնույթով և խոսքերով նրանք պետք է հայտնեն Աստծո երկյուղը»:

Երբ մահացավ հավատի Պահապանը, այլևս չկար Փործի Աջերի նշանակող: Միաժամանակ, համաձայն Բահաուլլայի Կտակի՝ Արդարության Համաշխարհային Տանը վստահվեց ձեռնարկել կառավարման ցանկացած ինստիտուտներ, որոնք անհրաժեշտ են աճող և ամրացող Բահայի համայնքի կարիքների բավարարման համար: Հետևելով Կամքի և Կտակի ցուցմունքներին՝ որտեղ Աստծո Փործի Աջերի վրա դրված պարտականություններն անվանվեցին Բահայի Վարչական Կարգի գործունեության անբաժանելի մաս, Արդարության Համաշխարհային Տունը ստեղծեց հատուկ ինստիտուտ, որը կախում չունի ընտրովի Հոգևոր ժողովների համակարգից: Այդ ինստիտուտն անվանվեց «Խորհրդականների Կոլեգիա». այն գործում է մայրցամաքային մակարդակում: Խորհրդականները նշանակվում են հավատի առավել անվանի համախոհների թվից հինգ տարի ժամանակով: Մայրցամաքային կոլեգիայի կազմում կարող է լինել յոթից մինչև տասնվեց անդամ:

Իր ժամանակին, Շողի Էֆֆենդիի հավանությամբ, Աստծո Փործի Աջերն ամեն մայրցամաքում նշանակեցին իրենց ներկայացուցիչների խումբ: Պահապանն այդ խմբերն անվանեց Օժանդակ կոլեգիաներ: Այդ Օժանդակ կոլեգիաներին, որոնք ենթարկվում էին Աստծո Փործի Աջերին, Արդարության Համաշխարհային Տունն օգնության կանչեց Խորհրդականների Կոլեգիաներին: Հետագայում, երբ սկսեց աճել Բահայի կրոնի համախոհների թիվը, Արդարության Համաշխարհային Տունը թույլ տվեց Օժանդակ կոլեգիաների անդամներին իրենց համար օգնականներ նշանակել տեղական մակարդակում: Այդպիսով, ներկայումս, Ազգային և Տեղական հոգևոր ժողովների համակարգին

գուգահեռ, գոյություն ունի Վարչական Կարգի առանձին ճյուղ, որը կատարում է հատուկ Գործառույթներ մայրցամաքային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐԻ և ՀՈԳԵՎՈՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԻՋև ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ

Բահայի Վարչական Կարգի երկու ճյուղերի միջև գոյություն ունեն սկզբունքային տարբերություններ, որոնք վերաբերում են ինչպես գործունեության բնույթին, այնպես էլ այդ ինստիտուտների վրա դրված իրավասություններին: Հոգևոր ժողովը կոլեգիալ մարմին է, որն ընտրվում է ամբողջ Բահայի համայնքի կողմից և հենվում է կոլեկտիվ որոշում ընդունելու սկզբունքի վրա: Իսկ խորհրդականների և նրանց ներկայացուցիչների մարմինը նշանակովի մարմին է: (Արդարության Համաշխարհային Տան և Խորհրդականների Կոլեգիայի կողմից): Այդ մարմինները գործում են ինքնուրույն՝ որպես Բահաուլլայի Գործի ծառայողներ: Միևնույն ժամանակ, որոշ դեպքերում Հոգևոր ժողովների առանձին անդամներ կարող են կատարել անհատական պարտականություններ (օրինակ՝ ծառայել ընտրովի պաշտոններում ժողովի կազմում), իսկ խորհրդականները, իրենց հերթին, կարող են խորհրդակցել օժանդակ կոլեգիաների անդամների հետ: Այնուամենայնիվ, Հոգևոր ժողովները մնում են, առաջին հերթին, որպես կոլեգիալ մարմին այն դեպքում, երբ այլ ինստիտուտներ իրենցից ներկայացնում են անկախ աշխատակիցների խմբեր:

Երկրորդ տարբերությունն իրավասությունների բնույթի մեջ է, որոնք տրված են Բահայի Վարչական Կարգի ճյուղերից յուրաքանչյուրին: Համայնքի կյանքին վերաբերող բոլոր հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու իրավունքը տրված է բացառապես Հոգևոր ժողովներին: Վերջնական որոշում ընդունող բարձրագույն մարմին է համարվում Արդարության Համաշխարհային Տունը: Օժանդակ կոլեգիաների խորհրդականներն ու անդամները խորհուրդ են տալիս Հոգևոր ժողովներին, գնահատում նրանց մշակած պլանները և ցուցաբերում անհրաժեշտ աջակցություն, սակայն դրանով էլ սահմանափակվում են տվյալ մարմինների իրավասությունները: Վերջնական որոշումներ ընդունելու իրավունքը և լրիվ պատասխանատվությունը մնում են Հոգևոր ժողովների իրավասության մեջ, որոնք այդ իրավասությունները ստացել են ամբողջ Բահայի համայնքից: Այդ է սկզբունքային տարբերությունն Աստծո Գործի Աջերի, խորհրդականների ու Օժանդակ կոլեգիաների անդամների և ավանդական կրոնների հոգևորականության միջև: Աստծո Գործի Աջերին և նրանց հետևորդներին (խորհրդականներին և օժանդակ կոլեգիաներին) տրված չեն գերագույն իրավասություններ և Սուրբ Գրքերի մեկնաբանման իրավունք: Նրանք չեն կատարում նաև ժամերգական գործառույթներ: Բացի այդ, խորհրդականի պաշտոնը ժամանակավոր է, և ոչ թե ցմահ:

Սակայն, կոլեգիաների դերը բավականին մեծ է: Խորհրդականների պաշտոնին նշանակվում են համայնքի այն անդամները, ովքեր հոգևոր իմաստով հասունացել են և ընդունակ են արժեքավոր ներդրում կատարել համայնքի կյանքի մեջ: Բահայի Սուրբ Գրքերում այդպիսի մարդիկ պատվավոր տեղ են զբաղեցնում համայնքում: Հոգևոր ժողովները ու հավատացյալները բարձր են գնահատում փորձառու և պատվավոր մարդկանցից խորհուրդ հարցնելու իրենց տրված հնարավորությունը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ

1973թ. խորհրդականները և օժանդակ կոլեգիաները համախմբվեցին Հայֆայի (Իսրայել) Բահայի հավատի համաշխարհային կենտրոնում գործող միջազգային ձեռնարկության հովանու ներքո: Տվյալ ինստիտուտը հայտնի է որպես Ուսուցման Միջազգային Կենտրոն: Ինստիտուտի անդամների կազմի մեջ են եղել Աստծո Գործի Աջերը և մի շարք խորհրդականներ, որոնք հատուկ նշանակված են Արդարության Համաշխարհային Տան կողմից: Ներկայումս, երբ Աստծո Գործի բոլոր Աջերը մահացել են, Կենտրոնի կազմը որոշվում է միայն Արդարության Համաշխարհային Տան կողմից: Կենտրոնի գործունեությունը ընթանում է բարձրագույն օրենսդիր մարմնի հսկողության տակ:

Ուսուցման Միջազգային կենտրոնի կարևորագույն պարտականությունների մեջ պետք է նշել խորհրդականների տարբեր կոլեգիաների գործունեության համաձայնեցումը և աշխարհի բոլոր երկրներում Բահայի հավատի տարածման ուղղությամբ պլանների մշակման օգնությունն Արդարության Համաշխարհային Տանը: Այստեղ, հավանաբար, տեղին կլինի նշել այն փաստը, որ Բահայի սուրբ Գրվածքներում հավասարության նշան չի դրվում հավատացյալի հոգևորության մակարդակի և համայնքում զբաղեցվող դիրքի միջև: Արդարության Համաշխարհային Տան փաստաթղթերում ասված է.

«Քաղաքավարությունը, սեփական արժանապատվության զգացումը, հարգանքը և մերձավորի նվաճումներն ու արժանիքները գնահատելու ունակությունը՝ ահա այն առաքինությունները, որոնք ցանկացած համայնքի կբերեն ներդաշնակության և ծաղկման: Իսկ գոռոզությունն ու ինքնամեծարումը զուտ մահացու մեղքեր են... յուրաքանչյուր հոգի իր երկրային գոյության նպատակ պետք է համարի իր կատարելագործվումը, որպեսզի ձեռք բերի Աստծո բարեհաճությունը: Թե որն է հոգու էությունը՝ գիտի միայն Աստված: Տարբերություններ կան այն դիրքերի և պաշտոնների միջև, որոնք տղամարդիկ և կանայք զբաղեցնում են հասարակության տարբեր ոլորտներում»:

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՅԱՆՔԸ և ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՕՐԿԱ ՏՈՆԵՐԸ

Տեղական մակարդակում Բահայի համայնքի գործունեությունը կենտրոնացած է այսպես կոչված Տոնի ընթացքում համայնքի բոլոր անդամների կանոնավոր հանդիպումների վրա: Այդ բնույթի ժողովներն անցկացվում են աշխարհի բոլոր բահայիների կողմից միաժամանակ: Տոների ամսաթվերը որոշվում են Բաբի մշակած բահայի արևային օրացույցով: Այդ օրացույցը բաղկացած է տասնինը ամիսներից: Յուրաքանչյուր ամիս իր մեջ ներառում է տասնինը օր, այսինքն 361 օր: Արևային տարվա մնացած չորս օրերը (իսկ նահանջ տարիներին հինգ օրերը) կոչվում են «ընդմիջարկված օրեր»: Այդ օրերին բահայիները միմյանց նվերներ են տալիս, կազմակերպում են հյուրասիրություններ և տոնակատարություններ: Նրանց համար դա հյուրասիրության արտահայտման ժամանակ է: Տոները անցկացվում են յուրաքանչյուր ամսվա առաջին օրը: Այսպիսով, այդ կրոնի համախոհների մոտ տարվա ընթացքում կա տասնինը այդպիսի օրեր:

Տոնի ամբողջ ընթացքը կարելի է բաժանել երեք մասի: Դրանցից առաջինը աղոթքն է: Այդ ժամանակ աղոթքներ են կարդում և մեղիտացիաներ կատարում: Ըստ որում հավատացյալները դիմում են ոչ միայն իրենց կրոնի դավանական տեքստերին, այլև Հայտնության այլ կրոնների Սուրբ Գրքերին: Երկրորդ մասը վերաբերում է վարչական հարցերին. բոլոր ներկաները՝ ներառյալ դեռահասները և երեխաները, քննարկում են

համայնքի գործերը: Տեղական Հոգևոր ժողովի ներկայացուցիչը հավատացյալներին տեղեկացնում է ամբողջ համայնքի կյանքին վերաբերող ժողովի ընդունած որոշումների մասին: Գանձապահը ներկայացնում է հաշվետվություն համայնքի ֆինանսական վիճակի մասին: Համայնքի անդամներին առաջարկվում է հարցեր տալ, առաջարկություններ անել, իրենց անձնական հարցերով դիմել Տեղական Հոգևոր ժողովների ներկայացուցիչներին: Տեղական Հոգևոր ժողովների պարտականությունների մեջ չի մտնում բոլոր առաջարկություններին և խորհուրդներին պարտադիր հետևելը, սակայն շարքային հավատացյալների կարծիքներին ընդունված է վերաբերվել ուշադրությամբ և յուրաքանչյուր դեպքում զեկուցել համայնքին ձեռնարկած քայլերի մասին: Տոնի եզրափակիչ մասը նվիրված է շփմանը: Տոնական սեղանի և գրույցների հետ մեկտեղ այն կարող է իր մեջ ներառել երաժշտական համարներ, դերասանների ելույթներ, խաղեր և այլ զվարճանքներ: Տոնի բոլոր երեք մասերը դրա անբաժանելի բաղկացուցիչ մասերն են: Համարվում է, որ գործերի քննարկումը և բարեկամական շփումը ոչ պակաս օգտակար են հոգևոր աճի համար, քան աղոթքները:

Համայնքների մեծ մասում ամենամյա տոներն անցկացվում են մասնավոր տներում կամ համայնքին պատկանող ոչ մեծ տարածքներում: Որպես կանոն, համայնքները մեծ չեն, այդ պատճառով Տոներն անցկացվում են նեղ շրջանակում: Բահաուլլան կանխատեսել էր համայնքի զարգացումը և նախատեսել էր այն, ինչը անհրաժեշտ կլինի ապագայի համայնքների համար, որոնք նշանակալիորեն կգերազանցեն ժամանակակից համայնքները հավատացյալների քանակով: Բահաուլլայի մտահաղացման համաձայն, ժամանակին յուրաքանչյուր գյուղում կամ բնակավայրում կլինի իր Պաշտամունքի Տունը (Մաշրիկուլ-Ակզարը կամ գովերգություններ բարձրացնելու Վայրը): Տաճարը կդառնա բահայիների համայնքային կյանքի կենտրոն, իսկ նրա շուրջ կաճեն տարբեր շենքեր, որոնցում կտեղավորվեն օժանդակ ծառայությունները:

ԲԱՀԱՅԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ` ՀՈԳԵՎՈՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Բահայի հավատի բոլոր վերը նկարագրված ինստիտուտների գործունեությունը հենվում է հայտնության օրենքի վրա: Բահաուլլան պնդում էր, որ ցանկացած հասարակության հիմքում դրված է օրենքը: Առանց օրենքի չկա կարգ ու կանոն, իսկ կարգ ու կանոնը համատեղ մարդկային գործունեության բոլոր տեսակների անհրաժեշտ պայմանն է` լինի դա հոգևոր, մշակութային, տեխնիկական կամ մտավոր: Անգամ անձնական ազատությունը, անշուշտ, հենվում է օրենքի վրա: Կամավոր հրաժարվելով որոշ անձնական իրավունքներից հանուն հասարակության մեջ ընդունված օրենքների համակարգի` մարդը նպաստում է այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը բարենպաստ է նրա անձնական ծգտումների իրականացման համար և, վերջին հաշվով, շահում է ավելի, քան կորցնում է:

Ցանկացած խելամիտ օրենք նախ և առաջ ձգտում է հսկողության տակ դնել մարդու կենդանական բնույթը: Նախկինում մենք արդեն այդ թեման շոշափել ենք բավականին մանրամասն: Այստեղ միայն համառոտ հիշեցնենք, որ հոգին, միտքը, անձի բարոյական հատկանիշները կարող են ազատ զարգանալ միայն այն ժամանակ, երբ մարդուն հաջողվում է սանձել իր ֆիզիկական բնույթը և օգտագործել այն որպես հնազանդ գործիք: Իսկ եթե խրախուսենք մարմնական ցանկությունները, մարդու իսկական բնույթը կդառնա նրա կենդանական բնույթի ստրուկը:

Մարդու հոգևոր զարգացման համար բարենպաստ բոլոր օրենքների հիմքում Աստծո Հայտնիչների հայտնություններն են: Մովսեսի, Հիսուսի, Մոհամեդի պատգամներն ուղղակի վարքի կանոնների կամ բարոյական կարգադրագրերի ժողովածու չեն: Սերը, որը տածում է մեր նկատմամբ Աստծո դեսպանորդը, ընդունակ է հալեցնել մեր սրտերը և ծուլել դրանք նոր ձևով: Այդ ձևն իր վրա կրում է Հայտնիչների պատգամների դրոշմը: Յուրաքանչյուր հայտնություն իր մեջ ներառում էր նոր գաղափարներ բարու և չարի մասին և դրա հիման վրա ամեն անգամ ստեղծվում էր օրենքների նոր համակարգ: Բահաուլլան ասում էր. «Մի կարծեք, որ Մենք ընծայել ենք ձեզ օրենքների սովորական ժողովածու: Ոչ, Մենք կնքել ենք ընտիր Գինի հզորության և իշխանության մատներով»:

ՔԻԹԱԲ-Ի-ԱՂԴԱՍՈՐ՝ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԳԻՐՔՐԸ

Հաշվի առնելով Աստծո տված Օրենքի բացարձակ կարևորությունը՝ զարմանալի չէ, որ Շողի Էֆֆենդին Բահաուլլայի Քիթաբ-ի-Աղդաս օրենքների գիրքն (Սրբազան Գիրքը) անվանում էր «Բահաուլլայի ստեղծածներից ամենավեհը», «Բահաուլլայի մտքի ամենալուսավոր ցույց» և «Նոր Համաշխարհային կարգի ավետում»: Քիթաբ-ի-Աղդասում տրված են հիմնադիր օրենքներ, որոնք կոչված են սահմանել ինչպես անհատի, այնպես էլ ամբողջությամբ համայնքի հոգևոր կյանքը: Անշուշտ դա հռչակավոր փաստաթուղթ է: Քիթաբ-ի-Աղդասի մանրամասն վերլուծությունը չի մտնում տվյալ աշխատանքի խնդիրների մեջ: Նշենք միայն այդ հիմնական օրենսդրությունների ժողովածուի երեք կարևորագույն առանձնահատկությունները՝ օրենքների մատչելիությունը, դրանց աստիճանական կիրառումը և դրա հրապարակման ձևը:

Բահաուլլայի օրենքները շոշափում են յուրաքանչյուր հավատացյալի և ամբողջությամբ համայնքի կյանքի ամենաբազմազան տեսակետները: Խոսքը գնում է աղոթքների, պահքերի, ամուսնության, ամուսնալուծության, կրթության, թաղումների, կտակի և ժառանգության, որսի, սեռերի միջև փոխհարաբերությունների, մարմնի խնամքի, աշխատանքի, սննդի մասին:

Բահաուլլան և Աբդուլ-Բահան նշում էին, որ Քիթաբ-ի-Աղդասում պարունակվող օրենքները պետք է կյանքի կոչվեն աստիճանաբար, մարդու գիտակցության կատարելագործմանը զուգընթաց: Օրենքների անգամ մի մասի պահպանումը նպաստում է մարդկանց հոգևոր աճին և, ուրեմն, հող է պատրաստում նորանոր սահմանումներ կյանքի կոչելու համար: Բահաուլլան այսպես էր բացատրում օրենքների ներդրման աստիճանականության սկզբունքը.

«Արժանահավատությամբ գիտցիր, որ ամեն Հռչակման մեջ Աստծո հայտնության լույսն ընծայվում է մարդկանց՝ համապատասխան իրենց հոգևոր հնարավորություններին: Որպես օրինակ վերցրու արևը: Որքան թույլ են նրա ճառագայթները, երբ այն երևում է հորիզոնին: Որքան աստիճանաբար է աճում նրա ջերմությունն ու ուժը, երբ այն մոտենում է իր բարձրագույն կետին: Սա ամեն արարվածի համար հնարավոր է դարձնում ընտելանալու լույսի ուժեղացմանը... Եթե արևը հանկարծ հայտներ իր մեջ թաքնված ամբողջ հզորությունը, անշուշտ, ամեն արարվածի վնաս կպատճառվեր... Այդ նույն ձևով, եթե Ճշմարտության Լույսը իր հայտնության վաղ փուլերում հանկարծ շողար Ամենագորի Նախախնամությամբ իրեն տրված լրիվ ուժով, մարդկային

ըմբռնման հողը կդատարկվեր և կմահամար, քանզի մարդկային սրտերն ընդունակ չէին լինի ոչ ընկալելու այս Հայտնության ուժը, ոչ էլ արտացոլելու նրա լույսի ճառագայթները»:

Ղեկավարվելով տվյալ սկզբունքով՝ հավատի Պահապանը և Արդարության Համաշխարհային Տունը Բահաուլլայի օրենքները ներածում էին աստիճանաբար, քայլ առ քայլ, Բահայի համայնքի աճին ու հասունացմանը զուգընթաց: Օրենքներ մտցնելու գործընթացը շարունակվում է և, անշուշտ, կլինի երկարատև և դանդաղ ընթացող: Օրենքների մի մասը, ինչպես նշում էր Շողի Էֆֆենդին, «սպասվելիք հասարակությունը պետք է առաջանա ներկայիս՝ քառասյին պայմանների բեկորների հիման վրա»:

Քիթաբ-ի-Աղդաս անվանումը վերաբերում է ոչ թե ամբողջ գրքին, այլ միայն դրա հիմնական մասին: Բացի այդ, գրքում կան բազմաթիվ տեքստեր, որոնք ձևակերպում են և բացատրում Բահայի հավատի օրենքները: Գրքի բնօրինակն իրենից ներկայացնում է արաբերեն լեզվով մի փոքրիկ հատոր: Նախնական տեքստը Բահաուլլան համալրեց բազմաթիվ գրվածքներով, որոնք ավելի մանրամասն են լուսաբանում այնտեղ շոշափվող թեմաները, ինչպես նաև մեկնաբանությամբ, որն իրենից ներկայացնում է Քիթաբ-ի-Աղդասի մասին պարսիկ գիտնականների հարցերի պատասխանները: Բահաուլլան կանխատեսում էր, որ հետագա մեկնաբանությունների անհրաժեշտություն կծագի: Այդ պատճառով Աբդուլ-Բահան գիրքը լրացրեց նոր բացատրություններով և տեղեկություններով: Օրենքների ամփոփ ժողովածուի մեջ մտան նաև լայնածավալ մեկնաբանություններ, որոնք պատկանում էին Շողի Էֆֆենդիի՝ Բահայի հավատի Պահապանի գրչին:

Այսպիսով, Քիթաբ-ի-Աղդասի առանձին օրենքների ուսումնասիրման համար անհրաժեշտ է հետևել դրանց զարգացմանը տարբեր փաստաթղթերում: Շողի Էֆֆենդին իր առջև խնդիր դրեց՝ համակարգել և հրապարակել Քիթաբ-ի-Աղդաս օրենքների ժողովածուն: Նա՝ ինքը շատ ջանք գործադրեց այդ գործի համար. անգլերեն լեզվով թարգմանեց բնօրինակի մի մասը, կազմեց աշխատության մանրամասն պլան, որն անվանեց «Համառոտ տեսություն և օրենքների ժողովածու», ինչպես նաև տեքստի մեկնաբանություններ: 1973թ., Բահաուլլայի կողմից Քիթաբ-ի-Աղդասի ավարտման հարյուրամյակին Արդարության Համաշխարհային տունը հրապարակեց «Քիթաբ-ի-Աղդասի համառոտ տեսություն և օրենքների ու որոշումների ժողովածու» անվանումով այդ գրքի հատվածները՝ թարգմանված Շողի Էֆֆենդիի կողմից՝ մեկնաբանություններով:

ԿԻՏԱԲ-Ի-ԱՂԴԱՍԻ ՀԱՏՈՒԿ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Այժմ խոսքը կգնա մարդկանց կյանքի որոշ ոլորտների մասին, որտեղ Բահայի համայնքն արդեն կիրառում է Քիթաբ-ի-Աղդասում սահմանված համապատասխան օրենքները: Դա կօգնի որոշ պատկերացում ստանալ Բահաուլլայի կարգադրագրերի մասին, ինչպես նաև բացահայտել նշված օրենքների նախկինում հիշատակված երեք առանձնահատկությունները:

Աղոթքները և մեղիտացիան

Բահաուլլայի՝ հավատացյալների համար նախատեսած կարևորագույն օրենքներից մեկն է ամենօրյա աղոթքը և մեղիտացիան: Բահաուլլայի և Աբդուլ-Բահայի աղոթքների ժողովածուները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով. անգլերեն լեզվով գիրքը

հրապարակված է 300 էջով: Այն ամբողջությամբ բաղկացած է մեդիտացիաների համար Բահաուլլայի տեքստերից: Այդ գրքերը բահայիի համար ծառայում են որպես հոգևոր կյանքի հիմք:

Բացի աղոթելու և մեդիտացիաներով զբաղվելու ընդհանուր հրամանից, Բահաուլլան նշեց նաև հատուկ աղոթք, որը հասունության հասած յուրաքանչյուր հավատացյալ պետք է պարտադիր կարդա ամեն օր: Այդ աղոթքը գոյություն ունի երեք տարբերակներով. հավատացյալը կարող է ընտրել դրանցից մեկը: Ահա Համառոտ պարտադիր աղոթքի տեքստը: Այն կարդալու ժամանակն է կեսօրից մինչև արևամուտ.

«Ես վկայում եմ, ո՛վ իմ Աստված, որ Պու ինձ ստեղծել ես, որպեսզի ճանաչեմ և պաշտեմ Քեզ: Այս պահին վկայում եմ իմ անզորության և Քո հզորության, իմ անզորության և Քո առատության մասին:

Չկա Աստված, Քեզանից բացի՝ վտանգում Օգնական, Ինքնագո»:

ԻՆՔՆԱԶՍՊՈՒՄՆ ԱԼԿՈՀՈԼԻՑ և ԹՄՐԱԴԵՂԵՐԻՑ

Բահաուլլան սովորեցնում էր, որ ալկոհոլի, ինչպես նաև թմրադեղերի կամ պատրանքներ առաջացնող միջոցների օգտագործումը վնասակար ազդեցություն է թողնում բարձրագույն ֆիզիկական և մտավոր գործառնությունների վրա, իսկ դա, իր հերթին, խոչընդոտում է հոգևոր զարգացմանը: Բահայիներին արգելված է կիրառել դրանք որևէ տեսքով: Միակ բացառությունը բժշկի խորհուրդն է, սակայն այն պետք է սահմանափակվի միայն այն դեպքերով, երբ այլ բուժում գոյություն չունի: Այլ արգելքներ, որոնք վերաբերում են սննդին կամ ըմպելիքներին, Բահայի ուսմունքը չի դնում: Ծխելը, օրինակ, չի արգելվում՝ չնայած և դատապարտվում է որպես սովորություն, որը վնասակար է մարմնական առողջության համար և հաճախ տհաճ է շրջապատի համար:

ՊԱՍԸ

Հայտնության այլ կրոնների նման Բահայի ուսմունքը կարգադրում է պասը որպես միջոց, որն օգնում է կարգապահության ընտելացնել հոգին: Բահաուլլան բոլոր հասուն բահայիներին հրամայեց տարին մեկ անգամ պահպանել տասնիննօրյա պաս, այսինքն, հրաժարվել սննդից ամեն օր արևածագից մինչև արևամուտ: Ըստ բահայի օրացույցի պասի շրջանն ընկնում է Ալա (Վեհություն) ամսի վրա և տևում է մարտի 2-ից մինչև 21-ը ներառյալ: Պասի շրջանը դիտվում է, համապատասխանաբար, որպես հոգևոր վերածննդի և նոր աշխատանքների նախապատրաստման շրջան: Քիթաբ-ի-Ադդասում, սակայն, նշվում է, որ պաս պահպանելու անհրաժեշտությունից ազատվում են կերակրող մայրերը, հղի կանայք, գառամյալները, հիվանդները և նրանք, ովքեր ճանապարհորդում են, զբաղված են ծանր աշխատանքով, ինչպես նաև տասնհինգ տարեկանից ցածր երեխաները:

ԻՆՔՆԱԶՍՊՈՒՄԸ ՉԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Բացի կարգադրություններից հավատացյալներին՝ որպես անհատներ, Բահաուլլանն թողեց բազմաթիվ օրենքներ և կանոններ, որոնք վերաբերում են համայնքային կյանքին: Այսպես, Բահաուլլան հոգևոր առողջության համար ծայրահեղ վնասակար էր համարում չարախոսությունը, մերձավորներին դատապարտելու հակումը. «Չարախոսությունը հանգցնում է սրտի լույսը և սպանում հոգու կյանքը»: Չարախոսությունը մերձավորի դատապարտումն է երրորդ անձի ներկայությամբ՝ լինի դա չար մտադրությամբ, թե առանց դրա: Բահայի համայնքի անդամին թույլատրված է Տեղական Հոգևոր Ժողով բողոք ներկայացնել որևէ մեկի գործողությունների վերաբերյալ (առանց լայն հրապարակման)՝ թողնելով հարցի հետագա լուծումն այդ մարմնի հայեցողության վրա, իսկ ինքը՝ հավատացյալը պետք է խուսափի այդ թեմային վերաբերող խոսակցություններից:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Բահայիների օրենքով ամուսնությունը դիտվում է միաժամանակ և՛ որպես հոգևոր, և՛ որպես հասարակական ինստիտուտ: Ամուսնությունը շոշափում է ոչ միայն ամուսինների և նրանց երեխաների, այլև ծնողների, տատիկների ու պապիկների, թոռների, ամուսնու ու կնոջ այլ հարազատների շահերը: Ավելին, ամուսնությունն ազդում է (համենայն դեպս առողջ հասարակության մեջ պետք է ազդի) ամուսինների ամենամոտ շրջապատի բոլոր այլ սոցիալական կապերի վրա: Այդ պատճառով Բահաուլլան նշում էր ամուսինների համար միմյանց բնավորությունների ավելի լավ ուսումնասիրության անհրաժեշտությունը, որպեսզի թեթևամտության պատճառով ամուսնական միության նպատակով զուգընկերոջ ընտրության մեջ սխալ թույլ չտրվի: Ամուսնանալ ցանկացող Բահայի համայնքի անդամը պետք է ունենա իր ծնողների, ինչպես նաև ապագա կնոջ կամ տղամարդը Բահայի համայնքին): Բահայիները չեն ընդունում Արևելքում գոյություն ունեցող ավանդույթը, որի համաձայն հարսնացուին կամ փեսացուին ընտրում են նրանց ծնողները: Սակայն, որպես հակակշիռ արևմտյան ավանդույթներին, ամուսնանալ ցանկացողներին չի տրվում ընտրության լիակատար ազատություն, քանի որ իրականում նրանց որոշումը շոշափում է շատ մարդկանց շահեր: Երիտասարդները պետք է հաշվի առնեն ծնողների կարծիքը, ում վրա երեխաների ընդունած որոշման հետևանքները կարող են շատ լուրջ կերպով անդրադառնալ:

Բահայի հավատը կարգադրում է մինչև ամուսնություն պահպանել անարատությունը, քանի որ սեքսուալ բնազդը տրված է մարդուն երեխաներ ծնելու և ամուսնական կապերն ամրացնելու համար: Ամուսնության մեջ ամուսինները պետք է անպայման պահպանեն փոխադարձ հավատարմություն: Այդ պահանջին մեծ նշանակություն է տրվում: Ամուսնությունը ոչ մի դեպքում պարտադիր չէ բահայիի համար, սակայն թախանձագին խորհուրդ է տրվում և անվանվում է «բարեկեցության պատվար»: Ամուրիությունը չի համարվում առաքինություն, այլ, ընդհակառակը, դասվում է անցանկալի սահմանափակումների շարքին:

Բահայիների մոտ բացակայում է ամուսնության կնքման սահմանված ծեսը: Ծիսակատարությունը կարող է լինել շատ հասարակ: Միակ պահանջը փոխադարձ երդումն է. «Մենք բոլորս, հիրավի, կհետևենք Աստծո կամքին»: Ծեսն անցկացվում է

Հոգևոր ժողովի իմացությամբ, որը հավաստիացել է ծնողների համաձայնության մեջ և նրա նշանակված վկաների մասնակցությամբ: Արարողությունը սովորաբար ավարտվում է հարսնացուի և փեսացուի ընտրած աղոթքների կարդալով և երաժշտությամբ:

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բահայի ուսմունքով ամուսնալուծությունը թույլատրվում է, բայց հավանություն չի տրվում: Համարվում է, որ ընտանեկան կյանքի սովորական դժվարությունները «մաքրում են» ամուսինների «բնավորությունները» և ամրացնում ամուսնական միությունը, որը կարելի է համեմատել հասարակության շենքի աղյուսիկի հետ: Ըստ որում ընդունվում է, որ բնավորությունների անհամատեղելիության պատճառով ընտանեկան կյանքում կարող են ծագել անհաղթահարելի դժվարություններ: Այն դեպքերում, երբ ամուսինների միջև օտարացումը հասնում է այն աստիճանի, որ խոսք է գնում ամուսնալուծության մասին, բահայի օրենքով նախատեսված է այսպես կոչված «սպասման տարին», այսինքն, ամուսինների առանձին կյանքի տարին: Այդ շրջանն անհրաժեշտ է, որպեսզի ամուսինները շրջապատի խորհուրդներից օգտվելու հնարավորություն ունենան և բախումը հաշտեցնելու փորձեր ձեռնարկեն և այդպիսով պահպանեն միությունը: Կողմերից յուրաքանչյուրը կարող է Տեղական Հոգևոր ժողովի օգնությանը դիմել: Տեղական Հոգևոր ժողովի անդամները հանդիպում են ամուսինների հետ և պարզում, թե նրանք արդյոք պատրաստ են հաշտեցման փորձ անել: Եթե հաշտեցումն անհնար է, Հոգևոր ժողովը նշանակում է ամսաթիվ, որից սկսվում է «սպասման տարին»: Այդ պահից նրանք ձեռք են բերում առանձին կացարան:

«Սպասման տարվա» ընթացքում Հոգևոր ժողովը փորձում է օգնել զույգին հաղթահարել ծագած դժվարությունները: Չի բացառվում նաև մասնագետների օգնությունը: Բահայի օրենքով ամուսնալուծությունը կարող է կնքվել «սպասման տարվա» ավարտից ոչ շուտ:

Նման գործընթացը կարելի է անվանել «բուժում ընտանիքի համար»: Ամուսնությունը, երբ այն «հիվանդ» է, բուժում են խնայող միջոցներով՝ տրամադրելով «ընտանեկան օրգանիզմին» ուժերը հավաքելու և հիվանդությունը հաղթահարելու հնարավորություն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ ՉՄԱՍՆԱԿՑԵԼԸ

Բահաուլլայի կարծիքով Բահայի հավատի արտակարգ կարևոր օրենք է համարվում լրիվ հրաժարումը որևէ քաղաքական շարժումներում մասնակցելուց: Թվում է, թե Բահայի հավատի համախոհները, որոնք պայքարում են հանուն ամբողջ մարդկության բարօրության, այդ նպատակների իրականացման համար պետք է մասնակցեն տարբեր քաղաքական գործողություններում: Կյանքում ամեն ինչ այլ է: Բահայիներին թույլատրված է մասնակցել ընտրություններում և քվեարկել ցանկացած թեկնածուի օգտին, ով, ինչպես նրանց հուշում է խիղճը, ընդունակ է առավել մեծ օգուտ բերել հասարակությանը: Հավատացյալները նաև կարող են զբաղեցնել պետական պաշտոններ, որոնք կապված չեն քաղաքական գործունեության հետ: Սակայն բահայիներն իրավունք չունեն միանալու որևէ կուսակցության և շարժումների:

Դրա բացատրությունը պետք է փնտրել Բահայի հավատի հիմնական սկզբունքներից մեկում, այսինքն, այն համոզվածության մեջ, որ մեր օրերում բոլոր ժողովուրդների և պետությունների համար չկա ավելի կարևոր խնդիր, քան մարդկության միասնության նվաճումը: Միայն այդ նոր աստիճանի դեպքում մարդկային քաղաքակրթության վերելքը, ինչպես սովորեցնում էր Բահաուլլան, ճանապարհ կբացի իսկական սոցիալական առաջընթացի համար. «Բարօրությունը, խաղաղությունը, համերաշխությունը կլինեն միայն այն ժամանակ, երբ կհաստատվի ամուր միասնություն»: Բահաուլլան ենթադրում էր, որ քաղաքական շարժումներն իրենց էությանը բաժանում են մարդկանց՝ հակադրելով նրանց միմյանց: Դրանք ընդունակ չեն ծառայել ամբողջ մարդկության ընդհանուր շահերին: Ցանկացած քաղաքական միջոցներ, ինչպես նշում էր Բահաուլլան, լինեն դրանք ազգային, ռասայական, մշակութային կամ գաղափարական իմաստի, սահմանափակ են և ոչ կատարյալ:

Քաղաքականությանը չմիջամտելու սկզբունքը չի խանգարում, որ բահայիները որոշակի դիրք զբաղեցնեն զուտ սոցիալական կամ բարոյական բնույթի որոշ վիճելի հարցերի վերաբերյալ՝ պայմանով, որ այդ հարցերը չեն դառնում քաղաքական վեճերի առարկա: Շատ տարիներ Բահայի հավատի հետևորդները նկատելի դեր են խաղացել այնպիսի սոցիալական հարցերի լուծման մեջ, որոնցից են ռասայական հավասարության նվաճումը և խտրականության ոչնչացումը:

Քաղաքականությանը չմիջամտելու սկզբունքը և՛ գաղափարապես, և՛ գործնականում սերտ կապված է իշխանությունների նկատմամբ օրինապահության սկզբունքի հետ: Բահաուլլան իր համախոհներին կոչ էր անում ենթարկվել կառավարությանը, որը ներկայումս գտնվում է իշխանության դեկին և ձեռնպահ մնալ այն թուլացնելու կամ տապալելու որևէ փորձերից: Իշխանության փոփոխության դեպքում՝ ունենալով իշխանություններին հավատարիմ մնալու այդ նույն սկզբունքը, բահայիները պետք է դառնան նոր Վարչական Կարգի օրինապահ հպատակներ: Այդպիսի դիրքը լավագույնս համաձայնեցվում է քաղաքականությանը չմիջամտելու պահանջի հետ:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԱՀԱՅԻՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Բահայի հավատի բոլոր օրենքների և հասարակական կառուցվածքների հիմքում դրված է «խորհրդակցությամբ» որոշումների կոլեկտիվ ընդունման սկզբունքը: Ի նկատի ունենք կարծիքների անկեղծ, սակայն բարյացակամ փոխանակումը ճշմարտության պարզման և իսկական համերաշխության նվաճման նպատակով: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ Բահայի հավատի յուրաքանչյուր համախոհ անցնում է «խորհրդակցության» դպրոց: Այդ առիթով բերենք Շողի էֆֆենդիի խոսքերը.

«Խորհրդակցության սկզբունքը, որը կառավարման կառուցվածքի հիմնական օրենքներից մեկն է, պետք է կիրառել բահայիների գործունեության բոլոր տեսակների նկատմամբ, որոնք շոշափում են Հավատի կոլեկտիվ շահերը, քանզի հատկապես համագործակցության և գաղափարների մշտական փոխանակման միջոցով կարելի է լավագույնս պաշտպանել և ապահովել Գործի շահերը: Անձնական նախաձեռնությունը, ընդունակությունները և հնարամտությունը, թեև առանց դրանց անհնար է բավարարվել, բոլորովին բավական չեն այդպիսի հսկայական խնդրի կատարման համար, եթե չկա կոլեկտիվ փորձի հարստությունը և մարդկանց խմբի իմաստունությունը»:

Ոչ պակաս կարևոր դեր է հատկացվում խորհրդակցության սկզբունքին բահայի ընտանեկան կյանքում, հատկապես ամուսնու և կնոջ միջև: Բոլոր դեպքերում հավատա-
ցյալներին, երբ դա տրամաբանական է, խորհուրդ է տրվում անգամ անձնական
գործերում ուրիշների մոտ խորհուրդ փնտրել: Սակայն, Արդարության Համաշխարհային
Տունը նախազգուշացնում է.

«Պետք է հիշել, որ բահայիների ցանկացած համատեղ քննարկման նպատակն է խնդրի
լուծման փնտրումը, ինչը տարբերվում է որոշ շրջաններում մեր օրերում ընդունված
պրակտիկայից, երբ խմբի մասնակիցները մերկացնում են իրենց հոգին, ինչպես այդ արվում է
Հավատով արգելված խոստովանության ժամանակ... Մեզ արգելված է որևէ մեկին խոստովանել
մեր մեղքերը և վատ արարքները... ինչպես դա անում են որոշ կրոնական աղանդներ: Բայց եթե
մենք ցանկանանք ընդունել մեր սխալը կամ մեր թերությունները, զղջալ կամ ներողություն խնդրել,
ոչ ոք մեզ չի արգելում այդպես վարվել»:

Ստորև մենք բերում ենք Աբդուլ-Բահայի աշխատություններից լայնորեն հայտնի
հատվածը, որը դարձել է աշխատանքային փաստաթուղթ Բահայիների Ազգային և
Տեղական Հոգևոր Ժողովների համար, խորհրդակցության սկզբունքի գործնական
կիրառման ուղեցույց.

*«Առաջին պայմանն է բացարձակ սերը և միասնությունը ժողովի անդամների միջև: Նրանք
պետք է լրիվ ազատ լինեն օտարացածությունից և իրենցից ներկայացնեն Աստծո Միասնություն,
քանզի նրանք իրենց էությանը մի ծովի ալիքներ են, մի գետի կաթիլներ, մի երկնքի աստղեր են...
Դրանից հետո նրանք պետք է մեծ նվիրվածությամբ, քաղաքավարությամբ, արժանապատ-
վությամբ, փութաջանությամբ և զսպվածությամբ արտահայտեն իրենց տեսակետները: Յուրա-
քանչյուր հարցում նրանք պետք է փնտրեն ճշմարտություն և չպնդեն իրենց տեսակետի վրա,
քանզի իրենց հայացքների անզիջող պաշտպանությունը վերջին հաշվով կբերի անհամաձայ-
նության և վեճերի, իսկ ճշմարտությունը կմնա թաքնված: Հարգելի անդամները պետք է ամբողջ
անկեղծությամբ շարադրեն իրենց մտքերը, ընդ որում անթույլատրելի է մեկի կարծիքի
նվազեցումը մյուսի նկատմամբ: Հակառակը, պետք է հանգիստ շարադրել այն, ինչը ճշմարիտ է,
իսկ տարածայնությունների դեպքում պետք է գերակշռի մեծամասնության տեսակետը, և բոլորը
պետք է ենթարկվեն մեծամասնությանը: Անթույլատրելի է նաև հարգարժան անդամներից
յուրաքանչյուրի համար անհամաձայնությունն արդեն ընդունված որոշումներից որևէ մեկի հետ
կամ այդ որոշման դատապարտումը, ազամ եթե այն սխալ է՝ լինի դա ժողովի ժամանակ կամ
դրանից հետո, քանզի նման քննադատությունը կարող է խոչընդոտել ցանկացած որոշման
իրականացմանը... Եթե նրանք այդ պայմանների իրականացման համար ջանքեր գործադրեն,
նրանց վրա կիջնի Սուրբ Ոգու Վերին Օգնությունը, և այդ ժողովը կդառնա Երկնային երանության
կենտրոնակետ, և ի վերուստ եկած հաստատումների բազմությունը նրանց օգնության կգա և օր
օրի նրանց կտրվի ընդունել Ոգու նոր գեղումներ»:*

Բահայի Հոգևոր Ժողովների ևս մեկ հետաքրքիր առանձնահատկությունն է
միաբանության գիտակցական ձգտումը: Ձայների մեծամասնությամբ որոշումների
ընդունումը կատարելությունից հեռու, հարկադիր միջոց է.

*«Բահայիների խորհրդի ավարտի իդեալական տարբերակն է միաբան որոշման
ընդունումը: Երբ այդ անհնար է, պետք է քվեարկություն անցկացվի... Որոշումն ընդունելուց
անմիջապես հետո այն դառնում է ամբողջ ժողովի որոշում, այլ ոչ միայն այն անդամների, ովքեր
մեծամասնություն են կազմել»:*

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Բահայի հավատի մեր ուսումնասիրած կանոնները և այլ հիմնական օրենքները և կազմակերպչական սկզբունքները կազմում են ամուր հոգևոր հիմք, որի վրա է կառուցվում նոր կրոնի շենքը: Որոշ մարդիկ, հավանաբար, ենթադրում են, որ այն կրոնի համախոհները, որի նպատակն է արդարության վրա հիմնված մարդկության միասնության նվաճումը և նոր համաշխարհային համայնքի ստեղծումը, իրականությունից հեռու մարդիկ են: Անշուշտ, բահայիների ուղերձը հեռանկարային է և համայնքի որոշ անդամներ հասել են այս տեսունակությանը: Սակայն, մյուս կողմից, նրանք բոլորը գիտակցում են, որ իրենց նպատակներն անհասանելի են առանց մեզանից յուրաքանչյուրի և ամբողջ հասարակության անձնագրի ջանքերի և զոհաբերությունների:

Նրանք հավատում են, որ Նոր Համաշխարհային Կարգի և համաշխարհային քաղաքակրթության կառուցման պայմանն է նոր կենսակերպը, որը թույլ կտա կարգապահության ենթարկել մարդկային բնությունը և մարդու ուժերն ուղղել մարդկային ցեղի առջև դրված աստվածային խնդիրների կատարմանը: Նորամուծությունները պետք է շոշափեն ինչպես անձնական կյանքը, այնպես էլ հասարակության հիմքերը: Ամուսնության ինստիտուտին պետք է վերադարձնել քաղաքակրթության հիմքերը: Անհատի կյանքի մեջ պետք է ներառել հոգևորություն: Դրան կօգնեն ամենօրյա աղոթքները, մեդիտացիաները, մերձավորներին ծառայելը: Հասարակության մեջ արմատավորված արատավոր սովորություններին, ինչպիսիք են մարդկային համակեցության հիմքերը քայքայող չարախոսությունը, անհրաժեշտ է վերջ տալ: Մարդիկ պետք է հրաժարվեն ժամանակի և ջանքերի անպտուղ ծախսերից, որն է, օրինակ, քաղաքական շարժումներում մասնակցելը: Դրա փոխարեն նրանք պետք է համագործակցեն և համատեղ որոշումներ մշակեն: Պետք է ստեղծվեն նոր հասարակական կառուցվածքներ, որոնց բնորոշ գիծը կլինի լայն զանգվածների ավելի ակտիվ մասնակցությունը: Այն, որ հասարակությունը մինչ այժմ չի ենթարկվել անհրաժեշտ (և անխուսափելի) կարգապահության, ինչպես նաև չի ներդրել հիշատակված նոր կառուցվածքները, բահայիները բացատրում են ցանկալին իրականի փոխարեն ընդունելու մարդկանց հակվածությամբ և սպասման սովորությամբ, որ համաշխարհային խնդիրները կլուծվեն ակնթարթորեն՝ ինքնիրեն: Այդ մասին Բահաուլլան ասում էր.

«Նա, ում Աստված օժտել է խորաթափանցությամբ, պատրաստակամությամբ կհաստատի, որ համաշխարհային կարգի պահպանման և ժողովուրդների անվտանգության ապահովման համար Աստծո հաստատած կանոնները զուտ բարձրագույն միջոցներ են: Դրանք ժխտողը կհամարվի խղճուկ և սահմանափակ: Հիրավի, Մենք պատգամել ենք ձեզ չենթարկվել վատ կրքերին և արատավոր ցանկություններին և չանցնել սահմանները, որոնք գծված են Մեծագույնի Գրչով, քանզի այս է կյանքի շունչն ամեն արարվածի համար...»

Ո՛վ աշխարհի ժողովուրդներ: Գիտցեք հաստատ, որ Իմ պատգամներն Իմ ծառաների մեջ Իմ սիրող նախախնամության լուսատուներն են և Իմ արարումների համար Իմ գթասրտության բանալիները... Եթե մարդ համտեսեր խոսքերի քաղցրությունը, որոնք Ամենաողորմածի շուրթերը ցանկացան բարբառել, նա կմերժեր երկրի բոլոր հարստությունները, եթե դրանք լինեին իր իշխանության տակ, որպեսզի պաշտպաներ թեկուզ Նրա մեկ պատգամի ճշմարտությունը, որոնք փայլատակել են Նրա բարերար խնամքի և սիրող բարության արշալույսին»:

9. Բահայի համայնքը

Տարբեր կրոնների համախոհները վաղուց ի վեր միավորվում էին համայնքների մեջ: Բուդդայականության, Քրիստոնեության և Իսլամի պատմության վաղ փուլերը վկայում են, թե ինչպես է կայացել հավատացյալների բազմահազար համայնքների ձևավորումը, ում համախմբել է կրոնական հայեցակետերի միասնությունը: Համայնքային կյանքի հիմքում դրված էին հավատի կայացման սկզբունքները, որը հռչակել էր դրա հիմնադիրը: Համայնքների զարգանալուն և գործնականում հավատացյալների հոգևոր պահանջները բավարարելու ընդունակությունն ապացուցելուն զուգընթաց աճում էր դրանց անդամների թիվը: Համայնքներն արդեն ունեին միլիոնավոր համախոհներ: Հետագայում դրանց հիմքում ստեղծվում էին նոր պետություններ, ձևավորվում էին նոր մշակութային ավանդույթներ:

Այդպիսին էր կրոնի դերը քաղաքակրթության զարգացման վաղ, նախնադարյան փուլերում: Իր` «Քաղաքը համաշխարհային պատմության մեջ» լայնորեն հայտնի աշխատության մեջ փիլիսոփա և սոցիոլոգ Լուիս Մամֆորդը այսպես է նկարագրում մարդկանց համատեղ բնակության վաղ ձևերը.

«... նրանք ստիպված են բախվել ոչ միայն առօրյա կարիքների, այլև առեղծվածային երևույթների հետ: Նրանք համամասնակից են այլ` բարձրագույն իմաստով լի կյանքին: Ըստ որում նրանց գիտակցությունն ընդգրկում է անցյալն ու ապագան` հասկանալով ծննդյան սկզբնական գաղտնիքը և մահվան վերջնական գաղտնիքը` նայելով երկրային գոյության այն կողմը: Քաղաքի զարգացման ընթացքում ավելանում են նաև շատ այլ գործոններ, սակայն նյութական պայմանների առկայության դեպքում դրա առաջացման նախասկիզբն են հատկապես այդ գործոնները: Անհիշելի ժամանակներում մարդիկ միասին հավաքվում էին դամբարանի կամ գունազարդված կուռքի, մեծ քարի կամ սրբազան պուրակի մոտ, և այդ սովորույթը սկիզբ դրեց տարբեր քաղաքացիական ինստիտուտների` տաճարից մինչև աստղադիտարան, թատրոնից մինչև համալսարան»:

Բահայիների համայնքի ձևավորման ընթացքը բավականին առաջ է գնացել: Հավատի գոյության առաջին դարում համայնքը մեկուսացած էր Պարսկաստանի սահմաններում: Դաժան հալածանքների ենթարկվող փոքրաքանակ հավատացյալները

դժվարությամբ էին կյանքի կոչում իրենց կրոնի հիմնադրի ուսմունքը: Սակայն, երբ Շողի Էֆֆենդիի ղեկավարության տակ սկսեցին իրականանալ հավատի տարածման ծրագրերը, հատկապես, երբ այդ գործունեությունը սկսեց համաշխարհային թափ ձեռք բերել, առավել ակնհայտ դարձավ նոր աշխարհի կառուցման նախատիպ ծառայելու Բահայի համայնքի ունակությունը: Կլինի արդյոք Բահայի հավատը ոգեշնչող և ստեղծագործող ուժ, որն այլ աստվածային հայտնությունների կրոնների նման կնպաստի քաղաքակրթության առաջընթացին, ցույց կտա միայն ժամանակը: Միայն անհրաժեշտ է նշել, որ այդ հավատի համախոհների ակտիվ գործունեության արդյունքում անցած 140 տարվա ընթացքում աշխարհ եկավ և արագորեն սկսեց զարգանալ Բահայի համաշխարհային համայնքը: Գնահատական տալով Բահայի հավատին՝ չպետք է անտեսել այդ կարևորագույն փաստը:

Ինչպես նախկինում նշել ենք, Բահայի համայնքն ունի հարուստ հոգևոր ժառանգություն: 1844թ. սկիզբ առած հավատի պատմությունը նահատակության և ինքնագոհության, սխրագործությունների և դրամատիկական բախումների պատմություն է, և այն առանց չափազանցության կարելի է հերոսական անվանել: Բահայի Հայտնության մեջ կա հզոր ստեղծագործական ուժ. Բահաուլլայի ուսմունքն ընդգրկում է կյանքի ամենաբազմազան կողմերը և հետազոտում մեր օրերում մարդկությանը հուզող շատ կենսական հարցեր: Դժվար թե որևէ մեկը կասկածի, որ Բահայի հավատի վարչական կարգը նշանավոր նվաճում է: Այն արժանի է այդպիսի գնահատականի, քանզի այնտեղ ակնառու կերպով արտահայտվում է դրա սկզբունքների անբասիր համապատասխանությունն այդ կրոնի նպատակներին, իսկ դրա շրջանակներում ստեղծված հավատի ինստիտուտները այդ հավատի հիմնադրի պլանների իդեալական մարմնավորում են: Եթե բահայի պատմությունը, ուսմունքը, վարչական կարգը համարենք Բահաուլլայի կտակած ժառանգություն, ստիպված ենք ընդունել, որ նոր հավատը կյանքի կոչվեց՝ ունենալով ամուր հիմք:

Ինչպե՞ս տնօրինեցին Բահաուլլայի ժառանգներն այդ սեփականությունը: Ինչպիսի՞ համայնք նրանք կարողացան ստեղծել Բահաուլլայի և նրա հետևորդների մշակած հոգևոր սկզբունքների հիման վրա՝ ոգեշնչվելով հավատի հերոսների օրինակով, ըմբռնելով կրոնի հիմնադրի բացահայտած նպատակը և ուղերձը, ձգտելով կառուցել համայնքի կյանքը և վարչական կառուցվածքը:

Նպատակահարմար է ամփոփումը սկսել համայնքի հիմնադրման սկզբից դրա թվաքանակի և աճի դինամիկայի նշումից: Ճշգրիտ վիճակագրական տվյալները, ցավոք, բացակայում են: Համայնքն ունի երեքից ավելի միլիոն անդամ*, որոնցից մոտավորապես կեսը պատկանում են երկու խոշորագույն ազգային համայնքներին՝ հնդկական և իրանական: Այդ թիվն այնքան էլ մեծ չէ, եթե համեմատենք աշխարհում գոյություն ունեցող այլ կրոնական շարժումների հետ:

Բահայի հավատի տարածման ամենալավ վկայությունն է համայնքի ոչ այնքան քանակային, որքան տարածքային աճը: Ներկայումս գոյություն ունեն երեսուն հազար ընտրված Տեղական Հոգևոր Ժողովներ, որոնք գործում են ավելի, քան երկու հարյուր անկախ պետություններում և խոշոր տարածաշրջաններում. բահայիները (կամ բահայիների խմբերը) բնակվում են ավելի, քան հարյուր հազար բնակելի վայրերում: Բահայի Համաշխարհային համայնքի տվյալներով դրա կազմում կան երկու հազարից ավելի փոքր էթնիկական խմբերի և ցեղերի ներկայացուցիչներ, որոնցից շատերն ապրում են երկրագնդի ամենահեռավոր անկյուններում՝ Խաղաղ օվկիանոսի ափերում, Անդրբևեռա-

շրջանում, ջունգլիների կորուսյալ բնակավայրերում, Անդերի բարձր լեռնային շրջաններում: Ազգային Հոգևոր ժողովները, որոնց թիվը հասել է հարյուր քառասունութի, լուսավորման և իրենց խնամակալությանը վստահված համայնքների (որոնք այդքան բազմազան են իրենց էթնիկական կազմով) ավելի լավ կազմակերպման նպատակով ավելի, քան յոթ հարյուր լեզուներով թարգմանել և հրատարակել են աղոթքների և այլ կրոնական գրականության ժողովածուներ:

Համայնքի բազմազգ կազմը, դրա գործունեության լայն թափը, բարձր կազմակերպվածությունը հավատի գոյության այդքան վաղ շրջանում վկայում են համեմատաբար փոքր կրոնական համայնքի մեծ հաջողությունների մասին: Բահայի համայնքի հեղինակությունը բարձր է նաև քաղաքացիական իշխանությունների մոտ: Բահայիները ոչ մի դեպքում չեն հեռանում «այս աշխարհի» խնդիրներից և չեն նվազեցնում հասարակության կառավարման ինստիտուտների նշանակությունը: Նրանք իրենց գործունեության անհրաժեշտ նախադրյալն են համարում բազմակողմանի համագործակցությունը քաղաքացիական իշխանությունների հետ: Հոգևոր ժողովները հավատի զարգացման և տարածման իրենց լայնամասշտաբ պլանների կատարման ընթացքում ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակում մշտապես ձգտում են հասնել պաշտոնական ճանաչման: Այդ ջանքերի արդյունք դարձավ Բահայի հավատի վարչական մարմինների օրինականացումն այն երկրների մեծ մասում, որտեղ այդպիսի մարմինները ձեռնարկված են: Բահայիների ծեսով կնքված ամուսնությունը ճանաչվում է շատ երկրների քաղաքացիական օրենսդրությամբ: Երկրագնդի տարբեր մասերում գործատուները, դպրոցների և կառավարական ձեռնարկությունների ադմինիստրացիան աստիճանաբար սկսում են ընդունել բահայիների կրոնական տոները՝ դասելով դրանք մի շարքում այլ մեծ համաշխարհային կրոնների տոների հետ:

Մշտապես բարձրանում է այն կարգավիճակը, որը շնորհվել է Բահայի համաշխարհային համայնքին Միացյալ Ազգերի Կազմակերպության Տնտեսական և Սոցիալական Ջարգացման Խորհրդի կողմից: Բահայի համաշխարհային համայնքի ներկայացուցիչները մասնակցում են շատ միջազգային կոնֆերանսներին, որոնք գումարվում են ՄԱԿ-ի տարբեր մարմինների և ներկայացուցչությունների կողմից: Մասնակցելով նման միջոցառումներին՝ բահայիները ձգտում են համընդհանուր միասնության նվաճմանը: Բացի այդ, դա իրենց հնարավորություն է տալիս ծանոթացնել լայն հասարակայնությանն իրենց հավատի իդեալների հետ, որի գլխավոր սկզբունքն է ամբողջ մարդկության բարօրության ձգտումը:

Շատ բան է արվում նաև նրա համար, որպեսզի երկրագնդի տարբեր անկյուններում ավելի շատ մարդիկ իմանան նոր հավատի և դրա ուսմունքի կառուցվածքի մասին: Շատ երկրներում գործում են հրատարակություններ, որոնք թողարկում են և տարածում Բահայի հավատին վերաբերող ամենաբազմազան գրականություն՝ Բահաուլլայի աշխատությունների ժողովածուներից մինչև գիտական մեկնաբանություններ, հանրամատչելի գրքեր, շաբաթաթերթեր, ամսագրեր: Լայնորեն կիրառվում են նաև այլ զանգվածային լրատվության միջոցներ՝ կինո, հեռուստատեսություն, այդ թվում՝ տարածաշրջանային, ռադիո, թերթեր և հայտարարություններ, բրոշյուրներ, դասագրքեր, հեռակա ուսուցման դասընթացներ, ցուցահանդեսներ, դասախոսություններ, ծնեռային և ամառային դպրոցներ: Ըստ որում բահայիները ձգտում են, որպեսզի Բահաուլլայի ուղերձը, վերջ ի վերջո, հասնի երկրի բոլոր մարդկանց:

Համայնքի լուսավորչական գործունեության մեջ հատկապես կարևոր դեր խաղաց Բահայի հավատի ինստիտուտներից մեկը՝ Պաշտամունքի Տունը: Մեր օրերում Պաշտամունքի Տներ կան բոլոր մայրցամաքներում, ձեռք են բերվել բազմաթիվ հողատարածքներ շենքերի ապագա կառուցման համար, որոնք պետք է դառնան բահայիների համայնքային կյանքի կենտրոնակետ: Ժամանակի ընթացքում Պաշտամունքի Տների շուրջ կաճեն դպրոցներ և քոլեջներ, ծերանոցներ, վարչական կենտրոններ: Պաշտամունքի Տները բաց են ցանկացած մարդու համար՝ ինչպիսի հավատ էլ նա դավանի (ինչպես նաև այն մարդկանց համար, ովքեր չեն պատկանում ոչ մի կրոնի), քանզի դրանք վայր են, որտեղ կարելի է խոնարհվել միասնական Աստծուն: Բահայիների ժամերգությունները կարելի է անվանել համապարփակ, քանի որ այնտեղ կարդում են աղոթքներ և հատվածներ աշխարհի տարբեր կրոն-ների Սուրբ Գրքերից: Ըստ որում չեն արվում քարոզներ և չեն կատարվում Բահայի հավատին բնորոշ ինչ-որ յուրօրինակ ծեսեր: Տեքստերի համար հաճախ գրվում է երաժշտություն, որը կատարում է ուսուցում ստացած երգչախումբը՝ a cappella: Պաշտամունքի Տների միակ պարտադիր ճարտարապետական առանձնահատկությունը ներքին տարածքի իննանիստ ձևն է և գմբեթի առկայությունը, ինչում արտահայտվում է բոլոր կրոնական ավանդույթների ճանաչումը: Խորհրդանշական է այն, որ մարդիկ տաճար են մտնում տարբեր դրներից, սակայն հետո միանում են իրար, որպեսզի խոնարհվեն միակ Արարչին:

Պաշտամունքի Տների ճարտարապետության մեջ մարմնավորվում է Բահայի հավատի հետևորդների վերաբերմունքն իրենց շրջապատող հասարակության նկատմամբ: Տաճարներն իրենցից ներկայացնում են բաց լուսավոր տարածքներ: Դրանց կառուցվածքն ու կահավորությունն ակներևաբար արտացոլում են բահայիների՝ «միասնություն բազմազանության մեջ» գաղափարը: «Արևմուտքի Մայր Տաճարը» (Վիլմեթ, Իլինոյս նահանգ) ճարտարապետի մտահղացմամբ իրենից ներկայացնում է իրար հետ միաձուլված բոլոր մեծ՝ Աստծո հայտնած կրոնների տարբեր ճարտարապետական ավանդույթների և խորհրդանշանների ամբողջություն: Բերենք տաճարի ճարտարապետի խոսքերը.

«Եթե բոլոր կրոններն ազատենք արհեստական շերտավորումներից, ապա մեր առջև կերևա ինքը՝ ներդաշնակությունը: Մեր օրերում, սակայն, կրոնն այնքան է խոցված սնահավատություններով և անհիմն ենթադրություններով, որ այն կարող է մաքուր և անբիծ դառնալ միայն այն ժամանակ, երբ ընդունի նոր ձև: Նույնն էլ վերաբերում է ճարտարապետությանը...»

Համաձայն ընդհանուր մտահղացման՝ նոր տաճարը խորհրդանշական ձևով արտահայտում է միասնության մասին Բահայիների (բոլոր կրոնների և ամբողջ մարդկային ցեղի ընդհանրության) մեծ գաղափարը »:

Պաշտամունքի Տների ճարտարապետության մեջ իր արտահայտումն է գտնում նաև Բահայի համայնքին բնորոշ լավատեսությունը: Բահայիները հստակ համոզված են, որ ժամանակի ընթացքում մարդկության մեծ մասը կհետևի Բահաուլլայի ուսմունքին: Նրանք հավատում են, որ խորացող համընդհանուր ճգնաժամը կդառնա այն գործոնը, որը կդրդի ամբողջ աշխարհի մարդկանց մտորել ճշմարտության փնտրումների շուրջ և, եթե մարդկությանը հասնի Բահաուլլայի Հայտնության մասին Ուղերձը, նրա հետևորդների շարքերը կհամալրվեն նրանց հաշվին, ովքեր փնտրում են հոգևոր ղեկավարություն: Տաճարի ճարտարապետության բացությունը, նախագծում տարբեր ոճերի միաձուլումը, ժամերգությունները, որոնցից հանվել են ինչպես քարոզները, այնպես էլ սովորական

եկեղեցական ծեսը՝ այդ ամենը համոզիչ կերպով արտացոլում է ուրախ նկրտումը դեպի ապագա:

Ներկայումս ադախսի լավատեսական տրամադրվածությունը միանգամայն արդարացված է թվում: Բահայի հավատն այսօր աշխարհի առավել արագ աճող կրոններից մեկն է: 1979թ. ապրիլին Արդարության Համաշխարհային Տունը հայտարարեց այն մասին, որ հավատի տարածման լայնամասշտաբ պլանների շարքից վերջինը՝ Հնգամյա պլանը, որի իրականացումը սկսվել էր 1974թ., հաջողությամբ ավարտված է: Շատ դեպքերում նշանակված նպատակները գերազանցվել էին: Այդ նախ և առաջ վերաբերում է Հոգևոր ժողովների և հավատի կենտրոնների աճող քանակին: Նշվում էր, որ հինգ տարվա ընթացքում հավատացյալների թիվն աճել էր ավելի, քան քառասուն տոկոսով:

Նախորդ իննամյա տարում (նախորդ պլանի ընթացքում) Բահայի համայնքի առավել մեծ աճ նկատվեց Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում, իսկ այս անգամ առաջնությունն անցավ Ասիայի և Խաղաղ օվկիանոսի կղզիների Բահայի համայնքներին: Այդպիսի արդյունքներով ոգեշնչված՝ Արդարության Համաշխարհային Տունը հայտարարեց այն մասին, որ անհապաղ սկսում է նոր յոթնամյա պլանի կատարումը՝ նախատեսված մինչև 1986թ. գարունը: Երբ 1983թ., ամբողջ աշխարհի բահայիների ներկայացուցիչները հավաքվեցին Հայֆայում իրենց համաշխարհային համագումարին, նոր պլանի կատարումն արդեն ընթանում էր դրված նպատակների գերազանցումով:

Մենք համառոտ ծանոթացանք բահայիների թվաքանակը ներկայացնող տվյալների, ինչպես նաև համայնքի աճի և ամրապնդման առանձնահատկությունների հետ: Համայնքի ներքին կյանքի ուսումնասիրումը կապված է ավելի մեծ դժվարությունների կետ: Առավել տրամաբանական է դրա համար դիմել համայնքի անդամների փորձին: Ինչպե՞ս է մարդն ընդունում Բահայի հավատը: Ի՞նչ է զգում մարդը, որը այսօր դարձել է բահայի:

Անշուշտ, այդ հարցերի պատասխանները միանշանակ չեն: Ավելին, ըստ երևույթին, մշակութաաշխարհագրական բնույթի էական տարբերությունները տարբեր համայնքների բահայիների պատմությունների որոշ հակասությունների պատճառ են ծառայում: Բահայի հավատի պատմությունը, կրոնական ուսմունքը, աստիճանաբար կյանքի կոչվող Վարչական Կարգն իրենց էությամբ նույնն են բոլոր համայնքներում և մշտապես թեժ արձագանք են առաջացնում այդ հավատն ընդունողների մոտ, որ ազգի ներկայացուցիչ էլ նրանք լինեն:

Հավատացյալ բահայիի հոգևոր կերպարի նկատմամբ Արդարության Համաշխարհային Տունը ներկայացնում է հետևյալ պահանջները.

«Գլխավոր դրդապատճառը պետք է լինի Աստծո Հայտնության ընդունումը և Տիրոջ դեսպանորդի ճանաչումը: Նա, ով իրեն հայտարարում է բահայի, պետք է գրավվի ուսմունքի գեղեցկությամբ և ամբողջ սրտով արձագանքի Բահաուլլայի սիրուն: Պարտադիր չէ, որ հավատ ընդունել ցանկացողը խորությամբ իմանա բոլոր աստվածաբանական թեզերը, հավատի պատմությունը, օրենքները և սկզբունքները: Սակայն այն մարդը, ում սրտում ծագել է հավատի կայծը, պետք է ծանոթանա տվյալ կրոնի հիմնադիրների կյանքին և ուսմունքին, ինչպես նաև ընդհանուր պատկերացումներ կազմի այն օրենքների մասին, որոնք նա պետք է պահպանի և այն ադմինիստրացիայի մասին, որին պետք է ենթարկվի»:

Նրանց համար, ովքեր ծնվել և մեծացել են բահայիների ընտանիքում, հավատի պաշտոնական ընդունման ընթացակարգը չափազանց հասարակ է: Բահայի ուսմունքը

մերժում է դաստիարակության հավակնոտ մեթոդները, այդ պատճառով բահայիները երեխաներին վերաբերում են այնպես, ինչպես համայնքի անդամներին: Նրանք մեծերի հետ միասին նշում են բոլոր նշանակալի տարեթվերը և մասնակցում համայնքի Տոներին, ուսումնասիրում են հավատի պատմությունը և Բահահուլլայի ուսմունքը, ինչպես նաև մյուս բոլոր համաշխարհային կրոնները: Նրանց մոտ դաստիարակում են իրենց կյանքը հավատի սկզբունքների հետ համապատասխանեցնելու ձգտումը, իհարկե այն չափով, որքանով այն մատչելի է նրանց տարիքին: Այն, որ Բահայի հավատը վերաբերում է և դիմում է հասարակության կյանքի արդիական խնդիրներին, անշուշտ, դրդում է պատանեկությանը շարունակել իրենց հոգևոր և մտավոր փնտրումը՝ մնալով հավատի հովանու տակ: Այնուամենայնիվ, երիտասարդները ցանկության դեպքում կամավոր կերպով կարող են դուրս գալ համայնքից: Չափահաս դառնալուն պես (Բահայի համայնքում դա տասնհինգ տարեկանն է), պատանիներն իրենց վրա լիակատար պատասխանատվություն են վերցնում իրենց հոգևոր զարգացման համար: Մոտավորապես այդ նույն ժամանակ նրանք հայտարարում են՝ համարում են արդյոք իրենք իրենց բահայի և մտադիր են արդյոք առաջվա պես մասնակցել համայնքի կյանքին:

Ինչ վերաբերում է նրանց, ովքեր Բահայի հավատն ընդունել են հասուն տարիքում, ապա այդպիսի որոշումը սովորաբար հավատացյալների հետ սերտ հաղորդակցության հետևանք է: Համայնքի լայն լուսավորչական գործունեությունը գրավում է բազմաթիվ մարդկանց, ովքեր ցանկանում են հենց հավատացյալներից լրացուցիչ տեղեկություններ ստանալ նոր կրոնի մասին: Փոքր խմբերի համար կազմակերպվող ուսումնական պարապմունքներին կամ պաշտոնական շնորհանդեսներին Բահայի հավատով բոլոր հետաքրքրվողները կարող են ստանալ բավականին մանրամասն տեղեկություններ ուսմունքի և նպատակների մասին, որոնք իր առջև դնում է համայնքը: Դրանից հետո հաճախ հավատով հետաքրքրվողը կամ ինքն է տեղեկանում համայնքի անդամ դառնալու պայմանների մասին, կամ բահայիները նրան առաջարկում են մտածել այդ հնարավորության շուրջ: Նրանք, ովքեր ցանկանում են ընդունել հավատը, դիմում են Տեղական Հոգևոր Ժողովին: Եթե տվյալ մարմնի անդամները կհամարեն, որ ապագա բահային իր որոշումն ընդունել է գիտակցաբար և պատասխանատու կերպով և պատրաստ է կյանքում ղեկավարվել Բահահուլլայի ուսմունքով, համայնքի անդամ դառնալը կարելի է կայացած համարել: Այդ բնույթի իրադարձությունը չի ուղեկցվում որևէ ծեսով կամ խոստումների ընդունմամբ, սակայն, որպես կանոն, տոնվում է բարեկամական շրջապատում:

Բահայի համայնքի նոր անդամը ներգրավվում է երկու գործընթացի մեջ՝ առաջինը՝ նա սկսում է զբաղվել իր սեփական հոգևոր կատարելագործմամբ, երկրորդը՝ իր համախոհների հետ մասնակցում է պրակտիկ գործունեության մեջ, որն ուղղված է Բահահուլլայի հռչակված իդեալները կյանքի կոչելուն: Աղոթքներ, մեդիտացիաներ, պաս սահմանված օրերում, ինքնազսպում թմրադեղերից և ալկոհոլից, հրաժարում մերձավորներին քննարկելու և չարախոսելու սովորությունից՝ ահա կարգադրված կարգապահության հիմնական տարրերը: Բացի այդ, Բահայի համայնքը, որպես կանոն, իրականացնում է հավատի տարածման երկարաժամկետ ծրագիր, որը պահանջում է հավատացյալների համաձայնեցված ջանքեր և անդադար աշխատանք: Պրակտիկ գործերում համայնքի անդամների մշտական մասնակցությունը բահայիների կյանքի տարբերիչ առանձնահատկությունն է:

Բահայիների համար հոգևոր կարգապահությունն այնքանով է անհրաժեշտ, որքանով և պրակտիկ գործունեությունը համայնքի շրջանակներում, քանզի Բահայի հավատը ծառայությանը հատուկ տեղ է հատկացնում: Բահաուլլան սովորեցնում էր, որ ծառայության միջոցով մարդու բնությունն իրեն առավել լիարժեք է արտահայտում: Հոգևոր աճը, ներքին ներուժի բացահայտումը զուգակցված են մարդկության համախմբման գործին ծառայելու հետ: Հոգևոր կարգապահության նպատակն է մարդու հոգին սեփական «ես»-ի մասին մտածելուց ազատելը, ինչը կխորացնի բոլոր մարդկանց հետ նրա ընդհանրության զգացումը և, նրա եռանդը կուղղորդի մերձավորներին ծառայելու հնարավորությունների փնտրմանը: Բահայի համայնքի գործունեությունը առավելագույնս բավարարում է հավատացյալների պահանջները նման ծառայության ուղղությամբ: Հոգևորականության բացակայության պայմաններում համայնքի կյանքը կազմակերպված է այնպես, որ բոլոր հավատացյալներին անհրաժեշտ է ակտիվորեն մասնակցել համայնքի գործերում:

Հատուկ նշանակություն է տրվում հավատի տարածման գործունեությանը: Բահաուլլան ասում էր, որ մեր օրերում առավել օգտակար ծառայությունն «Աստծո պատգամի քարոզն» է: Յուրաքանչյուր բահայիից պահանջվում է Բահաուլլայի հայտնության լուրը հասցնել բոլոր նրանց, ովքեր պատրաստ են այն ընդունել: Արդու-Բահան զգուշացնում էր, որ ժամանակը սուղ է: Արդիական հասարակությունը համակած ձգնաժամը կխորանա՝ առաջացնելով մարդկանց էլ ավելի մեծ տառապանքներ, և, վերջին հաշվով, կհանգեցնի նրան, որ մարդկային համակեցության գոյություն ունեցող ձևերը կփլուզվեն: Բահայի համայնքները պետք է ներկայացնեն հասարակության կյանքի կազմակերպման այլընտրանքային թևեր: Դրա համար անհրաժեշտ է, որ բոլոր երկրներում բազմակի աճի այն մարդկանց թիվը, ովքեր արձագանքում են Բահաուլլայի կոչին և ձգտում կյանքի կոչել նրա ուսմունքը:

Ջարմանալի չէ, որ այն անդամները, ովքեր նոր են եկել համայնք, որպես կանոն, անում են հնարավոր ամեն ինչ, որպեսզի արժանապատիվ ձևով արձագանքեն այդ կոչին: Նրանք ձեռք են բերել հենարան և կյանքի իմաստ և շտապում են դրանցով կիսվել այլ մարդկանց հետ: Սակայն, չնայած, որ հավատի տարածմանն այդքան մեծ նշանակություն է տրվում, պրոզելիտիզմի վրա խիստ արգելք է դրված: Բահայիներն աշխատում են մերձավորներին իրենց հավատի բերել՝ չներխուժելով նրանց անձնական կյանքի մեջ և չխախտելով այն երկրի օրենքները, որում ապրում են: Ինչպես ցույց է տալիս փորձը, այդ խնդրի լուծման միջոցները կարող են լինել շատ բազմազան՝ կախված կոնկրետ երկրի իրավիճակից և մարդկանց բնավորության ազգային առանձնահատկություններից:

Խոսելով հավատի տարածման ուղղությամբ բահայիների գործունեության մասին՝ դժվար է որևէ ընդհանրացումներ անել: Արևմուտքի երկրների մեծ մասում ինչպես առանձին հավատացյալները, այնպես էլ բահայիների ընտանիքները իրենց հավատը տարածում են սովորական առօրյա կյանքում՝ հարևանների, բարեկամների, աշխատակիցների հետ զրույցներում, տարբեր հասարակական միջոցառումների, ուսումնական պարապմունքների և հանգստի ժամանակ: Մեծ հնարավորություններ են բացվում նաև Տոների և բահայիների այլ հանդիպումների ժամանակ, որտեղ հրավիրվում են ոչ միայն համայնքի անդամները, այլև բոլոր ցանկացողները: Երկրագնդի այլ տարածաշրջաններում լայն հասարակությունը ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերում կրոնի նկատմամբ, քան Արևմուտքում և նոր հոգևոր ուսմունքների քննարկումների մեջ ներառվում են ամբողջ համայնքներ: Կենտրոնական Աֆրիկայում և Հարավային

Ամերիկայում հավատացյալների շարքերը զգալիորեն համալրվեցին այն ժամանակ, երբ բահայիների խմբերը այնտեղ կազմակերպում էին երաժշտական և թատերական ներկայացումներ, անցակացնում էին հավատի հիմքերին նվիրված գրույցներ և ուսումնական պարապմունքներ: Որոշ դեպքերում պարապմունքները կազմակերպվում էին ունկնդիրների նախաձեռնությամբ: Հյուսիսային Ամերիկայի բահայիները հարավային նահանգների եկեղեցիներում մուգ մաշկ ունեցող ծխականների առջև ելույթ ունենալու, կանադական տափաստաններում հնդկացիների հավաքույթներում Բահայի հայտնության մասին պատմելու հրավերներ էին ստանում: Հյուսիսային Ամերիկայի, Հնդկաստանի, Խաղաղ Օվկիանոսի երիտասարդ պետությունների, Կարիբյան ծովի կղզիների քուլեջներ և համալսարաններ իրենց հավատի հիմքերի մասին դասախոսություններ կարդալու նպատակով հաճախ հրավիրում են Բահայի հավատ դավանող գիտնականների:

Բահաուլլայի ուսմունքների նոր համախոհներ գրավելու ամենատարածված միջոցը «Ֆաերսայդներն» են: Այդ անվանումը ծագեց Մոնրեալի (Կանադա) առաջին բահայիների միջավայրում՝ չնայած բահայիները նախկինում էլ նման հանդիպումներ կազմակերպել էին այլ քաղաղներում: Խոսքը գնում է մասնավոր տներում անցկացվող կանոնավոր ուսուցման խմբերի մասին, որտեղ հրավիրում են մի քանի բարեկամ և ծանոթ: Շնորհիվ դրա համայնքը ներգրավվեց բավականին շատ նորեկներով: Նեղ շրջանակում տարվող գրույցները թույլ են տալիս ունկնդիրներին ուսումնասիրել հավատի հիմնական տեսակետները, օրենքները և աստվածաբանական ուսմունքները՝ օտարների առջև ցույց չտալով իրենց անձնական հոգևոր փնտրումները, ինչպես դա լինում է զանգվածային ժողովների ժամանակ: Բացի այդ, նոր հավատացյալներ գրավելու այդպիսի միջոցը ամրացնում է բարեկամական կապերը, որոնք այնուհետև օգնում են նորահավատներին իրենց տեղը գտնել համայնքում:

Պիոներների գործունեությունը բահայիների քարոզչական գործունեության հատուկ ձև է: Բահայի կրոնը չունի հոգևորականություն: Բնականաբար, բացակայում են նաև հմուտ քարոզիչները, ովքեր Բահայի ուսմունքը կտարածեին երկրագնդի այն անկյուններում, որտեղ բնակչությունը դեռ ծանոթ չէր դրան: Իր տարածմամբ Բահայի հավատը պարտական է ոչ թե քարոզիչներին, այլ հազարավոր իր հետևորդների նախաձեռնությանը, ովքեր միայնակ կամ ընտանիքներով թողնում են իրենց տները և տեղափոխվում նոր վայրեր: Պիոներներն իրենք են իրենց համար վաստակում, իսկ հավատի տարածմանը նվիրում են գործունեությունից ազատ ժամանակը: Մարդիկ փոխում են աշխատանքը, վաճառում իրենց տները, նոր բնակավայր փնտրում, տիրապետում օտար լեզուներին, լուծում բազմաթիվ այլ կենսական խնդիրներ: Եվ այդ ամենն արվում է մեկ նպատակով՝ Բահայի ուսմունքը բերել ևս մեկ քաղաք, մարզ, շրջան:

Պիոներների գործունեությունը կարող է սերտ կապված լինել նաև այլ երկիր տեղափոխվելու հետ, որտեղ Բահայի հավատը դեռ արմատներ չի թողել: Արդարության Համաշխարհային Տան կողմից հավատի տարածման լայնամասշտաբ պլաններից յուրաքանչյուրի մեջ ներառվում է երկրների ցուցակ, որոնք արտասահմանից եկած կամավորների կարիք ունեն և որոշվում է, թե որքան պիոներ է անհրաժեշտ: Շատ դեպքերում տարբեր ազգային համայնքների առջև դրվում են որոշակի խնդիրներ. հաճախ որոշակի երկիր կամ տարածաշրջան են կանչվում կամավորներ երեք-չորս երկրներից: Արդյունքում, որոշակի վայր Ֆինլանդիայում կամ Հայիթիում կարող են գալ բահայիներ Իրանից, Ֆրանսիայից, Ճապոնիայից և Միացյալ Նահանգներից: Անկախ նրանից, թե ինչպիսի կոնկրետ օգնություն են ի վիճակի ցուցաբերել նոր եկածները, նրանց հրավիրած

համայնքը հանարավորություն է ստանում դիտելու, թե ինչպես է կյանքի կոչվում «միասնություն բազմազանության մեջ» սկզբունքը (նույնն էլ վերաբերվում է, անշուշտ, և արտասահմանից եկած պիոներներին):

Այդ կարգի գործողությունները, ինչպես նաև Բահայի համայնքի գործունեության բոլոր այլ տեսակները, ամբողջությամբ կախված են յուրաքանչյուր հավատացյալի նախաձեռնությունից և պատասխանատվության զգացումից: Համայնքի անդամին ոչ ոք չի հսկում: Նա ինքն է որոշում, թե ինչպիսիք են հավատի տարածման հետ կապված նրա պարտականությունները: Հոգևոր ժողովները կարող են միջամտել, եթե այս կամ այն բահայի գործունեությունը ինչ-որ պատճառով առարկումներ է առաջացնում, սակայն մասնակցությունը հավատի տարածման գործում բացառապես հավատացյալի խղճի գործն է: Նույնն էլ կարելի է ասել նաև պիոներների գործունեության մասին, որը բահայիների մոտ համարվում է բավականին պատվավոր: Բահայիների տեղական համայնքների բոլոր անդամներին ամեն ամիս տեղեկացնում են, թե որտեղ են սպասում պիոներներին և շրջիկ ուսուցիչներին: Այդ բնույթի տեղեկություններ բահայիները ստանում են Տասնիններորդ Օրվա Տոներին, կոնֆերանսների ժամանակ կամ համայնքի հրատարակած բազմազան տպագիր նյութերից: Կոչին արձագանքելու որոշումը ծնվում է հավատացյալի սրտում կամ ընդունվում է ամբողջ ընտանիքի կողմից: Այնուհետև պիոները կամ պիոներների ընտանիքը դիմում է հավատի համապատասխան վարչական ինստիտուտ, որպեսզի կոնկրետ խնդիրների և նախագծերի մասին տեղեկություններ ստանա:

Բահայի բազմաթիվ ծրագրերի ֆինանսավորումը նույնպես հիմնված է կամավորության սկզբունքի վրա: Տարվա սկզբին (բահայի օրացույցով) բոլոր Տեղական և Ազգային Հոգևոր ժողովները բյուջեի վերաբերյալ որոշումներ են ընդունում: Բյուջեում նախատեսված են միջոցներ, որոնք անհրաժեշտ են տվյալ տարվա համար պլանավորված նախագծերի անցկացման համար (դա կարող է լինել հավատի տարածմանն ուղղված գործունեությունը, սեփականության ձեռքբերումը, զարգացման ծրագրերը), ինչպես նաև վարչական ծախսերը և միջոցներ համայնքի տարբեր կարիքների բավարարման համար: Այնուհետև համայնքի ֆինանսական պլանը, ինչպես նաև պիոներների և շրջագայող ուսուցիչների պահանջի տեղեկությունները հասցվում են տեղական բահայիներին: «Նվիրատվությունների» նպատակաուղղված «հավաքը», որին հաճախ դիմում են տարբեր բնույթի կրոնական և բարեգործական կազմակերպությունները, Բահայի համայնքում չի թույլատրվում; Թույլատրվում են միայն ամենաընդհանուր բնույթի կոչերը, անմիջապես որևէ մեկին դիմելն արգելվում է: Բոլոր նվիրատվություններն արվում են կամավոր: Շողի Էֆֆենդին դատապարտում էր ցանկացած գործողություններ, որոնցում կարելի է տեսնել հոգեբանական ճնշում հավատացյալների վրա: Ավելին, հավատացյալի կողմից արված նվիրատվության մասին հայտնի է միայն նրան, նրա ընտանիքին և այն մարմնի գանձապահին, որն ընդունել է նվիրատվությունը:

Հիմնադրամին նվիրատվություններ անելու հնարավորությունը հավատացյալների միջավայրում դիտվում է որպես հոգևոր արտոնություն՝ տրված նրանց, ովքեր ընդունել են Բահաուլլայի ուսմունքը: Համապատասխանաբար, նվիրատվություններ այն մարդկանցից, ովքեր համայնքի անդամներ չեն, չեն ընդունվում: Եղել են դեպքեր, երբ ոչ բահայի բարեգործները պնդել են, որպեսզի Հոգևոր ժողովը նվիրատվություն ընդունի իրենց հետաքրքրած այս կամ այն ծրագրի համար: Այդպիսի իրավիճակներում բահայիները կոչ են անում նվիրատվողին առաջարկված միջոցները տրամադրել որևէ հասարակական

բարեգործական հիմնադրամներին: Բահայի ադմինիստրացիան նույնպես հիշատակված հիմնադրամներին անանուն նվիրատվություններ է անում: Բահայի ինստիտուտները կարող են ընդունել և օգտագործել կողմնակի նվիրատվություններ միայն այն դեպքերում, երբ խոսքը գնում է այն ծրագրերի մասին, որոնք ուղղված են հասարակության սոցիալական, նյութական և հոգևոր պահանջների բավարարմանը: Այսպիսով, հավատացյալ բահայիների մոտ համայնքի նախաձեռնությունների առումով ամրապնդվում է պատասխանատվության զգացումը և անձնական շահագրգռվածությունը:

Բահայի համայնքի գործերի կառավարման համակարգը նույնպես հավատացյալին տրամադրում է հարուստ հնարավորություններ ծառայության իդեալի մարմնավորման համար: Այն փաստը, որ Բահայի հավատը կրոն է առանց հոգևորականության, խորը տպավորություն է թողնում նորահավատների վրա: Նորահավատները շուտով գիտակցում են, որ մուտք են գործել ոչ թե եկեղեցական հոտի շարքերը, այլ համայնք: Համայնքի անդամների վրա դրվում են ոչ միայն համեստ օժանդակ գործառույթներ՝ հավատացյալները մասնակցում են որոշումների մշակմանն ու ընդունմանը, պլանավորմանը, կարող են պաշտոնապես ներկայացնել համայնքը: Համայնքի նորահավատ անդամները շուտով հայտնաբերում են, որ ընդունել են հավատ, որը գտնվում է իր կայացման փուլում: Նրան ոչ միայն տրվում են հարուստ հնարավորություններ ստեղծագործելու համար (բավականին ազատ շրջանակներում՝ նշված Բահայի ուսմունքով և Արդարության Համաշխարհային Տան դեկավարության ներքո), նրանցից նաև ակնկալվում են ստեղծագործական մոտեցում, քանզի արագընթաց զարգացող համայնքի բարձր նպատակների նվաճման համար կենսական անհրաժեշտություն են հանդիսանում գործունեության նոր ձևերը: Նորահավատների ունակություններն ու տաղանդները արագ կիրառություն են գտնում: Նորահավատին կարող են առաջարկել երեխաների ուսուցում, պատրաստել թերթի հայտարարություն, մտնել քաղաքապետին կամ կառավարական հանձնաժողովին դիմող պատվիրակության մեջ, կազմակերպել Տասնիններորդ Օրվա Տոնը, տարածաշրջանային կոնֆերանսի պատրաստման օգնության ցուցաբերում, մասնակցել համերգում կամ թատերական ներկայացման մեջ, ցուցադրել կինոնկար, կազմակերպել ցուցահանդես, տպագրել թղթակցություն, օգնել հաշվապահական հաշվառման վարմանը, կազմակերպել փոքրիկ գրադարան և այլն, քանզի համայնքի գործունեությունը բազմազան է: Այդ է պատճառը՝ երբ համայնքում որևէ մեկը հարցնում է. «Ինչու՞ մենք չենք անում այս կամ այն», պատասխանը սովորաբար այսպիսին է. «Որովհետև դեռ չի գտնվել այն մարդը, ով կանի այդ գործը»:

Բահայի համայնքի տարբերիչ առանձնահատկությունն է դրա մշտական ակտիվ գործունեությունը: Ութերորդ գլխում հիշատակվում էր Տասնիններորդ Օրվա Տոնը, որն իրենից ներկայացնում է բահայի տեղական համայնքների կյանքի հիմքը: Նշվում էր նաև այն մեծ նշանակությունը, որը տրվում է այդ իրադարձությանը բահայի Սուրբ Գրքերում: Տարածաշրջանային և ազգային համագումարների ժամանակ նույնպես հնարավորություն է տրվում համայնքի գործերի վերաբերյալ հավատացյալների կողմից համատեղ քննարկման համար: Համագումարները նաև թույլ են տալիս երկրի տարբեր տարածաշրջաններից եկած հավատացյալներին հաղորդակցվել միմյանց հետ:

Ի լրացումն այդ ամենին, համայնքը կանոնավոր կերպով կազմակերպում է տարբեր բնույթի կոնֆերանսներ: Հավատի տարածման յուրաքանչյուր լայնամասշտաբ պլանն իր մեջ ներառում է մի քանի միջազգային կոնֆերանսների կազմակերպումը խոշորագույն կենտրոններում: Այդ՝ մանրակրկիտ կերպով նախապատրաստված

միջոցառումներին, որոնք, որպես կանոն, տևում են հինգ-վեց օր, սովորաբար հավաքվում են բահայիներ երկրագնդի տարբեր անկյուններից, որպեսզի տոնեն վերջին նվաճումները հավատի տարածման գործում, քննարկեն արդի իրավիճակը և խնդիրները, ծանոթանան նոր գրականության, աուդիո և տեսա տեղեկությունների, այլ օգտակար նյութերի հետ: Հաճախ այդպիսի հանդիպումներին ելույթ էին ունենում Աստծո Գործի Աջերը (գլուխ 8), ինչպես նաև բահայի գիտնականները՝ մասնագետներ գիտության տարբեր ոլորտներից: Կոնֆերանսի ծրագիրն իր մեջ ներառում է նաև երաժիշտների, դերասանների ելույթներ, ինչպես նաև ներկայացումների ցուցադրում: Այսպիսով, կոնֆերանսների մասնակիցները հնարավորություն են ստանում անմիջականորեն հաղորդակցվել տարբեր մշակույթներին, որոնք ներկայացված են Բահայի համաշխարհային համայնքում:

Այդպիսի կոնֆերանսները կազմակերպվում են ազգային և տարածաշրջանային մակարդակներում: Դրա շնորհիվ բահայիները կարող են էապես լայնացնել իրենց շփման շրջանակները: Կոնֆերանսների հետ կապված հաճախակի ուղևորությունները նույնպես թույլ են տալիս համայնքի անդամներին հարստացնել իրենց գիտելիքները տարբեր երկրների մշակույթի և հասարակական կառուցվածքի մասին: Անշուշտ, շատերն օգտվում են դրանից, որպեսզի անձնական շփումներ հաստատեն և հավատ տարածեն: Ապագա պիոներներին այդպիսի կոնֆերանսներն օգնում են հաղթահարել կաշկանդվածությունը և փոխադրման, տեղափոխման վերաբերյալ ոչ հիվանդագին որոշում ընդունել:

Ոչինչ այդպես չի հարստացնում հավատացյալի հոգևոր և սոցիալական փորձը, որքան բահայիների մոտ ընդունված ուխտագնացությունը: Բահաուլլան կոչ էր անում իր հետևորդներից յուրաքանչյուրին կյանքում գեթ մեկ անգամ իննօրյա ուխտագնացություն կատարել Հայֆայի Բահայի հավատի Համաշխարհային Կենտրոն (Իսրայել): Ուխտավորների թիվը բազմապատկվում է: Այն այնքան է մեծացել, որ վերջին տարիներին ուխտագնացություն կատարել ցանկացողները ստիպված են որոշ ժամանակ սպասել իրենց հերթին:

Ուխտագնացությունը համարվում է բահայիի կյանքի ուղու բարձրագույն կետը: Ուխտավորները Հայֆա են ժամանում երկրագնդի տարբեր անկյուններից եկած ութուն հոգուց բաղկացած խմբով: Ինն օրվա ընթացքում խումբը դիտում է Հայֆայի, Աքքայի և շրջակայքի սուրբ վայրերը: Միայնակ կամ փոքր խմբերով ուխտավորներն այցելում են Բահաուլլայի, Բաբի և Աբդուլ-Բահայի դամբարանները: Կարելի է այցելել նաև այն տները, որտեղ ապրել է հավատի հիմնադիրը Սուրբ Հոլ աքսորի ժամանակ, օրվա մի մասը հատկացնել Արխիվի շենքի այցելությանը և դիտել այն ձեռագրերը, որոնք իրենցից ներկայացնում են Բահայի հավատի գրավոր ժառանգությունը, հավատի պատմության առաջին տարիների կենտրոնական անձանց, հերոսներին և նահատակներին պատկանող հուշո առարկաները: Միայն այստեղ հավատացյալը կարող է տեսնել Բաբի և Բահաուլլայի դիմանկարները: Սերտ, հաճախ բարեկամական կապերը, որոնք գոյություն ունեն հավատացյալների միջև հավատի այս վաղ փուլում, այստեղ լցվում են նոր բովանդակությամբ շնորհիվ այն ընդունելության, որն ի պատիվ ուխտավորների յուրաքանչյուր խմբի այցելության կազմակերպում է Արդարության Համաշխարհային տունը: Հավատացյալին հնարավորություն է տրվում անկաշկանդ միջավայրում հաղորդակցվել Բահայի հավատի բարձրագույն ինստիտուտի ներկայացուցիչների հետ:

Ուխտագնացությունը, որպես կանոն, թողնում է անմոռանալի տպավորություն: Բահայիները հավատում են, որ մարդն այդ օրերին, ինչպես երբեք մոտ է Աստծո Արքայությանը: Խոսելով անզլիական եկեղեցու նախկին սարկավազ Ջորջ Թաունսենդի

հետ շատ պատվելի գրող-բահայիների խոսքերով՝ Աստված «անցնում է մեր կողքով» Բաբի և Բահաուլլայի Հայտնությունների միջոցով: Հայֆայում և Աքքայում հավատացյալը զգում է այդ աստվածային ուղղու հետքը, և այդ զգացումը տրամադրում է միտքն ու սիրտը բահայի հայտնության հիմնական ճշմարտությունների խորը ըմբռնմանը:

Ուխտագնացության ժամանակ հավատացյալը կարող է նաև ավելի լիարժեք պատկերացում կազմել համաշխարհային համայնքի մասին, որին նա պատկանում է: Արդի աշխարհում քչերին է բախտ վիճակվում սերտ շփման մեջ անցկացնել ինն օր ամենատարբեր մշակույթների ներկայացուցիչների հետ: Այդ շփման ընթացքում, որն անցնում է Բահայի հավատի դրամատիկական պատմություն հիշեցնող իրավիճակում, հավատացյալն ունենում է Բահաուլլայի հայտնությամբ ծնված «միասնական համաշխարհային ընտանիքին» պատկանելիության ոչնչի հետ չհամեմատվող զգացում: Շատ բահայիներ ուխտագնացությունից հետո կատարում են ուղևորություններ այլ երկրներով՝ տարածելով հավատը, հանդիպելով բարեկամ-պիոներների հետ: Ոմանց ուխտագնացությունը դրդում է որպես պիոներ գնալ որևէ երկիր:

Բահաուլլան իր հետևորդներին կոչ էր անում ոչ միայն զարգանալ բարոյապես և հոգեպես, այլև ուսումնասիրել արվեստներ և գիտություններ: Բացի նրանից, որ բահայիների վրա դրված է երեխաներին հնարավորինս լավ կրթություն տալու պարտականություն, նրանք պետք է օգտագործեն բոլոր մատչելի միջոցները, որպեսզի բարձրացնեն սեփական կրթական մակարդակը և զարգանան հոգեպես:

«Գիտելիքները զուտ թևեր են, որոնց վրա մարդը սավառնում է, գիտությունն աստիճան է, որով նա բարձրանում է: Բոլոր մարդիկ պետք է բազմապատկեն իրենց գիտելիքները: Բայց ուսումնասիրել պետք է միայն այն գիտությունները, որոնք օգտակար են երկրագնդի ժողովուրդներին, այլ ոչ թե նրանք, որ սկսվում են խոսքերով և խոսքերով էլ ավարտվում: Հիրավի, մեծ են պահանջները, որ ներկայացնում է մարդկությունը գիտության և արվեստի մարդկանց»:

Պարսկաստանում Բահայի համայնքն իր պատմության ամենավաղ տարիներից այդ կարգադրագրին վերաբերվում էր բավականին լրջորեն: Փոխվեց երեք-չորս սերունդ, ներկայիս Բահայի համայնքը կազմում է Իրանի կրթված խավի նշանակալից մասը: Եվ դա այն դեպքում, երբ իրանական համայնքը բաղկացած է միայն 300000 մարդուց: Մի երկրում, որտեղ գրագետների թիվը չի գերազանցում 40%-ը, գրագիտությունը Բահայի համայնքում հասել է 90%-ի:

Իրանական համայնքի օրինակին հետևում են, որքան թույլ են տալիս տեղական պայմանները, ամբողջ աշխարհի բահայիները: Վերջին լայնամասշտաբ պլանում Տեղական և Ազգային Հոգևոր Ժողովների կողմից նախատեսվում է օգնություն երիտասարդ բահայիներին, ովքեր ցանկանում են ստանալ այնպիսի կրթություն, որն իրենց թույլ կտա օգտակար լինել ոչ միայն իրենց հավատին, այլև ամբողջ մարդկությանը: Բահայիների բազմաթիվ ամառային և ձմեռային դպրոցներն աշակերտներին առաջարկում են ծրագրեր, որոնք համապատասխանում են նշված նպատակներին: Հավատի հիմքերը դասավանդելու հետ մեկտեղ արվում է ամեն հնարավորը, որպեսզի հրավիրվեն բարձր որակավորում ունեցող դասախոսների, ովքեր բավական լիարժեք ծավալով ծանոթացնում են սովորողներին տարբեր գիտական առարկաների հետ (հաշվի առնելով նորագույն նվաճումները): Անկասկած, երիտասարդների համար օրինակ են համայնքի հասուն անդամները, որոնցից շատերն իրենց հոգևոր կյանքում հաջողությամբ զուգակցում են ծառայությունը գիտությանն ու կրոնին:

Իսկ այնտեղ, որտեղ դպրոցական ուսուցումը մատչելի չէ կամ գտնվում է ցածր մակարդակում, Բահայի համայնքներն իրականացնում են իրենց սեփական հանրակրթական ծրագրերը: Հատկապես դա վերաբերում է տարրական կրթությանը: Հնդկաստանում Ազգային Հոգևոր Ժողովը կազմակերպել է մի քանի բահայի-դպրոց, որոնք տալիս են տարրական, միջնակարգ և մասնագիտական կրթություն: Շատ այլ երկրներում բահայի ազգային համայնքները ունեն ուսուցման հեռակա դասընթացների ցանց բոլոր տարիքի մարդկանց համար: Վերջին լայնամասշտաբ պլանի իրականացման ընթացքում տարբեր երկրների երեսուկոթ Ազգային Հոգևոր Ժողովներ հայտարարեցին, որ նրանք կարող են սկսել նման ուսուցման ծրագրերի իրականացումը:

Բահայի հավատի արդեն վաղ փուլերում մեծ ուշադրություն էր դարձվում կրթության այնպիսի տեսակետին, ինչպիսին է էսթետիկական դաստիարակությունը: Բահաուլլան արվեստն անվանում էր Աստծուն ծառայելու ձևերից մեկը: Հատկապես դամբարանների, տաճարների և այգիների գեղեցկությունն է առավել մեծ տպավորություն թողնում մարդու վրա, ով առաջին անգամ է հաղողակցվել Բահայի հավատին: Շողի Էֆֆենդին նշում էր, որ կանցնեն հարյուրամյակներ, նախքան կառաջանա արվեստ, որը կարելի կլինի անվանել «բահայի արվեստ»: Երբ Բահայի Հայտնության հիման վրա կծաղկի նոր քաղաքակրթություն, այն ժամանակ էլ կծագեն դրան բնորոշ գեղարվեստական ձևերը: Միևնույն ժամանակ կասկածի չի հարուցում, որ արդեն այսօր էլ Բահայի հավատ դավանող նկարիչների ստեղծագործություններում մենք տեսնում ենք արձագանք միասնության, ներդաշնակության, աշխարհի բաց և բերկրալի ընկալման Բահաուլլայի կոչին: Ամերիկացի բահայի Մարկ Թոբին՝ XX դարի առավել հայտնի նկարիչներից մեկը, ասում է հետևյալն իր աշխատանքների վրա Բահաուլլայի գաղափարների ազդեցության մասին.

«Բահաուլլայի Համապարփակ Պատգամը, որը մարդու առջև կատարելագործման ճանապարհ է բացում, դրդում է նրան փնտրման և բերում այն ըմբռնմանը, որ արդիականության լույսը շողում է ամբողջ գոյի միասնության միջոցով. (այն) շատ դեպքերում ազատում է մարդուն ընդօրինակումից և միջավայրի կողմից պարտադրված կարծիքներից, (այն) ծագում է մարդու մեջ զարգացնել աշխարհի մտապատկերը, որը կենսականորեն կարևոր է նրա համար: Բահաուլլայի ուսմունքն ինքնին ուղեցույց լույս է, որն օգնում է մեզ առաջ սլանալ էվոյուցիայի ճանապարհով»:

Արվեստի դերի մասին գալիք համաշխարհային քաղաքակրթության մեջ Թոբին ասում է.

«Անշուշտ, մենք այսօր կարող ենք խոսել ինտերնացիոնալ ուղղությունների մասին արվեստում, բայց ավելի ուշ, կարծում եմ, մենք կխոսենք ունիվերսալ ուղղությունների մասին... Ապագայում աշխարհը կհասնի այն միասնության, որը, ինչպես ինձ թվում է, իրենից ներկայացնում է Բահայի հավատի հիմնական գաղափարը: Այդ միասնությամբ արվեստը կնորոգվի, կլցվի նոր ոգով, քանզի միասնությունը ոչ միայն նոր խոսքեր են և նոր գաղափարներ, դա նախ և առաջ հոգևորությունն է»:

Երաժիշտները, ովքեր Բահայի կրոնի համախոհներն են, իրենց ստեղծագործության մեջ նույնպես զգում են դրա հոգևոր սկզբունքների ազդեցությունը: Աբդուլ-Բահան համառորեն համոզում էր Բահայի համայնքներին գտնել արժանի կիրառում հավատացյալների երաժշտական տաղանդներին.

«Երաժշտությունը աստվածային, հմայիչ արվեստ է: Երաժշտությունը սնում է մարդկային հոգին և ոգին: Երաժշտության ուժն ու գեղեցկությունը վեհացնում են հոգին: Երաժշտությունը տիրում է երեխաների սրտերին, քանզի մանկական սիրտը անարատ է և ուրեմն զարմանալիորեն ընկալունակ մեղեդիների նկատմամբ: Երեխաների սրտերում ննջող տաղանդները կբացվեն շնորհիվ երաժշտության: Ուրեմն պետք է անել մեր ուժերում եղած ամեն բան, որպեսզի երեխաները ըմբռնեն այդ արվեստը: Երեխաներին սովորեցրեք երգեցողություն՝ ճիշտ և գեղեցիկ: Յուրաքանչյուր երեխա պետք է գեթ չնչին ծանոթ լինի երաժշտությանը...»:

Այսպիսին է, հիմնականում, համայնքի կյանքը, որը Բահաուլլայից ստացել է հարուստ ժառանգություն, որը ներառում է պատմությունը, ուսմունքը և Բահայի հավատի վարչական ինստիտուտները: Այդ համայնքը հաստատվել է երկրագնդի երկրների և տարածաշրջանների մեծ մասում: Այն իրենից ներկայացնում է մարդկության մի մասը և հավատարիմ է այն նպատակին, որը նրա առջև դրել է Աբդուլ-Բահան, այսինքն, «մոլորակի հոգևոր նվաճմանը»: Համայնքի աճի գործընթացը կապված է համայնքի անդամների գործունեության ամենաբազմազան ձևերի մեջ ներգրավմամբ, նրանց սերտ համագործակցությամբ, նրանց հոգևոր զարգացմամբ: Համագործակցությունը, և, որպես հետևանք, հոգևոր աճը տանում են դեպի «միասնական համաշխարհային ընտանիքի» զգացման առաջացման, ինչը համայնքին տալիս է այն հատուկ բնույթը, որը տարբերում է այն այլ կրոնական ավանդույթների հետևորդներից:

Բահայիների կարծիքով, նրանց համայնքը միայն կոլեկտիվ չէ, այլ, ավելի շուտ, միասնական օրգանիզմ: Աբդուլ-Բահայի և Շոդի էֆֆենդիի Սուրբ Գրքերում հաճախ հանդիպում են տերմիններ և արտահայտություններ, որոնք վերցված են կենսաբանությունից. «ծաղկում», «էվոլյուցիա», «սաղմ», «սերմ», «օրգանիզմի զարգացում», «միջուկ», «ծնող ուժ», «յուրացում»: Բահայիները կարող են իրենց դիտել որպես աճող կենդանի օրգանիզմի մաս, որի կենսագործունեությունը ապահովվում է Բահաուլլայի ստեղծած հավատի օրենքներով, ուսմունքով և ինստիտուտներով: Արդարության Համաշխարհային Տունը նշում էր, որ մարդու հոգևոր ներուժի զարգացումը և համամասնակցության զգացումը Բահայի ուսմունքի հետ կախված են նրանից, թե որքան լիարժեք է մարդը ներառվել համայնքի կյանքին:

«Մարդու մարմնում յուրաքանչյուր բջջին, յուրաքանչյուր օրգանին, նյարդին հատկացված է հատուկ դեր: Եթե յուրաքանչյուր բջիջ գործում է ինչպես պետք է, ապա մարմինը առողջ է, ամուր, առույգ, պատրաստ գործելու: Ոչ մի, անզամ ամենաանշան բջիջը չի ապրում մարմնից առանձին, այլ ծառայում է նրան և ստանում նրանից իր համար ամեն անհրաժեշտը: Նույնը վերաբերում է միասնական մարմնին, որն իր մեջ համախմբում է ամբողջ մարդկային ցեղը, քանզի Աստված «իր արավածներից անզամ ամենավերջինին օժտել է ընդունակություններով և տաղանդներով»: Առավել ևս դա ճիշտ է Բահայի համայնքի վերաբերյալ՝ համայնքի, որն արդեն դարձել է օրգանիզմ՝ համախմբված ընդհանուր ձգտումներով, ընդհանուր գործելակերպով, պաշտպանություն և ոգու ուժ ստանալով միասնական աղբյուրից և փայլատակելով իր միասնության գիտակցությամբ... Բահայի համաշխարհային համայնքը՝ զարգանալով երիտասարդ առողջ մարմնի պես, իր մեջ աճեցնում է նոր բջիջներ, նոր օրգաններ, վերցնում է իր վրա նոր գործառույթներ, ֆունկցիաներ և բացահայտում նոր հնարավորություններ՝ սլանալով դեպի հասունություն, երբ Տիրոջ Պատգամով ապրող յուրաքանչյուր հոգուն ընծայվում է Պատգամով առողջություն, վստահություն և Բահաուլլայի անսահման ողորմածություն՝ զեղված Նրա Աստվածային Կարգի միջոցով»:

Ավելին, բահայիները հավատում են, որ նրանց համայնքի կյանքը մարդկության գալիք համախմբման նախատիպ է, և այդ մոդելը կընդունեն բոլոր նրանք, ում մոտ է միասնության իդեալը, անկախ այն բանից, թե արդյոք մուտք կգործեն նրանք Բահայի հավատի հետևորդների շարքերը, թե ոչ: 1976թ. հուլիսին, Քեփերբերիում կայացած կրոնի քառասուներորդ ամենամյա Համաշխարհային կոնգրեսում հռետոր-բահային իր խոսքն ավարտեց հետևյալ բառերով.

«Թույլ տվեք ինձ ամփոփել. այսօր գոյություն ունի հոգևոր հիմքի վրա համախմբված այն համաշխարհային համայնքի խոստումնալից գործող մոդելը, որը, ներկաների կարծիքով, ներկայիս կոնգրեսի փնտրման առարկան է: Այդպիսի մոդել պետք է ճանաչել Համաշխարհային համայնքը, որը ներկայումս չհավակնելով կատարելության՝ գտնվում է մշտական փնտրման մեջ՝ փորձելով կյանքի կոչել (տեղական, ազգային և միջազգային մակարդակներով) մարդկության միասնության իդեալը, որը հռչակված է նրա հավատի հիմնադիրների և Աստծո մյուս բոլոր Դեսպանորդների Սուրբ Գրքերում: Այդ մեծ նախաձեռնությանը մասնակցելուն հրավիրվում են բարի կամքի բոլոր մարդիկ:

Ես... կոչ եմ անում ձեզ հատուկ ուշադրություն դարձնել այդ համայնքին բնորոշ մի շարք գծերի վրա՝ միասնություն, բարոյական արժեքների կայուն համակարգ, ընդհանուր պատմություն, գործող վարչական կառուցվածք և մարդկային կյանքի ամբողջ բազմազանությունն ընդգրկող ուսմունքի լայնարձակություն: Համաշխարհային համայնքի գոյությունը, որն իր պատմության այս կրիտիկական ժամանակահատվածում ունի վերը թվարկված բոլոր արժանիքները, չի կարելի չընդունել որպես բացառիկ փաստ: Քանզի այդ համայնքը, որքան ես հասկանում եմ, այն առաջնահերթ համոզիչ վկայությունն է, որ այն նպատակը, որը մենք դրել ենք մեր առջև ներկայիս կոնգրեսում, միանգամայն իրական է և նվաճելի տեսանելի ապագայում: Որքան էլ չափսերով և ազդեցությամբ աննշան լինի ապագա հասարակության հիշատակված մոդելը, այնուամենայնիվ, այդ ֆենոմենն ամբողջ մարդկության կողմից արժանի է օբյեկտիվ ուսումնասիրման և ամենասևեռուն ուշադրության»:

10. Նոր սահմանների հաղթահարում

Նախաբանում հիշատակվել էր Էդվարդ Գրենվիլ Բրաունի արտահայտությունը, ով արևմտյան հետազոտողներից առաջիններից էր, որ իմացավ XIX դարում Պարսկաստանում Բահայի հավատի գոյության մասին: Բրաունն ասում էր այն մասին, որ ծագող հավատը, հավանաբար, կդառնա նոր համաշխարհային կրոն: Նա պատկերացնում էր, որ տվյալ դեպքում գիտնականները նոր կրոնի կայացման գործընթացը մանրակրկիտ հետազոտելու եզակի հնարավորություն են ստանում: Ծանոթանալով նոր կրոնական ուղղությանը՝ Բրաունը հետաքրքրվեց դրանով և հետագա երեք տասնամյակների ընթացքում բավականին ժամանակ նվիրեց Բահայի հավատի ակունքների մանրակրկիտ ուսումնասիրմանը: Բրաունը գրեց մի շարք քննադատական մեկնաբանություններ և անգլերեն լեզվով թարգմանված լայնածավալ հատվածներ Բաբի և Բահայի հավատներին վերաբերող տեքստերից:

Բրաունի ոչ բոլոր ժամանակակիցներն ըստ արժանվույն գնահատեցին նրա աշխատությունները: Որոշ պատմաբաններ Բրաունի աշխատություններին հավանության արժանացրին, մյուսները պնդում էին, որ նա չհիմնավորված մեծ ուշադրություն է

դարձնում կրոնական շարժմանը, որը ոչ ավելին է, քան բարեփոխական ուղղություն Իսլամի շրջանակներում: Ազդեցիկ գիտական «Օքսֆորդ մեգեզին» ամսագրի տեսաբանն անգամ Բահայի հավատին նվիրված Բրաունի աշխատություններն անվանեց «պատմական հեռանկարի անհեթեթ աղավաղում»:

Հետագա հարյուրամյակի ընթացքում պատմությունը հաստատեց Բրաունի գնահատականների ճշտությունը: Նոր հավատը դանդաղ, սակայն անշեղորեն վերածվում էր անկախ կրոնի, որն արմատներ էր թողնում երկրագնդի բոլոր անկյուններում: Իսլամի ընդերքում ծագելով՝ հետագայում այն լրիվ առանձնացավ: Այժմ ոչ ոքի մոտ զարմանք չի առաջացնում, որ կրոնների համեմատական ուսումնասիրմամբ զբաղվող առավել հեղինակային ժամանակակից մասնագետները՝ այնպիսիք, ինչպիսին է պատմաբան Արնոլդ Թոյնբին, Բահայի հավատը համարում են անկախ համաշխարհային կրոն՝ դնելով այն նույն շարքում Քրիստոնեության և Իսլամի հետ: Նույն միտքը, թեև փոքր ինչ այլ համատեքստում արտահայտեցին նաև Իսլամի ինստիտուտների պաշտոնական ներկայացուցիչները: Դեռ 1924թ. Բեբեի (Եգիպտոս) սուննիական բողոքարկիչ դատարանը իր ուսումնասիրմանը ներկայացրած դատավճռի վերաբերյալ որոշում ընդունեց, որում, մասնավորապես, ասվում էր. «Բահայի հավատը նոր համաշխարհային կրոն է, որը միանգամայն անկախ է (Իսլամից)... Այդպիսով, պետք չէ բահայիներին համարել մահմեդական և vice versa*, ինչպես նաև բուդդայականներին, բրահմաններին և քրիստոնյաներին անթույլատրելի է շփոթել մահմեդականների հետ»:

Բահայիները հավատում են, որ այդ նոր անկախ կրոնն ընդունակ է համախմբել երկրագնդի բոլոր մարդկանց և հեռավոր ապագայում կօզնի միասնական համաշխարհային քաղաքակրթության ծագմանը: Այդ հնարավոր է, նշում են նրանք, շնորհիվ այն բանի, որ նրանց համայնքն ընդունակ է կրել իր սեփական հաջողությունների արդյունքում առաջացած փորձությունները: «Փորձություն» գաղափարն այնպես, ինչպես այն մեկնաբանում են բահայիները, հատուկ մեկնաբանության կարիք ունի:

Բահաուլլան սովորեցնում էր, որ փորձությունները նպաստում են մարդու հոգևոր աճին: Աբդուլ-Բահան ասում էր, որ առանց փորձությունների մեր մեջ ննջող ընդունակությունները՝ մեր հավերժ սեփականությունը, զարգացում չեն ստանա:

«Եթե չլինեին փորձությունները, ինչպե՞ս կարելի էր տարբերել ոսկին կեղծիքից: Եթե չլինեին փորձությունները, ինչպե՞ս կարելի էր տարբերել խիզախին վախկոտից... Եթե փորձության չենթարկենք ուսանողների գիտելիքները, նրանց միտքն ու ընդունակությունները չեն զարգանա»:

Նույն դատողություններն արդարացի են նաև Բահայի համայնքի նկատմամբ: Շողի Էֆֆենդին գրում էր.

«Իսկապես, դրա առաջին հարյուր տարվա զարգացման պատմությունն իրենից ներկայացնում է ծանրության տարբեր աստիճանի արտաքին և ներքին ձգնաժամերի շղթա, որոնց ուղիղ հետևանքներն ավերիչ էին, բայց դրանցից յուրաքանչյուրը խորհրդավոր կերպով նպաստում էր աստվածային ուժի ազատմանը, որը հաղորդվում էր շարժմանը և տալիս էր դրան նոր զարկ: Դա ծնում էր նոր աղետներ, այնուհետև գալիս էին երկնային վերին օգնության առատ գեղումների շրջաններ, որոնք Գործի համախոհներին ոգևորում էին անձնուրաց ծառայության, ինչը նպաստում էր դրա հետագա առաջխաղացմանը և բերում էր նոր, էլ ավելի նշանակալից հաղթանակներ»:

Ավարտելով մեր հետազոտությունը՝ տեղին կլինի վերլուծել այն խնդիրներն ու դժվարությունները, որոնց հետ այսօր բախվում է Բահայի հավատը, երբ այն էլ ավելի է հաստատվում որպես ճանաչված համաշխարհային կրոն: Ներկայումս Բահայի համայնքը կոչված է լուծել հետևյալ հիմնական խնդիրները. 1. Համայնքի միասնության պահպանումը, 2. Համընդհանուր մասնակցություն ունենալ հավատի գործերին, 3. Դիմակայել աճող դիմադրությանը, 4. Բահայի համայնքի կյանքն ապագա համաշխարհային քաղաքակրթության կառուցման համար օրինակ դարձնել:

Բահայի հավատի կարևորագույն ձեռքբերումը միասնությունն է, և համայնքն իր գլխավոր նպատակը տեսնում է այն բանում, որ օգնի մարդկությանը հասնել խաղաղության և միասնության: Եվ այդ պատճառով մեր հիասթափված սերնդի աչքերում Բահայի հավատի օգտին խոսող առավել համոզիչ վկայությունն այն փաստն է, որ այն բարեհաջող ապրեց իր պատմության առաջին ձգնաժամային դարը՝ պահպանելով իր ամբողջականությունը (այսինքն, չբաժանվեց աղանդների): Միայն այդ նվաճումը թույլ է տալիս Բահայի հավատին համաշխարհային կրոնների մեջ զբաղեցնել հատուկ տեղ, քանզի ոչ մի այլ կրոնական շարժում չի կարող պարծենալ դրանով: Ցանկացած կրոնական շարժումների վաղ շրջանում, որն առավել խոցելի փուլն է, ծագում են դժվարություններ, որոնք հաճախ տանում են աղանդների և դավանանքների առաջացման:

Այդ դժվարությունների ազդեցությունը պակաս շոշափելի էր ավելի վաղ համաշխարհային կրոնների համար, որոնք հավատացյալների եռանդը և ուշադրությունն ուղղում էին այլ խնդիրներին: Սակայն, երբ խոսքը գնում է Բահայի հավատի մասին, ապա հավատի աստվածային ծագման նշան պետք է համարել հենց միասնությունը: Բահաուլլան ամենախիստ արտահայտություններով դատապարտում էր համայնքի մեջ պառակտման սերմեր գցելու ցանկացած փորձերը: Բահայիների շարքերում չկան «լիբերալիզմի հետևորդներ», «օրթոդոքսներ» կամ «բողոքականներ»: Կան ուղղակի բահայիներ՝ միասնական համայնքի, ամբողջական օրգանիզմի անդամներ:

Ի՞նչ կպատահի այժմ, երբ Բահայի հավատն արագորեն տարածվում է ամբողջ աշխարհով՝ ընդգրկելով տարբեր մշակույթների մարդկանց, ժողովուրդների, որոնք բոլորովին նման չեն իրար: Կհաջողվի՞ արդյոք պահպանել նախկին միասնությունը, երբ որոշ համայնքներ հավատի որոշ սկզբունքների ընկալման խորությամբ տասնամյակներով առաջ են անցել մյուսներից, միևնույն ժամանակ տասնամյակներով հետ են մնացել նյութական ռեսուրսներին և կառավարման մշակույթին վերաբերող հարցերից: Արդի հասարակության կյանքը, ինչպես երբեք, քաղաքականացված է: Կկարողանա՞ն արդյոք Բահայի համայնքներն ազգային և մշակութային հակասություններով մշտապես պառակտվող երկրներում իրենց շարքերը ներգրավել նոր անդամներով, ովքեր գտնվում են նախկինում հակամարտող ճամբարներում: Հավատի միասնության պահպանման համար կենսականորեն կարևոր է Արդարության Համաշխարհային Տան հեղինակությունը: Կհաջողվի՞ արդյոք նրան համընդհանուր պառակտման մեր դարում կարգապահություն սահմանել ծայրահեղ բազմաբնույթ և արագ աճող համայնքում: Եվ կկարողանա՞ արդյոք Բահայի համայնքը պահպանել հավատի միասնությունը՝ ընդունելով, առաջին հերթին, Բահաուլլայի ժառանգության այն մեկնաբանությունները, որոնք գալիս են նրա ճանաչված համախոհներից, այդ թվում հավատի Պահապան Շողի Էֆֆենդիից:

Այսօր, ինչպես երբեք, ակնհայտ է, որ Բահայի համայնքը պատրաստ է հաղթահարել իր առջև ծագած դժվարությունները: Ոչ ոքի (ով գեթ հեռավոր պատկե-

րացում ունի Բահայի ուսմունքների և պատմության մասին) մտքով չի անցնի վիճարկել Արդարության Համաշխարհային Տան դիրքերը՝ որպես համայնքի միակ օրինական ղեկավարի: Այդ մարմնին վերաբերող փաստաթղթերը լայնորեն և ամբողջ ծավալով հրատարակվում են: Բահաուլլայի պատգամած սկզբունքի համաձայն՝ Արդարության Համաշխարհային Տան ընտրությանը մասնակցում են բոլոր հավատացյալները: Արդարության Համաշխարհային Տունն իրականացնում է համաշխարհային համայնքի ղեկավարությունը՝ մշակելով հավատի տարածման լայնամասշտաբ պլաններ, որոնց կատարման ընթացքում համայնքի կառավարման մյուս բոլոր մարմինները գործում են համաձայն նրա ցուցմունքների:

Ներկայումս Բահայի հավատի գլխավոր դժվարությունները կապված են համայնքի արագ աճի հետ մի կողմից, և աշխարհում անկայուն իրավիճակի հետ՝ մյուս: Վերջին շրջանում Բահայի հավատի մեջ ամեն տարի ներգրավվում են տասնյակ հազարավոր մարդիկ, և նորահավատների հոսքը մշտապես աճում է: Դա հատկապես վերաբերում է երրորդ աշխարհի երկրներին: Այսօր Բահայի Համաշխարհային համայնքը մեծ մասամբ բաղկացած է հասարակ մարդկանցից, ովքեր «սրտով» ըմբռնեցին Բահաուլլայի դեսպանորդական առաքելության ճշմարտությունը և ոգեշնչվեցին դրա համախոհների բարձր ոգով և գործնական սխրագործություններով:

Նորահավատների մեջ շատ են գրագիտություն չունեցողները և դրա հետ կապված համայնքի համախմբումը մեծ մասամբ կախված է տրանսպորտային միջոցների և կապի միջոցների մատչելիությունից, իսկ դրանք ներկայումս որոշ անհանգիստ տարածաշրջաններում բավականին անապահով են: Ե՛վ Աբդուլ-Բահան, և՛ Շողի էֆֆենդին կանխատեսել էին, որ ժամանակ առ ժամանակ, աշխարհում տիրող անկարգությունների պատճառով, որոնք կարող են վերածվել քաոսի, կապը Համաշխարհային Կենտրոնի հետ կարող է որոշ ժամանակով խախտվել (ինչպես դա եղել է առաջին և երկրորդ Համաշխարհային պատերազմների ժամանակ): Կկարողանա՞ արդյոք նոր առաջացած բահայի վարչական համակարգն այդպիսի իրավիճակում պահպանել հավատի ամբողջականությունը և գործողությունների միասնությունը:

Բահայիները համոզված են, որ այդպես էլ կլինի: Նրանց կարծիքով, Բահաուլլայի Կտակից անկասկած հետևում է, որ Աստված հետագայում էլ համայնքը կպահպանի պառակտումից, ինչպես Նա պահպանել է այն վերջին՝ փոփոխություններով լի տարիներին: Անշուշտ, համապատասխան Սուրբ Գրքի՝ հավատի վարչական մարմիններին իրավունք է տրված հեռացնել նրանց, ովքեր խմբերով կամ մենակ՝ չնայած հորդորումներին և զգուշացումներին, կփորձեն պառակտում մտցնել: Ինչևէ, ակնհայտ է մի բան՝ այսօր Բահայի համայնքը մուտք է գործում զարգացման այն փուլը, երբ դրա՝ այդպիսի դժվարությամբ պահպանվող միասնությունը կենթարկվի էլ ավելի դաժան փորձությունների:

Համայնքի երկրորդ կարևոր խնդիրն է բոլոր հավատացյալներին ակտիվ մասնակցության ներգրավել համայնքի գործունեության մեջ: Առաջին հայացքից այդպիսի խնդիրը դժվար չի թվում: Բահայի համայնքի նպատակն է հիմնադրել կազմակերպություն (օրինակ, առանց հոգևորականության), որի տարբերիչ առանձնահատկություններից մեկն է հավատացյալների ներգրավումը համայնքի գործերին՝ սկսած ադմինիստրացիայում ամենաբարձր դիրք ունեցողներից մինչև ամենահասարակները:

Սակայն, համայնքում նվիրապետության բացակայությունն իրենից ներկայացնում է ավելի նշանակալի բան, քան ուղղակի կյանքի հաճելի «հավելված», այն համայնքում

ապրելու և աճելու պարտադիր պայման է: Բահայի հավատի Raison d'être*-ն նոր հասարակություն կառուցելն է՝ ապագա համաշխարհային քաղաքակրթության մոդելը: Հավատի հաջողությունները, ինչպես պնդում էր կրոնի հիմնադիրը, ուղիղ կախված կլինեն այդ առաքելության հետևողական կատարումից: Որպես երաշխիք կծառայի հսկայական մարդկային և նյութական ռեսուրսների մոբիլիզացիան: Համայնքի համեմատաբար փոքր թվաքանակի դեպքում անհրաժեշտ ռեսուրսները մատչելի կդառնան միայն այն դեպքում, երբ հաջողվի դրա նախագծերում ակտիվ մասնակցության դրդել բոլորին, կամ, համեմայն դեպք, դրա անդամների ճնշող մեծամասնությանը: Անկասկած, հատկապես դրանով էր ղեկավարվում Արդարության Համաշխարհային Տունն իր առաջին համաշխարհային պլաններից մեկն անվանելով «համընդհանուր մասնակցություն», որոնց կատարումը բահայիները սկսեցին 1964թ. ապրիլին՝ Արդարության Համաշխարհային Տան առաջին ընտրություններից մեկ տարի անց: Արդարության Համաշխարհային Տան տվյալ հարցին նվիրված հրապարակման մեջ ասված է հետևյալը.

«...ծայրահեղ կարևոր է յուրաքանչյուր հավատացյալի մասնակցությունը. դրանում է նախկինում մեզ անհայտ կենսական ուժերի աղբյուրը... Եթե յուրաքանչյուր հավատացյալ սրբորեն կատարի իր պարտականությունները, ինչպիսի՜ հզոր ուժերի հոսք կունենա ամբողջ օրգանիզմը: Այդ կենսական վերելքը կդրդի դեպի հետագա աճ և մեր բոլորի համար կդառնա էլ ավելի մեծ օրհնանք:

Համընդհանուր մասնակցության գաղտնիքի բանալին կարելի է գտնել Ուսուցչի լայնորեն հայտնի արտահայտության մեջ (այսինքն Աբդուլ-Բահայի), ով կոչ էր անում բարեկամներին սիրել և աջակցել միմյանց, աշխատել համատեղ, նմանվել մի հոգուն մի մարմնի մեջ և դառնալ կենարար և Ոգով լուսավորվող առողջ օրգանիզմ»:

Ակնհայտ է, որ արևմուտքի Բահայի համայնքում այդ կոչն արձագանք գտավ: Ինչ վերաբերում է ավելի երիտասարդ համայնքներին Աֆրիկայում, Հարավային Ամերիկայում, Ասիայում և Խաղաղ օվկիանոսի կղզիներում, ուր Բահայի հավատն առաջին անգամ այնտեղ բերեցին պիոներները և շրջիկ ուսուցիչներն Իրանից և Հյուսիսային Ամերիկայից, ապա համընդհանուր մասնակցության կոչի տակ այստեղ հասկացվում է մեկ այլ միտք՝ տեղաբնակ բահայիները պետք է իրենց վրա վերցնեն իրենց երկրներում հավատի գործի կառավարման ամբողջ պատասխանատվությունը՝ ընդունելով այն պիոներների ծեռքերից: Նրանք պետք է ստեղծագործորեն կիրառեն Բահայի ուսմունքները՝ հաշվի առնելով տեղի մշակութային առանձնահատկությունները:

Այդ ուղղությամբ Բահայի համայնքը ընդհանուր առմամբ արդեն հասել է տպավորիչ հաջողությունների: Աշխարհի հեռավոր տարածաշրջանների (ավելին, անգամ նաև փոքր եվրոպական երկրների) Ազգային Հոգևոր Ժողովների հին լուսանկարների վրա կարելի է տեսնել շատ արտասահմանցի պիոներների: Ներկայումս դրությունն ամբողջությամբ փոխվել է: Այսօր հազիվ թե գտնվի գեթ մեկ ազգային համայնք, որտեղ հավատի գործերը գտնվեն ամբողջությամբ տվյալ երկրի բնիկների ծեռքերում: Սակայն վարչական պարտականությունների ինքնուրույն կատարումը միայն առաջին քայլն է: Այդ բազմաթիվ երիտասարդ համայնքների անդամները պետք է իրենց վրա վերցնեն Արդարության Համաշխարհային Տան պլաններով նախատեսված կոնկրետ գործերի կատարման ամբողջ պատասխանատվությունը, իսկ դա բահայի դպրոցների և կենտրոնների կազմակերպումն է, տարածաշրջանի տնտեսական զարգացման նախագծերի

* Գոյության իմաստ

իրականացումը, բոլոր մակարդակների քաղաքացիական իշխանությունների հետ կապերի ամրապնդումը:

Ոչ մի այլ նախաձեռնություն չի պահանջում իր մասնակիցներից այդպիսի անձնական պատասխանատվություն, ինչպիսին է Բահայի հավատի տարածման գործը: Չնայած, որ Բահայի համայնքում այսօր դիտվող հավատացյալների թվի այդչափ արագ մեծացմանը կարող էին նախանձել շատ կրոնական համայնքներ, միայն դա բավական չէ Բահաուլլայի մշակած հավատի միլիոնավոր համախոհներին համախմբող համայնքի կառուցման համար: Պատճառը, անշուշտ, այն է, որ այսօր բահայիների միայն աննշան մասն է մասնակցում հավատի տարածման նախագծերում: Հնարավոր է, որ համայնքի ոչ բավականաչափ արագ աճը մասամբ կապված է նոր անդամներ ակտիվորեն «հավաքագրելու» արգելքի հետ, որի իմաստությունը քչերը կվիճարկեն: Սակայն այժմ, երբ շատ բահայիներ հաջողությամբ ներգրավվում են նոր համախոհներ՝ չխախտելով հիշատակված պահանջը, ակնհայտ է դառնում, որ միանգամայն անհրաժեշտ է ակտիվացնել հավատի տարածման գործընթացը յուրաքանչյուր հավատացյալի անձնական մասնակցության հաշվին:

Ամփոփելով՝ ասենք, որ ներկա դրությամբ լայն հնարավորություններ են բացվում հավատի գործերում մասնակցող հազարավոր բահայիների համար, ովքեր այլ ճանապարհի վրա իրենց ընդունակությունների համար դժվար թե գտնեին այլ կիրառում: Կհաջողվի՞ արդյոք կիրառել այդ մարդկանց հնարավորությունները, թե քաղաքական ու տնտեսական խնդիրների ճնշման տակ համայնքի առավել ընդունակ անդամներն իրենց եռանդը կուղղեն այլ նպատակների նվաճմանը, ինչպես դա պատահեց շատ այլ կրոնական կազմակերպությունների անդամների հետ: Կկարո-դանա՞ն արդյոք վերջերս գոյացած բազմաթիվ ազգային համայնքների բահայիներն ընդունել կենսակերպը, որը բերել են պիոներներն արտասահմանից՝ հարմարեցնելով այն տեղական ավանդույթներին և պահպանելով հավատարմություն Բահաուլլայի իդեալներին: Կհաջողվի՞ արդյոք նրանց գտնել այն մարդկային ռեսուրսները, որոնցում Բահայի համաշխարհային համայնքն իր վիթխարի ծրագրերի կատարման համար այդքան պահանջ ունի:

Վերը նկարագրված խնդիրների նման այս խնդիրները համայնքի զարգացման համար իրենցից խթան են ներկայացնում և նպաստում են նրա հետագա աճին ու ամրացմանը: Գոյություն ունեն և այլ բնույթի խնդիրներ: Կան մարդիկ, ովքեր թշնամաբար են վերաբերվում Բահայի հավատին և ձգտում են կանգնեցնել դրա տարածումը, իսկ որոշ դեպքերում անգամ ոչնչացնել այն: Բահայիները, որպես կանոն, հակված չեն այդ թեմայով խոսակցություններին, սակայն այն վճռականորեն ուղղված է նրանց հավատին: Այսպես, Շողի Էֆֆենդին ասում էր.

«Ինչպե՞ս կարող են այն մութ, անզուսպ ուժերը, որ հասարակական օրգանիզմի սոցիալական, քաղաքական և տնտեսական հավասարակշռության աղբյուր են... ոտնձգություններ թույլ տալ մատաղ հավատի նկատմամբ, որի ուսմունքն այնքան սերտ և կենդանի կապի մեջ է մարդկային կյանքի և վարքի այդ բոլոր ոլորտների հետ:

Ուրեմն, զարմանալի չէ, որ գտնվելով այդ հակազդող կրքերի հորձանուտում՝ նրանք (բահայիները)... տեսնում են, թե ինչպես են սահմանափակում իրենց ազատությունը, արհամարհում սկզբունքները, հարձակման ենթարկում հավատի ինստիտուտները, վատաբանում մտադրությունները, կասկածի տակ են դնում հավատի հեղինակությունը, մերժում են նրանց կոչերը»:

Ավելի, քան հարյուրհիսունամյա գոյության ընթացքում երիտասարդ կրոնը մշտապես՝ մեծ կամ փոքր աստիճանով ենթարկվում է հետապնդումների: Վերջերս կշտամբանքները հաճախացել են և Բահայի համաշխարհային համայնքի կողմից անհրաժեշտ է վճռական և միահամուռ հակահարված: Որոշ մահմեդական երկրներում դիմակայությունն ընդունել է բացահայտ հետապնդման ձև, իսկ Իրանում՝ հավատի հայրենիքում, հետապնդումները բերեցին անթիվ մարդկային տառապանքների:

Իրանի շիական մահմեդական հոգևորականության աչքերում Բահայի հավատի գլխավոր հանցանքը դրա գոյությունն է: Մահմեդական ֆունդամենտալիստ աստվածաբանների պնդմամբ Սոհամեդի գալուստից հետո Աստծո Դեսպանորդներն այլևս չեն հայտնվի, իսկ Իսլամն ամբողջ մարդկության համար կմնա որպես վերջին և վերջնական կրոնական Հայտնություն: Նման տեսակետների լույսի տակ նոր կրոնի հայտնվելը բացարձակ անհնարին է: Բահայի հավատի գոյության, ավելին՝ արագ տարածման փաստի առջև դրված Իսլամի մոլի համախոհները, հատկապես շիական Իրանում, նոր հավատն անվանում են մեկ հերետիկոսություն, մեկ քաղաքական շարժում, մեկ դավադրություն Իսլամի դեմ և դրա արմատախիլ անելը համարում են աստվածահաճո գործ:

Շահի իշխանության վարչակարգի ժամանակ, հոգևորականության ճնշման տակ Բահայի հավատի պաշտոնապես ճանաչումը մերժվում էր, այլապես այն Բահայի հավատը կդներ Իրանի այլ կրոնական փոքրամասնությունների (հուդայականների, քրիստոնյաների, զրադաշտների) հավատալիքների հետ մի շարքում: Քանի որ Իրանի հավատացյալների քաղաքացիական իրավունքները կախված էին հավատի պաշտոնական կարգավիճակից, նշանակում է, որ երեք հարյուր հազար բահայի, ովքեր թվաքանակով գերազանցում էին երեք այլ կրոնական փոքրամասնությունները միասին, օրենքով պաշտպանված չէին:

Արդյունքում բահայիները մշտապես ենթարկվում էին դաժան ճնշումների մահմեդական մեծամասնության միջավայրից դուրս եկած հավատի հակառակորդների կողմից: Բահայիների գերեզմանները հաճախ պղծվում էին ամբոխների կողմից, որոնց հրահրում էին մուլագար մահմեդականները: Բահայի երեխաներին դպրոցներում հաճախ նվաստացնում էին՝ անվանելով նրանց «կեղտոտ բաբի»: Բահայիներին ծառայության չէին ընդունում որոշ կառավարական ձեռնարկություններ: Հավատի շատ համախոհներ դառնում էին ծեծի, բռնության, սպանությունների (որոնք հրահրվում էին շիական հոգևորականության կողմից) զոհեր: Ժամանակ առ ժամանակ շահի վարչակարգը՝ ինքն էր սադրանքներ կազմակերպում՝ օգտագործելով բահայիներին որպես քողարկում՝ ժողովրդի ուշադրությունը քաղաքական և տնտեսական խնդիրներից շեղելու նպատակով: 1955թ., երբ վերևից կազմակերպված հետապնդումները հերթական անգամ վերսկսվեցին, անհրաժեշտ եղավ Միացյալ Ազգերի Կազմակերպության միջամտությունը:

Իսլամական հեղափոխությունից հետո՝ 1979թ. սկզբին, իրավիճակն ավելի վատթարացավ: Իշխանության եկած շիական հոգևորականության ցուցումով բահայիների սեփականությունն առգրավվեց, սուրբ վայրերը գրավվեցին զինված մահմեդական հրոսակախմբերի կողմից և ավերվեցին, գերեզմանները քանդվեցին, համայնքի անդամներին հեռացրեցին աշխատանքից, զրկեցին թոշակներից, հափշտակեցին խնայողությունները, երեխաներին հեռացրեցին դպրոցներից: 1979թ. ընդունած նոր իսլամական սահմանադրությունն էլ ավելի խորացրեց բահայիների իրավազուրկ վիճակը:

1980թ. ամռանը հեղափոխական կոմիտեները ձերբակալեցին Տեղական և Ազգային Հոգևոր ժողովների անդամներին, ինչպես նաև հավատի առավել անվանի համախոհներին: Ձերբակալություններին հետևեցին մահապատիժները: Չնայած այդ սպանություններն Իրանի սահմաններից դուրս որպես լրտեսների մահապատիժներ կատարելու վարչակարգի համախոհների բոլոր փորձերին՝ դատավճիռների տեքստերը ոչ երկիմաստ վկայում էին այլ բան՝ մեղադրանքի հիմք էին ծառայում Բահայի հավատին պատկանելը և համայնքի անդամ լինելը. յուրաքանչյուր դատապարտվածին խոստանում էին պահպանել կյանքը, եթե նա ընդուներ Իսլամը: Իրանի կառավարական մամուլը մահապատիժները և խոշտանգումների այլ գործողությունները բացահայտ անվանում էր «բահայի հերետիկոսությունն» արմատախիլ անելու միջոցներ: 1983թ. օգոստոսին իսլամական վարչակարգը պաշտոնական արգելք դրեց Իրանի բահայիների բոլոր կրոնական ինստիտուտների, ուսումնական հաստատությունների և բարեգործական կազմակերպությունների վրա: Հետևելով քաղաքացիական իշխանություններին ենթարկվելու սկզբունքին՝ Իրանի բահայիների Ազգային Հոգևոր ժողովը լուծարեց բոլոր Տեղական Հոգևոր ժողովները, այնուհետև հայտարարեց սեփական ինքնալուծարման մասին: Չնայած դրան՝ իշխանությունների հրամանով սկսվեցին Հոգևոր ժողովների նախկին անդամների ձերբակալությունները: Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսը լսեց ականատեսների վկայություններն այն մասին, որ ձերբակալվածներին կանոնավոր կերպով ենթարկում էին կտտանքների, որպեսզի նրանք հրաժարվեն հավատից և խոստովանեն լրտեսության մեջ:

Ի պատասխան այդ հետապնդումների, բահայիները գործողություններ ձեռնարկեցին երկու ուղղություններով: Երբ բազմաթիվ դիմումներն Իրանի հեղափոխական վարչակարգի իշխանությանը մնացին անպատասխան, փորձ ձեռնարկվեց համատեղ ուժերով հասնել համաշխարհային հասարակայնության միջամտությանը: Սկսած 1980թ., երբ կանադական պառլամենտը միահամուռ կերպով ընդունեց բանաձև, որը կոչ էր անում Իրանին դադարեցնել ահաբեկման կամպանիան, աշխարհի մի շարք երկրների պառլամենտները սկսեցին ճնշում գործադրել Իրանի կառավարության վրա: 1980թ. աշնանն այդ օրինակին հետևեց Եվրոպական պառլամենտը: ՄԱԿ-ի որոշ հանձնաժողովներում ամեն տարի սկսեսին անցկացնել լսումներ այդ հարցի վերաբերյալ և ընդունվել համապատասխան բանաձևեր: 1984թ. մարտին ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղարին հանձնարարվեց հետաքննություն անցկացնել: Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսը երկու անգամ հանդես եկավ ճնշումների խիստ դատապարտումով: Ցուցաբերված ճնշումը, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով բահայիների ճակատագրերի լայն լուսաբանումը, ստիպեց իրանական իշխանություններին ցուցաբերել որոշ զսպվածություն: Բահայիների լրիվ բնաջնջում, որով ժամանակին սպառնում էին շիական հոգևորականության միջավայրից ծայրահեղորեն տրամադրված տարրերը, տեղի չունեցավ:

Սակայն ժամանակի ընթացքում, հավանաբար, ակնհայտ կդառնա, թե որքան կարևոր նշանակություն ուներ հենց բահայի իրանական համայնքի վարքագիծը նրան բաժին ընկած հետապնդումների իրավիճակում: Չնայած դաժան հետապնդումներին, որոնց ենթարկվում էին մոլլաների կողմից, իրանական բահայիներն առաջվա պես մեծ հարգանքով են վերաբերում Իսլամին: Այն մեղադրանքները, որ իրենց հավատը հակադրել է Իսլամին, բահայիները համարում են ծայրահեղ անհիմն: Նրանք նշում են, որ

քրիստոնյաները, հուդայականները, բուդդայականները և հինդուիստները՝ ընդունելով Բահայի հավատը, ընդունում են Իսլամի և դրա Մարգարեի աստվածային ծագումը:

Բացի այդ, համայնքը ցուցադրեց օրինապահության սկզբունքին և քաղաքական շարժումներում չմասնակցությանն իր նվիրվածության համոզիչ ապացույց: Ժամանակակից Իրանում՝ լինելով ամենահետապնդվող փոքրամասնություն, բահայիները, այնուամենայնիվ, միշտ հրաժարվել են մասնակցել քաղաքացիական անհնազանդության տարբեր բնույթի գործողություններին, որոնք կազմակերպում էին իսլամական վարչակարգի հակառակորդներն այն տապալելու նպատակով: Ավելին, հետապնդման առաջին տարվա ընթացքում բահայիները չէին դիմում համաշխարհային համայնքի պաշտպանությանը, դրանով իսկ վարչակարգի ղեկավարներին խելքի գալու հնարավորություն տալով: Փեխլեվիի դինաստիայի կառավարման տարիներին բահայիները մշտապես վարում էին նույն գիծը: Բահայիները ենթադրում են, որ երկարաժամկետ հեռանկարում գործողությունների այդ ձևն իրենց հավատի գոյատևելու երաշխիքն է:

Եթե դատենք անկողմնակալորեն, պետք է ընդունել, որ իրանական համայնքին բաժին ընկած փորձությունները Բահայի կրոնին մեծ օգուտ բերեցին՝ չնայած դրա համար թանկ գին վճարվեց: Հետապնդվող իրանական բահայիների պաշտպանության լայն կամպանիայի շնորհիվ, հավատի, դրա սկզբունքների և ուսմունքի մասին շատ մարդ իմացավ՝ կառավարական պաշտոնյաները, գիտնականները, զանգվածային լրատվության միջոցների աշխատակիցները և բնակչության լայն շերտերն աշխարհի տարբեր երկրներում: Իրանական իշխանությունների և Բահայի հավատի համախոհների միջև ծագած տարաձայնությունների էությունը վկայում է այդ հավատի խաղաղասիրության և առաջադեմ ուղղվածության մասին: Ինչ վերաբերում է այլ երկրների բահայիներին, ապա նրանց համատեղ գործողությունները՝ ուղղված իրենց համախոհների պաշտպանությանն անհիմն և բարբարոս հետապնդումներից, օգնում են համախմբվել այդքան բազմաբնույթ համաշխարհային համայնքը: Իսկ ամենազլխավորը՝ իրանական հավատացյալների հերոսական ինքնազոհությունը հանուն իրենց հավատի, վկայում է այն մասին, որ ի սկզբանե ծագած հոգևոր ուժը չի սպառվել: Նորից, այս անգամ արդեն հեռուստախցիկների առջև հաստատվեց հինավուրց ասույթի արդարությունը. «Հավատը ծագում է նահատակների արյան վրա»:

Բահայիները հետապնդվում են ոչ միայն մահմեդական երկրներում: Թշնամական վերաբերմունքը Բահայի հավատի, ինչպես նաև շատ այլ կրոնների նկատմամբ բնորոշ է նաև համընդհանուր վարչակարգերին: Նացիստական Գերմանիայում Բահայի հավատը պաշտոնապես համարվեց օրենքից դուրս, համայնքի գործունեությունն արգելվեց: Որպես պատճառ ծառայեց բոլոր ռասաների հավասարության բահայիների դավանած ուսմունքը: Կոմունիստական վարչակարգով երկրներում Բահայի կրոնի վիճակը նույնքան ողբալի է: Մարքսիստական տեսությունը, որը հերքում է Աստծո և բանական ոգու գոյությունը, իսկ մարդկային հասարակության պատմությունը դիտում է մատերիալիստական դիրքերից, չի ընդունում Բահայի հավատը: Աշխարհի մարքսիստական տեսակետում տեղ չկա ավելի ուշ ծագած Աստծո Հայտնություններին: Խորհրդային Ռուսաստանում բահայիները ենթարկվում էին հետապնդումների՝ նրանցից շատերը ձերբակալվեցին և աքսորվեցին Սիբիր. հավատի ինստիտուտները լուծարվեցին, գրականությունն ու արխիվները բռնագանձվեցին, լուսավորչական և քարոզչական գործունեությունն արգելվեց: Աշխարհի Պաշտամունքի Տունը (ամբողջ աշխարհում առաջին բահայի տաճարը) բռնագանձվեց իշխանությունների կողմից: Ներկայումս հավատի վիճակն Արևելյան Եվրոպայի տարբեր

երկրներում նույնը չէ, սակայն ամենուր, որտեղ Բահայի համայնքները դեռ գոյություն ունեն, նրանց գործունեության վրա դրված են խիստ սահմանափակումներ:

Իշխանությունների կողմից Բահայի հավատի հոգևոր հիմքերի լիակատար անընդունելիության արդյունքում՝ ինչպես փիլիսոփայական, այնպես էլ քաղաքական բնույթի, նրանց և հավատացյալների միջև երկխոսությունը մինչ այժմ անհնարին էր:՝ Այդ վիճակին վերջ կգա միայն այն ժամանակ, երբ այդ երկրների իշխանությունները փոխեն իրենց ռազմատենչ հակակրոնական ուղղվածությունը: Կարելի է միանգամայն վստահաբար ասել, որ քաղաքական առումով Բահայի հավատը ոչ մի վարչակարգի համար սպառնալիք չի ներկայացնում: Համայնքը խուսափում է այն ամենից, ինչը կասկածի կենթարկեր նրա անմասնակցությունն այս կամ այն երկրի կամ երկրների խմբի քաղաքականությանը: Դրա փոխարեն այն ակտիվորեն համագործակցում է ՄԱԿ-ի, դրա դուստր կազմակերպությունների և ստորաբաժանումների հետ:

Բահայի համայնքի աճին զուգընթաց գիտնականները՝ այդ կրոնի համախոհները, փորձեր են ձեռնարկում վերլուծել տնտեսության խնդիրները Բահաուլլայի ուսմունքի լույսի ներքո: Նրանք ավելի ու ավելի հաճախ են երկխոսության մեջ մտնում հասարակատնտեսական մտքի տարբեր դպրոցների ներկայացուցիչների հետ՝ ներառյալ մարքսիզմի համախոհների: Անշուշտ, նման շփումները կհարստացնեն համայնքի կյանքը և կնպաստեն գիտնական բահայիների գիտական մտքի զարգացմանը: Բահայիները հույս ունեն, որ դա կօգնի խուսափել նոր գաղափարախոսական բախումներից:

Եվ վերջապես, Բահայի հավատը մշտական մեղադրանքներ է կրում ավանդական Քրիստոնեության տարբեր ներկայացուցիչների՝ հատկապես նոր քարոզիչների կողմից: Քրիստոնյա քարոզիչների տեսակետից երկրագնդի ոչ մի տարածա-շրջան այդպես անպտուղ և անհույս չի երևում, որքան մահմեդական Մերձավոր և Միջին Արևելքը: Ավելի քան յոթանասուն տարի առաջ Էդվարդ Գրենվիլ Բրաունը նշում էր, որ իրենց անհաջողություններից վիատված քրիստոնեական քարոզիչների շարքերում աճում է նախանձը դեպի նույն տարածքում գործող Բահայի հավատի քարոզիչները: Այդ թշնամությունը քրիստոնեական քարոզիչների կողմից ուժեղացավ Արևմուտքի երկրներում Բահայի հավատի բարեհաջող տարածման արդյունքում: Ի վերջո, քարոզիչները, համախմբվելով իրենց հակառակորդ-մահմեդականների հետ՝ բահայիների սկզբունքներն ու գործունեությունը մամուլում արատավորելու փորձեր ձեռնարկեցին: Արևելքում դաժան հետապնդումների առարկա դարձած հավատը՝ Արևմուտքում բախվեց այն բանի հետ, որ դրա պատմությունը և ուսմունքի հիմքերը կոպտորեն աղավաղվեցին և այն փորձեցին հակադրել Քրիստոնեությանը:

Այսօր քրիստոնեական հոգևորականության մեջ եղած Բահայի հավատի հակառակորդները փորձում են, առաջին հերթին, արատավորել Բահայի հավատի ոչ թե հոգևոր ուսմունքը, այլ պատմությունը: Իրենց ներկայացնելով որպես անկախ գիտնականներ, որ Բահայի հավատի հետ ծանոթացել են կրոնի համեմատական ուսումնասիրման ընթացքում, այդ հեղինակները հաճախ հավատի պատմությունը նկարագրում են որպես ինչ-որ կրոնական դավադրություն՝ ձեռնարկված և շարունակված կասկածելի բարոյական հատկանիշներ ունեցող որոշ մարդկանց կողմից: Կրոնի հետազոտողները սովորաբար հաշվի չեն առնում նման հեղինակներին բնորոշ չափազանց կամայական

* Դրությունը փոխվեց 1989թ. հետո, երբ Արևելյան դաշինքի երկրներում սկսվեցին արմատական վերափոխումներ:

վարվեցողությունը փաստաթղթերի և պատմական փաստերի հետ և զարմանալի չէ, որ այդպիսի բնույթի ստեղծագործությունները երբեմն հաջողություն են ունենում: Բազմաթիվ շարքային ընթերցողների մոտ, ովքեր չունեն նման աշխատությունների գնահատման չափանիշներ, դրանց ազդեցիկ ծավալն առաջացնում է սպառիչ ամբողջության և ակադեմիականության տպավորություն:

Այդ բնույթի հարձակումները բահայինների համար դառնում են ևս մի փորձություն: Ջարմանալի չէ, որ բահայինները, որպես կանոն, հրաժարվում են կրոնական վեճերից: Այստեղ պատճառն ավելի խորն է, քան բախման մեջ մտնելու ցանկություն չունենալը: Պատճառն այն է, որ հենց հավատի մեջ խստորեն դատապարտվում են վեճերն ու հակաճառությունները: Աբդուլ-Բահան այդ առիթով ասում էր.

«Ընդունեք ձեր թշնամիներին որպես ձեր ընկերների և ձեզ չարիք կամեցողներին որպես բարեկամներ: Դուք չպետք է տեսնեք չարիք չարիքի մեջ, այնուհետև գործարքի մեջ մտնեք սեփական կարծիքի հետ, քանզի սիրով և բարությանը վերաբերվել նրան, ում համարում եք չարիքի կրող կամ թշնամի, կեղծավորություն է, և այդ անարժան է և անթույլատրելի: Դուք պետք է բարեկամ համարեք ձեր թշնամիներին, ձեզ բարին չցանկացողներին նայեք որպես ձեզ բարիք ցանկացող անձանց և համապատասխանաբար վերաբերվեք նրանց: Գործեք այնպես, որ ձեր սրտերն ազատ լինեն չարությունից»:

Մեծամասամբ հատկապես այդ պատճառով էին բահայիններն իրենց հավատի ինստիտուտներին տրամադրում պատասխանել քրիստոնեական հոգևորականության առանձին մոլեզնաբար տրամադրված նախանձախնդիրների կողմից իրենց հասցեին արված քննադատությանը: Իսկ երբ հավատի վրա հարձակումներ սկսվեցին զանգվածային լրատվության միջոցներում, բահայինների Հոգևոր ժողովները պատասխանեցին հրապարակային հայտարարություններով՝ վկայակոչելով վստահության արժանի գիտական աղբյուրներին: Սակայն կարելի է սպասել, որ շատ երկրներում կրոնական ֆունդամենտալիզմի աճի հետ կապված՝ քրիստոնեական հոգևորականության որոշ ներկայացուցիչներ ավելի մեծ դաժանությամբ կհարձակվեն ապագա համաշխարհային կարգի բահայինների դավանած գաղափարների վրա:

Թշնամությունն արտաքին ուժերի կողմից փորձություն է: Համայնքի գործունեության ոլորտի լայնացմանը և նրա համբավի աճին զուգընթաց, այդ փորձությունն ընդունում է նոր ձևեր: Բահայիններն արժանապատվությամբ են ընդունում հետապնդումներն ու հարձակումներն իրենց կրոնի վրա: Անշուշտ, այդ փաստն ազդեցություն կթողնի այդ կրոնի մասին աշխարհի ժողովուրդների մոտ ձևավորվող պատկերացման վրա և կազդի հենց համայնքի կյանքի վրա:

Բահաուլլայի պատգամների կատարման համար բավական չէ, սակայն, պահպանել հավատի միասնությունը, հակազդել դրա վրա արվող հարձակումներին, ներգրավել հնարավորինս շատ հավատացյալներ ուսմունքի տարածման գործին: Այդ ամենը, ըստ երևույթին, բավական չէ և որպեսզի մարդկությունը համոզվի Բահաուլլայի Հայտնության ճշմարտության մեջ, որին պատկանում է ապագան, անհրաժեշտ է, որ հավատը կորցրած մեր սերունդը բահայինների կյանքի կենսակերպում տեսնի նոր համակրելի գծեր: Ստորև հետևում է Շողի Էֆֆենդիի հայտնի արտահայտությունը.

«Այս Սուրբ գործի անսահման և վերջնական հաղթանակը լիակատար և բացառապես կախված է նրանից, թե որքանով է մեր ներքին կյանքը և բարոյական պատկերն ընդունակ իր բազմազան կողմերում արտացոլել Բահաուլլայի ավետած հավերժ ճշմարտությունների փայլը»:

Կասկած չկա, որ Բահայի համայնքը տարբերվում է արդի ժամանակներին հայտնի կրոնական համայնքների այլ մոդելների մեծ մասից: Սկսած Բահայի հավատի պատմության առաջին օրերից, դրա հետևորդների անձնական հատկանիշները միշտ առաջացրել են դիտողների հիացմունքը: Տասնիններորդ դարի վերջին Էդվարդ Գրենվիլ Բրաունը նշում էր.

«Ես հաճախ էի լսում, թե ինչպես էին քրիստոնյա հոգևորականները զարմանում բարի քարոզիչների (այսինքն բահայիների) անհավանական հաջողությունների առիթով, որոնք հատկապես նկատելի էին իրենց սեփականների համեմատ, որոնք լի էին անհաջողություններով... Դրա պատասխանը, ինչպես ես ենթադրում եմ, պարզ է, ինչպես օրը: (Հետևում են մի շարք քննադատական դիտողություններ քրիստոնեական աղանդավորության վերաբերյալ)...

Սակայն Բարի հավատում արևմտյան դիտողների ուշադրությունը գրավում է, առաջին հերթին, դրա հետևորդների լիակատար անկեղծությունը, նրանց տանջանքներ կրելու և հանուն Հավատի մահ ընդունելու անձնագրի պատրաստակամությունը, անսասան վստահությունն իրենց կրոնական տեսակետների ճշմարտացիության մեջ, բարի վերաբերմունքը մերձավորների և, հատկապես, դավանակիցների նկատմամբ»:

Մեր օրերում համայնքի մասին դիտողների արտահայտած կարծիքները նույնքան բարենպաստ են: Գործնականում համայնքի շրջանակներում լիակատար ռասայական ինտեգրացիան, կրոնական թեմաներով վիճաբանությունից և այլ դավանաբանությունների քննադատությունից լրիվ հրաժարումը, բարոյականության և ֆինանսների ոլորտում չարաշահումների հետ կապված վիճաբանությունների բացակայությունը, որոնք մեր օրերում շատ սովորական են այլ կրոնական դավանությունների համար, զուսպ, կայունությունից զուրկ հավատի քարոզը, հանրաժանոթ հյուրասիրությունը՝ ահա համայնքի այն առանձնահատկությունները, որոնց շնորհիվ այն վայելում է համընդհանուր հարգանք:

Սակայն, ամբողջ մարդկությանը համակած խորացող ճգնաժամը համայնքի առջև դնում է նոր խնդիրներ, որի նպատակն է շարունակել ճանապարհը հասարակության մեջ ապագա արմատական փոփոխությունների համար: Կդառնա արդյոք բահայի ընտանեկան կյանքը, որը հիմնված է Բահաուլլայի ուսմունքի հոգևոր սկզբունքների վրա, գրավիչ օրինակ Արևմուտքի մարդկանց համար՝ տալով նրանց այն հույսը, որ ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող ընտանիքի քայքայումը կարող է կանգնեցվել: Աֆրիկայում ցեղերի միջև թշնամությունը վերացնում է նոր տիպի հասարակության կենսունակ միջուկ ստեղծելու տարբեր քաղաքական և կրոնական շարժումների փորձերը: Կկարողանա՞ն արդյոք լուծել այդ խնդիրը բահայի ազգային համայնքները: Չնայած տարածաշրջանային երկրներում կրթության համակարգված ծրագրերի առկայությանը՝ շատ ասիական մշակույթների համար բնորոշ է, ինչպես նաև անցյալ դարերում, հասարակության մեջ կնոջ ենթակա վիճակը: Բահայի համայնքներում արվում է ամեն ինչ, որպեսզի հաղթահարվի այդ մնացուկը: Կկարողանա՞ն արդյոք համայնքները մարմնավորել իրենց մեջ սեռերի հավասարության մասին Բահաուլլայի ուսմունքի ոգին, որպեսզի բահայի կանայք հիրավի գիտակցեն իրենց վերափոխող դերը հասարակության մեջ՝ արդարացնելով այդպիսով իրենց հավատի հիմնադրի սպասումները:

Վերջապես, կհաջողվի՞ արդյոք Բահայի համայնքին ապացուցել, որ Բահաուլլայի ուսմունքն ընդունակ է ելք ցուցադրել տնտեսական խնդիրների փակուղուց, որոնք կործանիչ ձևով են արտահայտվում մարդկության սոցիալական և հոգևոր կյանքի վրա: Երրորդ աշխարհի երկրներում, մի շարք տարածաշրջաններում, բահայիներն արդեն

կազմում են բնակչության մեծ մասը և Տեղական Հոգևոր Ժողովները ստիպված են բախվել նման խնդիրների հետ: 1983թ. Բահայի Միջազգային համագումարին Արդարության Համաշխարհային Տունը հայտարարեց սոցիալական և տնտեսական զարգացման նոր Բաժնի մասին: Բահայի համայնքներին դիմեցին կոչով սկսել՝ «հենվելով զանգվածների վրա» տարբեր նախագծերի իրականացում, որոնք ուղղված են Բահաուլլայի Սուրբ Գրքերում հռչակված սոցիալական և տնտեսական սկզբունքների կյանքի կոչելուն: Ակնհայտ է, որ համայնքն իր խնդիրը տեսնում է ոչ թե տեսության մշակման մեջ, այլ գործնականում տնտեսական գիտելիքների և փորձի ձեռքբերման մեջ: Առաջիկա դժվար տարիներին Բահայի համայնքի կյանքի այդ տեսակետը պետք է դեպի իրեն գրավի հատկապես մեծ ուշադրություն:

Բահայի համայնքի առջև կանգնած խնդիրները դարձան հավատացյալների արիության և խանդավառության փորձություն 20-րդ դարի վերջին տարիներին: Առաջին հերթին ամրության փորձության ենթարկվեց Բահայի համաշխարհային համայնքի կառուցվածքի մոդելը, որը կոչված է ծառայել որպես ապագա հասարակության նախատիպ: Մոտակա տարիներին Բահաուլլայի հետևորդներին անհրաժեշտ կլինի գալ իրենց դավանաբանության այն արտահայտումների իմաստի խորը գիտակցմանը, որոնցում նա նշում է տարբերությունն իր առաքելության և այն խնդիրների միջև, որոնք դրված են իր նախորդների՝ անցյալի աստվածային Հայտնիչների վրա:

«Հիրավի, Նա (Հիսուսը) բարբառեց. «Եկեք Իմ հետևից և Ես կդարձնեմ ձեզ մարդկանց որսորդներ»: Իսկ այժմ մենք ասում ենք. «Եկեք Իմ հետևից, որպեսզի Մենք ձեզ դարձնենք մարդկային ցեղը վերածնողներ»:

Դիտորդների հայացքից չի կարող վրիպել այն փաստը, որ մեր օրերում Բահայի հավատի առջև բացվում են հսկայական՝ մինչ այժմ չտեսնված հնարավորություններ: Կարծես, աշխարհը պատրաստ է, վերջապես, լսել բահայի քարոզները: Այդ մասին է խոսում ոչ միայն երկրագնդի բոլոր անկյուններում նորահավատների աճող թիվը: Ոչ պակաս կարևոր է համայնքի սահմաններից դուրս այն ախտորոշման լայն ճանաչումը, որը մարդկության համար տվել է իր Սուրբ Գրքերում Բահաուլլան: Հավատի կորուստը տեխնիկական առաջընթացի և քաղաքական միջոցների գործունեությանը, ինչպես նաև այն հավատի կորուստը, որ նյութական ոլորտի նվաճումները կարող են վերափոխել աշխարհը, ամենուր ուղեկցվում է աճող համոզվածությամբ, որ խորը սոցիալական վերափոխումներն անբաժանելիորեն կապված են որոշակի փոփոխությունների հետ ոգու և բարոյականության ոլորտում: Այլ կերպ ասած, էլ ավելի շատ մտածողներ են գալիս այն եզրակացության, որ «միասնական համաշխարհային բնակավայրում», որի առաջացումը հնարավոր է գիտության և տեխնիկայի հաջողությունների շնորհիվ, ապրել կարելի է միայն այն պայմանով, որ արժեքների ինչ-որ ունիվերսալ համակարգ կհամախմբի մարդկությանն ընդհանուր նպատակների ձգտման մեջ: Աուրելիո Պեչչեին վերջին համառոտ նախագահական դիմումի մեջ՝ Բուդապեշտում հավաքված Հռոմեական ակումբի անդամներին այդ առիթով ասաց հետևյալը:

«Գիտության, տեխնիկայի և արտադրության ոլորտներում ապշեցուցիչ նվաճումների շնորհիվ, մենք կուտակել ենք ռեսուրսներ և ստեղծել ենք ֆանտաստիկ հնարավորություններով մեքենաներ: Բայց մենք դեռ հստակ չենք հասկացել մեր նոր հնարավորությունները և այդ նվաճումներով պայմանավորված աշխարհի ճակատագրի համար աճող պատասխանատվությունը...»

Արդյունքում մենք բախվեցինք նոր՝ կյանքի կարիքներին համապատասխանող կյանքի փիլիսոփայություն ստեղծելու անհրաժեշտության հետ: Կառույցի կմախքը պետք է կազմեն «իմաստունության պատվարները», որոնք համապատասխանում են ներկայիս դարի ոգուն և պահանջներին»:

Աուրելիո Պեչչեի համոզվածությունը, թե հասարակական կարգի հիմքը հավատն է, իսկ «երկիրը միասնական տնտեսական օրգանիզմ է» (արտահայտություն, որը փոխառված է բահայիներից), կիսում են շատ քաղաքագետներ և տնտեսագետներ: 1980թ. հրատարակվեցին Բրանդտի հանձնաժողովի անցկացրած լուրջ հետազոտության արդյունքները, որոնք ծառայում են որպես զգուշացում, որ արժեքների մեր համակարգի վերանայումը կյանքի կամ մահվան հարց է: Շնորհիվ այնպիսի հասարակական գործիչների աշխատությունների հոսքի, ինչպիսիք են Ալվին Թոֆլերը, Մերիլին Ֆերգյուսոնը, Ֆրիտյոֆ Կապրան և Ջոն Նեյսբիթը, կարելի է չկասկածել, որ կարդացող հասարակությանը լայնորեն հայտնի դարձավ Բահայի ուղերձը և դրա փիլիսոփայական իմաստը: Ապագայի հարցերին նվիրված և զանգվածային լրատվության միջոցների կողմից ուժեղ ուշադրության օբյեկտ դարձած միջազգային կոնֆերանսները՝ հասարակության ուշադրությունը գրավեցին դեպի այն հարցերը, որոնք նախկինում զբաղեցրել են միայն աստվածաբանների մտքերը:

Եթե մարդկությունը հասարակության համար անվտանգության փնտրումներում շարժվի նշված ուղղությամբ, իսկ Բահայի հավատը չշեղվի այն ճանապարհից, որով անշեղորեն շարժվում էր մինչ այժմ, ապա կարելի է հուսալ, որ ինչ-որ տեղ ապագայում մեզ սպասում է այն վերջին կանգառը, որի մասին հարյուր հիսուն տարի առաջ ասել է Բահաուլլան.

«Այս է Օրը, երբ Աստծո ամենագերագանց ընծաները կգեղվեն մարդկանց վրա, Օրը, երբ Նրա մեծագույն վերին օգնությունները կպարուրեն բոլոր արարածներին... Շուտով կքայքայվի այսօրվա կարգը և նորը կհաստատվի նրա տեղը»: